Կոստանդին Մոնոմախ կայսր չև ևս պատրաստ առեալ 'ի պատերազմացն Բուլ-

ղարաց, հրեշտակս առաքեաց և աղաչէր զԵարոսլաւ 'ի խաղաղութի. այլ 'ի մերժել նորա զդեսպանսն՝ խմբեցաւ նաւամարտն մօտ 'ի Նեղուցս Բիւզանդիոյ: Եւ ոչ կարացին Ռուսք զդէմ ունել հրձգութեանցն Յունաց. յոր յաւելեալ և մրրիկ ահագին՝ ցրուեաց և խորտակեաց զբազումս 'ի նաւակացն Ռուսաց. և զերծեալքն 'ի նոցանէ 'ի ցամաք անդր՝ յանխնայ կոտորեցան 'ի հեծելազնդէն Յունաց, որք զծովեզրն ունէին:

Ի ցածնուլ մրրկին արձակեաց Կոստանդին 'ի վերայ մնացելոցն Ռուսաց այլ ևս քսան և չորս նաւս մեծամեծս. և որքա յուսահատեալք 'ի կենաց՝ անհնարին երագութբ յարձակեցան կատաղաբար 'ի նաւս անդր Յունաց. զոմանս հարին խորտակեցին, և զոմանս կալան 'ի գերութի, յորոց 'ի միումն էր և զօրապետ նաւատորմին Յունաց:

Վլատիմիր սակաւիկ մի ոգի էառ 'ի յաջողուածոյն. այլ այն փոքր ինչ էր առ նախկին կոտորածիւն. և նոքին իսկ ապրեալքն 'ի փախչել անդ ընդ. ցամաք յաշխարհ իւրեանց՝ ըստ մեծի մասին կոտորեցան 'ի Յունաց, և գերեցան:

Եարոսլաւ կենցաղօգուտ գործովք սփոփեաց զմնաս աշխարհին իւրոյ: Տարածեաց և ևս 'ի տէրութե իւրում զքրիստոնեական հաւատս, և ժողովեալ արս հմուտս՝ ետ յեղուլ 'ի յոյն բար_

բաւոյ 'ի Սլաւոնացն զնծաշունչ գիրս 'ի թարգմանութենէ եօթանասնից. և զընտագիրն եդեալ յեկեղեցւոջ սրբոյն Սոփիայ, զոր ինքն իսկ շինեալ էր 'ի Քիեւ և զարդարեալ մեծաշուք վայելչութեամբ, հրամայեաց փոխադրել զմատենանս և բազմացուցանել: Եւս թարգմանել և զայլ ևս գիրս պիտանիս, կառոյց զբազում եկեղեցիս, և հաստատեաց դպրոց 'ի դաստիարակութիւն աշակերտացն Քիեւայ ընդ ձեռամբ եկեղեցականն անձանց:

Վասն այսր ամենայնի բարեպաշտութեանցն առաւել ևս սիրելի եղեալ Ռուսաց, ոչինչ նուազ ցանկալի եղև բարեկամութիւն նորա և ազգաց հեռաւորաց. վասն որոյ և խնամութիւնք եղեն ընդ մէջ տան իւրոյ և թագաւորացն Շուեդաց, Լեհաց, Անգղիացւոց և Գաղղիացւոց:

Այսպէս լեալ ամաց վաթսուն և վեցից, և բաժանեալ զերկիր պետութեան իւրոյ յորդիս իւր, ազերսիւ պատուիրեաց նոցա՝ հնազանդ լինել Իզիասլաւայ անդրանկին իւրում իբրև աթոռաժառանգ փոխանորդի իւրոյ, և մեռաւ յամին 1053, թագաւորեալ ամս երեսուն և ութ:

Ընդ մարդասէր բարոյից և զուարթութե քաղցրութեան լծորդեալ և սա հանգոյն հօրն, ակէտ սիրար յառաջ քան զամենայն՝ միաբան հաւանութբ եղբարց իւրոց Սվէտաթոպլաւայ և Վսեվոլոդայ հանել 'ի բանտէ զեղբայր մօրն իւրեանց Սուտիսլաւ, որ յերեսուն ամաց հետէ 'ի կալանս կայր վասն սուտ ամբաստանութե եղելոյ զնմանէ։ Այլ նորա հրաժեշտ տուեալ ամե՛նայնի, եմուտ 'ի կարգ միանձնութե։

Ընդ այն ժամանակս բազմութի Թաթարաց բնակելոց առ Եայիք և Տոն գետովք, զորս Ռուսք Փոլովցիս կոչէին, յարձակեցան 'ի կողմանս Տնեպերայ 'ի բաժին Վսեվոլոդայ. որոց ոչ կարացեալ նորա զդէմ ունել՝ ամրացաւ 'ի քաղաքի իւրում. և նոքա ասպատակ սփռեալ յաւարի առին զամենայն երկիրն, և զմնացուածսն այրեցին։

Եւ 'ի գալ ամին միւսոյ իբրև անդրէն արշաւեցին նոքա 'ի Ռուսիա, երեքին եղբարքն ևս միաբանեալ ելին ընդդէմ նոցա. այլ վաղ հարկեցան խոյս տալ անդրէն ամրանալ 'ի քաղաքս իւրեանց։

Ցայնժամ տեսեալ բնակչացն Քիեվայ՝ զի Փոլովցիք սփռեալ են այսր անդր

յապաստանէր, խնդրէին 'ի սպարապե-տէն իւրեանց զէնս՝ զի հարցեն խորտակեսցեն զիւրաւ զՓոլովցիսն ցրուեալս. և 'ի ժխտել նորա՝ կասկածեալ եթէ ապստամբել խորհիցին, առ հասարակ 'ի զայրոյթ սրտմտութեան բորբոքեցան, և անգոսն ապարեալ զինեցին 'ի խողխողել զսպարապետն. և չգտեալ զնա 'ի տան, յարձակեցան ընդ ամենայն քաղաքն, և բազում չարիս գործեցին. բացին և զդրունս բանտից և արձակեցին յազատութիւն զբանտարկեալսն: Ի թիւս նոցա գոլով և Ուսեսլաւ իշխանն Փոլոցքայ՝ զորմէ կանխեցաք ասացաք, զնա կարգեցին իւրեանց ապստամբար և թագաւոր:

Իսկ և այդ եղեն իրքն Իզիասլաւայ՝ յանհնարս մնացեալ անկաւ առ Պոլեսլաւ Բ. արքայ Լեհաց, և ընկալեալ 'ի նմանէ զօրս՝ խաղաց եկն 'ի վերայ Ուսեսլաւայ: Իսկ նորա զարհուրեալ 'ի բազմութենէ զօրացն, գիշերախառն զերծաւ յանտառամէջս ուրեք. և ընդ այգս այգոյն անգլուխ մնացեալ իւրոցն զանձինս՝ ընծայեցին դարձան 'ի Քիեւ, և առաքեալ աղաչեցին զՍվեատոսլաւ և զՎսեվոլոդ միջնորդ լինել առ Իզիասլաւ, զի անյիշաչար լիցի յանցանաց իւրեանց. ապա թէ ոչ՝ ասէին, հրոյ ճարակ տուեալ զՔիեւ՝ 'ի Յոյնս անդր անցանեմք:

Իզիասլաւ ներեաց նոցա, և առա-

քեաց 'ի Քիեւ զորդի իւր զՄսթիսլաւ. որոյ տեսեալ զբազմադիպացիւն Նկուէնս եւ եւ հանդարտեալ՝ ըստ վաղեմուն յառաջնորդաց անտի ապստամբութեան կոտորեաց յանդգնեալս հօրն: Եւ ապա էառ յԻզիասլաւայ զիշխանութիւն Փոլոցքայ:

Այն ինչ սակաւիկ մի ոգի առնոյր Իզիասլաւ 'ի խռովութեանց անտի, եւ ահա եկին 'ի տեղիս տեղիս աշխարհին սով սաստիկ: Զորոյ զպատճառն արկեալ՝ ոմանց չարախօսելեր մոգուց զկանայսք Ռոստովայ եւ Բելօզերոյի, իբրու եթէ զիւթութեամբ նոցա լեալ էր սովն, յարձակեալ կոտորեցին զբազումս 'ի նոցանէ: Այլ Իզիասլաւ եւ զնոսա անդէն չարաչար մահուամբ սատակեաց:

Ի միւսում ամի երեւեցան եւ երկու սուտ մարգարէք, յորոց մին գուշակէր՝ 'ի կատարած հնգից ամաց դառնալ Ջրոյն Տնեպերայ 'ի վեր յակունս իւրեանց, եւ Թէ յայնժամ Ռուսիա Յունաստան լինիցի, եւ Յունաստան Ռուսիա: Այլ սա վաղ բարձաւ 'ի միջոյ խորագիտութեամբ Իզիասլաւայ: Իսկ միւսն գնացեալ 'ի Նովկորոտ պատիր նշանօք մոլորեցուցանէր զժողովուրդն՝ հայհոյելով զՔս, եւ զրպարտելով զամենայն ընդդէմ Թէոդորի արհիեպիսկոպոսի քաղաքին:

Յայնժամ իշխանն Նովկորոտայ Գլեբ որդի Սվեաթոսլաւայ խիթացեալ 'ի հերձուածոց ժողովրդեանն, կոչեաց ըզ-

մարգարէն զաւազակաւ , և բազում ինչ հարցեալ , և պատ 'ի պատ առեալ 'ի նմանէ պատասխանիս , յաւելու հարցանել եթէ զինչ գիտիցէ արդեօք որ ինչ դէպք պատահելոց իցեն յայնմ աւուր . և յասել նորա թէ ինքն հանդերձեալ է մեծամեծ սքանչելիս կատարել , խաբիս՝ ասաց իշխանին , և անդէն եհար կարկաց զգլուխն վաղակաւորաւն զոր ունէր 'ի ձեռուն :

Յայս վայր համամտիւք եկին իշխանքն երկերեան . այլ առաւել և անդր ոգի փոասակրութե ընդ մէջ մտեալ վեր 'ի վայր յեղաշրջելոց զամենայն : Քանզի Սելեւթոսեան կամեցեալ ընդարձակել զՀնդնիկամ զերկիր իշխանութեան իւրոյ , 'ի նոյն յորդորեաց և զեղբայր իւր զՎաղվոլաս . և խաղացին երկոքին միաբանութեան 'ի վերայ Խախասլաւայ . որոյ ոչ եւս վստահացեալ 'ի հաստատութիւն ժողովրդեան իւրոյ , անձնատուրեաց կալմեցաւ փախչել կնաւ և որդւովք իւրովք առ Բոլեսլաւ արքայ Լեհաց , և խնդրել միաբանական դժնեն օգնականութեան :

Այլ Բոլեսլաւայ մարտ առաւել էր յայնժամ ընդ Մաձաւա , և չկարաց օգնական լինել Խախասլաւայ : Անտի դիմեաց առ Ենրիկոս Դ , կայսր գերմանացւոց . սակայն և նա յաղմուկս իւրոյ աշխարհին ոչինչ նուազ չուառացեալ քան զԽախասլաւ , հրեշտակս եւեթ կարաց արձակել առ Սելեւթոսեան , զի

անդի տայցէ յաթոռոյն . բայց նա ոչինչ լուաւ բանիցն :

Յանձնառու մնացեալ Իշխանութեանն՝ առ-ձակեաց զորդի իւր զՄանթիկոն ՚ի Հը-ռովմ առ քահանայապետն Գրիգոր Է. այլ և նա յիւրմէ կողմանէ զարքայոր-դին ծանուցեալ նեթ օրինաւոր ժա-ռանգ աթոռոյն Ռուբինոյ , արդեամբք ոչ ինչ կարաց վճարել :

Ի դէպ ժամուն մեռաւ Սմբաթո-ղաւ , և կալաւ զաթոռն Վահրամ : Բայց Պօղոսլաւայ յաղթանակաւ դարձ դարձեալ ՚ի պատերազմէն Մանձաղաց , եկն ամենայն բանակաւն հանդերձ ՚ի հաստատել յաթոռն զԻշխանութեան : Եւ իբրև բնակիչքն Քիլիկիոյ անդրդուեցեալք իմն զմիտս . արքայիւն՝ զդրունս ընդդէմ եդին , պատնէշ պաշարմամբ առ արկ ՚ի քաղաքն . և յանձնառու լինել նո-ցա՝ ներողամիտ մեծանձնութեամբ եմուտ ՚ի քաղաքն . զԻշխանութեան կարգեաց եդ անդրէն յաթոռն , և ինքն եւ դնաց յաշխարհ իւր . և Վահրամ մեկնեցաւ ՚ի Զէյթունիկոմ :

Յետ սակաւ ժամանակի Պօղոս և Օ-լեկ որդիք Սմբատթաւորեայ ՚ի մարձու կալեալ զՓոլոմկիոն՝ արշաւեցին յերկիր հօրեղբօրն իւրեանց Վահրամայ . և նա անկաւ առ եղբայր իւր Խոխանալ . որոյ ընկալեալ զնա անյիշաչար մարդա-սիրութեամբ , դնաց ընդ նմա և եկաւ զԶէյ-թունիկոմ , և պաշարեաց զմիջնաբերդն :

Իսկ Գորիս և Օշեկ 'ի բացեայ գոլով յայնժամ, անձամատարեցին զայլ մարդ զնել ընդ Խոխտալուայ և Վանձոլորոյ. այլ Գորիս անկաւ 'ի սկզբան անդ կը-ռուոյն, և Օշեկ 'ի փախուստ դարձաւ առաքեցելովք զօրօքն ։

Խոխտալուա կալեալ զպատանեակեալն՝ մինչ-դեռ զնայր զայր ընդ մէջ զիրականացն անկելոց, յորոց միոյն էին և ուղք կիսա-մեռ և խոց կայլին, փոլողեալ ոմն՝ որ մե-ռեալ թուէր, խրբե եանս զԽոխտալուա՝ զի 'ի մօտոյ անցանէր, որձակեաց զնետ մի և անդէն զզետեղեալ զԽոխտալուա ։

Այսպէս զըստեցաւ 'ի կենաց վաստա-կաւորս այրայն՝ անուց յիսուն և երից, թողեալ զերիս որդիս, որոց անուանք էին Մաթիւղա, Մեծաթորորք, և Նաւ-թափորք ։

Այլ անմահ յիշատակ կանգնեցին առաքինւոյ իշխանին՝ օրէնքն իւր սակա-ւաթիւք, այլ այնչափ անպատճառք և ձիշդք և յայտնիք, և պատուհասքն ըստ յանցանաց այնպէս արդարակորով կշռեալք, զի և ոչ այլք 'ի պետուեցն Նորոպայ ունէին արդեօք յաւուրս ժա-մանակացն այնոցիկ հանդուռնանան օ-րէնս, թէպէտ և առաւել քան զՆուաս բարգաւաճին 'ի քաղաքականութե ։

ՎՍԵՎՈԼՈՏ Ա. ԵԱՐՈՍԼԱՒԻՉ.

ՎՍԵՎՈԼՈՏ յաղթանակաւ դարձեալ 'ի Քիեւ՝ անց բազմեցաւ յաթոռ թագաւորութեան. ոչ ինչ թողեալ եղբօրորդւոյն իւրոյ՝ որում անկ էր թագաւորութիւն, բայց զՉեռնիկով, և այն ըստ մասամբն:

Յաւել անձին և զնոր իմն մականուն առեալ 'ի հայրենի անուանէն. և այս սովորութիւն հասարակ եղև ապա թագաւորացն Ռուսաց: Զի կոչեաց զանձն իւր Վսեւոլոտ Եարոսլաւիչ, այսինքն է Եարոսլաւեան:

Որդիքն Իսիասլաւայ Եարոփոլք և Սվեաթոփոլք առ ժամանակ մի խաղաղութեան էին ընդ Վսեւոլոտայ. և յամին 1084 յապստամբեալ թշնամեաց յերկիր իշխանութեան Եարոփոլքայ, արձակեաց Վսեւոլոտ ընդդէմ նոցա զորդին իւր զՎլատիմիր, և էառ անդրէն 'ի ձեռաց նոցա զքաղաքսն Եարոփոլքայ:

Սակայն նա 'ի գալ ամին միւսոյ 'ի վրէժ զրկանացն Վսեւոլոտայ, կամ թէ ոչ շատացեալ իւրով մասամբն, ամբարձ զձեռն իւր ընդդէմ հօրեղբօրն. և ոչ համբերեալ բուռն զօրութեանն Վսեւոլոտայ, եթող զնստանիս իւր և փախեաւ 'ի Լեհս: Այլ և անդ եւս ոչ

գտեալ զկարծեցեալ օգնականութիւն՝ և իմացեալ զիւրոցն բանսարկութենէ 'ի Քիեվ, դարձաւ անդրէն առ Վսեվոլոտ՝ ապաւինեալ 'ի գթութիւն նորա. որ և ներեաց նմա զամենայն, և դարձոյց 'ի նա վերստին զաշխարհն նորա: Բայց յետ սակաւ ժամանակի սպանաւ Եարոփոլք 'ի ճանապարհորդութեան իւրում յաւա-զակաց:

Եւ Վսեվոլոտ մեռաւ յամին 1093, լեալ ամաց վաթսուն և չորից, և թա-գաւորեալ ամս հնգետասան:

Ի սորա աւուրս գրեցաւ 'ի Քիեվ սրածութիւն ահագին, և կոտորեաց զբա-զումս 'ի բնակչաց քաղաքին:

Դարձեալ և Ուրբանոս Բ. քահա-նայապետ Հռովմայ առաքեաց, ասեն, առ Վսեվոլոտ զեպիսկոպոս ոմն, և ընդ նմին նշխարս սրբոց բազումս:

Այլ թագաւորութիւն Վսեվոլոտայ ա-ռաւել համբաւեալ է փոփոխմամբ կար-գի յաջորդութեան թագաւորացն Ռուսաց, զոր սա առաջին եդաւ: Զի ուր 'ի սկզբանէ հետէ անդրանիկն յաջորդ-դիւ ժառանգէր զթագաւորութիւն, աս-տի և անդր առաջնութիւն եղև եղբարց թագաւորել մի ըստ միոջէ, և 'ի սպա-ռել նոցա ապա առնոյր զթագն անդրա-նիկ որդի երիցագոյն եղբարցն վախճա-նելոց, և յետ նորա եղբարք իւր ըստ կարգի: Եւ այս փոփոխումն թուի հաս-տատեալ հաւանութեամբ Իսիասլաւայ՝ մինչ-

չև մեռեալ էր. կամ թէ տաւանց այնր իսկ՝ ինքնին հաստատեցաւ սովորութիւն այն անփութութեան Ռուսաց, որոց շատ էր զի. յազգէ Ռիւրիկեայ ո՛ ոք և իցէ թա֊ գաւորեսցէ ինքեանց։

Այլ թէ քանի՛ քանի՛ աղէտից Ռու֊ սիոյ պատճառս եղ այս փոփոխութիւն, որպէս և բաժանումն աշխարհին ՚ի մա֊ սունս մասունս, վաղ տեսցի յառաջի֊ կայդ։

ՍՎԵԱՏՈՓՈԼՔ Բ. ԻԶԵԱՍԼԱՎԻՉ

ԶՀԵՏ Վսեւոլոդայ անցեալ յա֊ թոռն եղբայր նորին Սվեատոփոլք՝ ա֊ ռաջին յայտնեաց և զթերութիւն խոհական֊ նութեան իւրոյ, բանտարկեալ զպատգամա֊ ւորս Փոլովցեաց առաքելոց ՚ի հաստա֊ տել զդաշինսն՝ զոր ունէին ընդ Ռուսս։ Վասն որոյ և նոցա հեղեղաբար արշա֊ ւեալ ՚ի Ռուսիա՝ պաշարեցին զԹոռ֊ ժոք քաղաք ՚ի գաւառին Քիեւեայ։

Անագանիւ զգաստացեալ Սվեատթո֊ փոլք՝ արձակեաց զպատգամաւորսն, և խնդրէր զհաշտութիւն. այլ ոչ ևս հաւա֊ տացին խոստմանց նորա։ Եւ զի ոչ ինչ աւելի քան ութհազարս զօրականս ունէր նա յայնժամ յատին, թիկունս խնդրեաց ՚ի Վլատիմիրայ. և նա վաղ֊ վաղակի յարուցեալ եկն զօրօք իւրովք,

տուեալ ընդ իւր և զեղբայրն իւր զՌոս-Թիսլաւ :

Իբրև հասին գումարեցան եղբարքն երեքեան 'ի գաւառ անդր Քիեւայ, ոչ ևս հանդուրժեալ Վլատիմիրայ՝ յանդիմանեաց զՍվեաթոփոլք սակս անխորհուրդ գործոյն : Ի զայրոյթ ցասման գրգռեցաւ Սվեաթոփոլք, և փոքր միւս ևս կողմանքն երկոքին ընդ միմեանս անկանէին՝ Թէ չէր Վլատիմիրայ հանդարտեալ զվէճն :

Վլատիմիր խրատ տայր՝ զէն 'ի ձեռին խնդրել 'ի Թշնամեացն զխաղաղուԹի. այլ 'ի խիզախել Սվեաթոփոլքեանց՝ խառնուրդք եղեն մարտին, և Փոլովցիք յաղթող գտեալք՝ հալածական վարեցին զՌուսս : Սոքա 'ի լուղ անցին ընդ գետն գարնանադայր, և Ռոսթիսլաւ գետամոյն եղև. հազիւ հազ զերծաւ 'ի վտանգէն և Վլատիմիր, որ ձեռն տալ կամէր եղբօրն ընկղմեցելոյ. և տեսեալ զկոտորած իւրոցն՝ մեկնեցաւ 'ի Չերնիկով :

Իբրև տեսին Փոլովցիք՝ եԹէ դարձեալ սակաւաձեռն գնդաւ միայն Սվեաթոփոլք մաքառաւոր ձողոպրեալն 'ի մահուանէ, անդեցին զպաշարումն Թոռճոքայ, և տուեալ զայն՝ հուր հարին այրեցին զքաղաքն, և զբնակիչսն 'ի գերութեան վարեցին. որք և գոգցես առ հասարակ մեռան սովու և ծարաւով և տառապանօք ճանապարհին :

Ցայտեալ 'ի խնդրել Սվեաթոփոլքայ զհաշտութիւն, զիջան Թշնամիք. և 'ի հաստատութեան դաշինն եկաւ իւր Սվեաթոփոլք 'ի կնութիւն զդուստր խանին նոցա՝ որում անուն էր Թուղդըր :

Օլեկ որդի Սվեաթոսլաւայ կամեցեալ յինքն կորզել զՉեռնիկով 'ի ձեռաց հօրեղբօր իւրոյ Վլատիմիրայ, գրգռեաց զՓոլովցիսն յարձակել ընդ իւր յանկարծակի 'ի սահմանս նորա : Եւ նոքա յանձին կալեալ՝ դիմեցին 'ի Չեռնիկով. յաւարի առին զքաղաքն, և զարուարձանեայսն հրձիգ արարին. և 'ի դառնալ անդրէն յաշխարհն իւրեանց՝ ամենակոխ արարին և զաշխարհն Օլեկայ, իբր 'ի վճար ծախուց պատերազմին՝ յոր հրաւիրեաց զնոսա :

Վլատիմիր թողեալ զՉեռնիկով ամրացեալ էր 'ի Փերեըսլաւ. այլ ընդ հուպ հաւանեցան դալ 'ի հաշտութիւն ընդ Վլատիմիրայ Փոլովցիք, և յամին 1095 առաքեցին առ նա զերկուս ոմանս 'ի գլխաւորաց անտի իւրեանց, զԻթլար և զՔիթան :

Ի մտանել Իթլարայ 'ի քաղաքն՝ Վլատիմիր առաքեաց 'ի բանակ զեսպանացն 'ի պատանդութեան զորդին իւր : Անդ դաւաճանք ոմանք սադրեցին Վլատիմիրայ սպանանել զԻթլար. և մի ոմն 'ի նոցանէ Սլաւաթա անուն, որ եկեալ էր 'ի Սվեաթոփոլքայ, զխմադրաւ եղև անձամբ երթալ զերծուցանել զպա-

տանդն զօրդլին Վլատոփմիրայ եղբօր Վլա-
տիմիր, չզխոսեմ մրալես, զեկնու հրա-
պուրանկաց ներգին :

Յայնժամ գնշէրայն գնաց Ալեւա-
թա 'ի բանակ Թշնամեացն, և դառեալ
'ի քուն զփոլովցիսն՝ յափշտակեաց զար-
քայորդին, և արար 'ի նաւս խորովքն
կոտորած մեծ. անդ սպանաւ և Քի-
թան. և Ոթլար խողխողեցաւ առ Վլա-
տիմիրայ :

Այսպ զինեաց Վլատիմիր անյապաղ 'ի
վերայ Փոլովցեաց. որում զձանապար-
հայն յօգնութի հասեալ և Սվեաթո-
փոլքայ՝ կանգնեցին յաղթանակ մեծ,
և ածին աւար և գերի բազում :

Այլ բազմաթիւ ազգ նեռողացն վաղ
զումարեցան դարձեալ 'ի վերայ Ռուս-
սաց, և գնացեալ յաձիւն դարձուցին
զքաղաքն Եուրեվ. և 'ի միւսում տա-
րւոջ սաստկագոյն բանակաւ արշաւեցին
'ի Ռուսիա յերկիր առաջս, յորոց միումն
առաջնորդէր իւքնին Թէնզըր խան ա-
ներ Սվեաթոփոլքայ : Սակայն յանկա-
ծեալ նորա 'ի պատերազմին՝ փախեաւն և
զօրք իւր : Եւ իբր 'ի տեղի նոցա փոխա-
նակեցին նորանշան հարուածք մարա-
խոյ՝ այն առաջին անգամ եկեալք 'ի
Ռուսիա 'ի կողմանցն Թաթարաց, և կե-
րան սպառեցին զամենայն դ.եղ դալար.
որոց զհետ եկին ախտք և հիւանդութիք
մահաբերք :

Յամին 1096 ժողով արարին 'ի Քիեվ

Սվեաթոփոլք և Վլատիմիր հանդերձ եպիսկոպոսօք և վարդապետօք և պա- տուականօք քաղաքին՝ 'ի կարգաւորել զնոսա հաստատակաց և զխաղաղութիւն աշ- խարհին իւրեանց :

Կոչեցին և զՕլեկ, և յանդգնեալ նո- րա՝ խաղացին եղբարքն երկոքեան ընդ- դէմ նորա . որոյ փախուցեալ 'ի Չեռ- նիկովայ՝ անկաւ 'ի Սթարոտուպ . այլ իբրև հարկեցաւ նա խնդրել զհաշտու- թիւն, հրամայեցաւ նմա Սվեաթոփոլք եր- թալ 'ի Սմոլէնսք առ եղբայրն իւր Դաւ- ւիթ, և ածել զնա եւս ընդ իւր 'ի Քիեվ : Երդմնի եղև Օլեկ առնել զբանն, և գնաց 'ի Սմոլէնսք . և քանզի յայնժամ Դաւիթ 'ի բացեայ գտանէր, քաղաքա- ցիքն զդուրս ընդդէմ եդին : Օլեկ առ ժամանակ մի առանձնականն լեալ՝ ապա գնաց սակաւաձեռն զնդաւ 'ի վերայ Մուրոմ քաղաքի, զոր ունէր Իզեա- սլաւ որդի Վլատիմիրայ : Բայց իբրև նա ոչ էառ յանձն զառաջարկութիւնս Օլե- կայ՝ 'ի զէն ընթացան երկոքեան . և 'ի մարտի անդ մեռաւ Իզեասլաւ, և Օլեկ էառ զՄուրոմ :

Մսթիսլաւ միւս որդի Վլատիմիրայ իբրև զգաց զդէպս եղբօրն և զյափշտա- կութիւնն Օլեկայ, առաքեաց առ նա պատգամաւորս խօսել 'ի հաշտութիւն, խոստացեալ բարեխօսել վասն նորա առ հայր իւր : Իսկ իբրև արհամարհեաց Օ- լեկ զպատգամաւորս Մսթիսլաւայ, այն

զի 'ի մահ եղեալ էր յարձակել . եւ 'ի սահմանս նորին, խաղաց Մսթիսլաւ 'ի վերայ նորա մարտիւ պատերազմի . եւ յանձնուկս ուրեք փախեալ գնա՝ կալաւ նոց 'ի նմանէ զամենայն զքաղաքսն . եւ ապա խօսեցաւ ընդ նմա 'ի խաղաղութի :

Ի դարման երկպառակութեց իշխանացն՝ ժողով գումարեաց Սվեսաթոփոլք 'ի Լիւպեց քաղաքէ մերձ 'ի Չեռնիգով . ուր միաբան հաւանութե ամենեցուն նորա, բաշխեցան իւրաքանչիւր իշխանութիւնք, եւ իշխանքն երդուան 'ի խաչն՝ հաստատուն կալ 'ի բանս ուխտին . եւ զի թէ ոք վրդովեսցէ զխաղաղութիւն, ամենեքեան միաբանութեամբ խնդրեսցեն 'ի նմանէ զվրէժ զրժանացն :

Նախկին գործիչ ուխտին եղեւ Դաւիթ որդի Իգորայ, թոռն մեծին Վլատիմիրայ . զի կալեալ 'ի շղթայս զՎասիլքօ որդի Ռոսթիսլաւայ զթոռնորդի Եարոսլաւայ օրէնսդրի . կուրացոյց եւ զաչս նորա, եւ անողորմ տանջանօք գեղոցաց չարչարեաց զնա :

Յայնժամ Վոլոտար եղբայր հերացելոյ իշխանին Վասիլքոյի գումարեալ 'ի վերայ Դաւթի՝ պաշարեաց զնա յանձուկ քաղաքի ուրեք . եւ նորա 'ի նեղ անկեալ՝ արձակեաց զՎասիլքօ, եւ կաստեցաւ յիւրմէ իշխանութենէն :

Յետ սակաւուց եւ Սվեսաթոփոլք իւրենին ուխտադրուժ լեալ յարեաւ 'ի վերայ Վասիլքոյ եւ Վոլոտարայ, եղբօ-

թէ կալուածք իշխանութեան նորա՝ իւրոց հօրն իցեն լեալ կանխառու ։ Եւ միաբանեալ երկուցն եղբարց՝ եկին ընդդէմ նորա ։ Վասիլքօ քանզի կոյր էր՝ անց ընդ մէջ զօրացն իւրոց առաջնորդաւ, և ձախու ձեռամբն բարձեալ զխաչ՝ ազաղակէր առ զօրսն. «Ի զօրութի սորայ խաչիս երդուաւ, ասէր, Սվեաթոփոլք՝ պաշտպան կալ մեզ իբրև հարազատաց. Նորին խորհրդով բրեաց Դաւիթ զաչս իմ. և նա ինքն խնդրէ արդ բառնալ զկեանս իմ. այլ արդար է Աստուած. դատ արասցէ ընդ մեզ և ընդ նա »։

Ի բանից աստի յեռանդն վրէժխնդրութեան վառեալ զօրականքն՝ հարին խորտակեցին զՍվեաթոփոլք. և նա խընդրեալ ընկալաւ յարքայէն Մաճառաց զօրս 'ի խաղալ անդրէն 'ի վերայ երկոցունց եղբարցն ։

Յայնժամ անագորոյն Դաւիթ անցեալ 'ի կողմն Վասիլքայ, զոր ինքն իսկ կուրացուցեալ էր, եդ զկեանս իւր 'ի պատանդի առ Վոլոտարայ, և զնոսա անձամբ առ Փոլովկիս, որոց առաջնորդէր յայնժամ Պոնեակ ոմն անուն՝ որ բազում չարիս անցուցեալ էր ընդ աշխարհն Ռուսաց ։ Սա յանձն առեալ զխնդիրն՝ խաղաց ընդ Դաւթի ընդդէմ Մաճառաց, և խորտակեաց զնոսա 'ի սպառ ։

Իսկ ուրեմն 'ի խաղաղել զքաղաքական պատերազմունս՝ նոր ժողով կարգեցին իշխանաց. յորում զԴաւիթ զըր-

կեալ յիշխանութէն Վլատիմիրայ՝ ե-տուն նմա այլուր քաղաքս հինգ, և ար-ծաթ բազում, և եղև խաղաղութիւն 'ի մէջ իշխանացն Ռուսաց :

Դարձուցին ապա զզէնս իւրեանց ընդդէմ Լեհաց . բայց 'ի նոցանէ հա-լածականք եղեալ՝ յարձակեցան 'ի Փո-լովցիս, և թափեցին 'ի նոցանէ աւար բազում :

Եւ յամին 1113 մեռաւ Սվեաթո-պոլք՝ թագաւորեալ ամս քսան :

Ի սորա աւուրս թշուառութ̃բ իւրով բաղձանալեալ էին 'ի Քիեւ Հրեայք ճար-տարք 'ի վաճառականութի, որք և հեա-ղհեալ մեծանային ճոխութ̃բ . այլ ա-տելի եղեալ Ռուսաց ընդ այլ և այլ պատճառս, անդէն ընդ մեռանել Սվեաթոպոլքայ՝ յարձակեցան Ռուսք և յանխնայ կոտորեցին զնոսա :

ՎԼԱՏԻՄԻՐ Բ. ՎՍԵՎՈԼՈՏՈՎԻՉ ՄՈՆՈՄԱԽ

ԱՒԱԳԱՆԻՆ Քիեւայ փութացեալ զառաջս առնուլ չարեաց անիշխանու-թեն՝ ընտրեցին 'ի թագաւոր զՎլատի-միր որդի Վսեվոլոտայ . որոյ զառաջինն հրաժարեալ, ապա կրկին եւս պյանձա-խել խաղաղութեան Քիեւայ՝ հաւանե-ցաւ իշխանացն : Եւ կրկին ետուս 'ի քա-

ղայքն՝ դադարեաց ամենայն աղմուկ ամբոխին. այլ նա 'ի զերծուցանել զՀրեայսն յոխակալութէ Ռուսաց՝ եհան արձակեաց զնոսա 'ի Ռուսիոյ, հադացեալ անդրժելի պահել զինչս և զստացուածս նոցա զամենայն զձանապարհայն, և խոստացաւ հովանի լինել նոցա նաև արտաքոյ առ սահմանօք իւրոյ աշխարհին :

Ցայնմ հետէ 'ի խոր խաղաղութեան վայելեցին Ռուսք խոհական և անյողդողդ առաջնորդութեան Վլատիմիրայ : Եւ որդիքն նորա գամ քան զգամ ընդարձակէին զպետութիւն նորա : Մստիսլաւ իշխան Նովկորոտայ յաղթութիւնս տարաւ 'ի Լիվոնիա, և ընդարձակեաց զպարիսպս քաղաքին իւրոյ. Եարոփոլք խորտակեաց 'ի սպառ զփոլովցիս առ Տոն գետով. Եուրի, որ և Գէորգ լսի, կալաւ յաղթութիւն մեծ 'ի վերայ Բուլղարաց՝. և Անդրէաս էառ զքաղաքս ինչ 'ի Լեհաց :

Եւ ինքն Վլատիմիր խաղաղասէր և առաքինասէր բարուքն յամենայնի ձըգնեալ 'ի բարգաւաճել զժողովուրդս իւր, ցանկալի եղև շրջակայ ազգաց անգամ :

Ինքնակալն Ալէքս Կոմնենոս առաքեաց նմա 'ի պարգև զարդս կայսերականս իւր 'ի գինոց Կոստանդնի Մոնոմախ կայսեր, որ էր հաւ Վլատիմիրայ 'ի մօրէ. և վասն այսորիկ՝ որպէս թուի՝

անուանեցաւ Մոնոմախ և Վլատիմիր ինքն ։

Սա այս Վլատիմիր առաջին 'ի Թագաւորս Ռուսաց՝ կոչեցաւ և Ձեր, որ է Արքայ, կամ Տէր, եւ և Սամոփէրժէց, այսինքն է՝ Ինքնակալ, որպէս յայտ է 'ի դրամոց նորա ։

Եւ Թագաւորեալ ամս մետասան՝ մեռաւ յամին 1125 'ի հասակի վաթսուն և երկուց ամաց. և էին նորա որդիք ութ. Մսթիսլաւ, Իզիասլաւ, Սվեաթոսլաւ, Եարոպոլք, Վեաչեսլաւ, Ռոման, Եուրի, և Անդրէաս. և կալաւ զաթոռն Մսթիսլաւ ։

ՄՍԹԻՍԼԱՒ ՎԼԱՏԻՄԻՐՈՎԻՉ

ԶՀԵՑ խաղաղական աւուրց Թագաւորութեն Վլատիմիրայ դարձեալ յաղմուկս անընդհատս պաշարեցաւ Ռուսիա ընդ ամս ոչ սակաւս. զի անհաշտ անդէն 'ի սկզբան Թագաւորութեն Մսթիսլաւայ արշաւեցին Փոլովցիք յաշխարհն, և յաւարի առին զգաւառս ամեղիս ։

Եւ թէպէտ Եարոպոլք եղբայրն Մսթիսլաւայ վանեաց զնոսա քաջութ̅, սակայն ոչ նուաղ չարաղէտ դառն քան զբարբարոսաց արշաւանսն՝ յարուցանէին Վսեւոլոդայ որդւոյ Օլեկայ զՉեր-

նիկով 'ի ձեռաց Եարոսլաւայ հօրեղբօր իւրոյ :

Ի զայրոյթ բարկութեան վառեալ Մսթիսլաւ ընդ յանդգնութիւն անիրաւութեան, երդուաւ 'ի խաչն Տր՝ վրէժխնդիր լինել Վսեվոլոդայ : Այլ նա կանխեաց հրաւիրեաց զՓոլովցիսն իւր 'ի թիկունս, խոստացեալ 'ի մասն աւարին հատուցանել զնոսա :

Եւ մինչդեռ պատրաստամարտք երկուստեք երթային և գային, Ռուսք ամենք կալեալ զճանապարհսն զպատերազմաւորս Փոլովցեաց՝ 'ի գերութիւն վարեցին. ընդ որ ցասուցեալ նոցա, առ ժամն շատ համարեցան պահանջել յետս զգերիսն. և Վսեվոլոդ հարկեցաւ խնդրել 'ի Մսթիսլաւայ զհաշտութիւն, դարձուցեալ 'ի նա անդրէն զՉերնիկով :

Մսթիսլաւ ըստ ընդարձակ գթութեան՝ ներողամիտ կամէր լինել և յայս նուազ. այլ երկնչէր 'ի լուծանելոյ զերդումնն. և թէպէտ ըստ վճռոյ արքեպիսկոպոսին կարաց շնորհել նմա զներումն, սակայն մինչև ցմահ իւր տարապարտ խղճիւ տագնապէր զանձն. և մեռաւ յամին 1132, թագաւորեալ եօթն ամ եւեթ. և եթող ուստերս վեց, աւանդեալ զնոսին 'ի ձեռս եղբօր իւրոյ Եարոպոլքայ :

ԵԱՐՈՓՈԼՔ Բ. ՎԼԱՏԻՄԻՐՈՎԻՉ

ԱՆՑԵԱԼ սորա յաթոռ եղբօրն իւրոյ՝ նախ առաջին հոգացաւ բաշխել յեղբօրորդիսն իւր որչափ ինչ արժան էր պատուոյ նոցա. այլ քանզի անմարթ էր կատարել զայն առանց խորհրդոյ զբաժինս իւրոյն եղբարց, ածին ի մէջ անհնարին չփոթք և խառնակութիւնք ծագեցան 'ի մէջ իշխանացն, մինչև անտի զբռնանալ Լեհաց 'ի կողմանս ինչ աշխարհին իւրեանց, և անդէն միաբանեալ ընդ միմեանս՝ յարձակեցան ընդդէմ հաստատակաց Թշնամւոյն։

Զարհուրեալ Պոլեսլաւ Դ. արքայ Լեհաց 'ի միաբանութենէն Ռուսաց, մինչդեռ վարանէր ելս գտանել իրացն, մի ոմն 'ի խորհրդակցաց նորա Վլոտիմիրէչ անուն յառաջ մատուցեալ ձեռն յանձին հարկանէր՝ երթալ անձամբ դաւաճանել զարքայն Ռուսաց. և եկն առ Եարոփոլք սակաւ արամբք՝ բողոքելով իմն ընդդէմ իւրոյ արքային, որ յետ կողոպտելոյ ասէր՝ զինչս իմ, խնդրէ բառնալ և զկեանս։ Եւ իբրև ընկալաւ զնա Եարոփոլք, և հարցանէր գիտել 'ի նմանէ զպատրաստութիւն Լեհաց և զզօրութիւն Պոլեսլաւայ. Վլոտիմիրէչ զամենայնն ուժով պատմեալ ըստ

կամի՝ բազում չարախօսութիւն յաւելուր զԹագաւորէն, և ասէր՝ եԹէ Լեհք ևս տագնապեցեալ 'ի Նմանէ՝ մատգիւրագոյնս արդեօք տայցեն զաշխարհն 'ի ձեռս Եարոփուլքայ։ Եւ այսպիսի ազդուկ բանիւք որսացեալ զսիրտ Նորին՝ եղև մի 'ի խորհրդակցացն սիրելեաց, և անմեկնելի էր 'ի Նմանէ ուր և երԹայր։

Այսպէս 'ի միում աւուր մինչ առանձին ուրեք արտաքոյ քաղաքին ելեալ էր ընդ Եարոփուլքայ, յանկարծակի կալ և կապ արարեալ զնա 'ի վերայ երիվարին՝ յափշտակեաց տարաւ 'ի Կրակովիա, և արգել 'ի դիպահոջ։ Եւ ոչ կարաց Եարոփուլք զերծանել անտի՝ մինչև հատոյց արծաԹ յոլով, և երդուաւ հարկատու և ստրուկ լինել արքային Լեհաց։

Եարոփուլք 'ի մտի կալեալ զդաւն, եգիտ խորամանկ զոմն Մաձառ յազգէ, և խրատեալ զնա որպէս կամէրն՝ արձակեաց 'ի Կրակովիա. ուր իբրև այր ազատազգի դիւրամատոյց գտեալ Նորա զարքային Լեհաց՝ ամբաստան եղև զարքայէն Մաձառաց, իբրու եԹէ Նախանձու պատճառաւ զրկեալ իցէ զինքն յինչիցն, և արտաքսման արարեալ։ ԳԹացեալ Պոլեսլաւայ յայրն, կարգեաց զնա քաղաքապետ Վիսլիցա քաղաքի մերձ 'ի Կրակովիա։

Ընդ այն ժամանակս դէպ եղև արքային Լեհաց գնալ 'ի սահմանս իւրոյ աշխարհին առ Գերմանացւովք. և Մա-

Ճառքն զայն պատմեն առնել՝ հանգամա-նաց շուրջանակի՝ եթէ Ռուբէն մեծա-կազմութեամբ յարձակեալ գան 'ի Լեհս. վասն որոյ ամենայն Ճոխք և աւագա-նին Քրաքովիոյ առաւաւտուն եղեն ընչիւք և ընտանեօք իւրեանց 'ի Վիլիքա իբրև 'ի քաղաքս ամուր՝ զի կառուցեալ էր յապառաժի :

Զայս ամենայն 'ի դէպ ժամու զգա-ցեալ Եպարփոսքայ՝ էառ ընդ իւր դունդ մեծ ընտիր զօրականաց, և յարձակեցաւ գիշերայն 'ի վերայ ամբոխականացն. և հնարիւք մտանէին 'ի բաց բանեալ զդ-րունսն՝ եմուտ գերելեաց զամենայն ա-ւագանին, զինչս յափշտակեաց, և ըզ-քաղաքն քանդեալ աւերեաց. և որպէս պատմեն Լեհք, պատկերն և զմասունսն գա-ւաՃան :

Ոչ շատացան Ռուսաց վրէժխնդրու-թիւ, և առաքեցին զԵպարփոսքն խաղալ 'ի վերայ նորին իշխեան Պոլէսլաւայ : Եւ նա 'ի գաւառն իմն ձգեալ զնա յաշ-խարհն իւրեանց, ուստիք յիշխանացն Ռուսաց՝ հրամանաւն Եպարփոսքայ յար-ձակեցան առին զԿալիչ քաղաքաւ, զոր ունէր Եպարոսլաւ խորթ որդի Վլադի-միրայ Մոնոմախին. և նա փախեաւ առ Պոլէսլաւ առ մտերիմ բարեկամ իւր, և դրդուեաց զնա 'ի խնդրել զվրէժ զրկա-նացն : Ի նոյն և գլխաւոր բնակիչքն Կալիչայ 'ի յորդորելոյ Եպարփոսքայ երթեալ խնդրեցին 'ի Պոլէսլաւայ՝ զի

ածցէ զիշխանն իւրեանց զԵարոսլաւ, և վանեսցէ զբռնացեալսն 'ի մասին ժառանգութեան նորա. զի և Եարոփոլքայ կամացն հակառակ էին, ասեն, տոպարք իշխանացն: Պոլեսլաւ հաւատաս ընծայեալ նոցա՝ սակաւաձեռն զընդաւ եկն մերձ 'ի Կալիշ. և ահա յանկարծակի պաշարեցին զնա երկուստեք բանակք Կալիշայ և զօրք Եարոփոլքայ:

Եւ մինչդեռ Պոլեսլաւ անյողդողդ արիութեամբ փութայր ճողոպրել վանել ըզդաւաճանսն՝ Վլսեայր զօրավարս նորին զարհուրեալ 'ի փախուստ դարձաւ, և 'ի խառն ամբոխ մարտին խոց վիրաւոր անկեալ արքային յերիվարէն՝ հազիւ ճողոպրեցաւ յերկիր իւր 'ի ձեռն միոյ ուրուք յիւրոցն. և հասեալ 'ի Քրաքովիա՝ առաքեաց առ Վլսեայր մորթ մի նապաստակի և վուշ և աղեկատ. և նա առ անհնարին ամօթանացն անձնասպան եղև:

Յետ սակաւուց մեռաւ և Եարոփոլք՝ թագաւորեալ ամս ութ. և թագաւորեաց եղբայր նորա խաղաղասէրն Վեաչեսլաւ: Այլ զկնի երկոտասան աւուրց եկն եհաս 'ի դրունս Քիեվայ Վսեվոլոտ որդի Օլեկայ, և պահանջէր 'ի նմանէ զթագաւորութիւն. և Վեաչեսլաւ անզէն եւս գնաց անդրէն յառաջին անզի իշխանութեան իւրոյ:

ՎՍԵՎՈԼՈԴ Բ. ՕԼԿՈՎԻՉ

ՅԱՂԹԱԿԱԼԻՑ ժամանակս պետութեանն Ռուսաց Թագաւորեալ առն ճարտարի 'ի հնարս դաւաճանութեանց, և քան զևս բորբոքեաց զաղէտս աշխարհին:

Յանդուգն հնարս նիւթեալ յընդարձակել զսահմանս իւր՝ ամփոփմամբ սահմանաց իշխանացն իւրոց, բարեկամացաւ ընդ արքային Լեհաց, և օգնական եղև նմա զօրօք 'ի մարտս նորին. զի և նա իւրեանն օգնեսցէ 'ի դէպ ժամանակի:

Այլ արքային Լեհաց 'ի պարտութեան մատնեցաւ, և Վսեվոլոդ յետ երկուց ամաց մեռաւ յամին 1146, և արարին ժողովուրդքն խնջոյս մեծի ուրախութեան 'ի յուղարկաւորութեան նորա:

ԻԳՈՐ Բ. ՕԼԿՈՎԻՉ

ՎՍԵՎՈԼՈԴ որ խոստացեալ էր Իզիասլաւայ որդւոյ Մսթիսլաւայ զաթոռն, 'ի մեռանելն ետ զայն եղբօր իւրում Իգորայ: Սա այր խիստ և ամբարտաւան՝ փութով ատելի եղև իւրոցն, ժխտեալ

զխոստումն իւր թեթեւացուցանելոյ ըղ-
ձանրութիւն հարկացն՝ զոր հարկէին
Վսեվոլոդայ, եւ տուեալ զանձն 'ի դա-
տարկութե եւ յամենայն ախտս գարշու-
թեց. եւ շողոմարար իշխանքն իւր լցին
զպետութիւն ամենայն անիրաւութե̃ք եւ
զրկանօք: Սմին իրի Քիեւացիք ետուն
զաթոռն՝ Իզասլաւայ:

Յայնժամ եւ Իկոր առեալ ընդ իւրն
եւ զզօրս միոյ ուրուք յեղբարց իւրոց՝
խաղաց 'ի վերայ նոցա. եւ 'ի չկամել
Քիեւացւոց մարտ դնել՝ անկաւ խռո-
վութե մեծ 'ի բանակին Իկորայ, եւ սկսան
կոտորել այր զընկեր, մինչ զի եւ Իկոր
ինքնին 'ի փախուստ աճապարեալ՝ ա-
ւուրս չորս թաքեաւ 'ի ճահիճս ուրեք.
եւ ապա 'ի յայտ եկեալ ածաւ առաջի
Իզասլաւայ, եւ նա շղթայակապ արգել
զնա 'ի բանտ խաւարչուտ:

Ի գալ ամին միւսոյ խնդրեաց Իկոր
յԻզասլաւայ հրաման կրօնաւորելոյ, եւ
եմուտ 'ի մենաստան մի 'ի Քիեւ. այլ
Սվեաթոսլաւ եղբայր նորին յարեաւ 'ի
վերայ Իզասլաւայ 'ի խնդրել զվրէժ
եղբօրն: Եւ իբրեւ 'ի պարտութե մատնե-
ցաւ նա առաջի Իզասլաւայ, եւ խնդրէր
զհաշտութի առանց յետս կալոյ 'ի պա-
հանջմանացն, Իզասլաւ հրձիգ արար
զամենայն տունս եւ զագարակս նորա,
եւ էառ զքաղաքս նորա, եւ հալածական
արար զնա յաշխարհէն:

Իսկ Իկոր յետ վեցամսեայ թագա-

ւորութեան եւ միաբանեայ միաձայնութեամբ ամենեքեան 'ի նմին 'ի վանս իւրում խողխո-ղեցաւ 'ի ժողովրդեանն Քիեւայ . եւ մարմին նորա մերկ քարշեալ ընդ փո-ղոցս քաղաքին՝ անդ թաղեցաւ 'ի շի-րիմս թագաւորացն :

ԻԶԻԱՍԼԱՒ Բ. ՄՍՏԻՍԼԱՒԻՉ

Եւ արդէն Իզիասլաւ հաստատեալ 'ի թագաւորութեան իւրում՝ անդրէն յինքն դարձոյց զքաղաքսն աւերեալս յօտարաց : Միաբանեցին ընդ նմա եւ ամենք յիշխա-նացն, որոց ձեռնտուութիւն նուաճեաց եւ զայլսն . եւ Սվեաթոսլաւայ եւս 'ի կը-նութիւն զթոռն իւր՝ զի մոռասցին եղե-ցին նմա արկածք եղբօրն :

Եուրի որդի Վլատիմիրայ երկրորդի քանիցս ոխս ունէր ընդ Սվեաթոսլաւայ՝ թշնամացաւ եւ ընդ Իզիասլաւայ , եւ միաբանեալ ընդ իւր զՓոլովցիս՝ խաղաց ընդդէմ նորա , եւ եղեւ պատերազմ մեծ հուպ 'ի Փերեյասլաւ քաղաք : Անդ պար-տեցան զօրքն Իզիասլաւայ , եւ ինքն կնաւ եւ որդւովք իւրովք փախուցեալ ապաստանեցաւ 'ի Վլատիմիր :

Եւ զի աներ էր Իզիասլաւ արքային Մաճառաց , եւ ազգականից արքային Լե-հաց , խնդրեաց 'ի նոցանէ զօրս յօգնա-

կանոնէ, և նոքօք համագործ եւ ընդդէմ Եուրեայ : Այլ Մաճառք և Լեհք 'ի տեսիլ եւեթ թշնամեացն բազմութեան՝ յետոյ ընդ կրունկն դարձան . և Իզիասլաւ հարկեցաւ խնդրել զհաշտութի՛, և թողուլ Եուրեայ զթագաւորութի՛ն Քիեւայ :

Սակայն աւագանին Ռուսաց դադար մտաբանեալ՝ կոչեցին զԻզիասլաւ անդրէն յաթոռն . և նա եկն 'ի Քիեւ ոչ բազում զօրօք : Իսկ Եուրի Նիզակակցութե՛ իշխանին Կալիչայ յարձակեալ 'ի Քիեւ՝ վերստին կալաւ զաթոռն . և մինչդեռ անդրդել անձնատուր լեալ 'ի փափկութի՛ս և 'ի թուլութիւնս կայր յանհոգս, Իզիասլաւ ստուար բանակաւ անկեալ 'ի վերայ բանաւորին՝ հալածեաց վանեաց զնա 'ի Քիեւայ, և եմուտ անդր մեծաշուք յաղթանակաւ՝ և ծափահայն ցնծութե՛ քաղաքացեացն :

Այլ յանդադարելի պատերազմաց և 'ի խռովութեանց աշխարհին զերծոյց զնա մահն յամին 1156, թագաւորեալ ամս ութ : Եւ հրաւիրեցաւ 'ի թագաւորել վերստին խաղաղասէրն Վեաչեսլաւ. այլ նա ետ զաթոռն ցՌոստիսլաւ եղբայր Իզիասլաւայ :

Իսկ Նորա կասկածեալ եթէ Իզիասլաւ Դաւութեան՝ իշխան Չերնիկովայ ակն եդեալ իցէ թագաւորութեանն, յարեաւ 'ի վերայ Նորա անխորհրդաբար, և 'ի պարտութիւն մատնեալ փա-

խռովական եղև, և եթող զաթոռն՝ Իսիասլաւայ :

Սակայն և նա ստիպեցաւ թողուլ զայն անհանդարտին Եուրեայ անուանելոյ Տոլկորուկի, այսինքն Երկայնաձեռան, որ զօրու ծանու եկեալ եմուտ 'ի Քիեվ, և թագաւորեաց :

ՅՈՒՐԻ Ա. ՎԼԱՏԻՄԻՐՈՎԻՉ ԵՐԿԱՅՆԱՁԵՌՆ

Ի ՎԱԹՍՈՒՆ և երից ամաց հասակին անցեալ յաթոռ, յանդուգն պատերազմունս ծախեաց և զմնացորդս կենացն ընդդէմ արշաւանաց Փոլովցեաց. և յառաջատարեալ Նովկորոտացւոց՝ երդուաւ նկուն առնել զխռովասէր ժողովուրդն. այլ կանխեալ իւրոյ օրհասին՝ մեռաւ յամին 1158, զհետ երից ամաց թագաւորութեն. և եթող մետասան որդիս :

Սա շինեաց զՄօսքուա (որ և Մոսկով կամ Մոսքա) քաղաք՝ հաւանեալ ընդ գեղոյ տեղւոյն, և անիրաւութբ̃ յափշտակեալ զայն 'ի ձեռաց տեառնն՝ որում անուն էր Քուչքօ. և զբազումս 'ի բնակչացն Վլատիմիրոյ անդր առաքեաց 'ի բնակել : Շինեաց և այլ քաղաքս 'ի տէրութեն իւրում, և գաղթականս ածեալ բնակեցոյց 'ի նոսա :

Այլ քանզի բազում բռնութեամբք

առաջակալն լեալ էր Քիեւացւոց ․ ընդ մեռանել նորա յաւուրն առին զարդարանս նորա, և զմեծութիւնս նորա ընդ աւար անցուցին։ Եւ մինչ նորա դեռ գաղթական էին՝ խաբեալ իշխան Չերնիկովայ եկն եմուտ 'ի քաղաք անդր, և կալաւ զաթոռն ։

Զհետ նորա իշխանք եկին հետ զհետէ առին 'ի միմեանց զաթոռն, և ոչ ինչ արժանի յիշատակի թողին՝ բայց յանարժան ոգւոյ փառաւորութե ։

Իսկ բնակիչքն Վոլոդիմիրայ թագաւորեցուցին իւրեանց զանդրանիկն Յուրեայ զԱնդրէաս Գոհոլիւպսքի, այսինքն է Աստուածասէր, զայր քաջապատուն և խոհական և արիասիրտ, և նա սկսաւ վանել զթշնամիս Ռուսիոյ զԲուլղարս և զԹաթարս ասպատակեալսն յաշխարհն ։

ԱՆԴՐԷԱՍ ՅՈՒՐԷՎԻՉ ԳՈՀՈԼԻՒՊՍՔԻ

ՏԵՍԵԱԼ Անդրէի զպէտս աշխարհին յերկուց բաժանմանութեանց, և մանաւանդ զանդադար խռովութիւնս Նովկորոդայ, զոր գումարեաց 'ի ձեռն որդւոյ իւրոյ Մսթիսլաւայ ․ միաբանեցոյց

ընդ նմա և զմեռատանն իշխանս, և տա-
նելոց նախ 'ի մերում Գիւղմայ:

Ուսմթիւղաւ եւ Թագաւորին ան-
յայնժամ, յետ ընդդէմ կալոյ ժամս
ինչ՝ տալս ներթող զինն իւր և զօրքին՝ և
փախուստ 'ի քաղաքէն. և Թշնամեացն
մնացեալ տաւար հարցին զՔիւեմ զերկս ա-
ւուրս. և յայնմ հետէ փոխադրեցաւ ա-
թոռ Թագաւորութեան 'ի Վաղարշապատ:

Ցետ այնորիկ նուաճեաց Անդրէաս
և զՆախիջեւանայս՝ կալեալ նոցա ըստ
խնդրոյ նոցին իշխանն զերդս իւր զԵւաւրէ:

Եւ մինչդե սկիզբն արարեալ 'ի վերջե-
լեալ յարգանակս արտաւթեցն իւրոյ՝ զաւ-
ակեցաւ 'ի կենաց բազմակեան մահուամբ:

Քանզի Անդրէաս ունէր 'ի կնութե
զդստերս Քուչեայ՝ զանեալն Մարզուա
քաղաքին. և ունէր յայժ զմի յորդւոց
անևերոյն իւրոյ՝ որում անուն էր Յովա-
կիմ: Այլս 'ի պատանեայսն զանանիւ
միոյ յեղբարցն Յովակիմայ՝ Անդրէաս
եառ զնա 'ի մահ, և Յովակիմ եդ 'ի մահ
վրէժխնդիր լինել մահու եղբօրն. և 'ի
գիշերի միում յարձակեալ 'ի մերում ապ-
քայլին զաւակցօք իւրովք՝ սպան զնա,
և զանուն նորա եառ յաւարի:

Եւ նա Թագաւորեաց ամս երկոտա-
սան. և կալաւ զաթոռն Մեծայիկ Եւա-
րեալինչ զամ մի, և մեռաւ՝ Թողեալ
որդի մի Կլէոյ անուն:

Զհետ Միխայէլի մեռանելոյ հաւանու-
թեամբ ժողովրդեան ամբարձաւ յաթոռն
Վսեւոլոդ կրտսերագոյն յորդւոց Յու-
րեայ : Որոյ կալեալ ապստամբողս զորա-
նայն Անդրէի՝ ընկղմեաց 'ի ծովակն մի
մերձ 'ի Վլոդիմիր . և զկնի նորա , որ-
պէս ասեն ոմանք , կախեալ 'ի գլուխս
ապստամբութեան աշխարհին՝ Նովգորոդ եւս
առաջնորդել , իբրև զհամանման առաջնորդաց
առնէն իւրոյ :

Յետ այնորիկ փոյթ յանձին կալեալ
ընդարձակութեան աշխարհին՝ նուաճեաց
զբազում յիշխանաց գաւառացն և եր-
կրորդս 'ի քաղաքի . և խաղաղացոյց եր-
կիրն ամս երկարս :

Ապա յամին 1184 արշաւեցին Բուլ-
գարք 'ի Ռուսիս , և Վսեւոլոդ յետ
մի անգամ մարտ գնելոյն ընդ նոսա՝ հաշ-
տութիւն խնդրեաց 'ի նոցանէ :

Եւ թագաւորեալ ամս երեսուն և
հինգ՝ մեռաւ յամին 1212 . և 'ի բազ-
մամեայ թագաւորութենէ սորա է իմա-
նալ՝ թէ ոչ ինչ արժանի յիշատակաց
դէպք վրդովիչք խաղաղութեան պատա-
հեցին 'ի Ռուսիս յաւուրս իւր :

Վսեւոլոդ ունէր որդիս եօթն , որք
էին Կոստանդին , Բորիս , Յուրի , Եա-

րոսլաւ, Վլատիմիր, Սվեաթոսլաւ, և Իւան. և 'ի մեռանել իւրում բաժանեաց նոցա զիշխանաւոր քաղաքս պետութեան, Եուրեայ պահելով զԹագաւորութիւն Վլատիմիրայ: Այլ վաղ խանգարեցաւ նոցա ընդ բաժինս իւրեանց՝ սկսան անկանել ընդ միմեանս:

ԵՈՒՐԻ Բ. ՎՍԵՎՈԼՈԴՈՎԻՉ

ՄՍՏԻՍԼԱՒ զօրացեալ յաւուրս սորա տէրեաց Նովկորոտայ, և օր ըստ օրէ բազմացուցեալ զզօրս իւր՝ տարածայիւր կողմն և զհաստատութիւն պետականին Եուրեայ, և յարեաւ 'ի վերայ նորա: Եւ Եուրեայ կազմեալ բանակ առհասարակին բազմութ՟ զօրաց խաղաց ընդդէմ Մըսթիսլաւայ, և խորտակեցաւ իւրն քաղաք կարգաց 'ի բանակին, զի թէ ոչ խնայեացէ յատակն իւր, և կամ զերբի փախեացէ զնա և ոչ տարածանիցէ, մինչ հաշտարարա լիցի:

Այլ 'ի խառնել պատերազմին խարտակեցան զօրք իւր. իւրն հազարք 'ի նացանէ անկան 'ի մարտի անդ, և մեծ մասն նոցա 'ի փախչել իւրեանց զետամոյն եղեն. և ինքն Եուրի մերկացեալ զթագաւորութիւն իւր՝ շապկով եւեթ փախուցեալ գայր 'ի Վլատիմիր: Հասին զկնի նորա և Մսթիսլաւ և Կոս

ատանդկին, և Եռուրի անձնատուր եղև 'ի նոսա ։ Կոստանդկին կալաւ զաթոռն, և զԵռուրի արձակեաց յազատութիւն՝ կար֊գեալ նմա կալուածս իշխանութեան ։

Այլ անդէն յառաջնում ամի թա֊գաւորութեան իւրոյ անկեալ յախտ ծիւ֊րական, եբրև եանես զանձն 'ի դուռս մահու հասեալ՝ կոչեաց զԵռուրի, և ետ 'ի նա անդրէն զթագաւորութիւնն, 'ի խնամս նորին յանձն արարեալ և զերե֊ախն որդիսն իւր զՎլատիլ, զՎսեվոլոդ, և զՎլատիմիր ։

Իսկ Մսթիսլաւ ոչ շատացեալ իշխա֊նութեամբ Նովկորոտայ՝ գնացեալ 'ի Կալիչ, և կրկնակի յաղթանակաւ եհան զայն 'ի Մաձառաց, յերկրորդումն ձերբակալ արարեալ և զարքայն նոցա զԿոլոման ։

Ընդ այն ժամանակս յարձակեցան Բուլղարք 'ի սահմանս Վոլոտիմիրայ, և Եռուրի դիւրաւ խոնարհեցոյց զնոսա 'ի խնդրել զհաշտութիւն, զի անտի և Թա֊թարք յաշխարհէն Բուլղարաց արշա֊ւեցին ։

Քանզի աշխարհակալն Չինկիզ խան զկնի արշաւանին 'ի Պարսս և 'ի Կասպս, խաղացոյց գայր ընդ դուռն Ալանաց յաշ֊խարհն Փոլովցեաց ։ Ընդ որ զանհե հա֊րեալ Ռուսաց՝ պատրաստեցան զդէմ ունել նոցա՝ հարիւր հազարօք, առաջ֊նորդութեամբ Մսթիսլաւայ ։ և ոչ հաւա֊նեալ պատգամաւորաց Թաթարացն որք յորդոր լինէին նոցա հանդարտ կալ֊

զի չէր ինչ՝ աւելին՝ մեր և ձեր. այլ և ապականեալ եւ զպարագայամաւորան՝ գրգռեցին զԹաթարս 'ի պատերազմ :

Որոց զառաջինն պարտութիւն կերպարանեալ 'ի փախուստ դարձան. և հետամուտ եղեն նոցա Ռուսք աւուրս տասն, մինչև անցին երկոտասաներոր բանակքն ըստ գետոյն Դալքա՝ որ թափի 'ի Մեոտ ծով. յայնժամ ընդ կրունկն դարձեալ Թաթարաց՝ ահագին կոտորած հասուցին 'ի վերայ չփոթելոցն Ռուսաց, և փոխադրեալ նեղակակցացն նոցա. մանաւանդ 'ի փախչել անդ Մըս Թիսլաւայ սակաւաձեան գնդաւ՝ հրձիգ արարեալ անձամբ՝ զայլ անցս նաւակս իւրոյ բանակին. որով 'ի սպառ խորտակեցան Ռուսք, և զերծեալքն ոչ ինչ աւելի եղեն քան զորքիս տասն հազար :

Այսպ յերկուս առաւելս բաժանեալ Թաթարաց՝ գիմեցին առ հին զՔիեւ, և զնշխարն քաղաքին՝ որ առաւել երկուս զգեմ կալեալ էր պաշարմանն, և զայլ եւս երկուս յիշխանականաց նորին այնգեալ առ անձինն յերկուս երկուս տախտակս, և նստեալ 'ի վերայ նոցա՝ խնճոյս յաղթութեան կազմեցին, և այնպէս չարամահ սպանին զնոսա : Եւ ինքեանք խաղացեալ եւ յառաջ, 'ի հուր և 'ի սուր ծախեցին զքաղաքս և զգիւղս, և լցեալ աւարաւ՝ դարձան անդրէն առ Չինկիզ, որ գեռ եւ 'ի Պուխարա էր :

Ոչ ուրեմն խլրտեցաւ Յուրի յառաջել ընդդէմ թշնամեաց, այլ 'ի լռել զզայրս Թաթարացն յետոյ, և ինքն դարձաւ 'ի տեղի իւր:

Յետ այսորիկ ընդ ամս երկքասանամ-ցամին 1236, յանդգադրայր սաղէտս սովու և սատանութեց, պատերազմաց և յափշտակութեանց մատնեցաւ Ռուսիա. մինչև լցին զչափ աղէտից աշխարհին. Թաթարք արշաւեալք անդր անթիւ բազմութբ 'ի 1237:

Ի խնդրել կուսակալ իշխանացն զօգնականութի Յուրեայ, նա զլացաւ նոցա. և Թաթարաց անխափան շրջան առեալ ընդ ամենայն կողմանս աշխարհին՝ կոտորեցին զգլխաւորս, և ընդ որս համշէրինն՝ 'ի գերութե վարեցին. առին և զՄոզքուա, և զիշխան քաղաքին զորդի Յուրեայ չարաչար մահուամբ խողխողեցին:

Ի լուր եղելոցս փախեաւ Յուրի, և անկաւ առ Թոռոմնս և ազգականեցս իւր յայնկոյս Վոլկա գետոյ. այլ 'ի ժխտել նոցա զձեռնտուութիւն իւրեանց նմա, որպէս արար նա ինքն այլոց իշխանաց իւրոց, եդ 'ի մտի յուսահատ համարձակութեամբ մարտ դնել վանել զԹշնամիս:

Վառեցան և իւրքն նմին ոգւով և խաղացին ընդդէմ Թաթարաց, որք ահա ընդ առաջ նորա գային՝ առեալ զՎոլոտիմիր քաղաք, և հրկէզ արարեալ.

և զկանայս և զորդիս Շուրեայ՝ զապաւինեալս յեկեղեցին՝ 'ի սուր սուսերի կոտորեալ:

Բազում արութիւնս գործեցին Բուսաք 'ի պատերազմին. այլ իբրև անկաւ անդ Շուրի՝ լքան պարտասեցան և իւրքն, և ցիր և ցան եղեն: Եւ Թաթարք շատ համարեալ առ ժամն զյաղթութեանն՝ դարձան 'ի բուն բանակն իւրեանց:

Քառասուն և հինգ ամաց էր Շուրի 'ի մեռանել իւրում, անուամբ շահ գոգցես թագաւորեալ նախ յամին 1212, և 'ի 1217 անկեալ յաթոռոյն, և 'ի միւսում ամին անդրէն հաստատեալ, և ոչ ինչ գործ թագաւորի ցուցեալ մինչև ցմահ իւր:



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1237=1460

ԵԱՐՈՍԼԱՒ Բ. ՎՍԵՎՈԼՈԴՈՎԻՉ

Իբրեւ ազդ եղեւ Եարոսլաւայ որդւոյ Վսեւոլոդայ նահանջն Թաթարաց, փութացաւ հաստատեաց զորդին իւր զԱղէքսանդր յիշխանութեան Նովկորոդայ, և գնաց 'ի կանգնել զաւերակս Վլատիմիրայ. ժողովեաց անդր զմնացեալս քաղաքին զցրուեալս, և բաժանեաց 'ի տոհմակից իւր իշխանսն զգաւառս անառաջնորդս: Ապա խաղաց 'ի Կամենէց, և գերի տարաւ զիշխանն նորին հանդերձ կնաւն:

Ընդ այն աւուրս Մանգու զօրավար Պատու խանին հրեշտակս արձակեալ առ Միքայէլ որդի Եարոսլաւայ իշխան Քիեվայ՝ խնդրէր զքաղաքն. այլ նա հրամայեաց սպանանել զհրեշտակսն. և յաւելեալ վատաւն 'ի նենգն՝ փախստական Թաքթաքուր շրջէր 'ի Մաճառս:

Ի դէպ ժամուն տիրեաց Քիեվայ Ռոսթիսլաւ իշխանն Չերնիկովայ. սակայն և զնա վանեաց անտի այլ ոմն իշ-

խան. և ինքն իսկ խոյս տուեալ յահէ Թաթարաց՝ յանձն արար զքաղաքն Դեմետրի ումեմն իշխանի ։

Իսկ Պատու խան իբրազեկ լեալ ստամանման դեսպանացն, եկն անձամբ և ազդ արար 'ի Քիեվ տալ զքաղաքն՝ խաղաղութե պայմանօք. և 'ի չառնուլ յանձն Դեմետրի, սկսաւ քակել զորմունսն բաբանօք. և մինչև խրամատեցաւ մի կողմն պարսպին, քաղաքացիքն այլ պարիսպ կանգնեցին 'ի ներքուստ, և քաջութբ մարտ դնէին ։

Այլ երբև Դեմետր կարեվէր խոցեցաւ, զեղեալ 'ի ներքս Թաթարքն և սկսան յանխնայ կոտորել զՔիեւացիս. բայց Պատու արգել զնոսա, մեծարեաց զԴեմետր, և ներեաց քաղաքացւոցն վասն քաջութբ զդէմ ունելոյ նոցա պաշարմանն. և կարգեալ նոցա իշխան զմի ոմն յիւրոցն՝ մեկնեցաւ անտի, և ըստ Դեմետրի խրատուցն զդէմ եդ խաղալ 'ի Լեհս և 'ի Մաճառս՝ յուսով յոլովագոյն աւարի ։

Սակայն սուղն այն խաղաղութի Ռուսիոյ վաղ վրդովեցաւ անդրէն ներքին և արտաքին պատերազմօք ։

Զի տեսեալ զհարուածս աշխարհին Ռուսաց՝ Խաչակիրքն Լիվոնիացիք և սահմանակիցք նոցա՝ օգնականութբ Թագաւորացն Դանեաց և Շուէտաց խաղացին 'ի Ռուսիա, և ստիպէին զՆովկորոդացիս անձնատուր լինել ։

Եւ ընդդէմ՝ նոցա Աղեքսանդր որդի Յարոսլաւայ, և ճակատ տուեալ յափն Նեւա գետոյ՝ հոյակապ յաղթանակ կանգնեաց 'ի տեղւոջն. վասն որոյ և կոչեցաւ Նեւսքի, այսինքն է Նեւացի:

Մինչդեռ ողջ տուեալ հանդարտեալ կային Ռուսք 'ի Վլոտիմիր և 'ի Նովկորոդ, աւարելոց կոչեաց Պադու խան զՅարոսլաւ 'ի բանակ իւր, զի յայտ արասցէ նա զնշանակս հնազանդութեան իւրոյ և զհպատակութիւն. և իբրև եկն՝ հաստատեաց զնա 'ի թագաւորութեան. զնոյն արարին և այլք յիշխանացն Ռուսաց: Եւ Յարոսլաւ մեռաւ անդ յիսուն և եօթանց, թագաւորեալ ամս եօթն:

Լուեալ Միքայէլի զմեկնիլ Թաթարաց՝ դարձեալ երևեցաւ 'ի մէջ, և կալաւ զՉերնիկով: Սակայն իբր փոխանորդն Պադու խանին հարկեցոյց զնա գնալ առ Պադու; զի խոստացեալ նմին զհպատակութիւն իւր՝ տացէ անդրէն զիշխանութիւն: Եւ նորա վստահացեալ ընդ խոստումն օրինակաւ այլոց իշխանաց՝ գնաց 'ի մեծ բանակն:

Սովորութիւն էր առ Թաթարս, զի օտարազգի ոք եկեալ յայց խանին՝ անցանէր նախ ընդ հուրն՝ որ վառեալ կայր աստի և անտի դրանց խորանին, իբր 'ի սրբել զանձն և զնուէրսն, և ապա երկրպագեալ առաջի խորանի խանին՝ մտանէր 'ի ներքս: Այդ կարծեալ

Միքայէլի՝ եթէ դիք սմանք իցեն 'ի ներքս 'ի խորանի անդ, պնդեցաւ և ոչ կամէր երկիր պագանել:

Ընդ որ ցասուցեալ խանին՝ յիշեաց և զառաջին դաւաճանութիւն դեսպանացն, և սպան զնա. այլ անվնաս արձակեաց զիշխանն Գորիս՝ որ եկեալն էր ընդ Միքայէլի:

ԱՆԴՐԷԱՍ Բ. ՅԱՐՈՍԼԱՒԻՉ

ՊԱԴՈՒ խան իբրև տէր համօրէն Ռուսիոյ՝ պահանջեաց և յԱղէքսանդրէ Նեւսքեայ զհպատակութիւն. և նորա առեալ ընդ իւր զեղբայր իւր զԱնդրէաս՝ գնաց առ նա. և սակս բարձրահասակ և գեղադիտակ և ազնուական կերպարանացն, և արիական համարձակութեան մեծապէս պատուեցաւ 'ի խանէն, և կարգեցաւ 'ի նմանէ իշխան հիւսիսային կողմանցն Ռուսիոյ:

Իսկ զԱնդրէաս կացոյց խանն իշխան Վլատիմիրայ, և ետ նմա զօրս 'ի թիկունս, որովք վանեաց նա յաթոռոյն Վլատիմիրայ զՍվեաթոսլաւ զեղբայրն Միքայէլի, որ այն ինչ դեռ եւս քանացեալ կալեալ էր զաթոռն:

Ընդ այն ժամանակս մինչդեռ տակաւին Թաթարք ունէին զՔիեւ Դանիէլ ոմն Խրուացի ժառանգորդ համա-

րեալ իշխանութեան քաղաքին՝ ընկալաւ զհռովմէական դաւանութիւն, և դարձաւ շնորհս առաջին քահանայապետին Հռովմայ՝ կոչեցաւ և Թագաւոր Ռուսիոյ։ Արդ ընդ սմա մտերմացեալ Անդրէի՝ յանձն իւր եւ ձգեաց զատելութիւն Ռուսաց և զԹաթարաց՝ իբրև բարեկամ ազգաց օտարաց հեռաւորաց. և զինեալ Թաթարաց զօրու ծանու անապատակեցին յաշխարհն նորա, և զնա փախուցին կնաւն հանդերձ ՚ի Լիվոնիա, և ետուն զիշխանութիւն նորին Աղեքսանդրի։

ԱՂԵՔՍԱՆԴՐ Ա. ԵԱՐՈՍԼԱՒԻՉ ՆԵՒՍԿԻ

ՍԱ այր անձնանուէր յօգուտ հայրենի աշխարհին, ՚ի բազմավրդով ժամանակին ամենայն ուժով ձգնեալ ՚ի հանդարտել ըստ կարի զչփոթս, էր զի զյանցուածս իւրոցն ինքնին պատուհասէր, և էր զի անձամբ երթեալ առ խանն՝ ներումն վասն իւրոցն հայցէր։

Այլ առ կենդանութեամբ նորա ոչ ծանեան Ռուսք զյարգ առաքինւոյ առնն։ Եւ Նովկորոտացիք ձեռն տուեալ եղբօր նորին Եարոսլաւայ՝ վանեցին ՚ի քաղաքէն իւրեանց զՎասիլ զորդի Աղեքսանդրի։ Սակայն Աղեքսանդր վերստին հաստատեաց զորդի իւր յիշխանութեան.

տալս խաղաց և յաշխարհն Շվէտաց, և էած գերի և աւար բազում:

Իբրև մեռաւ Գագու խան, կարգեցաւ 'ի մեծէ խանէն փոխանակ նորա զօրավար Գուրղիս ոմն. որոյ արձակեալ ընդ ամենայն Ռուսիա հարկահանս, առաքեաց զմի ոմն և 'ի Նովկորոտ. այլ Նովկորոտացիք չառնուին յանձն, մինչև եկն Աղեքսանդր, և զխռովարարսն պատուհասակոծ արարեալ, և 'ի տեղի Վասլի կարգեալ զմիւս որդի իւր զԴմիտրի, հաւանեցոյց զՆովկորոտացիսն անխափան հարկել Թաթարաց՝ անուամբ ընծայաբեր լինելոյ:

Մեռաւ 'ի ժամանակին յայնմիկ Գիւուգ մեծ խանն Թաթարաց Թոռն Չինկիզ խանին, և յետ բազում շփոթից՝ զօրացեալ տիրեաց Քուպլայ խան: Եւ Ռուսաց պատեհ առեալ զազմուկս նոցա՝ միաբանեցան 'ի ծածուկ քաղաքք բազումք, և 'ի ժամադիր պահու յարձակեալ կոտորեցին զամենայն ըղհարկահանս Թաթարաց:

Ի տագնապ անհնարին պաշարեալ Աղեքսանդրի ընդ այն՝ մինչդեռ վարանէր ելս իրացն գտանել, պատուէր հրամանի ընկալաւ 'ի Գուրղայէ՝ զօրաժողով լինել և պատրաստիլ 'ի պատերազմ:

Յայնժամ այրն այն զանձն 'ի կշիռ եդեալ փոխանակ ընդ ազգին՝ գնաց միայնակ առ Գուրղա, և յայտ արարեալ թէ ոչ մի ինչ յեղելոցն յիւր գի-

տութին եկեալ էր, յաւել առաւելն զնեղել ազերսիս զապաշաւ Ռուսաց ընդ եզեալսն, և խոստացաւ տուժիւք հարկաց վճարել զպայմանցուածն. և զօրավարին դաշնչացեալ ընդ արիական վառահութին և ընդ հաւատարմութին Աղեքսանդրի, շնորհեաց Ռուսաց զխնամն:

Այլ Աղեքսանդրի խօթացեալ զճանապարհայն և մերձեալ 'ի մահ՝ եմուտ 'ի կարգ կրօնաւորութեան և կոչեցաւ Ալեքս. և գտանեալ զնա ազգն իւր 'ի դասս սգոց. ապա յետ ժամանակաց և մեծն Պետրոս կառոյց 'ի պատիւ նորա մենաստան 'ի տեղւոջն ուր յաղթեալ էր Աղեքսանդր Շվէտաց, և կարգեաց յանուն նորա զկարգ մի ասպետաց:

Եւ մեռաւ Աղեքսանդր Նեւսքի յամին 1264, լեալ ամաց քառասուն և չորից, և Թագաւորեալ ամս երկոտասան. և եԹող որդիս չորս, զՎասիլ, զԴեմետր, զԱնդրէաս և զԴանիէլ:

ԵԱՐՈՍԼԱՒ Գ. ԵԱՐՈՍԼԱՒԻՉ

Ի ԳՆԱԼ Աղեքսանդրի առ զօրավարն Թաթարաց՝ Նովկորոտացիք բանս եդեալ ընդ եղբօր նորին Եարոսլաւայ՝ պատրաստեցան 'ի բաց վարել զԴեմետր զորդի Աղեքսանդրի, և զնա կացուցանել իւրեանց իշխան՝ յուսով մեծամեծ ազա-

տութեանց և քաղաքաց, զորս խոստանայր նա նոցա։ Այլ ՚ի մեռանել Աղէքսան֊դրի կայսեր նա զաթոռ թագաւորու֊թեան Ռուսաց, և խաղաց ՚ի վերայ Տո֊մանգեայ սպարապետին Լիթուանիացւոց՝ որ բանակեալ էր ՚ի Փսկով. բայց ոչ ինչ կարաց վնասել, զի և Նովկորոտացիք յետս կացին ՚ի նմանէ։

Այսպէս օգնականութեամբ Թաթարաց յաղ֊թանակ կանգնեալ ՚ի վերայ Գերմանա֊ցւոց արշաւելոց ՚ի կողմանս Նովկորոտայ՝ վտանգաւորութեամբ եմուտ ՚ի Նովկորոտ. այլ քաղաքացիքն անդրանկեալ վանեցին զնա առանց իւրև երդմնադրանց և ատեանս։ Նա նորա լի ցասմամբ դարձ տարեալ ՚ի Վոլոտիմիր՝ գումար կազմեաց ելանել ընդդէմ Նովկորոտացւոց, և խնդրեաց զօրս ՚ի Մանգու խանէն՝ ասելով եթէ ոչ ձեռն այլոց իւրեք անդրանկեցին զնա Նովկորոտացիք, բայց զի առեալ է նո֊ցա նախանձ հաստատութեան իւրոյ առ Թաթարս։

Մինչդեռ նա յայսմիկ էր՝ Վասիլ եղբայր նորա իշխան Քոսթրոմայ տարա֊ցաւ զՆովկորոտացիս յիւր կողմն, և զնացեալ ինքնին առ Մանգու՝ յայտ֊նեաց նմա զբուն պատճառս թշնամու֊թեան Նովկորոտացւոց ընդդէմ Եարո֊սլաւայ. և խանն յետս կոչեաց անդրէն զզօրսն՝ զորս տուեալ էր յօգնութիւն նմա։

Սակայն Եարոսլաւ խաղաց սրովքն

իւրովք և նիզակակից իշխանաւն Սմոլենսքայ 'ի Նովկորոտ. և տեսեալ զդիմադարձութիւն հզօր քաղաքացւոցն, բարեխօս կալաւ զմետրապօլիտն Կիւրեղայ. և նորա ընդ մէջ մտեալ հաւանեցոյց զժողովուրդն՝ բանալ զդրունս քաղաքին՝ յայտ առնելով եթէ զղջացեալ է Եարոսլաւ ընդ եղեալսն, և խոստանայ անշուշտ կատարել զխոստմունս իւր ։

Այլ Եարոսլաւ յերկրորդ ամի հաշտութեան մեռանի՝ Թագաւորեալ ամս եօթն, և Թողեալ որդի մի անուն Միքայէլ ։

ՎԱՍԻԼ Ա. ԵԱՐՈՍԼԱՒԻՉ

ՎԱՍԻԼ եղբայր Եարոսլաւայ Թագաւորեալ 'ի Վոլոտիմիր նիզակակցութեմբ հարկահանին Թաթարաց՝ դիմեաց 'ի վերայ բնակչաց Նովկորոտայ, որոց առանձին իշխան կացուցեալ էր իւրեանց զԴեմետր. և նորա տեսեալ զվտանգ աշխարհին յերեսաց զօրացն Վասլի և Թաթարաց, հաւանեցոյց զՆովկորոտացիս անձնատուր լինել Վասլի, և ինքն մեկնեցաւ 'ի Փերեսլաւ ։

Եւ 'ի մեռանել Վասլի յետ ամաց հնգից, Դեմետր անդրէն կալաւ զիշխա-

նութիւն Նովկորոտայ և զՎլատիմիրայ միանգամայն :

ԴԵՄԵՏՐ Ա. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ

ԵՒ սա ըստ օրինակի առաջնոյն անուամբ չափ ևեթ թագաւորեաց . ոչ միայն վասն զի Թաթարք էին բռնիկ տեարք աշխարհին , և ըստ կամս ասպատակ սփռէին ընդ ամենայն կողմն Ռուսիոյ , այլ և վասն երկպառակութեանց նոցին իսկ Ռուսաց :

Զի Անդրէաս կրտսեր եղբայր նորա ակն եդեալ աթոռոյն՝ գրգռեաց զԹաթարս ընդդէմ Դեմետրի , և ընկալաւ 'ի մեծէ խանէն զիշխանութիւն Վլատիմիրայ . և եկեալ ազդ արար այլ և այլ իշխանաց , թէ կամք այս են Մանգուխանին՝ զի միաբանեսցին նոքա ընդ իւր ընդդէմ Դեմետրի . և նոքա յանձին կալան :

Յայնժամ Դեմետր սակաւուք ոմամբք խորհրդակցօք անկաւ 'ի Նովկորոտ , ուր թերևս ձեռն տացեն ինքեան : Այլ բնակիչք քաղաքին ոչ էն առեալ հալածեցին զնա մինչև յափն Իլմէն լճին , և զերկուս դստերս նորա և զկանայս իշխանացն որ ընդ նմա՝ 'ի գերպահոջ արգելին , և ապա հրաւիրեցին զԱնդրէաս գալ տիրել քաղաքին իւրեանց :

Իսկ եւս Դեմետր զմեքենել թաթարացն՝ գունդ կազմեալ գալ վանել զյափշտակողն ՚ի Նովկորոդայ. այլ նորա ամօթապարտեալ անկեալ ՚ի մեծ բանակին թաթարաց, դարձաւ եկն բազմութբ զօրաց, եւ ստնակոխ արար զամենայն աշխարհս Դեմետրի. որոյ ոչ կարացեալ հանդուրժել կալ ընդդէմ Անդրէի, ապաստան եղեւ առ Նօղայ թաթարս, որք ինքնագլուխք էին. եւ նիզակակցութբ նոցա եկն ՚ի Վոլոտիմիր. եւ Անդրէաս խոնարհեցաւ խնդրել զխաղաղութի:

Ի մեռանել Մանգու խանին եւ ՚ի յաջորդել Թուդաքագաւորայ՝ Անդրէաս գնացեալ նմա յայցելութն չարախօսեաց եւ զԴեմետրէ, զի բարեկամութբ էր ընդ Նօղայս. եւ նա եւս ՚ի ձեռս եղբօր իւրոյ զօր բազում եւ արձակեաց ընդ Անդրէի ՚ի Ռուսիա, զի հաստատեսցեն յաթոռն Վոլոտիմիրայ զԱնդրէաս:

Եւ քանզի վաղուցոյն խոյս տուեալ էր Դեմետր ՚ի Փսքով յաւուրս առին թաթարք զՎոլոտիմիր եւ զմերձակայ քաղաքսն, եւ Անդրէաս ժառանգեաց զամայացեալ աթոռ թագաւորութեն. այլ ՚ի գալ ամին միւսոյ դաշն ուխտի հաստատեցին ընդ միմեանս եղբարքն երկոքեան, եւ Անդրէաս դարձոյց անդրէն առ Դեմետր զՎոլոտիմիր եւ զամենայն երկիր նորա:

Սակայն եւ նորա ոչ ընդերկար վայե-

լեալ 'ի կարծեցեալ թագաւորութենէն մեռաւ յամին 1294, թագաւորեալ ամս հինգ. և եթող զորդի մի Իւան անուն:

ԱՆԴՐԷԱՍ Գ. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ

ՄԱՀՈՒԱՄԲՆ Դեմետրի միայն մնա-ցեալ Անդրէաս օրինաւոր ժառանգ ա-թոռոյն Վլատիմիրայ, և տեսեալ զի Մոսքուա միայն զերծ մնացեալ էր յաւ-շաւանաց թաթարաց և զամ քան ըզ-զամ պայծառանայր, զհետ եղև յա-փշտակել զայն յեղբօրորդւոյն իւրմէ Յուրեայ:

Այլ մինչդեռ պատրաստէր զօրս 'ի մեծ խանէն Թաթարաց՝ մեռաւ յամին 1304, և տարեցաւ Ռոստով 'ի նորա-նոր հարսանեաց:

ՄԻՔԱՅԷԼ Բ. ՅԱՐՈՍԼԱՒԻՉ

ՅՈՒՐԻՑ իշխանաց ձգտելոց 'ի ժա-ռանգութեան աթոռոյն Անդրէի, որք էին Դեմետր իշխան Թվերայ, Յուրի իշխան Մոսքուայի. և Միքայէլ որդի Յարո-սլաւայ եղբօրդի, ախոյեանք ժողովր-դեանն ընտրեցաւ Միքայէլ, և հաստա-

տեցաւ 'ի խանէն Թաթարաց, և զամս հինգ խաղաղութեամբ վարեաց զթագաւորութիւն :

Այս 'ի մեռանել Թուղթագաւորայ, և 'ի յաջորդել որդւոյ նորին Իւզպէքայ՝ գնացեալ Միքայէլի յայց նորոյ խանին՝ մեծապէս պատուեցաւ 'ի նմանէ ինքն և մետրապոլիտն Պետրոս, զոր ընդ իւր ածեալ էր :

Այլ մինչդեռ նա անդ էր՝ սով ասպատակ անկաւ 'ի Նովկորոդ, և Եուրի իշխան Մոսքուայի համբաւեաց չարամտութք, իբրու եթէ անխորհուրդ անսաչութեան Միքայէլի արգասիք իցեն հարուածքն, և ինքն կալաւ զիշխանութիւն քաղաքին :

Իբրև լուր եղեն իրքն առ Իւզպէք, ծանրացաստումն եղեալ՝ առաքեաց կոչեաց զԵուրի յառնել գալ անյապաղ առ ինքն, և զՄիքայէլ դարձոյց զօրօք համբերձ 'ի տեղի իւր. յորոյ 'ի հասանելն 'ի Նովկորոդ, քաղաքացիքն խնդրեցին զխաղաղութիւն :

Իսկ Եուրի իւրով կեղծուպատիր բանիւք ընդ միտ մտեալ խանին՝ այնպէս իմն յինքն յանկոյց զսիրտ նորա, զի էառ 'ի կնութիւն զքոյր խանին՝ որ յետ մկրտութեանն անուանեցաւ Ագաթա : Այս յամին 1317 ընկալաւ և զանուն թագաւորութեան, և դարձաւ 'ի Ռուսիա :

Զայն զգացեալ Միքայէլի՝ գունդ կազմեաց և ել ընդդէմ Եուրեայ. որոյ

անկանել զանդրաւանկանութեն ձեռին իւ-
րոյ՝ առաքելոց խնդրելոց զխաղաղութիւն
հրաժարելով 'ի Թագաւորութենէն Վա-
ղանտինեայ. և Միքայէլ հաւատայ նմա :

Իսկ նորա 'ի ծածուկ զիւրև ածեալ
զոմանս յիշխանաց, և զՆոմկորդոսացիս,
խաղաղ պաշարեաց զՄիքայէլ 'ի Թմէր
քաղաքի. այլ նա իւրովքն հաւատարիմ
զօրօք հալածեաց զնա 'ի բաց, և զկէս
նորին զՍնգաթա կալեալ ած 'ի Թմէր.
որ և յետ սակաւուց հիւանդացեալ
մեռաւ անդէն :

Զայս պատճառս առեալ Նննդժոան
Եուրի՝ հաճարակաց՝ եթէ Միքայէլ առ
Թշնամութե դեղ մահու արբոյց կնոջ
իւրում քեռ մեծի խանին. և Թէպէտ
նա 'ի ցոյց անմեղութե իւրոյ առաքեաց
առ խանն զորդի իւր զԿոստանդին պա-
տանի չորեքտասանամենայ, սակայն Եու-
րի անձամբ երթեալ զայլոցոյց զորդին
Իսզդէքայ ընդդէմ Միքայէլի բազմա-
պատիկ զպատերազմութիւնք. մինչև զեսպան
առաքեաց առ նա խանն, զի փութա-
նակի եկեալ յանդիմանն լիցի ինքեան :
Իսկ նորա յառաջ քան զժամանել դես-
պանին յուղի անկեալ գայր առ խանն.
և զձանապարհայն զիւրաս հաւանե-
ցոյց զդեսպան խանին զայր լաւաբարոյ
ընդ անմեղութի իւր. և 'ի պատմել առՆն
զամենայն զաւանձանութիս Եուրեայ,
և Թէ հանդերձեալ է խանն 'ի գխաղա-
հոջ սպանանել զՄիքայէլ, բարկացեալ Թա-

խանձեցին զնա որդիքն իւր և բարե-կամքն, զի մի՛ երթիցէ անձամբ առ-խանն, այլ նա ոչ անսայր նոցա ։

Եւ իբրև եհաս առ Իւզպէկ՝ նա զա-ռաջինն բարեկամաբար ընկալեալ զՄի-քայէլ, ապա 'ի նորոգել զխաղաղու-թեանն՝ արգել զՄիքայէլ 'ի [illegible] առ 'ի դատաստանաւ քննել զնա. և որչափ ջանացաւ Իւզպէկ արդարացուցա-անել զվճիռն, սակայն պատրեալ 'ի դատախազիցն սուտ ամբաստանութեանց՝ արկ զՄիքայէլ 'ի կապանս, և մատնեաց զնա 'ի ձեռս կուսակցին Եուրեայ Ղար-ղաւի իշխանին ։ Եւ նորա եդեալ 'ի մէջ դասն մահուամբ մերժել զՄիքայէլ 'ի կենաց՝ ամիսս ինչ պնդեաց զպատրանաց նորա 'ի կոճեղս ծանունս, և ապա դա-տապարտեալ 'ի մահ՝ ած զնա 'ի բազա-նիս, զզեցոյց հանդերձս ապերախտս, և արար նմա խնջոյս բազմածախս, զի յուշ լիցին նմա նախնիք արբշռութեանն ։ Եւ իբրև յաղեցան Եուրի և Ղարդաւի ընդ ոգորմ անսալ վատաբարոյս արքայքն՝ առին զնա զաւհիճքն, և ծայրաքանդ արարեալ յոտից և 'ի ձեռաց, կախե-ցին զնա ընդ որմ ինչ խարխուլ զպա-րանոցէն, և յանկանել որմոյն մինչդեռ այսպ անդր շարժէին զնա զաւհիճքն, մի-ոմն 'ի Ռուսաց առ զուլթ ադեանցն խա-ցեաց զանանկաւ ընդ սնանկուշան Մի-քայէլի, և զերծեայց զնա 'ի զաւհն աան-ջանաց անհոգ ։ Ի անսալ զխանանն յու-

զերդան զաւթե Թաթար իշխանին. որ և ասեալ զի Եղուրի անկարեկեր զինեք աշխարհը ընդ նոյ, ասել ցնա. «Ա՛յ զաղան անհաղորդ, և զինուրդ ասխարհ ամենայն կեա 'ի մերձ զիական եղբօր քո »: Եւ նա յոյ շատապարանեալ՝ հրամայէ ծածկել զգին ազատութեամբ, և հրամանն հասցէ տանել զնա 'ի Ուռուխա:

Այսպէս բարձաւ 'ի Ուռհայոց այլին քաղաքորպութեան, որոյ և խաղաղութեամբ յամին 1317, թագաւորեալ ամս երեք տասանս. և էին նորա որդիք չորք. Դե-մետր, Աղեքսանդր, Կոստանդին և Վասիլ:

ԾՈՒՐՈՒ Գ. ՑԱՆԻԼՈՎԻՉ

Զհնց եւթն ամաց մնաց աննկեղ Մե-քայէլի եղն Եղուրի 'ի Ուռհայում՝ տեսեալ 'ի խանէն զԹագաւորութեն Վրացաստա-նայ, և 'ի ընու զանդյանգ արժանաւորու-թիւն թագաւորաց՝ ծանր ծանր հարկա-տուհանչութեան կերակրէր զժողովուրդ-իւր:

Ցեսեալ Դեմետրի որդւոյ Մեքայէլի զանկարգութիւնս Եղուրեաց և յիւրում զաւառին, և երկուցեալ թէ զաւցէ զպատապարտեցէ զնա խորամանկ հայրե-նայքն իւր՝ փոխաւ զառակ հայրենակն թերթ հատուցեալ, եւ զնաց առ խաղաղէն, և

ծառայից նախնի զբռնաւորութիւն Իւզբէկայ. և քանզի խանն կանխաւ իսկ 'ի կատակածառ միտս էր ընդդիմաւորէն, եւ Դեմետրի զԹագաւորութիւն Վղատիմերայ, և արձակեաց զնա 'ի Ռուսիա:

Զայն զգացեալ Յուրեայ՝ անձամբ մաքեաց երթալ առ խանն և ամբաստանել զԴեմետրէ. այլ զճանապարհայն եհաս 'ի մէջայ նորա Աղեքսանդր եղբայր Դեմետրի. և զաւրեղեկից բարեկամաց նորին զօրաւեալ՝ հալածեաց զնա 'ի փախուստ:

Ի միւսում ամին գնաց Յուրի առ խանն. գնաց և Դեմետր զկնի նորա, և առ շնորհս գտեալ առաջի Իւզբէկայ՝ համբաւարարեցոյց զնա, և ապա 'ի վրէժ արեան հօր իւրոյ՝ սպան և զՅուրի:

Սակայն և ինքն չև լցեալ զքսան և եօթն ամ հասակին՝ սպանաւ յերգորէն Յուրեայ յԱղեքսանդրէ, որ էառ զԹագաւորութիւն Վղատիմերայ:

ԱՂԵՔՍԱՆԴՐ Բ. ՄԻՔԱՅԼՈՎԻՉ

ԱՂԵՔՍԱՆԴՐ փոխանակ առաջակարգ ընդ աԹոռն՝ որ ծխէր առակուցին յարեան հօր իւրոյ, և եղբօրն, և հօրեղբօր, գնաց առ Իւզբէկ, և ընկալեալ զԹագաւորութիւնն՝ եկն բնակեցաւ 'ի

Թուէր. զի Վլոտոմիրն աւերեալ և ամայի մնացեալ էր:

Խորհեցեալ Իշխանաց, որպէս ա-ւանդեն պատմագիրք Ռուսաց, յետ մահ-ուանն կացուցանել զոք Թագաւոր Վլո-տոմիրայ և Նովկորոտայ, առաքեցին առ Ալեքսանդր զՈւզբէկ խան. որում և պատուէր ետ սպանանել զԱլեք-սանդր և զիշխանս նորա. և զամենայն աւագանին Թուերայ: Ալեքսանդր մե-ծապէս սիրով հիւրընկալեալ և հան-դոյց զՈւզբէկ և զիշխանս նորին յապա-րանս իւր. այլ եկեալ զգաց զդաւն՝ ՚ի նմին զիշխելն կոտորեաց զամենայն զԹա-թարս որ գտան ՚ի Թուէր, և զապարանսն ուր փախուցեալ էր Ուզբէկ խան իւ-րովքն հանդերձ՝ այրեաց ՚ի մերայնոցն:

Յայնժամ Իւան եղբայր Գէորգեայ՝ առ անհաշտութեան ատելութեանն զոր ունէր ընդ իշխանս Թուերայ՝ աղաչ արար Ուզ-բեկեայ զեղբայրն, և ընկալեալ զԹա-գաւորութիւն Վլոտոմիրայ՝ եկն բազմու-թեամբ զօրաց Թաթարաց և այրեաց աւերեաց զԹուէր և զամենայն նորին. և Ա-լեքսանդր ամրացաւ ՚ի Փսքով:

Այսպէս ամբարշտեաց Իւան և Նովկորոտայ, և եդեալ անդ զոմն տեղապահ իւր՝ ինքն դարձաւ անդրէն առ խանն:

Իսկ Ալեքսանդր յետ սաստին ամաց կատարածի Թաթարացն՝ այն է յամին 1338 ՚ի մեծի բանակի անդ նոյնա հա-սոյց զվախճան մահուամբ իւրով:

Եւ եղեն նորա ուստերք երեք. Ֆէոդոր կամ Թէոդորոս, Վսեվոլոդ և Միխայէլ. յորոց առաջինն սպանաւ ընդ հօր իւրում: Եւ դստերք երկու, Մարիամ և Յուլիանէ. և յերկրորդէս յայտնանէ՝ որ ամուսնացաւ ընդ արքային Լիտուաց՝ իշխանէ առ հանն Գետիմինոսի Գ., կայսերք Ռուսաց, և Գորգոնի Ա. և Ալեքսանդրի, և այժմու ՆԻԿՈՂԱՅՈՍԻ Ա., ինքնակալին:

ԻՒԱՆ Ա. ԴԱՆԻԼՈՎԻՉ ՔԱԼԻԹԱ

ՊԱՅՄԱՆ թագաւորութեանն Իւանայ էր առնուլ 'ի ձեռս Իւզպէկայ զԱլեքսանդրոս, կամ կորուսանել զնա. վասն որոյ ընդ Թագաւորին հրամայեաց Ալեքսանդրի երթալ անյապաղ առ խանն. և 'ի չանսալն նորին՝ ասպատակաց զամենայն իշխանս Ռուսաց յառնել ընդդէմ նորա: Այլ առ ժամն հարկեալ զդէմ ունել Գերմանացւոցն արշաւելոց գետոյ 'ի Նովկորոդ՝ ետ մետրապօլտին իւրում ընդ բանադրանօք արկանել զԱլեքսանդր և զհաւատակիցս նորին. և նա մեկնեցաւ 'ի Լիտվանիա:

Իսկ և ետես Իւանն՝ զի նախանձակիցք իւր զօրանայցեն յերկրին, և կուսակիցք Ալեքսանդրի որ բազում օրէ յաւելուն, գնաց առ Իւզպէկ, և 'ի չքմեղս եղե

ընդ ոչ յանձնելն խորհրդոց նորա՝ որ վասն Աղեքսանդրի. և խանին ներողու- թեան զանեալ առ Իւան՝ յաւել հրաման ևս տալ, զի թէ կամի հաշտեցուցանել ընդ Աղեքսանդրի :

Ընդ այս ներողամտութիւն խանին վերա- տահացեալ Աղեքսանդրի՝ առաքեաց առ նա զորդին իւր զՖէոդոր. զոր սիրով ընկալեալ Իւզբէկայ՝ ասէ տալ Աղեք- սանդրի անձամբ գալ առ ինքն և տալ պատասխանի վասն կոտորածի Թաթա- րացն : Եւ Աղեքսանդր ոչ զանգիտե- ցաւ գնալ առ նա 'ի պատանեկ ժամանակն՝ յորում պատերազմունք խանին խաղաղ պատահեցան 'ի Պարսս : Եւ խանին ձեռնհեալ ներել զյանցանսն, ետ և զիշ- խանութիւն Թուէրայ 'ի ձեռս նորա :

Յանկարծ այլ մի յեղափոխութիւն Իւանայ, և մեծատանց Իւանն՝ մերձաւորին ներհակառու- և ատելութիւն վառեալ ընդդէմ Աղեք- սանդրի, սկսաւ չարախօսել զնմանէ առ Իւզբէկայ. և մեկնեցաւ Աղեքսանդր ա- ռաքեր առ խանն զորդի իւր զՖէոդոր, Իւան կանխեալ յառաջ քան զնա՝ գնաց Թոյց 'ի սիրտ Իւզբէկայ զառաւելին զայ- րացոյն. և նորին կոչեցեալ զԱղեքսանդր՝ սպանանել զնա և զորդի նորա, յամին 1338 :

Զհետ երից ամաց մեռաւ և Իւան ծերացեալն 'ի չարիս ամենայն, թագաւո- րեալ ամս երեքտասան : Սա մականուա- նեցաւ Քալիթա, այսինքն է Քսակ,

երբ զի սովոր էր կրել զգօտւոյն քսակ դրամոց 'ի բաշխումս ողորմութե. և սա ինքն միայնոյն զիշխանութիւն Մոպսուեստիոյ և Բռոսթռնայ: Ի մեռանել իւրում եթող երիս որդիս, որոց անուանք էին Սիմէոն, Իւան և Անդրէաս:

ՍԻՄԷՈՆ ԻՒԱՆՈՎԻՉ ԳՈՌՈԶ

Ի ՎԻՃԱԿԻ որդւոց և եղբարցն Իւանայ զաւթուոյն՝ իւղովէք որոշեաց տալ զայն որդւոցն, 'ի նոսին առաջատուն արարեալ զընտրութիւն միայ 'ի նոցանէ. և Իւան և Անդրէաս ետուն Սիմէոնի զաթոռն հանդերձ կիսով մասամբ հայրենի պետութեանն: Սակայն և սա ոչ կարաց խաղաղութեամբ վարել ընդ երկար զթագաւորութիւն 'ի պատճառս ապստամբութեան բնակչացն Թոռժոկ քաղաքի, և արշաւանացն Լիթուանեաց, Լիւոնիացւոց և Շվէտաց 'ի սահմանս Նովկորոդայ:

Իսկ յամին 1343 ճարակեցաւ ընդ Ռուսաստան և ախտ ժանտն՝ որով ըմբռնեալքն մեռանէին. յերկուս և յերիս աւուրս. մեռաւ և Սիմէոն 'ի նմին ախտէ, թագաւորեալ ամս երկոտասան. և եթող երկուս որդիս, զԻւան և զՍիմէոն:

ԻՒՈԱՆ Բ. ԻՒՈԱՆՈՎԻՉ

ՎԱՂ քան զՍիմէոն մեռեալ էր Իւզ-պէկ խան, և պայազատեալ էր որդի նորին Ճանիպէկ. առ սա գնացին եղ-բարքն Սիմէոնի Իւան և Անդրէաս, և Իւան ժառանգեաց զաթոռն. և թա-գաւորեալ ամս վեց՝ ոչ ինչ նշոյլ գործ արժանի յիշատակի, և մեռաւ յամին 1358:

ԴԻՄԻՏՐ Գ. ԿՈՍՏԱՆԴԻՆՈՎԻՉ

ԸՆԴ այն աւուրս և զօրութիւն թա-թարաց սկսաւ թուլանալ 'ի պատճառս անմիաբանութեան խանիցն. զի Ճանիպէկ վաղամեռիկ լինէր, և յաջորդք նորա կառավարիչք եղերաց 'ի բազում մասունս հերձին զաւերութիւն խուժանց. և Խըտըր խան սպիտակաց կողմանցն Վոլգայի: Առ-սա գնացին Դեմետր որդի Կոստանդինի, և էառ զթագաւորութիւն Մոսկուայի:

Այլ 'ի մեռանել Խըտըրայ, և 'ի զօ-րանալ Մուրատայ խանին՝ որ նստէր 'ի Սարայ, Դեմետր որդի Իւանայ երկրոր-դի խնդրեաց ընկալաւ 'ի նմանէ զաթո-ռ թագաւորութեանն, զոր յերկուց ամաց

հետոյ ունէր Դեմետր Կոստանդեան․ որ և եթող երիս ուստերս, որոց ա-նուանքն էին Փիլիպպոս, Սիմէոն, և Իւան ։

ԴԵՄԵՏՐ Գ. ԻՒՔԱՅՐՈՍ
ՍՈՏԵՐԻ

ԴԵՄԵՏՐ եղբայր Անդրէի մեծաւ երկոտասանամեայ ամաց թագաւորեաց՝ օ-ծաւ 'ի Մոսկուա 'ի ձեռն հօրեղբօր իւ-րոյ Վլադիմիրայ իշխանին Սերփուխօ-վայ ։ Այլ քանզի հրամանաւն Մուրա-տայ անցեալ էր առ յաթոռն, Մամայ խանն հզօրագոյն 'ի խանս ժամանակին՝ ետ և ինքն հրովարտակս և հաստատեաց զնա 'ի թագաւորութեան. ընդ որ զժուա-րեալ յոյժ Մուրատայ՝ յետ ուրեմն կոչմա-նէ ետ զթագաւորութիւն Դեմետրի Կոս-տանդեան՝ իշխանին Սուզդալայ. և ա-հա նոր պատճառք աղետից Ռուսաց ։

Անդի և Միքայէլ Աղեքսանդրեան իշխան Թուերայ՝ նիզակակցութեամբ աներ-ոյն իւրոյ արքային Լիթուանեաց յար-ձակեալ ասպատակօք աւար զՌուսիս, կա-մեցեալ ինքն թագաւորել փոխանակ երկուցն եւս Դեմետրեանց ։ Եւ այս շփո-թութիւնք ոչ դադարեցին 'ի Ռուսիա ընդ-ամսն ութուտասան ։

Յայնմ ժամանակի Մամայ խանն և եւս հզօրացեալ 'ի վերայ այլոց խանից ,

և անդ եղեալ աԹոռոյն Մոսքուայի՝ վեցհարիւր հազար զօրօք անցանէ ընդ գետն Վոլգա ։ Հաղորդակցի նմա և Օլեգ իշխանն Րեազանայ, և զայս յօգնականութիւն երկպառակչութեանն արքային Լեհաց Վլադիսլաւու Ե, անձին ունելով միտս բաժնի առնուլ 'ի Թագաւորութենէն Ռուսաց ։

Յայնժամ և Դիմիտր միաբանելով ընդ իւր զամենայն իշխանս Ռուսաց՝ և անց ընդ Տօն կամ Տօնաւիս գետ չորեքհարիւր հազար զօրօք, որպէս ասեն ։ Եւ եղև պատերազմ մեծ յոյժ, յորում Դիմիտր ինքնին ահագին քաջութեամբ ցուցեալ 'ի փախուստ դարձոյց զԹաԹարս . և Ռուսք ձիօք զհետ մտեալ նոցա վարեցին ընդ մղոնս քսան՝ և ծածկեցին զամենայն զճանապարհայն դիակամբք ԹաԹարաց ։

Մինչդեռ Մամայ մերձաւորին զօրաժողով լինէր 'ի վերայ Ռուսաց, եկն ընդդէմ նորա Թոխթամիշ խանն ամբոխիւ Ոսկեորդեան ԹաԹարաց . յորմէ զարհուրեալ զօրավարաց Մամայեայն՝ Թողին զնա և միացան ընդ Թոխթամիշ խանին, և Մամայ ապաստանեալ 'ի Քէֆէ՝ սպանաւ անդէն ։

Իսկ Թոխթամիշ տիրեաց Սարայի և Վոլգայ, և առաքեաց այր առ իշխանացն Ռուսաց զկամս իւր՝ խաղաղութի կալոյ ընդ նոսին . և նոքա մեծաւ ուրախութեամբ շնորհս կալեալ, ընծայաբերք լինէին նմա ։

Սակայն զհետ երկուց ամաց կատարեալ զնա զՌուսս՝ որք վաճառականութեան էին ընդ թագաւորս խաղաղութեան, և 'ի նաւակս նոցին կալեալ զօրս իւր՝ եկին ընդ Վոլկա 'ի վերայ Մոսքուայի :

Դեմետր խնդրեաց զձեռնտուութիւն իշխանացն Ռուսաց. այլ ոչ ոք իշխեաց մարտնչել ընդ նմա ընդդէմ ահագին թշնամւոյն. նա զի և իշխանքն Ռեազանայ և Սուզդալայ ուղեցոյցք եղեն խանին Թաթարաց. վասն որոյ և Դեմետր անօգնական մնացեալ՝ ամփոփեցաւ 'ի Քոսթրոմա :

Իսկ բնակիչքն Մոսքուայի անիշխանք և անսանձք 'ի խուժդուժ խուժան բամբասանացն, և մատնեցան յանձնեայն անարգելութեան. և մինչև եկեալ Թաթարաց՝ հիմն 'ի վեր տապալէին զքաղաքն, թէ ոչ հասեալ օգնէր նոցա Օստէաս իշխան Լիթուանեաց :

Հասին և Թաթարքն 'ի վերայ, և Օստէաս պատերազմեցաւ ընդդէմ նոցա 'ի պատուարաց: Այլ Թոխթամիշ խօսեցաւ ընդ քաղաքացիսն և ասէ. «Չեն իմ կամք չարիս ինչ հասուցանել ձեզ. զի միայն եկի վրէժ խնդրել 'ի Թագաւորէ անտի որ վատութեամբ եթող զաթոռ իւր և փախեաւ. արդ 'ի ձէնջ ոչ այլ ինչ պահանջեմ, բայց զի արտաքս ելեալ ընծայիւք յայս տունիցէք զպարտեկանութիւն ձեր ընդ մեզ» :

Յայնժամ բացեալ Մոսքովաց ըն-

դրուժնան, եւ լինի ընդ աւար խանին ըն- ծայիւք՝ բազմութիւն իշխանաց և ազնուա- կանաց, հանդերձ պաշտօնէիւք եկեղե- ցւոյն՝ որք բարձեալ բերէին թափօրիւ մեծաւ խաչս և պատկերս սրբոց, և մտին 'ի քաղաքն անդր Թաթարաց, մինչև եկին հասին 'ի միջավայր քաղաքին: Յայնժամ Թաթարքն անկեալ 'ի վերայ՝ կոտորեցին զնոսա յանխնայս, ընդ սոս և զՕտակոս, և ապա խուժեալ 'ի Մոս- քուա՝ 'ի հուր և 'ի սուր մատնեցին զա- մենայն, և զապականեալն 'ի կատարածէն 'ի գերութիւն վարեցին:

Զնոյն անցս անցուցին և ընդ մօտա- կայ քաղաքս ինչ, և ապա դարձան 'ի տեղիս իւրեանց:

Սակայն Թոխթամիշ եղեւ արգահատա- նէր որ չէառ յանձն կապել 'ի Դեմե- տրէ և զԹագաւորութիւնն, այլ և զայն իշխանին Թվէրայ, որպէս հայցէր նա: Իսկ Դեմետրի լուեալ զիրսն՝ առաքեաց առ խանն զանդրանիկ իւր զՎասիլ եւրև 'ի պատանդ հաւատարմութեան իւրոյ առ նա: Ընդ սմին քանի մի ամ իւր կալեալ խանն զպատանդն, մինչև ձանձրացեալ նորա՝ փախեաւ 'ի Լիթվանիա:

Այս անցանս եղև յամին 1382, և յետ եօթն ամաց մեռաւ Դեմետր Տօնս- քի քառասնամեայ, թագաւորեալ ամս քսան. և եթող եօթն որդիս, որք էին Տանիլօ կամ Դանիէլ, Վասիլ, Եու- րի, Անդրէաս, Պետրոս, Իւան և Կոս-

տանիցդին ։ Իսկ զնա պայազատացուցանէր որդի նորա Վասիլ, և հաստատեցաւ ՚ի թագա- ւորել իւանեին ։

ՎԱՍԻԼ Բ. ՏՄԻՏՐՈՎԻՉ

Ընդ թագաւորելն զազգահաւութեանց հայրենեաց տարս, զիննեաց անկարգաճառ յերկիրս իշխանութեան Տմիտրիայ ՚ի Մոսկ- ւայ և ՚ի Նիժնի Նովկորոտ, և զեր- կրորդն զայս քաղաքս յաւարս առեալ՝ խաղաղաց զնոսա առ իւրենն, և կառավարել տալ զնա՝ ընկալեալ ՚ի Նոմոնէ հրա- մանն միացուցանելոյ զերկիրն ընդ իւ- րում թագաւորութեան ։ Իսկ մինչդեռ զառանձինն զայդ ՚ի Ռուսիս համեղերժ պայազատանութեան իւանեին, Դմիտրի խոր- հուրդ առնել ընդ իւրում ապահովու- թեան՝ յուժ առնել նոցա զերդումն հա- ւատարմութեան զոր երդուեալ էին՝ չթո- ղուլ զնա երբեք ՚ի ձեռաց . և երեկոյա- զայնն ՚ի նոսա մկրտեաց՝ թէ ամենե- քեան պատրաստ եմք ՚ի մեռանել վա- խճանել անձին քոյ ։ Յայնժամ Դմիտրի եդ ՚ի մահ չառնել մուա պայազատութիւն և պաշտօնէիցն Վասիլի ՚ի քաղաքս իւր ։

Իսկ եհաս անդր պայազատութիւն իւանեին, իշխանք Վասիլի որ ընդ նմա՝ հնչեցուցին զզանգականն ՚ի ժողովել զամբոխն . և մինչդեռ Դմիտրի առաջ-

տեսեալ Մամայի տեսանել զարգելեալս խառա-
նմանց իւրոց ուսումնականացն, և առհա նո-
քա միաբանեալք ՚ի մտանել զնա՝ հա-
ւանին ՚ի միտս և կամակցին. և հնազանդեալն
այն չարութեան՝ որ կամեցաւ խզել յաւե-
նեցուն ընկերանաց խեղդամահեր մեռանել
վասն իւրոց իշխանութեան՝ յայնժամ սակս
ցԳորիս ըղձութք. « Մէջ ծառայք եղէ
Թշնամեաց քոց »:

Յետ սակաւուց եհաս և Վլադի, և
զԳորիս ապրեալ ՚ի կալանս՝ այսպէս և
անձինք ցրուեալ զինեն նորա և զարգելս և
զմեներգելն. այլ Գորիս մեռաւ ՚ի մտա-
ռուծ ամին, և մնաց նորա զօրաւորական
իւրն եղև հանդերձելոյ առաջնոյն Ռուս-
իոյ:

Քանզի ընդ այն ժամանակս ՚ի զօրա-
նալ Լեհկթխնուրայ՝ մեծ մասն Թա-
թարաց միաբանեցին ընդ նմա, և առհա-
սարակ կոչին Թաթարք խանին Ռուսիոյ
հերձեալց ՚ի խռովիս խռովիս. որք առ-
աջատաւորեալ ընդ կողմանս կողմանս Ռուս-
իոյ՝ սաստկապէս ցուցանէին յոյժ զաղ-
խաղրհն. Թո՛ղ և զարշաւանս Վիթովլդայ
զքաղաքն Լիթուանիոյ ՚ի Սմոլենսկոյ, և զա-
ւեր և զյափշտակութիւն՝ զոր գործէր ՚ի
Ռուսիոյ: Մեռաւ և Թոխթամիշ, և
առնէր փոխանակ նորա որդի նորին
Պուլատ խան, այլ զանուշութիւն իշխա-
նութեան նորա ունէր իշխան նորին Ետի-
կեօյ: Նա ևս բողոք կալեալ Վլատիւ զՎի-
թովլդայ, և նա ՚ի մերձին եղեալ խառառա-

ցեալ առաքել նմա զօրս յօգնականու-
թիւն, մնայր տկարանալոյ երկպառակչեւք
իշխանացն՝ ընդ իրեարս մարտնչելով ։
Եւ Եդիգէ եւս զի նորա իմացեալ զդաւն՝
ոչ եւս յարեաւ ի վերայ մեծամեծաց, դար-
ձոյց զզօրն ի Մոսքուա, եւ պաշարեաց
զնա, այլ ոչ կարաց առնուլ զայն առ
ի չգոյէ թարքանաց ։ Շատ համարեցաւ
զմնար զանձուն զոր հատուցին նմա
քաղաքացիքն, եւ ապաստանեալ զամե-
նայն շղթայից մայրս՝ դարձաւ առ Պու-
լադ, որ ի վտանգի կայր յերեսաց այլոց
Թաթարաց. եւ ընդ ամս քսան եւ չորս
ոչ կոխեցին Թաթարք ի Ռուսիս ։

Իսկ Վասիլ՝ որ ի պաշարմանն անդ
Մոսքուայի ամրացեալ էր ի Քոսթրո-
մա հանդերձ ընտանեօք եւ աւագա-
նւօքն, ի մեկնել Թաթարաց յաշխար-
հէն իւրմէ՝ ոչ ինչ այլաւանի դարման կա-
րացեալ մատուցանել աւերածոյ եւ ա-
ղէտից թագաւորութե իւրոյ՝ մեռաւ
յամին 1425, թագաւորեալ ամս երե-
սուն եւ վեց ։ Եւ էր ինքն ամաց յիսուն
եւ չորից. եւ եթող երկուս ուստերս՝
զՎասիլ եւ զԻւան, եւ զերիս դստերս՝
յորոց մին ամուսնացաւ ընդ Յովհան-
նու Պալէոլոգ կայսեր յունաց ։

ՎԱՍԻԼ Գ. ՎԱՍԻԼԵՎԻՉ

ԵՈՒՐԻ իշխան Կամիշայ՝ եղբայր Վասալի երկրորդի անուանեալ զի եղբօրորդին իւր Վասիլ Գ, մանուկ էր տասնամենայ, յինքն ջանայր կորզել զաթոռն : Եւ թէպէտ խոհական մայր արքայորդւոյն Սոփիա՝ իմաստուն հնարիւքն և ճարտար բանիւք հաստատակեցոյց որդւոյ իւրում զաւագանին Մոսքուայի, սակայն Եուրեայ ոչ կացեալ յետս ՚ի խորհրդոցն, և ոչ խրատուց մետրապօլտին երեսս ինչ առար : Այլ ՚ի հասանել ՚ի վերայ քաղաքին իւրոյ արածուն՝ ընթացաւ ինքնին զհետ մետրապօլտին և խոստացաւ այլ ոչ ևս անհանգիստ առնել զեղբօրորդին իւր :

Զհետ ամաց հնգից տեսեալ զի եկանց ՚ի նմանէ արածութիւն, գունդ կազմեաց՝ անկանել յանկարծ ՚ի վերայ Մոսքուայի. և եթէ անյաջողեսցէ, ՚ի յայտնի պատերազմ ձեռն արկանել : Խորհուրդ ետ հանճարեղն Սոփիա Եուրեայ երթալ յատեան խանին՝ և մխուոյ նորուն հպատակել. և խանն հաստատեալ ըզթագաւորութիւնն Վասլի՝ յաւել ևս պատուէր, զի Եուրի կալեալ զսանձ երիվարին Վասլի՝ յածեցուցէ զնա. այլ Վասիլ խոհական համեստութբ արգա-

հաստատեաց 'ի հօրեղբայր իւր, և ոչ իջոյց զնա յայնչափ նուաստութե :

Մի ամն յաւագանւոյն կամեցեալ առնուլ զպատուար իւր 'ի կնութիւն Վախտանգ՝ եղբօր չեղև լսելի, դրդուեաց զՆուրի մերձաւորն ընդդէմ եղբօրորդւոյն. որք և 'ի մի հաւաքեալ զերկպառակիչս զօրս՝ խաղացին դէպ ուղիղ 'ի Մոսքուա, և մերժեալ զպեսպանս Վախտանգ որ գային 'ի խնդրել զխաղաղութիւն, հալածեցին զնա մինչև զՎախտանգ մինչև 'ի Քարթլիա, և Նուրի առել զնա 'ի կալանս. այլ ապա եառ նմա 'ի բանակն զՔոլախիա, և 'ի դրառուի ունէր զնա՝ ըստ խրատու խորհրդականացն իւրոյ Մորոզովայ անն լաւի :

Եւ քանզի Վախտանգ ցանկալի էր ամենեցուն, այնուհետև առ նա ընթանային ամենայն իշխանք և մեծամեծք Մոսքուայ, և Քոլախիա եղև դոդցես ընդ քաղաք թագաւորութեն : Ընդ որ դժուարեալ յոյժ որդւոյն Նուրեայ՝ ապաւինին զՄորոզով եղբօր զատուցել մեծաւ ռանարգն Վախտանգ. և ապա երկուցեալ 'ի ցասմանէ հօրն իւրեանց՝ անկան 'ի Քոլախիա : Իսկ Նուրեայ ամենայն մնացեալ յիշխանաց և յաւագաց և յորդւոց իւրոց անգամ, եթող երկիր զաթոռն եղբօրորդւոյ իւրում, և մեկնեցաւ 'ի Կաւկաս :

Վախտանգ զեղծեալ բարեբախտութեն՝ ընդ մտանելն 'ի Մոսքուա զօրաժողով եղև յառնել 'ի վերայ հօրեղբօր իւրոյ,

որ կոչին յանձկաւանածի . և հալածեալ զնա 'ի Կալիչեայ՝ յաւարի էառ զքաղաքն և գնաց 'ի Մոսքուա . կարծէր ինքն այնուհետև եթէ 'ի սպառ ընկճեաց զՅու_րի , այլ խաբեցաւ : Զի նա մնացորդենեաց ընդ իւր զժողովրդութեան զօրացեալ ընդ_ դիմեցան Վասիլի , և զինեալ 'ի վերայ նո_րա՝ խորտակեաց զզօրս նորին . և գնաց էառ երկրորդ անգամ զՄոսքուա , այլ ոչ ինչ յերկարեաց անդէն մեռանել , թո_ղեալ երիս որդիս , որք էին Վասիլ Քո_սոյ , Դիմիտր Շեմեակա , և Դիմիտր Քրասնոյ :

Եւ կալաւ զաթոռն անդրանիկն . ընդ որ խանդացեալ երկուցն եղբարց , ասեն ցնա . «Աստուծոյ չէ զեն կամք թագա_ւորել հօր մերում , և մեք չկամիմք եթէ դու թագաւորեսցես » : Եւ եկեալ 'ի Նիժնի Նովկորոդ՝ առին զՎասիլ Գ. , և ածին հոշակաւ 'ի Մոսքուա : Քոսո_սոյ փախեաւ 'ի Նովկորոդ . և 'ի փակել ընդդէմ նորա քաղաքացւոց զդրունսն՝ ապաւանեալ զօրօք զորս գումարեաց աստի և անդի՝ արշաւ 'ի վերայ զօրացն Վասիլի յաղթութիւնս ինչ մանաւանդ , մինչև հասեալ Վասիլի տուաւր բանտա_կաւ՝ ձերբակալել արար զնա և կուրացոյց :

Անդադրոյն լեալ առ աղգականիցն՝ ա_պերախտ գտաւ և առ Ուլու Մահմետ խանն՝ որոյ կարգեալ էր զնա թագա_ւոր . զի 'ի դալ ապաստանելն նորա առ Վասիլ յերեսաց թշնամեաց՝ մինչև դու_

մարեալ էր իւր ձեռն բռնակալն, առ նենգաւ կարեկցեալ նմա զառաջինն, առաջս արձակեաց 'ի վերայ սորա քառասուն հազար։ Իսկ Մահմետ որ ոչ ունէր քան զհազար սպառազէնս ունէր ընդ իւր՝ 'ի յուսահատ ժամուն անդարձելի քաջջութե՛ նախանձիւ բազմաւ գործեալ 'ի Ռուսս՝ փախստական արար զզօրավարս նոցա, և ինքն անցեալ ընդ գետն Վոլկա՝ յաւել զթիւ զօրաց իւրոց, և դիմեալ անդէն հրկէզ արար զՄոսքուա, և զմնացեալս գիւղից և աւանաց նորին 'ի սուր սուսերի կոտորեաց. յաղթեաց և զօրացն Վասլի որ եկեալ էին 'ի վերայ իւր, և զնա ինքն համագերձ այլովք իշխանօք ձերբակալ արար։ Այլ 'ի ցոյց իւրում մեծամեծութե՛ ներբեցնելմա, և արձակեաց զնա վերստին յաշխարհ իւր։

Մինչդեռ առաջի կայր իշխանացն Ռուսաց այսպիսի օրինակ առաքինի սգոյ թաթար իշխանին, Շեմեաքա թըշնամացեալ ընդ Վասլի՝ համբաւ տանէին զնմանէ՝ իբրու թէ վաճառեալ իցէ զազգն 'ի ձեռս Թաթարաց. և միանգամայն յորդորեաց զՎասիլ գնալ 'ի մենաստան սրբոյ Երրորդութեն 'ի գոհանալ զԱստուծոյ առկս ազատութեան իւրոյ. և ինքն յարձակեցաւ եմուտ 'ի Մոսքուա ձեռնտուութբ կաշառաբեկ իշխանացն, և անդ բանտարգել արար ըզԹագուհին և զիշխանս՝ զորս ոչ կարաց սպառել։

Այսպէս մի ոմն 'ի բարեկամաց անտի նորա յանձին կալեալ յափշտակել զՎլատիլ. 'ի մենաստանէն՝ գնաց անդր, և խաբեա-նօք տարեալ ած զնա 'ի Մոլդաւիա, ուր Շեմեղէս կուրացոյց զնա, և աքսորեաց յՈւկրէն։ Անդր ածան և մայրն Վլատի և բարեկամք նորա և արկան 'ի բանտ։ Այլ իշխանքն Ռուսափոլովաքի զերծու-ցին զերկոսեան որդիս նորա զԻւան և զՑեու-րի 'ի Մուրամ, և միաբանեալ ընդ ամենայն իշխանաց՝ եդին 'ի մտի զերծուցանել և զՎլատիլ և զամենայն ընտանիս նորա։ Զայն զգացեալ Շեմեղեայ՝ փութացաւ ազատել ինքնին զՎլատիլ, և կարգեաց նմա 'ի կալուած զքաղաքն Վոլոկաս։

Իսկ Ռուսափոլովաքեանց յուղի անկեալ հանդերձ մեծաւ մասամբ աւագանւոյն՝ պատահեցին զճանապարհայն որդւոց Մահմէտ խանին, որ և նոքա իւրեանց զօրականօք երթային յազատել զՎլա-տիլ։ Սոցա ամենեցուն 'ի մի վայր ե-կեալ՝ իբրև լուան թէ Շեմեղէս ոչ է 'ի Մոսքուա, առաքեցին անդր զմի ոմն 'ի քաջ զօրավարաց իւրոց գնդաւն, և ինքեանք հետամուտ լեալ Շեմեղեայ՝ հալածեցին զնա 'ի Նովկորոտ, ուր յետ երկուց ամաց դեղով մահու սատակաւ։ Իսկ Վլատի Թագաւորեալ խաղաղութե-այլ եւս ամս վեց. մեռաւ յամին 1462, Թագաւորեալ ամս երեսուն և եօթն. և լացին զնա ամենայն ժողովուրդք իւր։ Եւ էին նորա որդիք վեց. Իւանն,

իւան, միւս Եղօրի, Անդրէաս, Պօղոս, և միւս Անդրէաս ։

Ի սոցանէ իւան պայծառագունեալ զա-թոռն քառասուն և երկուց ամաց՝ վախ-ճանի առնէ աղէտիցն Սուրիոյ, որ ՚ի պատճառս ներքին և արտաքին թշնա-մեաց ողորմելին զՍուրիա զամսն երեք-հարիւր ։



ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1462=1613

ԻՒԱՆ Գ. ՎԱՍԻԼԵՎԻՉ

ՄԻՆՉ այս իւան անդադար 'ի միակական աթոռ յանձին ընկալաւ զորդի մեծանձն, զարթուն անմեղելի, զեռանդն պատերազմականն, զիշխանականութիւն համձարեալ և զամէր իւրոյ ազգին, յառաջ քան զամենայն փութացաւ 'ի խորտակել զլուծ Թաթարաց: Եւ ամենայն ազատ զօրն գործեալ 'ի նորոգել ընխաթարեալ կարգս աշխարհին, և զանդրա ամենայն իշխանաց իւրոց յինքն յանկուցեալ՝ գէթ եդ առնուլ զխաղաղն, և վանել անտի զԹաթարս:

Արձակեաց անդր զմնան մի զօրաց իւրոց. և 'ի կատարել նոցա 'ի յաղթ և 'ի սահել, արձակեաց և այլ զօրս, որք ոչ ինչ Թողին ուղ զինի իւրեանց՝ 'ի սուր և 'ի հուր դատեալ զարս և զկանայս, զծերս և զմանկունս, զանասունս և զկրանս և զծառատեղիս անդամ, և պատշաճեցին զխաղաղն Մնգրելայ և Գորխս

եղբարցն Իւանայ : Որք և 'ի նեղ աւուրն զքաղաքն սատանայականս յամենայն կողմանց, մինչև սասանեցաւ Իսրայէլ յաւն Իւաղանայ խնդրել զհաշտութիւն, և խոստացաւ հարկատու լինել Թագաւորին Ռուսաց՝ տալով նոցա զանձն խոստովանեալ :

Ի նոյն աւուրս խնդրեցին Նեստորականացն, զի հաստատեսցէ նոցա յարքեպիսկոպոսութիւն զԹէոփիլոս միանձն, զոր ընտրեալ էր նոցա փոխանակ առաջնոյն վախճանելոյ : Զի էր նոցա Իւան, և յաւել ասել ցպատրիարքան... [illegible]

տայ, որ ունէր ամենամանաւանդ ընդ իշխա-նի մերոյ ընթացանաւորեցնոյ :

Իւ 'ի սատանականաց առաքոնին ապստամբ-եալցն՝ մինչև 'ի ձայն բարձր կարդալ իւ-րեանց Թագաւոր զՔաղէմիքը, եհաս 'ի վերայ իւրան երկուք բանականք. և միով 'ի նոցանէ խորտակեալ զմեծ մասն երկ-սուն հազար զօրաց Նաբուգոդոնոսորայ, զերկուս հազարսն ձերբակալ արար :

Ի մերկացուցանել զզինակուն անկե-լոցն Նաբուգոդոնոսորայ զաւան տա. մեոյ միոյ 'ի նոցանէ յեռակարգ ուխտն՝ որով նուիրեցին զանձինս 'ի ազատութիւն Քաղէ-մեայ. և զօրավարացն իւրանայ զնոյն զը-տեալ տա. այլս 'ի մեծամեծաց ձերբա-կալ երելոց՝ սպանեալ զնոսա, և միա-ցեալոցն հրամայեցին հատանել զմիմեանց զունչս և զշրթունս և զականջս, և ա-ռաքեցին զնոսա անդրէն 'ի քաղաքն :

Ի ձախողել այսպէս իրաց իւրեանց զզօնացան փոքր մի. Նաբուգոդոնոսորայք, և 'ի ձեռն միջնորդութեան քահանայից և ա-ւագագոյն, իւրեանց և մեծապատիւ-ագին Մուրքուսայ՝ եթող նոցա իւրան ըզ-յանցանսն՝ պահանջելով զհարկսն զոր ժխտեալ էին, և 'ի վերայ այնր այլ ևս զբանս 'ի պատճէն վասարանձնութեան :

Սակայն զՀեռ ամենայ զարձեալ տալոյ տամենեցին նոքին խորհրդածք, և զզինա-կայս խորհրդոցն իւրեանց սպանեին : Յայնժամ իւրան անձամբ խաղացեալ 'ի վերայ նոցա, ոչ ինչ երևեալ տարար սպա-

չանեաց նոցին, և կատարեցաւ 'ի նոցանէ զամենայն աղաւաղութիւնսն՝ հաւատարիմ տեարք այնց քաղաքաց. այլ զերկուս առանձինն պատմութիւնս եւս նոցա. չեղանել յանկարծակի բառս ընդէն աշխարհէն իւրեանց, չզայր յառաջեան Մովսէսացի, և չզիտացեալ 'ի ձեռաց ընդդէմ թագաւորաց:

Այսպէս առնեալ 'ի նոցանէ զերկուսին հաւատարմութիւն, խաղաղացուցչ 'ի Մովսիսա զՄարկոսա և զհամանախանձս նորին. եւս և զհաւչակաւորն զայն զանեզանէ՝ որով աձեր ենին նախկորդաւաղիւք այլ առնել զաղաղատանակութիւն իւրեանց. զոր և կախեաց յաշտարարակիլ ուրեք բարձու հանե զեաղ Քրիստինեայ՝ որ առ Մովսէսայիւ:

Յետ առկատուց 'ի խլեալ դարձեալ անմանդորըր ժողովրդեան՝ խարհեցաւ իւան յասուել զնոսա ընդ աշխարհէն, և զեւսարդարականն վանել արտաքս քան ըզՌուսաքաս, և ապար այնուհետեւ:

Ընդ այն ժամանակս Աճեմեան խան Մոկեղէին անուանեալ զնոյին թագաւորաց (այն է Ալթըն Օրդա) զեսպանս հրովարտակաւ առաքեալ առ Իւան՝ պահանջեաց զհարկսն, զոր նախնիք նորա պայկաւ ատապեալ էին մեծապէս թագաւորաց: Իսկ եւս Իւան զհրովարտականն՝ եթուք 'ի ձեռաց և առ ոտն կոխեաց, և հրամայեաց խողխողել անդէն զդեսպանսն, զմի միայն արձակեալ առ Աճեմեան՝ աղդարար զեղելոցն:

Խաղաց Ահմէտ զօրօք բազմօք 'ի Ռուս–սիա՝ տապաստակեալ 'ի բաղդում անեղիս. այլ եկեալ եւսեւ առաւելին զատառապագոյն բանակն Ռուսաց պաշարեալ 'ի յար–ձակել՝ 'ի փախուստ խուճապեցաւ իւ–րովքն հանդերձ, և կարօղ զբաղդաւն 'ի նոցանէ:

Զհետ սորին ելից մերձաւորին ապաշաւեալ 'ի ստահակեալն Ռուսաց՝ 'ի ստորա խոստա–կեցաւ 'ի նոցանէ, և ինքն խոկ անկաւ 'ի մերձընուած Ճաւկասաւն:

Խաղաղութիւնք մեծի գնդին Թաթա–րաց խոստացեալ Իւսմնայ եւ զքան զեա զարթմունս 'ի նախկինն ղՔաղաքիմիր արքայի Լեհաց. որ առաքեաց զեղչկանն Սիւ–զոնանքի 'ի Մաղթուա՝ զի բարեկամացեալ ընդ Իւսմնայ՝ սպանանիցէ զնա: Այլ դառն 'ի վերջ եղ, և Սիւզոնանքի կենդանեացն այ–րեցաւ յերկաթի մանդաղաւք. և զաւան տասն պատերազմ էր Ռուսաց ընդ Լեհս, և միաւորութեամբն ընդ Սիմոնխաղիւ. որոց ամենեցուն յաղթականն գտաւ Իւ–սան. այլ որ առաւել պայծառացուցց զնա՝ եղև յաղթութիւնն Ալի խանին Խաղաղեայ:

Վասն զի գնդով ժամանեալ հասանիցեալ Ալեայ զդրանդիւրն Իւսմնայ 'ի պատերազմ–մանն Լեհաց՝ խաղաց զօրօք 'ի Ռուսիա: Եղ և Իւսան ընդ գնդեաւ նորա, և եղև պա–տերազմ սաստիկ յոյժ առ Ամետսկա գետով. խորտակեցան Թաթարքն, և խան նոցա ձերբակալ եղև: Եւ Ռուսք

զհետս արշաւեալ փախստէիցն՝ մնային ընդ նոսա 'ի Խազան, և կալան զմայրն և զկին և զորդիս խանին և ածին 'ի Մոսկուա:

Ի մեռանել խանին՝ որդի նորա կրսեր մկրտեցաւ, և եղբայրն Մահմետ էմին՝ որ կանխաւ եւս մտեալ էր 'ի ծառայութիւն Ռուսաց՝ կարգեցաւ իշխան Խազանայ: Այլ քաղաքացւոցն ոչ հանդուրժեալ բռնութեանց նորին, ընտրեցին փոխանակ նորա զՄամուկ ոմն անուն (Հայկազունն, որդւոյ Թուրքի), այլ և զնա բռնաւորագոյն գտեալ քան զՄահմետ, խնդրեցին յԻւանայ զայլ ոք; և նա կացոյց նոցա իշխան զՍապադուլլահ ոմն. և ապա դարձեալ զՄահմետ էմին՝ տուեալ նմա 'ի կնութիւն զայրին Ալեայ:

Եւ թէպէտ Մահմետ յայսմ յերկրորդում նուագի խոհականագոյն վարել սկսաւ զիշխանութիւն իւր, այլ կին նորա անհնարին ունելով զատելութիւն առաջնոյ առնն իւրոյ՝ դրդուեաց զՄահմետ ընդդէմ Իւանայ: Եւ նորա յետ բազում ժամանակաց ոչ եւս կարացեալ զդէմ ունել սադրանացն, եդ 'ի միտս զի 'ի ժամադրեալ աւուր հանդիսի վաճառուց՝ յորում ժողովէին 'ի Խազան Ռուսք յամենայն կողմանց աշխարհին՝ կոտորեսցէ յանխնայ զամենայն զՌուսս: Եւ իբրև զայն արար՝ գումարեաց զամենայն զօրս իւր, և ընդ նոսա քսան և հինգ հազար Նողայս, յարձակեցաւ 'ի

հարաւային կողմանս Ռուսիոյ, և պաշարեաց զՆիժնի Նովկորոտ։

Այլ 'ի մարտնչել քաղաքացւոցն՝ անկաւ ընդ այս 'ի Թաթարաց և Մրզա Իշխան Նօղայից. ընդ որ զայրացեալ Նողայեցն յայժ՝ դարձուցին զդէմս իւրեանց 'ի վերայ զօրացն Մահմէտի, և արարին առ պարապօք քաղաքին կոտորած մեծ։

Այսմ ամենայնի իրազեկ եղեալ Իւան արձակեաց 'ի վերայ նոցա արս հարիւր հազար, և Թաթարաց տեսեալ զբազմութիւն ամբոխին՝ փախեան 'ի տեղիս իւրեանց։

Այլ Իւան որ յառաջագոյն ևս խօթացեալ էր, ընդ այն աւուրս յամին 1505 մեռաւ ամաց եօթանասուն և հնգից, թագաւորեալ ամս 43։ Եւ էին նորա որդիք հինգ. Վասիլ, Գէորգ, Դմիտրի, Սիմէոն և Անդրէաս, զորս ծնաւ նմա Սոփիա դուստր Թովմայի Պալէոլոգայ եղբօրն Մանուէլի կայսեր Յունաց, որ յայնժամ՝ ապաստանեալ էր 'ի Հռոմ յերեսաց Տաճկաց։

Իւան 'ի մեռանել իւրում կարգեաց իւր յաջորդ զՎասիլ։

Երկուք ոմանք 'ի զօրավարացն Իւանու առաւել ստացեալ եղեն յընդարձակել զտէրուն նորա, Յակոբ (Եաքով), և Եուրի Զաքարեան Ռոմանով, յորոց 'ի տոհմէն սերեցին զինի թագաւորք 'ի Ռուսիա։ Սոքա երկոքեան նուաճեալ նախ զընակիչս ծովեզերեայց Սառու-

ցեալ ծովուն, 'ի նոցանէ ուստի վարել բալխիրս (խրղախս) ձգեալս յեղջերուաց և 'ի շանց. և Ռուսք 'ի սորա ժամանակս մտին 'ի Սիպիր, որ կանխաւ անծանօթ էր նոցա։

Առ Թագաւորութեան Իւանայ ակնկաւոյց եկին և Եւրոպացիք 'ի Ռուսիա, և յաճախեցին 'ի Մոսքուա նուիրակք ինքնակալին Գերմանացւոց, քահանայապետին Հռովմայ, Թագաւորին Տաճկաց, Թագաւորացն Լեհաց և Դանեաց, և հասարակապետութեան Վենետկոյ, ընդ որս այլ և այլ դաշինս ուխտի հաստատեաց Իւան։ Եկին 'ի Յունաստանէ և յիտալիոյ և արուեստագէտք բազումք, ճարտարապետք, պարսպաշէնք, ձուլիչք հրազինուց և այլք, զորս առատապէս վարձատրեալ Իւանայ բնակեցոյց 'ի Մոսքուա, և ճոխացոյց զպետութիւն իւր կարևոր կարգօք քաղաքականութեան։

Նա ինքն արար և ժողով մեծ 'ի բարեկարգել զիրս եկեղեցւոյն Ռուսաց. բաժանեաց զկուսաստանս 'ի մենաստանաց արանց, և կարգեաց կանանցն մայրապետս, և արանց վանահարս. և արգել երիցանց և սարկաւագաց այրիացելոց զմատակարարութիւն նք խորհրդոց։

Եւ նշան դրօշուցն Ռուսաց՝ որ էր սուրբն Գէորգ զօրավար, զկնի ամուսնանալոյն Իւանայ ընդ Սոփիայ՝ եղև երկգլխի արծուի սեաւ։

ՎԱՍԻԼ Դ. ԻՒԱՆՈՎԻՉ

Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ընդարձակ տէ-րութեան հօր իւրոյ ուշ եդեալ Վասիլի, դաշինս խաղաղութեան կնքեաց ընդ Աղեք-սանդրի արքային Լեհաց, և ընդ Մէն-կլի գէրէյի խանին Խրիմու:

Այլ 'ի պատճառս թշնամութեանց Մահմէտ խանին Խազանայ՝ ստիպեցաւ առաքել ընդդէմ նորա զօրս իւր զինեալս հարիւր հազարաւ. զորս յան-կարծակի պաշարեալ Թաթարաց՝ արա-րին 'ի նոսա կոտորած մեծ, և զմնա-ցեալսն վանեցին, և ինքեանք խնդրոյ յաղթանակի կարգեալ 'ի քաղաքի արքա-յից Խազանայ՝ կանխեալք և մանկութեամբ հանդերձ ուտելեօք և ըմպելեօք անյագա-բար:

Եւ ահա դարձեալ Ռուսաց նորոգ-կազմութեամբ, և հասեալ 'ի միւսանգամ Թաթա-րացն Թաթարաց՝ ընդ սուր անցուցին զմեծ մասն նոցա, և փախստական մնացե-լոյ 'ի քաղաքն անդր՝ հարեալ անժուժութեամբ 'ի կերակուրս և յըմպելիս Թաթարացն, ապականեցան և զեղծեցան:

Ցասմնեալ յարձակեցաւ խանն 'ի վե-րայ նոցա, և եհար զնոսա 'ի հարուածս մեծամեծս, մինչև 'ի հարիւր հազարացն՝

եօթն հազարք եւեթ ապրեցան, որպէս ասեն:

Սակայն Մահմէտ ոչ յերկարեաց 'ի վայելս յաղթութեանն՝ անկաւ յախտ մահու, եւ զղջացեալ ընդ ապերախտութիւն իւր առ Իւան, համարձակեցաւ առաքեաց առ որդի նորա Վասիլ 'ի պարգեւ երկերիւր երիվարս ընտրանաւ, եւ խնդրեաց 'ի նմանէ զներումն յանցանացն: Եւ Վասիլ ներողամիտ գտեալ՝ յղեաց նմա 'ի փոխարէն այլ պարգեւս: Իսկ Մահմէտ մեռաւ 'ի նմին ամի. եւ կին նորա էառ զդեղ մահու՝ խիթացեալ 'ի վրէժխնդրութէ Ռուսաց:

Ընդ այն աւուրս Թագաւորեաց Լեհաց Սիգիսմունդ փոխանակ Աղեքսանդրի եղբօր իւրոյ, եւ յետս պահանջէր 'ի Վասիլէ զքանի մի քաղաքս՝ որք կանխաւ Լեհաց անկ էին: Եւ 'ի չտալն Վասիլի՝ գրգռեցաւ պատերազմն, եւ Լեհք 'ի պարտութէ մատնեցան՝ առաւել 'ի պատճառս անցանելոյ բազմաց յաւագորերոյն նոցա 'ի կողմն Ռուսաց: Որպիսիք ոմանք էին եւ երեք եղբարքն Գլինսքի՝ 'ի տոհմէն Միքայէլի իշխանին սպանելոյ 'ի Թաթարաց յամին 1245:

Ի սոցանէ ականաւորն Միքայէլ Գլինսքի կամեցաւ անդրէն մատնել 'ի ծառայութի արքային Լեհաց. եւ Սիգիսմունդ ուրախութ մեծաւ առաքեաց հրաւիրել զնա 'ի ձեռն Թրեւիքայի ուրումն Լեհացւոյ: Թրեւիքա ձերբակալ եղեւ

'ի Ռուսաց որպէս լըսաւ, և 'ի սահմանս մտանելով՝ զի յայտնեսցէ զխորհուրդ դաւաճանութեանն, նա անմեղելի մնաց 'ի Լը-տուենն մինչև առ սակաւ սակաւ հրապէզ եղեալ ծախեցաւ խորովեալ շամփրով:

Այսպէս յամին 1509 խաղաղութիւն արարին ընդ միմեանս Վասիլ և Սիգիսմունդ: Այլ սա ոչ կացեալ յուխտին զերդուեալ և յարոյց 'ի ծածուկ 'ի վերայ Վասլի զՄէնկլի Քէրէյ խան Խրիմու. որում յաղթեցին Ռուսք, և բռնադատեցին խնդրել զհաշտութիւն:

Յետ սակաւուց Կլինսքի իւրով խա-հականութեամբ նուաճեաց ընդ ձեռամբ Վասլի զքաղաքն Սմոլենսք, զոր ոչ կարացեալ էին առնուլ Յակոբ և Իւրի Զաքարեան զօրավարք Իւանայ. և խորհեալ՝ զի Վասլի մատուսցէ իւն եղեալ իշխան զՍմոլենսք 'ի կալուած, որպէս խոստացեալն էր, բանսարկեաց եղև ընդ Սիգիսմունդայ. և մինչ գնացեալ առ նա՝ խորհուրդ ետ առաքել յամին Ցնկերերայ զօրս՝ որովք իւրն յարձակեսցի 'ի Ռուսս:

Հաւանեցաւ արքայն խորհրդոյն. և եղև 'ի տեղւոջ անդ պատերազմ արիւնըռուշտ, յորում կորեան բազում յազատանեայն Ռուսաց: Այլ խորհն 'ի վեր եղև գաղտն Կլինսքեայ՝ արկաւ 'ի կալանս ընդ դաւակցին իւրում եպիսկոպոսին Սմոլենսքայ:

Իսկ պատերազմին Լեհաց ընդ Ռուսս

անեւոց զատն ինն. յորում ժամանակին Վասիլ զաշխին բարեկամութեան հաստատ_ ութեան ընդ Մաքսիմիլիանոսի Ա, կայսեր Գերմանացւոց, և ընդ Լեհս զաւլ ա_ րար զինուց ամս վեց, որ 'ի խաղաղութեան հարկ էր դարձուցանել զզէնսն:

Ընդ Այն խառն յաղթողական Մահմետ_ ական 'ի խաղաղութեան' Նողայեանք լեալ էր Թա_ թարաց' եթէ վասն ձեռնարկեալ կերպա_ րանացն, որ կարծէ էր հասարակաց և քրա_ ղաքութեան յայժ, և անկանելի տարապայ_ մանն երկայնք, և եթէ վասն հաւատարա_ մութեան առ Ռուսս. վասն որոյ հալածե_ ցաւ 'ի Նոցանէ 'ի ձեռն Սաֆա քերեյի խանին Խրիմու:

Արձակեաց Վասիլ երկեքն բանակս զօրաց 'ի վերայ Խազանայ. յորոց մին նաւարկեալ ընդ Վոլգա' մեծաւ մասամբ 'ի կորուստ մատնեցաւ, իսկ միւսն խա_ ղացեալ ընդ ցամաք վանեաց զԹաթարս, այլ ոչ համարձակեցաւ ընդ երկար պա_ շարել զԽազան' դարձան յետս:

Վասիլ Թելադրութեամբ իւրոյ առաջա_ ւորոյն վերստին զօրաժողով եղև' երկ_ րորդ զօրավարս կարգեալ 'ի բանակին' և տարապայման ամենեցուն զխուռն Գեր_ ասի: Զայն իսկ զգաց Սաֆա քերեյ' ասան հալածէր Նողայս կոչեաց իւր 'ի Թիկունս, և պատանիշամփոկ տարաբեալ զքաղաքն' ամրացաւ 'ի ներքս:

Ռուսք բազում անգամ վտանգաւոր յարձակեցան 'ի պատանեշան, առաջս իբրև

ռեալին զի Թաթարք յանհոգս և յան-կարծակի զանկանեալ էին յուտել և յըմ-պել՝ յարձակեցան զիշերի հուր հարին 'ի ցցապատնէշս անդր, և արարին կո-տորած մեծ 'ի Թաթարս։ Եւ Սաֆա քերէյ յուսահատեալ 'ի տեւել բաւել այլ ևս յաղթողին՝ առ ընդ իւր երիս հա-զար հեծեալս, և քաջութեամբ պատա-ռեալ զբանակին Ռուսաց՝ անց գնաց հանդերձ կնաւն և որդւովք 'ի տեղի իւր 'ի Խրիմ։

Իսկ զօրավարք Ռուսաց փոխանակ առնելոյ զխաղաղն՝ խաղաղութիւն արարին ընդ քաղաքացիսն՝ եդեալ 'ի վերայ նոցա հարկս ծանունս, և զերկուց ամաց ըղ-հարկան կանխիկ պահանջեալ. և դար-ձան առ Վասիլ հարիւր հազար զօրօք։

Ընդ այս գործ զօրավարացն զայրա-ցեալ Վասիլի՝ կամէր սպանանել զսպա-րապետն Գելայէի, որ կաշառառութեան լեալ էր 'ի Թաթարաց. բայց յարդարահաւա-նելոյ մետրապօլտին շատ համարեցաւ մեր-կացուցանել յինչից զԳելայէի և արկա-նել 'ի բանտ։

Ի խնդրել առաքել Թաթարաց 'ի Վասի-լէ խան զոմն, ետ նոցա զՇահն Ալի զեղ-բայր Շիխ Ալեայ, և խորհրդակից նմա զռուս ոմն. այլ Խազանցիք 'ի միաբանու-թեան խողխողեցին զնա և զռուսն, և կո-չեցին անդրէն զՍաֆա քերէյ։

Իսկ Վասիլի ոչ ժամանեալ խնդրել զվրէժ դաւաճանացն՝ մեռանի յամին 1534,

թագաւորեալ ամս քսան և ութ։ Երկու կանայս եղեն սորա. Սաղոմէ, և Հեղինէ դուստր Վասլի Կլինսքեայ, որ ծնաւ նմա երկուս որդիս՝ զԻւան և զԵրուղի։ Զի զՍաղոմէ վասն ամլութեանն 'ի բաց արձակեաց՝ բռնադատեալ զնա մտանել 'ի մենաստան ուրեք 'ի Քարկափոլ. ընդ որ զայրացեալ բազումք յաւագանւոյն, և ոչ կարացեալ 'ի ծածուկ ունել զայրոյթս խորհեանց ընդդէմ Վասլի, կէսք աքսորեցան, և կէսք 'ի մահ մատնեցան։ Յորմէ յայտ է և խստութիւն բարուցն Վասլի։

Այլ խստագոյն և հզօրագոյն գտաւ քան զնա որդի նորին Իւան Դ., որպէս տեսցի 'ի գործոց նորա։

ԻՒԱՆ Դ. ՎԱՍԻԼԵՎԻՉ

ՔԱՆԶԻ 'ի մեռանել հօրն մանուկ էր եռամեայ Իւան, մայր նորա Հեղինէ կալաւ զխնամ աշխարհին՝ խորհրդակցութեամբ Կլինսքեայ։ Սորա անսեալ զգայթակղական բերումն Հեղինեայ առ իշխանն Օպոլենսքի, որում նշաւակ նախանձու և երգիծանաց լեալ էր իւրոց ժողովրդոց, խստիւ յանդիմանեաց զնա. և Հեղինէ զրպարտեալ զԿլինսքի՝ որպէս թէ միայն կամիցի թագաւորել, արկ զնա 'ի կալանս, և անդ կուրա-

ցուցեալ զաչսն՝ առաքել զնա 'ի վանս ուրեք։

Յարքածից առաւ Կլինարեայ սոսկացեալ բազմաց յաւազորերոյն՝ անցին 'ի Լեհս. և Սիմէոն Պետրոսի շնորհս գտեալ առաջի Սիգիսմունդայ արքային Լեհաց՝ ասպս յարոյց 'ի վերայ Ռուսաց զԼեհս և զԹաթարս և զՏաճիկս։

Յայնժամ Օպոլէնսքի յարձակեալ բազմութեամբ զօրաց 'ի Լիվոնիա՝ եհար աւերեաց զամենայն երկիրն մինչև 'ի Վիլնա։ Եւ ընդդէմ նորա Սիգիսմունդ և պաշարեաց զսոսկն 'ի Սթարոդուպ քաղաքի. և հուր հարեալ 'ի փայտաշէն պարիսպսն՝ բորբոքեցոյց հրդեհ մեծ ընդ ամենայն քաղաքն. և որք միանգամ 'ի քաղաքացւոց անտի ոչ կարացին փրկանաւորել զանձինս դր ամուք՝ վառեցան 'ի գերութիւն։ Եւ Օպոլէնսքի առաջին գտաւ 'ի զերծեալսն այսու պատժանաւ։

Երկու եղբարք էին Վասլի չորրորդի, Եուրի և Անդրէաս, որք զառաջինն երդուեալ զհաւատարմութիւն առ եղբօրորդին իւրեանց՝ ապա դրժեցին երդմանն. Եուրի մեռաւ 'ի բանտի. իսկ Անդրէաս ապստամբեալ 'ի Նովկորոտ՝ գրեաց առ առաջնականն Մոսկուայի բանս անարգանաց զաղքայ արքայէն և զմօրէ նորա, և յաւել առաջի առնել նոցա զանձն իւր որպէս օրինաւոր ժառանգ աթոռոյ եղբօրն՝ փորձ և հմուտ 'ի խորհրդ բանս և 'ի

զործս պատերազմի: Եւ յաղթեցան 'ի նմա ոչ սակաւ անձինք:

Այլ Օպոլենսքի եւս 'ի վերայ նոցա ընտիր ընտիր զօրօք, և մինչեւ ձեռնարկեալ 'ի պատերազմ՝ զիջաւ արքայազանացն Անդրէի, և ած զնա 'ի Մոսքուա. սակայն Հեղինէ զաստապարտեաց զնա 'ի բանտ ուրեք խաւարին, ուր և մեռաւ խեղդ: Եւ ինքն Հեղինէ անդրդաւանն կենաց սպանաւ դեղով մահու, և Օպոլենսքի զլխատեցաւ:

Իբր յայնժամ եօթն ամաց Իւան, և որդւոյ բարւոյ զրկեալ. այլ առաջնորդանեցին զկառս նորա երկերին իշխանք անօրէնք, Իւան, Վասիլ Շույսքի, և Միքայէլ Թուչքով: Որոց կարգադրեալ ըղձանաձն հասարակաց, բաժանեցան ըստ կամս զիշխանութիւնս պետութեան, և որք միաբանեալ ընդ ակամբ էին նոցա՝ էր զոր աքսորեցին, և էր զոր չարամահ կորուսին: Այլ խոհականն Վորոնցով առ ժամանակ մի զերծ կալաւ բանտէն:

Քանզի խորհրդով նորա առաքեաց մանուկ արքայն զՇույսքի 'ի Վոլոտիմիր իբրու ընդդէմ Թաթարաց, և կոչեաց մերձեցոյց առ իւր զԻւան Պելսքի ազգական միւս Պելսքեայ՝ որ 'ի Լեհս էր. սակայն որդիք ժանտք Շույսքեայ կալան զՊելսքի զանխուլ յարքայէն, և աքսորեցին հօրն իւրեանց զեղեալն: Իսկ Շույսքեայ աղխանակեալ յանդուգնաբար վերատարածեալ՝ առ ընդ իւր առն սիկա-

ըեանս և եկն եմուտ 'ի Մոպսուեստ 'ի շուրջ յաղթանակի . առեալ զուամարեալս , և զատուցապարտեաց զԳեղջուկն յաջորդս՝ երդեալ 'ի մեծ զաղգս բանտեալ 'ի Նիմսանէ զկեանսն ։

Որք միաբանեալ հաւատարիմ պաշտօնեայք Թագաւորին էին՝ անդուստ իսկ յառաջագոյնից նորա ըմբռնեալք՝ ոմանք աքսորեցան և այլք սպանան . և մետրապօլիտն իւրև բարեկամ Գեղջուկեայ աքսորեցաւ և նա 'ի Գեղօօզերօ , ուր աքսորեալ և մեռեալ էր Գեղջուկն ։ Վարանեցեալ եւեթ Թուէր զերծեալ՝ հեռացեալ 'ի Մոպսուեստ հրամանաւ արքային . այլ և նա յետ սակաւուց բարձաւ 'ի կենաց ։

Մինչ այս մինչ այն՝ Եփիմէոն Գեղջուկ զնացեալ առ Սաֆա քէրէյ խան Խրիմու՝ յարոյց զնա 'ի վերայ Ռուսիոյ ։ նորա ժողովեալ զամենայն զօրութիւն իւր , եկաւ և 'ի Թագաւորէն Օսմանեանց զօրս և զէնս յօգնութիւն , և խաղաց 'ի Ռուսիա ։

Յայնժամ առ միշտ վտանգին 'ի բաց թողեալ Ռուսաց զերկպառակութիւն՝ միաբան զինեցին ընդ առաջ մեծի բանակին թաթարաց ։ Իբրև եհաս Սաֆա քէրէյ զամբոխն Ռուսաց՝ հանդարտեցաւ . Թէ խաբեալ իցէ 'ի Գեղջկեայ , և զատուն բանիւք կշտամբեալ զնա՝ դարձաւ յետս յերկիր իւր ։ Իսկ Ռուսաց հետամուտ լեալ փախստէիցն՝ թափեցին 'ի նոցանէ ամբարս և երկիզարս և այլս բազումս ։

Այս անպատերազմ յաղթութիւն Ռուսաց զարթոյց զոգին Իւանայ, որ չորեքտասանամեայ էր յայնժամ, խիզախել 'ի զօրութիւն իւր: Զի և մանկանով յաղթանդամ էր և բուռն, և մինչ հանճարեղ և շոյս, ակրող կարգի և կրթանաց, անյողդողդ. և անմեղկելի յարութենէ: Մանկայն 'ի տղայ տիոց թողեալ լքեալ 'ի բռնութեն իւրոց անհրաժանակ կրից և ախտից, զկամս իւր եւեթ գիտէր օրէնս և պատրաստ յամենայնի:

Արդ ժողովեալ նորա զաւագանին իւր համօրէն, ասէ ցնոսա. «Արքին եմ ես Ռուսիոյ՝ մի միայն ժառանգող աթոռոյ նախնեացն իմոց. և դուք երդուարուք ինձ զհաւատարմութիւն ծառայութեան: Այլ դուք անօրէնք զեղծանիմովս մանկութեամբ, և վեր 'ի վայր հարեալ կործանեցէք զպատրաստ թագաւորի և զհպատակաց, և զաւագացուածս իմ և զեւրեանց խառն 'ի խառն արարէք, և զրկեցիք զիս յարի արանց՝ որք էին նեցուկք հաստատութեան թագաւորութեան իմոյ: Յաւուր յայսմիկ ես եմ տէր. և թագաւորեցից 'ի կազդուրութիւն տկարաց, 'ի պատուհաս յանցաւորաց և յօրինակ բարի ամենեցուն»:

Զարհուրեցաւ Ռուսիք յահեղ բարբառոյ արքայիւն և 'ի հրացայտ աչացն, և յապուշ կրթեցան խորհրդակիցք նորա: Հրամայեաց Իւանն 'ի մահ տալ զանօրէնսն անյապաղ. և զզաստացան ա-

ամենայն ժողովուրդքն 'ի տեսիլ արդար պատուհասին:

Բայց գեղեցիկ սկզբանն զհետ յա-րեալ Իւանայ զարգասիս անկիրթ բա-րուցն՝ եւ զանձն իւր 'ի Թուլութիւն ան-չափ, և յամենայն չարիս անկղլիտացաւ: Անտառականագոյնքն 'ի մարդկանէ եղեն նորա սեղանակիցք, և ոչ Թողին զչարիս զոր չանցուցին ընդ ժողովուրդն, յա-փշտակութի̄, խորամանկութի̄, մար-դասպանութի̄ և ամենայն բռնութի̄ք: Եւ Իւան խցեալ էր զականջս իւր առ 'ի չլսելոյ զբողոքս և զհեծութիւնս ան-մեղաց:

Ընդ սմին երկուս աճեցին ցնորք Իւա-նայ, յորում ժամանակի պսակեցաւ հանդիսիւ 'ի մետրապօլտէն Թագաւն Կոստանդնի Մոնոմախի կայսեր Յունաց, և հրամայեաց՝ զի յայնմ հետէ անփոփո-խելի կոչեսցեն զնա Զար:

Յետ սակաւուց առ 'ի կնութիւն զԱ-նաստասիա զդուստր Ռոմանայ Ռոմա-նով. և նա իւրով խոհականն և ազնիւ բարուքն խրատ բարի եղեալ առն իւ-րում բանիւք և արգեամբք՝ զգօնացոյց զնա և դարձոյց 'ի ճանապարհն ուղղու-Թեան:

Հալածեաց այնուհետեւ Իւան յար-քունեացն զծաղրածուս և զհացկա-տակս և զշողոմարարս. և փոխանակ նոցին ած կարգեաց զիւրև արս առաքի-նիս և խորհրդականս:

Ցեռեալ Իւանայ զանընդհատ երկ-
պառակութիւն Թաթարացն Խազանայ
և Աժտերխանու, ուր եր հանդերձա-
նաց մեծի պատերազմի, և առ 'ի կարգի
ունելոյ ընդ միով գլխով զամենայն ըղ-
զօրսն՝ որք յառաջին խառն 'ի խուռն
գնային 'ի պատերազմ ընդ վարչութե
այլ և այլ իշխանաց զօրագլխաց՝ եհան
նոր խումբ զինուորաց Ստրելեց կոչե-
ցելոց, այս է Աղեղնաւորք. զինեաց զնո-
սա հրազինուք, և զմի մասն նոցա կար-
գեալ իւր յանձնապահ, զայլս ցրուեաց
ընդ այլ զօրսն 'ի մարզել և զնոսա 'ի
կարգս զինուորութե:

Ընդ այն ժամանակս բնակիչքն Խա-
զանայ 'ի բաց վանեալ զխան իւրեանց՝
խնդրեցին յԻւանայ զՇիխ Ալի, որ
յաքսորս էր կանխաւ 'ի Գեւլօօզերօ, և
մայրն Իւանայ Հեղինէ արձակեալ էր
զնա յազատութե: Իւան առաքեաց նո-
ցա զԱլի բազմութե Ռուսաց և Թաթա-
րաց: Ընդ առաջ եղեն նոցա Խազան-
ցիք և ընկալան 'ի ներքս մեծաւ պա-
տուով. այլ յանկարծակի կալեալ զա-
մենայն զմրզայս՝ այսինքն զպատուանիս
Ալեայ՝ բանտարգել արարին, և զայլ
ուղեկիցս նորուն 'ի բացի ընդ առաջ ան-
յուցին. և զնա ինքն զԱլի հալածեալ 'ի
բաց՝ կոչեցին անդրէն զառաջինն զխանն
իւրեանց:

Իւան խրատդրած լեալ եղելոցն՝ ար-
ձակեաց 'ի կողմանս Խազանայ խուռնս

մէ Սիպերեայ, որք հարկէին 'ի Թաթարաց ոգիս քսան հազար, և երեսուն հազար գերեցին: Ի միւսում ամի որ էր 1550, մեռաւ խանն Խազանայ՝ թողեալ որդի մի մանուկ հասակաւ, և կին նորա Սիւմպէքէ անուն կալաւ զիշխանութիւն աշխարհին:

Իսկ Իւան յետ վայրապաշար առաքելոյ անդր զօրս յայլ և յայլ խումբս, խաղաց ինքնին զօրօք բազմօք, և զճանապարհայն 'ի վերայ անապատելով ընկեն միոյ կառուցց. գղեակ՝ քսան մերձաւոր հեռի 'ի Խազանայ, զի զիւրսն լիցի նմա յարձակել անտի 'ի Խազան:

Մինչդեռ Ռուսք զգործոյն էին՝ Խազանցիք բանադրատեցին սպանանելով զՍիւմպէքէ՝ ամուսնանալ ընդ Շահ Ալեայ, որ հզօրացեալ 'ի ժամանակին՝ կարող էր զգէն ունել Ռուսաց օգնութ. Խազանցւոց: Եւ նորա կեղծեալ զհաւանութի՝ առաքեաց առ նա խորհուրդս և գահամուտս: Բերկրեցաւ Ալի յանձին իւր ընդ առաջարկութին. այլ իւրքն 'ի կառակածի եղեալ՝ իբրև եառուն շան միում ձաշակել 'ի գահամանդ անտի, անդէն առ հասեալ [illegible] շունն. և պատագամաւորքն ականատեսք եղելոցն՝ վերկայեցին յանուն հանձարէն աղջկին, զի Սիւմպէքէաց էր գաւն:

Յայնժամ Ալի եմուտ 'ի Խազան երեսուն հազար արամբք. զՍիւմպէքէ արգելանի հանդերձ առաքեաց 'ի Մոս-

քուա, և զորոց միանգամ կարծիս ինչ կալեալ՝ թէ չիցեն հաւան ընդ ընտրութիւն իւր, յանխնայ սուր 'ի վերայ եդեալ կոտորեաց:

Ոչ ևս հանդուրժեալ Թաթարաց՝ միաբանեցին գալեալ զնա. այլ ընդ յայտնիլ գալոյն՝ նա 'ի միում աւուր երեսուն հազար ոգիս ընդ սուր անցոյց:

Զայս ամենայն իբրև լուաւ Չաֆիբէն անուն ոմն իշխան խազանայ՝ որ յարքունիսն Իւանայ կայր, խնդրեաց 'ի նմանէ զհրաման՝ որպէս թէ երթալ հանել 'ի խազանայ զընտանիս իւր. այլ նորա կամք էին վանել անտի զԱլի, և փոխել զաթոռն: Վասն որոյ իբրև եհաս անդր, գրեաց ամբաստանութիւն զնմանէ առ Իւան՝ իբրու եթէ զաւ ինչ խորհիցի ընդդէմ Ռուսաց, և Իւան վաղվաղակի կոչեաց զԱլի 'ի Մոսքուա:

Շեխ Ալի ոչ ինչ զգացուցեալ ումեք զհրամանէն Իւանայ՝ այլ արար աւագորերոյն խազանայ, թէ կամիմ երթալ 'ի Մոսքուա. այլ նախ խնդրեմ կարգել ձեզ ամենեցուն 'ի Սվեաժեաք, այն էր նորակառոյց դղեակն Ռուսաց: Եւ իբրև եկին ժողովեցան անդր արք իբր հինգհարիւր, էառ Ալի զդրունսն, և զչորեքհարիւրսն գլխատեալ՝ զմնացեալ հարիւրսն շղթայակապս առաքեաց 'ի Մոսքուա, զի յայտ արասցէ զստութի ամբաստանութեանցն գրելոց զնմանէ

իւրմէ, և խումն ոչ եւս երկմտեաց զհաւատարմութենէ տանն :

Իսկ Չափիսըն պատեհ առեալ զպայրոյթ Թաթարաց ընդ տէրս Աղեայ, ընտրեաց նոր զօրավարս, և երդմնի արար զնոսա յանհնազանդ թշնամութիւն ընդդէմ Ռուսաց, յուսով ունելոյ զաթոռն խաղանայ : Այլ նոքա ամբոխ մեծ արարեալ եառուն զաթոռն՝ Ծոփկերայ որդւոյ խանին Աժտէրխանու . որ և եկեալ եմուտ 'ի խաղան երեւուն հազար զօրօք :

Ի նմին ժամանակի և Ռուսք առաջնորդութեամբ Թագաւորին իւրեանց Իւանայ եկին պաշարեցին զխաղան . կանգնեցին շուրջ զնովաւ պատնէշս հաւասար պարսպացն, և կարգեալ 'ի վերայ նոցա թնդանօթս՝ սկսան հարկանել ընդ պարսպօքն, և փլուցին զնոսա, և խուժեցին ընդ խորամատն 'ի ներքս : Սակայն և Թաթարք 'ի յուսահատութիւն ընդդիմացեալ վանէին զնոսա յետս կոյս . որ ինչ և գայր 'ի ձեռս՝ փոխանակ զէնու վարէին, զնետ, զսուր, զքար եռացեալ, զգաղտնիս, զգերանս և զխանձողս : Եւ էր պատերազմն ցրուեալ ընդ քաղաքն ամենայն 'ի փողոցս 'ի տանիս և 'ի պարտէզս . ամենայն ուրեք հուր սուր և կոտորած, և աղաղակ և ձայնք ողբոց և յուսահատութե . և կանայք անգամ 'ի տանց իւրեանց յարձակեալք մարտ գնէին : Հասին ապա Ռուսք յա-

պարսիս խանին, ուր ամփոփեալ էր Եովիկէր ասկաւուք ոմամբք ընտիր զօրականօք, որ և յերկար զդէմ կալեալ Ռուսաց արիաբար՝ առեալ յանձն իւր վէրս բազումս, մինչև եկն եհաս 'ի տեղին ինքնին Թագաւորն. և 'ի գութ և 'ի զարմանս հարեալ ընդ քաջութիւն խանին՝ ազատեցոյց զնա 'ի ձեռաց իւրոցն:

Յայնժամ Իւան գոհացեալ զԱստուծոյ վասն յաղթութեանն մեծի, առէ ցիշխանսն իւր և ցզօրավարս. «Ահա այժմ ամրացոյց զիս Աստուած ընդդէմ ձեր»:

Կարգեաց ապա 'ի քաղաքին և 'ի սահմանս նորա, և դարձաւ 'ի Մոսքուա: Եւ առամսքն խաղաղութեան վախճան եղև պատերազմաց Ռուսաց ընդ Թաթարս մինչ 'ի սպառ: Զի և խանն Աժտերխանու Աղատուլ ինքնին անձնատուր եղև Իւանայ, և բարձաւ անտի աթոռն Խըփչախ Թաթարաց յաջորդացն Չինկիզայ: Ի յառնել ընդդէմ Ռուսաց այլոյ խանի՝ որ կոչէր Իմիւրկէյ կամ Իմթիւրչէյ, խաղաց 'ի վերայ նորա Իւան, և հալածեալ զնա 'ի կողմանս Աղախու, առ դքաղաքն, և եդեալ 'ի վերայ բնակչաց նորա տարեկան հարկս չորեքհազար ռուպլի, դարձ արար յաղթանակաւ 'ի Մոսքուա:

Ընդ այն ժամանակս Անգղիացիք սկըսան վաճառաշահ լինել ընդ Ռուսս՝ մտեալ 'ի հիւսիսային ծովէ անտի 'ի բե-

րան Ցլքիոս գետոյ, և անտի 'ի Մրա-քոսս. և իւրն մեծաւ մարզպանութեամբ ընկալաւ զնոսա խաղև. զնազանս առաւել քան վաճառականս ամենեւ:

Զայնու ժամանակաւ Թագաւորեաց Ըղեզոսց Կոռսդասոս Վաղոս, և տապրանքը Սելեւկիացւոց խաղացեալ յաղխարհն Ռոմայեցւոց՝ առաժիւք հանդերձ վանեցաւ յիւանդայ. որոյ խնացեալ յետոյ զնեդոզութիւն Սելեւկիացւոց՝ տապաձառս իւր հնարեցաւ, և ապահանջէր 'ի խաչյանդրոց ընակելոց 'ի Սելեւկիա զհարկ յհաուն անաց՝ զոր պարտէին հատուցանել Ռոմայեցւոց, որպէս ասէր նա. և 'ի ժխտել նոցա՝ ատարատանեաց 'ի Սելեւկիա, և աւերալ աւար և գերի բազում՝ վաճառեաց զնոսա Քաւթարաց:

Այսպս զինչաւ իւրն ապաշխարհեաց Սելեւկիացւոց, և արար դադարումն զինուց մերցանմնեալ. յորում ժամանակի թըշնամութիւն իւր ծագեր վասն այսհոց ընդդիմակիչս Նարկա քաղաքին Սելեւկիոյ՝ Լուսանդրականն, և ընդ դիմակիչս իւրանկողոս քաղաքին Ռոմայեցւոց, վասն որոյ հարկ եղև 'ի պատերազմ ձեռն արկանել: Այնին Ռոմայ զՆարկա, ապա և զՑերրաք, և դարձան 'ի ձեռնել յաղխարհէն իւրեանց: Իւ մարզխապան կարգին խաչյանդրոց յարձակեալ 'ի քաղաքն մի մերձ 'ի Փղչոյ յորում էին երեքհարիւր արք պատերազմի, ընդ առ ամենեցուն զամենեսեանն:

Այնուհետ և խանն Խրիմու կարծեալ ե-թէ Իւան զեռ ևս արտաքոյ աշխարհին իւրոյ զեղջերի՝ յարձակեցաւ 'ի սահ-մանս Ռուսաց. այլ երբև լուաւ՝ զի նա 'ի Մոսկուա է զօրօք իւրովք, դարձաւ անդրէն յերկիր իւր:

Իսկ զօրքն Իւանայ դարձան 'ի վերայ Լիվոնիացւոց, և ձերբակալ արարեալ զմագիստրոսն խաչակրաց՝ եկին 'ի Մոս-կուա:

Իբրև կալաւ զտեղի նորա այլ ոմն մագիստրոս Քեթլէր անուն, կոչեաց իւր 'ի թիկունս զարքայն Լեհաց. որոյ ընդ առաջ գնաց ինքնին Իւան. և զա-ռաջինն 'ի գլուխ տարեալ զքանի մի յաղթութիւնս, ապա և 'ի պարտու-թիւն մատնեցաւ յայլ պատերազմունս: Յորմէ պատճառս առեալ Ռուսաց, զտատարազգի զօրավարօք իւրեանց ար-կանէին զմիտսն, և չարախօս լինէին զնոցանէ առ Իւան. այլ նա որ քաջ գիտէր զմախանս նոցին, և զվաս-տակս հնում զօրավարացն, անաչառ խստութեամբ պատուհասեաց զչարա-խօսսն:

Մեռաւ 'ի ժամանակին յայնմիկ ա-մոքիչն խստութեան Իւանայ դշխոյն Ա-նաստասիա. զոր լուեալ Իւանայ՝ կո-չեաց 'ի մի վայր զաւագորեարսն ամե-նայն և ասէ ցնոսա. « Տաղտուկ է ինձ այսուհետև 'ի մարդկանէ, և 'ի մեծու-թէ և 'ի գործոց. և ահա հրաժարիմ

յաթոռոյս, և անձին կենաց ոչ ու-նիմ»: Եւ արար այնպէս:

Եւ զի Դեմետր անդրանիկն իւր դեռ եւս մանուկ էր, աւանդեաց զխնամակալութիւն աշխարհին ՚ի ձեռս Եդիգերայ խանին Խազանայ, զորոյ քաջիկ տեղե-կացեալ զխոհեր զհանճարն և զհաւա-տարմութիւն: Եդիգեր ոչ կարաց յան-ձին. այլ Իւան բռնադատեաց զնա՝ և խոստացաւ նմա զխորհրդակցութիւն իւր ՚ի գործս կարեւորս. եւ նմա զանունն Ձար, և անձին պահեաց զկոչումն Վե-լիքի քնեազ, այսինքն է իշխան մեծ, և ինքն մեկնեցաւ ՚ի քաղաք մի փոքրիկ՝ որ կոչէր Ալեքսանտրովա սլոպոտա մերձ ՚ի Մոսքուա:

Մինչդեռ Եդիգեր առաջնորդէր աշ-խարհին խոհական տեսչութեամբ, աւագա-նին Ռուսաց հարեալ ագահութեամբ՝ սկսան խուել զժողովուրդն, և զոր-ծէին զամենայն ըստ կամս անձանց:

Ոչ հանդուրժեաց Իւան անկարեկիր կալ. մնալ ընդ աղէտս իւրոյ պետու-թեան, յարեաւ կազմեաց գունդ մի զօ-րաց Օփրիչնիկք անուանեալ, ՚ի սոսկա-կան ամբոխէն և եթ ընտրեալ զնոսա, որպէս զի և՛ ըստ ախորժակաց իւրոց վարեսցէ զնոսին, և զազատորեայն պատ-կառեցուսցէ և ՚ի խոնարհութեան կացուս-ցէ: Եւ առեալ զնոսա ՚ի գործիս իւ-րում վրէժխնդրութեան՝ եւ շուրջ յա-ծեցաւ ընդ ամենայն աշխարհ իւր, և

զմեծատունսն բռնացեալ՝ էր զոր ընդ-սուր անցոյց, էր զորս յաքսորս տաքեաց, և էր զորս կապուտ կողոպուտ արար յընչեց նոցին։

Ի վերայ հասեալ ՚ի ձեռն արքունեկաց իւրոց՝ եթէ արքեպիսկոպոսն Նովկորոդայ բանադրեաց է մասնաւորութբ ընդ արքային Լեհաց, խաղաց ՚ի Նովկորոդ. և յանդգնաբար նմա արքեպիսկոպոսին՝ առաւել ևս ՚ի սրտմտութե բարկութե բորբոքեալ Իւանայ՝ ասէ ցնա. «Մանէ՞չ զաւազան, որպէս ժառանգեցար զու և ժողովուրդ քո մատնել զքաղաքս զայս ՚ի ձեռս օտարին իմոյ Սիգիսմունդդայ։ Ո՞չ խաչ տեառն է այդ ՚ի ձեռին քում. արդ զէն է այդ՝ զոր դարձուցանես յիմ վերայ. և մինթէ իցես դու հովիւ՝ գայլդ անագորոյն։ Հրամայեաց նմա երթալ յեկեղեցին իւր և մատուցանել զպատարագն. և ճաշեալ ՚ի տան արքեպիսկոպոսարանին, ապա հրամայեաց արկանել ՚ի կալանս զարքեպիսկոպոսն, և ընդ սուր անցուցանել զամենայն զմեծամեծս քաղաքին, և զեստավէժ առնել։ Իսկ զարքեպիսկոպոսն փոխեաց ՚ի վանս ուրեք, ուր և մեռաւ նա յետ սակաւուց։

Զնոյն անցս Նովկորոդայ կրեցին և քաղաքացիքն Փսկովայ և Թվերայ ամբաստանեալք վասն բարեկամութե իւրեանց ընդ Լեհս։

Եւ դարձաւ Իւան ՚ի Մոսկուա, ո-

րոյ ընտանիքն զահի հարեալ դողային 'ի լուր աղետից Նովկորոտայ և Թվերայ. այլ նա շուրջ եկեալ երկվարաւ ընդ փողոցս քաղաքին աղաղակէր և ասէր. «Աներկիւղ լերուք ժողովուրդն իմ, և միայն գաւաճանքն իմ զգողանի հարցին »: Այսպ 'ի մահ մատնեաց արս երեքհարիւր յաւագաց անտի, յորս էին և յազգականաց Թագաւորին:

Թուէր իմն խստութի նորա անցեալ ըստ չափ. այլ ոչ սուտ էին և ամբաստանութիւնքն. և իշխանն Քուրպսքի, որ փախուցեալ յԻւանայ ապաւինեալ էր յարքայն Լեհաց, անդ գրեաց զպատմութի Իւանայ, և առաքեաց առ նա ինքն. սակայն Իւան զարմանալի մեծանձնութբ գրեաց առ նա պատասխանի, և արդարացոյց զանձն յանաչառ անգըթութէ՝ որով կշտամբիւրն յանելեաց իւրոց. յայտ արար անժխտելի փաստիւք՝ եթէ Ռուսք ինքնին հարկ առաքին նմա հովուել զնոսա գաւազանաւ երկաթեաւ:

Ի յոյժ ներքին շփոթիցն Ռուսիոյ յաւելան և պատերազմունք Լեհաց և Լիվոնիացւոց, որովք տագնապեցաւ յոյժ Իւան, մինչև Եղիսաբեթի դշխոյին Անգղիոյ արդահատել նմա, և հրաւիրել զնա յերկիր իւր:

Ընդ այն ժամանակս Էնրիկոս եղբայր կուսազաւոր Վալոյ Թագաւորեալ Լեհաց՝ ունելով Թշնամի հանդիսա-

ցաւ Ռուսաց, և զդեսպանս նոցա բանտարգել առար ամս երկուս. ապա զի մի՛ առացեն Ռուսք զքաղաքն Լիվոնիոյ՝ որ ընդ իւրով ձեռամբ էին, եհան զդեսպանսն 'ի բանտէն, և տուաւ պարգևօք մեծարեալ զնոսա՝ դարձոյց յերկիր իւրեանց, և ընդ նոսա առաքեաց զայլ ոմն դեսպան՝ զի ուխտ խաղաղութեան հաստատեսցի ընդ երկուս պետութիւնն փոխանակ զինադադարմանն:

Իսկ Իւան կալեալ զդեսպանն և եդ 'ի բանտի նոյնչափ ամս և ամիսս և աւուրս և ժամս, որչափ կացեալ էր իւրոցն 'ի Շվէտս. և ապա մերժեալ զառաջարկութիւն՝ նորոգեաց զպատերազմն: Այլ յայն իբրև ետես թէ ծանր է ինքեան պատերազմել այլ ևս, և Լիվոնեացիք ցանգ ատելութիւն են ընդ Ռուսս, յորդորեաց զնոսա մտանել ընդ տէրութիւն Մագնոսի դքսին Ոլսացիոյ՝ և խոստացաւ նոցա զպաշտպանութիւն իւր: Եւ յընդդէմ կալ բնակչացն Րեվէլայ և 'ի չհնազանդել Մագնոսի, յանօգուտ առաքեալ նախ Իւանայ 'ի վերայ նոցա զօրս, ապա յերկրորդում նուագին պատրաստեցաւ անձամբ խաղալ 'ի վերայ նոցա ամենայն զօրութեամբ իւրով:

Ցայնժամ Մէնկլի Քէրէյ խան Խրիմու սադրանօք արքային Լեհաց յարձակեալ զօրօք բազմօք 'ի Ռուսիա, և կն եհաս մինչև 'ի Մոսկուա, և հրդեհեաց զամենայն արուարձանս այս քաղաքին.

և եղև 'ի Ռուսաց կոտորած մեծ՝ իբրև հարիւր հազար ոգւոց, որք անկան 'ի հուր և 'ի սուր Թաթարաց:

Դարձ արարեալ ապա խանին 'ի Խրիմ, արձակեաց առ Իւան երկքհարիւր դեսպանս, և պահանջէր զհարկս: Փոքր միւս ևս և ընդ սուր անցուցանէր Իւան զամենեսին զնոսա. այլ շատ համարեցաւ զգլխաւորացն 'ի նոցանէ հատանել զունչս և զականջս, և տուեալ 'ի ձեռս նոցա զխարազանաւոր մի՝ դարձոյց յետս զնոսա առ խանն և ասէ. «Այս ևեթ հարկ է, զոր հատուցից ես խանիդ»:

Զայրացաւ խանն, և սաստկագոյնս յարձակեցաւ 'ի Ռուսիա, մինչև մեկնել Իւանայ 'ի Նովկորոդ՝ յանձն արարեալ զզօրսն յիշխանին Վորոտինսքի. որ աջողակի խորտակեաց զԹաթարսն, ձերբակալ արար զմի յորդւոց խանին, և զմիւսն եգիտ անկեալ 'ի տեղւոջ ճակատուն, և լցան Ռուսք աւարաւ Թշնամեաց:

Ի նմին ժամանակի մեռաւ և Սիգիսմունդ արքայ Լեհաց, և Իւան ոգի առեալ 'ի ձեռաց երկուց ահեղ Թշնամեացն, զուն գործեաց նկուն առնել և զերրորդն՝ զարքայն Շուէտաց: Զմասն մի զօրաց իւրոց յարձակեցոյց 'ի Ֆինլանտիա, որք բազում նախճիրս գործեցին անդէն. և ինքն երկոքումբք որդւովք իւրովք առաջնորդեալ 'ի Լիվոնիա, էառ քաղաքս քանի մի, և զար-

ցաւ ինքն 'ի Նովկորոտ՝ զայլ զօրականն տարաքեալ յԷսթոնիա, զոր ծայր 'ի ծայր աւերեալ ապականեցին Ռուսք:

Սակայն Աքէնատն զօրավար Շվէտաց եղեալ 'ի Րէվէլայ, արար 'ի Ռուսս կոտորած մեծ: Զոր իբրև լուաւ Իւան՝ Թուղթս խոնարհականս գրեալ առ արքայն Շվէտաց Յովհաննէս՝ յորդորեաց զնա 'ի հաշտութիւն խաղաղութեան. այլ քանզի կամէր 'ի Նովկորոտ կատարել զդաշինս ուխտին և ոչ 'ի սահմանագլուխս երկոցունց աշխարհացն. Յովհաննէս ոչ կալաւ յանձին. և պատերազմ էր անընդհատ 'ի մէջ նոցա՝ առաժիւք հանդերձ երկոքանչիւր կողմանն. մինչև զիջաւ Իւան, և արձակեաց զպետպանս իւր 'ի սահմանագլուխս Շվէտաց. և պայմանեցաւ եռամեայ ևեթ զինադադարութիւն յամին 1575:

Ի կատարած ամացն երից եկն Իւան և պաշարեաց զՐէվէլ յիսուն հազար զօրօք. այլ յետ երկուց ամաց մեկնեալ անտի եկն 'ի Փսքով. ուր կոչեաց զՄագնոս, և բաժանեցաւ ընդ նմա զԼիվոնիա:

Այլա կամեցեալ Իւանայ մտանել 'ի քաղաքն Քոքէնհաուզէն՝ որ էր 'ի բաժնին Մագնոսի, չետուն նմա մուտ քաղաքացիքն յանուն Մագնոսի. ընդ որ անհնարին զայրացեալ Իւանայ՝ զնոյն պաշարեաց զՎէնտէն, յորում էր Մագնոս. որ և անսասպխուռ մարդք եղ ընդ ա-

ռաւղ Իւանայ՝ մեծաւ յարգանօք, որ-պէս առաջին էր :

Դէպ եղև զի մինչդեռ յանդիմանէր զնա Իւան, ռումբ երկաթի արձակեալ ռուամբք հարաւ 'ի գլուխ իւր : Ի յա-ռումն բարկութն բորբոքեցաւ Թագա-ւորին, և զՄագնոս 'ի կալանս արկեալ՝ երդուաւ չարամահ սատակել զամե-նայն զբնակիչս քաղաքին : Որոց ապաս-տան եղեալ 'ի միջնաբերդն, առաւ հուր հարին 'ի վառօդսն, և ծածկեցան ընդ փլատակօք քաղաքին, և զապրեալսն խեղդամահ արարին Ռուսք :

Յետ այնորիկ կոտորեաց Իւան և զբ-նակիչս Վոլմար քաղաքի, և առեալ բովանդակ հիւսիսային կողմանն Տվինա գետոյ՝ բաց 'ի Րէվէլայ : Անտի անցեալ 'ի Տերպատ՝ Ջանայր յանցաւոր ցուցանել զՄագնոս, կամ աքսորել զնա 'ի խոր-դրել զինքնութն . այլ նա անդէր, զի իւրքն իրաւամբք դատաստանի 'ի յայս եկեղեցին, և ապա թէ յանձն առնէ առնել՝ առնուլ զինն զանձուն վասա-թեան :

Ապա եղև Իւանայ յարձակումն Թա-թարաց 'ի Ռուսիա, և հարկեալ դառ-նալ յաշխարհ իւր՝ արձակեաց զՄագ-նոս 'ի Քոլէնհաւզէն :

Ըստ մեկնելոյ Իւանայ՝ միաբանեցին Շվէտք և Լեհք, և առին զպատերազմ ան-դին Լիվոնիոյ 'ի ձեռաց Ռուսաց՝ կոտո-րեալ 'ի նոցանէ եօթն հազար զօրս :

Զայն իբրեւ լուաւ Իւանն, փութացաւ խօսել 'ի հաշտութիւն ընդ Թաթարս, եւ եկն դարձեալ 'ի Փսքով հարիւր հազար զօրօք, զորս տրոհեալ 'ի խումբս խումբս՝ կամէր յարձակել գիշերախառն 'ի վերայ Թշնամեաց եւ սատակել՝ բաց 'ի Լիվոնիոյ եւ զՔուրլանտիա եւ զԲրուսիա Լեհաց. այլ Շվէտք ընդ այլ կողմանս խռովեցուցին զզօրս նորա, եւ Մոգիլո-ակ խռովեցեալ յԻւանայ՝ եմուտ ընդ պաշտպանութեամբ Ստեփանոսի Բաթթորի արքային Լեհաց։

Սա այս Բաթթորի ուխտ բարեկամութեան հաստատեալ ընդ Թագաւորին Օսմանեանց եւ ընդ խանին Խրիմու, պահանջէր յԻւանայ՝ զի տացէ 'ի բաց որչափ ինչ քաղաքս հաստատեալ էր 'ի Լիթուանիոյ եւ 'ի Լիվոնիոյ. Իսկ Իւանն պահանջեաց 'ի նմանէ 'ի վերայ այնր ամենայնի եւ զՔուրլանտիա։ Եւ 'ի մերժել Բաթթորեայ, Իւանն արկ զԹղթաբերսն 'ի բանտ։

Յայնժամ Բաթթորի պաշարեաց զՓոլոցք եւ էառ զայն, եւ յաղթեաց նմա յամենայնի. եւ յարոյց վերստին զԹաթարս Խրիմու 'ի վերայ Ռուսաց։

Իբրեւ ետես Իւանն զտագնապ եւ զաւեր իւրոյ աշխարհին, 'ի խնդիր եղեւ խաղաղութեան. եւ միջնորդ պատրաստեալ կալաւ զքահանայապետն Հռովմայ զԳրիգոր ԺԳ, աղաչելով զնա՝ զի հաշտեցուսցէ զԲաթթորի 'ի խաղաղութիւն եւ

՚ի չափաւորութիւն ըստ պատուիրանաց կրօնիցն զոր դաւանէին ։

Առաջնորդաց քահանայապետեան ՚ի Լեհս զփոխանորդութիւն յանձնեալ . որում եւս պատասխանի Կաթողիկոսին՝ թէ ոչ այլազգ հնար է ինձ զերծանել ՚ի հալածանէ, բայց եթէ դարձուցէ առ իս Խուան զբաժանեալ դասն Լեհաստանի, եւ հաստատեսցէ զծածկեալ պատերազմին ։

Այնուհետեւ զնոյն Փոխանորդութիւն առ Խուան, որոյ մեծաւ պատուասիրութեամբ հիւրընկալեալ զնա՝ յանձն էառ հաշտեցուցանել ՚ի Լեհաց զՔաղաքացիսն, եւ անդրէն առեալ ՚ի մեծամեծ Լեհաստանոյ ։ Այլ առաջնորդն Լեհաց ոչ կիչ հանձնեցաւ ընդ պայմանսն, մինչեւ զիջեալ Խուանայ՝ եթող զԼեհաստան եւ զայլ քաղաքս զորս առեալ էր ՚ի Ռոմանեաց, եւ եղեւ խաղաղութիւն յամին 1583 ։

Հաշտեցաւ Խուան եւ ընդ խաննին Խրիմման, եւ ընդ Շվէտս հասարակաց զինադադարութեան եւ ամենեցուն, եւ ժամ էր այնուհետեւ պատել զմեծս Ռուսիոյ . այլ յաղթանակէր ազգին Խուանայ այլուստ պահեաց զոյն ժամանակի ։

Սակայն ՚ի ստորեւ ընդհիմեցաւ այն ազգի յաղխողորդ արքանծիցն որ զինուոր նման ընդ նոյն ժամանակս ։

Քանզի չեւ հաշտեալ Ռուսաց ընդ Թաթարկաց՝ հաստատած զօրացն Լեհաց արշաւեցին հասին մինչեւ ՚ի Վոլկա, որպէս պատմեն ոմանք ; եւ Խուան չիմանելով արար՝ զի անձն ունէր հեռ-

նքն կատարել նոցա 'ի սատանայապաշտութեանց ձեռնադրութեան անտի վայրացն : Իսկ առաջնորդքն ոչ ինչ հաւատացեալ 'ի վերայ եկաց, ասեն, խորհրդոց նորա. և համեմարեալ այնպէս եթէ առ ծերութեն զանձնալեցի, թախանձ արկին նմա եղանել անձնական ընդդէմ Լեհաց, կամ չէթ արձակել զանդրադարձն որդէն իւր զոր վերէր զՊետրոս 'ի վերայ նոցա :

Իսկ նախատանօք իւր համարեալ զխորհուրդն, թերևս և համախոհութեամբ ընդ որդւոյ իւրում՝ հակառակ անձինն, զքննութեանց զատապարտէին. և այն ինչ արքայորդին Պետրոս անկեալ առ ոտս հօրն՝ կամէր քերել աղերսիւ յանձնէ զխէթ կասկածանացն, Իսկ զնա եա յետ անդամ բարկութեամբն՝ եհար զատապարտ 'ի դղեակ որդւոյն, որ յերկրորդ և 'ի չորրորդում աւուրն մեռաւ :

Փաւստինոս, որ յայնժամ 'ի Լեհս էր. այլ պատճառս առայ մահուն Պետրոսի. այլ այն որպէս և իցէ՝ Իսկ ըմբռնեցաւ յանձնառութիւն առեալ թախծութեամբ : Սկսաւ բաշխել զօրանս յօգուտ մենաստանաց և աղքատաց, մինչև եպիսկոպոսացն յունաց անգամ, զի թերևս թողցէ նմա անէր զաստուածն ոճիրս յանցանացն : Սակայն և այնու ոչ զերծեալ 'ի բողոքոյ և 'ի տագնապաց խղճին, եդ 'ի միտ կրօնաւորել. և մետրապօլիտն Պլանեկսնոս խոստացեալ զնա՝ անուանեաց Յովհաննէս :

Ի մանկութեան իւրում ոչ ինչ շահեալ 'ի դաստիարակութենէ, մինչև ցմահ անմեկնելի կալաւ ընդ անդարմանելի թերութեանց բնութեանն և զընտիր ընծայիր ձիրս նորին, որովք ճոխացեալն էր։ Մահու չափ ճգնեալ 'ի հաստատութեան և յաճեցուցումն պետութեան իւրոյ, զոյգ նմին խնամ կալաւ և պայծառութեան աշխարհին 'ի զարդութիւնս և յարուեստս։

Սա առաջին կոչեաց ժողովեաց 'ի Մոսկուա օրէնսդէտս, ճարտարապետս, նկարիչս, քանդակագործս, ոսկերիչս, թղթարարս, ձուլիչս, բժիշկս, եւս և նաւարարսն։ Եւ յամին 1563 տպագրեցան 'ի Մոսկուա այն առաջին անգամ Գործք և Թուղթք առաքելոցն 'ի սարկաւագէ ումեմնէ։

Նորին Իւանայ խնամովք եմուտ 'ի Ռուսիա կարգ և մարդիկ Եւրոպացի զինուորութեան, որպէս ասացաք, և նա յաւել օրէնս կարևորս 'ի մատեանն Եարոսլաւեան։ Ի սահմանեալ ժամս ընդունէր զաղերսագիրս, և ամենեցուն անընդմէջ համարձակէր մատչել առ ինքն։ Զգաստաւորս և զպաշտօնեայս պետութեան անխրատելիս 'ի դատաստանի՝ 'ի մահ պատուհասէր. իսկ 'ի թեթեւագոյն յանցանս նոցա՝ մերկացուցեալ զնոսին յիշխանական զգեստուցն, տայր յածեցուցանել զնոսա քրձազգածս ընդ փողոցս քաղաքին 'ի ձեռն մեռելաթաղ

տրանց արբելոց. և այսպէս խրատէր ըզ-նոսա զգաստանալ առ յապայս: Իսկ զարբեցողս միշտ բանտիւ պատուհասէր:

Նովին անաչառ խստութեամբ վարեցաւ Իւան և ընդ պաշտօնեայս եկեղեցւոյն իւրոյ. փոփոխէր ըստ կամս զմետրոպօլիտս իւր՝ առանց ինչ հարցանելոյ զՅոյնս, որպէս կանխաւն. և զանձամբ իսկ էառ զարգս եպիսկոպոսականս:

Առ Թագաւորութեամբ Իւանայ սկսան պեղել Ռուսք և զհանս երկաթոյ, և վաճառաշահ լինել ընդ ծով և ընդ ցամաք յաճախապէս:

Համառօտ ասել, Իւան այր մեծ էր 'ի լաւութիւնս և 'ի վատթարութիւնս միանգամայն. և թէ բազում անգամ անց նա ըստ չափ արդարութեան, թերևս՝ որպէս ասէ Քուրպսքի, այնպէս պահանջէին հանգամանք ազգին իւրոյ յայնժամ: Որք և սկիզբն արարեալ սիրել զնա, ապա պատկառել, հպատակել, երկնչել և նողկալ, 'ի վախճանի խանդաղատեցան 'ի տեսիլ վերջին աղէտից նորա:

Եւ մեռաւ Իւան Դ, յամին 1584, 'ի հասակի յիսուն և չորից ամաց: Կանայս հինգ լեալ էին նորա. առաջինն Անաստասիա, որ ծնաւ նմա երիս որդիս, զԴմիտր, զԻւան և զՖէոդոր. Մարիամ դուստր Թեմրուկ իշխանին Չէրքէզաց, որ ծնաւ զմիւս Դմիտր. Մարթա և Տարիա, որք արգելան 'ի

վանս կանանց. և Մարիամ Ֆէոդորեան։

ՓԵՈՏԱՐ Ա.

ԳԻՏԵԼՈՎ ցար Իւանայ, որպէս ասեն, զապիկար զօրութիւն երեց որդւոյն իւրոյ Ֆէոդորայ՝ աւանդեաց զվարչութիւն պետութեան ՚ի ձեռս երից զօրավարաց իւրոց քաջաց, որք էին Իւան Շույսքի, Իւան Մսթիսլաւսքի, և Նիքիթ Եուրեւ եղբայր Անաստասիայ դշխոյին. և զկրտսերն զԴմիտրի յանձնեաց ՚ի խնամս Բոգդանայ Բելսքի։

Ընդ մեռանել հզօր ինքնակալին՝ յաճախեցին ամբաստանութիւնք զԲելսքեայ, որպէս թէ կամիցի թագաւորեցուցանել փոխանակ Ֆէոդորայ զսան իւր զԴմիտրի, և նա ինքն Բելսքի դեղով մահապանեալ լիցէ զարքայն Իւան, և արգելաւ նա ՚ի Նիժնի Նովկորոտ։

Ահեղագոյն ոսոխ Ֆէոդորայ ամբարձաւ Բորիս Գոդունով եղբայր կնոջ նորին. որ առաւել քան ՚ի Ֆէոդորայ՝ ՚ի Դմիտրէ խիթացեալ, հնարեցաւ նախ հեռացուցանել զնա մօրբն հանդերձ յարքունեաց ՚ի քաղաք կալուածոց նորին յՈւկլիչ։

Ապա ուշ եղեալ ՚ի բարձումն երից իշխանացն՝ հաւանեցոյց զՖէոդոր զգու-

շահող անձինն 'ի նոցանէ, իբր զի զամենայն ժողովուրդն յիւրեանց կողմն ունելով նոցա՝ կամին առնէր յինքեանս կորզել զթագաւորութիւն: Եւ զիւրահաւանն Փէոտոր յղեաց զՄսթիսլաւսքի 'ի Բելօզերօ, և բանադատեաց զնա մտանել 'ի կարգ միանձնութեան. Եւ ուրեմն մեռաւ իսկ խեղդեալ. և յամին երրորդի նոյն Շույսքի ամբաստանեալ 'ի ծառայէն իւրմէ կաշառելոյ 'ի Կոտունովայ իբրև մատնիչ, առանց քննութեան դատաստանի առաքեցաւ յաքսոր, և անդ գաղտ խողխողեցաւ:

Բողոք կալեալ զանիրաւ վճռոյն եպիսկոպոսք երկու, և անկան յաստիճանէ պատուոյն իւրեանց. և փոխանակ միոյ 'ի նոցանէ, որ էր մետրապօլիտ Մոսքուայի, կարգեցաւ Յոբ եպիսկոպոս Ռոսթովայ՝ մտերիմ Կոտունովայ:

Դէպ եղև զի ընդ այն աւուրս անդ գտաւ Երեմիա պատրիարգ Կոստանդնուպօլսի, որ անկեալ յաթոռոյն և անդր եկեալ էր 'ի խնդիր դրամոց՝ որովք մարթասցի անդրէն 'ի ձեռս բերել զաթոռն՝ զոր կալեալ էր Մետրոփանէս: Կոտունով խոստացաւ նմա դրամս՝ եթէ տացէ Յոբայ զիշխանութիւն պատրիարգութեան հաւասար պատրիարգութեան Յունաց, զի մի այլ ևս հարկ լինիցի հրամանի պատրիարգին Կոստանդնուպօլսոյ հպատակել միւս եկեղեցւոյն Ռուսաց: Եւ նա փոխա-

նախկեալ զիշխանութիւն աթոռոյն ընդ իւ-
րում փառաւորութեան, կարգեաց հան-
դիսիւ զՅոբ 'ի պատրիարգ հաստատ
իշխանութեամբ պատրիարգացն Կոստանդ-
նուպօլսոյ, Աղեքսանդրու, Անտիոքայ,
և Երուսաղեմի: Եւ յայնմհետէ պա-
տրիարգն Ռուսաց լեալ իշխանութեամբ
խնամէր զեկեղեցին իւր մինչև ցժամն
Պետրոսի, որ եբարձ 'ի նոցա զպատրիար-
գութիւն:

Մինչդեռ նոր պատրիարգն խրատուք
իւրովք որպայր զախոռ ժողովրդեանն,
Կոտունով առատաձեռնութեամբ զնոյն
գործէր՝ տիրեալ արքունի գանձուն:
Դիւրին էր նմա անցանել 'ի տեղի ա-
պիկարն Ֆէոտորայ. այլ կեալն Դեմե-
տրի եղբօր Ֆէոտորայ՝ խէթ էր սրտին
իւրոյ. վասն որոյ կաշառեալ զարս ան-
օրէնս և զիշխանն Պաթեակովսքի՝
յանձն արար նոցա կոտորանել զԴե-
մետր:

Գնաց Պաթեակովսքի յՈւկլիչ, և որ-
սացաւ զդայեակն Դեմետրի 'ի դաւակ-
ցութիւն իւր. և զայնեկին առեալ 'ի գոր-
ծի անզգամութեան զորդի իւր զհասա-
կակից և զընկեր Դեմետրի 'ի զբօսանս
մանկութեան, 'ի ձեռն նորա ած զար-
քայորդին 'ի վայր անդր՝ ուր մնային
դաւաճանքն: Եւ անդէն խողխողեցին
զանմեղ մանուկն զվերջին շառաւիղ
տոհմին Ռուրիքայ յամին 1591:

Այլ միանգամ 'ի վերայ հասին ան-

օրէն սպանութեան, հնչեցուցին վաղվաղակի զզանգակսն, և ամբոխն գիմեալ 'ի վերայ՝ ընդ սուր անցուցին զՊաթեականսկի գործակցօքն հանդերձ, և կոտորանով միայն վայելեաց յարգասիս եղեռնանն : Որոյ գուն գործեալ ամենեքին 'ի ծածուկ ունել զերան 'ի Փէտրոսայ, ուր ամենայն Ռուսք գիտակ էին, այնպէս իմն համբաւեաց՝ եթէ 'ի ցնորից իմն ազդեցեալ պատանւոյն, և անխնամ մնացեալ՝ անձամբ զանձն փողոտեալ իցէ. որով յանցաւորս եցոյց և զմայր նորին և զազգականսն. վասն որոյ և Փէտրոս տուաբեաց զՄարիամ 'ի վանս կանանց, և զեղբարս նորին յաքսորս :

Զմնացայր ինչ այլ խռովութեան ընդհիցն Կոտուանովայ. զի և Փէտրոս հիւանդագոյն անձամբքն զօր ամենայն 'ի գրունս մահու գեղգերէր : Սակայն գիտաց Կոտունով և զայն մինչ ժամանակի վարել 'ի պէտս իւրոյ չարութեան, և հայրհեցոյց զՓէտրոսը խաղալ պատերազմաւ 'ի Լիվոնիա ընդդէմ Շվէտաց հարկեալ հազար արամբք. և նորա զնացեալ էառ 'ի Շվէտաց զԻւանկորոդ և զՆարվա, և ապա յամին 1592 խաղաղութիւն արար ընդ նոսա :

Ի վեցամեայ ժամանակին՝ որ զհետ եկին խաղաղութեան՝ ոչ ինչ գործ առժանի յիշատակի թուի արարեալ Ռուսաց, բայց յառաջնէն Սիպիրայ. զոր

՚ի բազմաց հետէ վասառակ լինէին խա-զախքն Տոնայցի անուանեալք, այսինքն բնակեալք առ Տոն գետով. (զի էին և Զափորոժացի խազախք առ Տնեպրով, և այլք բազումք. որք առ հասարակ էին խառնուրդք ՚ի մէ Լեհաց, Ռուսաց և Թաթարաց.) որք և յութսուն ամաց հետէ աշխատ առնէին զՌուսս՝ հասա առնելով ճանապարհաց, և երբեք եր-բեք ասպատակելով յաշխարհն։

Այլ յամին 1577, Երմաք գլուխ Տոնացի խազախաց ՚ի պարտութի մեռա-նեալ առաջի զօրացն Իւանայ չորրորդի, խաղաց գնաց վեց հազար ընկերակցօք ՚ի կողմանս Սիպերայ, յորում տիրէին յայնժամ այլ և այլ խանք զանազան ազգաց Թաթարաց. և ՚ի նոսա հզօ-րագոյն էր ՚ի ժամանակին Քուչում խան։ Երմաք եդ ՚ի միտ յարձակել ՚ի բնակիչս Սիպերայ ՚ի թշնամիս Ռուսաց, յուսով շնորհս գտանելոյ առաջի Թա-գաւորին. և նախ ՚ի մարտս խառնելմբերս կրթեալ զզօրս իւր՝ առաջ յամին 1579 անց գնաց եւ յառաջ մինչև եհաս ՚ի գետն Սերեպրեանկա անհնարին աշ-ժամանմամբք, և կորոյս զկէս զօրացն յաշ-խատութէն և ՚ի սովէ և ՚ի ցրտոյ։ Զմիւս կէս զօրացն յառաջ վարեալ մարտնեաւ ընդ խանին Կուչումայ, և յաղթեաց նմա հրազինուքն՝ զոր չունէին Թա-թարք։

Զերբանկաւ առաւ և զմի ՚ի զօրագլխ-

խայցն Քուշուամայ ; և դարձայց զնա առ-խանձն ընծայիւք հանդերձ ողջունիւ զնա յիւր անուն : Այլ Քուշուամ պարհաւ-րեալ յարշաւանէն Եռամաքայ` առա-քեաց ընդդէմ նորա զօրս , որոց պա-տահեալ Եռամաք մերձ 'ի Թռաւոյ` մա-ղապուր զերծա 'ի յարձակմանէ նոցին այսպիսի իմն հնարիւք : Ելեց զնաւակս իւր ցցովք պատնէլովք ապաստանդինութը Խաղախոց` սակաւս ամանս եղեալ 'ի նաւս պահապանս , և ինքն աներևութա-ցար պաշարեաց իւրովքն զԹռաւթասա 'ի Թիկանց կուսէ . և նոցա համարեալ թէ շուրջ փակեալ իցեն 'ի Խաղախոց` 'ի փախուստ դարձան :

Յետ այնորիկ յաղթեաց Եռամաք և Խարամծա խանձին Թռաւոլայ , և էառ զքաղաք նորին ընդ ոսկւով և արծաթով և ակամբք պատուականօք` զորս համա-քեալ էր անդր յաղօթողացն Զինկիզեայ . և անդ հաստատեալ զբանակ իւր` հան-դէս յաղթանակի արար քաւանորեաց պահօք նախ քան զվերափոխումն սըր-բոյ կուսին . զի եռանդն յոյժ էր նորա 'ի գործս բարեպաշտութեն . վասն որոյ և ունէր ընդ իւր երիցունս երկու , և միանձն մի փախստական , և զօր ամե-նայն աւգան շարժական ուղղեալ յա-նուն սրբոյն Նիկողայոսի` առայը եր-ցանցն մատուցանել զպատարագ :

Այլ Խաղախիքն ոչ ինչ աւելի մնա-ցեալք քան զվեցհարիւր այր , յորդո-

րէին զԵրուսաղէմ գտանել 'ի Ռուսաստա , և առաջի անձնել թագաւորին զաշխարհակալութիւն իւրեանց . զորս հաւանեցոյց նա՝ թէ պարտ է 'ի գեղջն վարել անհարկէկութե̃ Թագաւորացն . և խաղաղոց 'ի վերայ Սիպիր քաղաքին Քուչումայ : Եւ ընդդէմ նորա Մէհհէմմէտ զօրու ազգականից խանին , և կատարածաւար մարտուցեալ՝ եհար 'ի Խազախաց առա հարեւր և եօթն , այլ առաջ 'ի փախուստ դարձաւ , և Երմաք տիրեաց Սիպիրայ :

Յայնժամ բաղումք 'ի մերձակայ ժողովրդոց եկեալ անձնատուր եղեն Երմաքայ . սակայն նորա ոչ վստահացեալ ընդ ձեռամբ ունել զանձն զնոսա առնուաղեալ իւրոցն , առաքեաց 'ի Մոսքուա յամին 1581 զաթամանն կամ զհեթմանն , այս է զզօրագլուխն Իւան Քոլցոյ անուն՝ յետուն խնդրանօք , ասել ցԹագաւորն . «Կալայք յաղթանակաւ յանուն քո զՍիպիր , և խոնարհեցցաք 'ի սպառ զՔուչումն . նուաճեցան և Օսթեակքն և Վոգուլք , և եղեն հարկատուք Ռուսաց . արդ հանձնեսցէր յղել այսր իշխան զոմն անսուղ լայնատարած աշխարհիս , և թող մեզ զառաջին սպահակութիւնս մեր » : Եւ եբեր Քոլցոյ իբրև երախայրիս հարկացն վաթսուն քուրձս սամուրենեաց , քառասուն սամուրենի 'ի մի քուրձ : Իւան Դ. , որ թագաւորէրն յայնժամ , մեծաւ ուրախութե̃ ներեաց Երմաքայ և Խազախաց ,

գրեաց առ նա Թուղթ սիրոյ, և առաքեաց 'ի պարգևս նմին զմուշտակ մի սամուրենի՝ զոր ինքն պահանջէր, և զանաչութիւն աշխարհացն 'ի նա յանձն առնու մինչև առաքեսցէ առն զայլ ոք:

Իսկ Քուչում մերձաւորն զօրաժողով լեալ ընդ Մէհէմմէտգիրայ՝ դիմեաց 'ի վերայ Խազախաց. և Եռմաք վախթառուն Խազախօք 'ի պարտութիւն մատնեալ ընդհանուր, ձերբակալ առնուն զՄէհէմմէտգիրայ և զորդին նորա, և առաքեցին 'ի Մոսկուա. որք և հասին անդր յամին 1588. և արքայն Ֆէոդոր պատուով մեծ արար նոցա:

Հասին և առաքեալքն 'ի Ռուսաց 'ի Սիպիր Պոլխովսկի և Կլուխով հինգ հարիւր զօրականօք. այլ 'ի գալն ժամու. զի Եռմաք երբեք պաշարեալ կալ էր 'ի Սիպիր 'ի զօրացն Քուչումայ, և յանհնարին վիշտս սովու մատնեալ. մինչև ուտել Խազախաց զդիակունս ընկերացն՝ իւրեանց մեռելոց. և նորաժամանեալքն յաւելին զթշուառութիւն նոցա և զիւրեանցն, և Պոլխովսկի մեռաւ:

Դարձեալ և այլ ազգեաց առաքաւհեցին Խազախաց. զի խորտակեալ առաջնոցն Քուչումայ եկին էին յԵռմաքայ Խազախս քառասուն, և զաթամանն Քոլցոյ, որպէս թէ 'ի վանել զթշնամիսն, և ընկել հաւանարու կերակրոց. և խոստովանեցուցեալ զնոսա՝ խողխողեաց.

զամենեսեան. և առաջի ամբոխին զօրաց յարձակեցաւ 'ի Սիբերի: Այլ Եռմակ հալածեաց զնա դիւրերայն, և զզօրս նորա` էր զոր սպան, և էր զոր 'ի գերութիւն վարեաց. և դարձեալ անձնատուր եղեն նմա Թագաւորք բազումք. յորոց մի ոմն իշխան մատոյց նմա զգաւառ իւր, այլ նա ոչ առ, և արգել իւրոցն չխօսել անզգամ ընդ աղջկանն:

Ի դառնալ իւրում անդրէն 'ի Սիբերի` առ աշխատութեան անձրևաց զիջեաւ 'ի կղզի ուրեք յԻրթիշ գետս. և մինչ ցնեալ յանկարծակի զքնով անկանէր իւրովքն հանդերձ, եհաս 'ի վերայ Քուչում, և սպան զրեթէ զամենայն զխազաղախսն: Սակաւք ոմանք հերձեալ զամբոխ թշնամեացն` անկան 'ի նաւակս իւրեանց, և Եռմակ յոստնուլ իւրում 'ի մի 'ի նաւակացն` անկաւ 'ի գետ անդր, և առ ծանրութեն սպառազինութեանցն ընկղմեցաւ: Յետ սակաւուց գըտաւ մարմին քաջի առնն յԻրթիշ, և խուժադուժն Քուչում մատնեաց զայն յայպն իւրոցն նախատանաց: Այլ նոքին իսկ Թաթարք կշտամբեալ առաջ զխանն վասն անիրաւելոյն 'ի մարմին այնպիսւոյ մեհապետին` Թաղեցին զնա հաշակաւ, և զոհս քաւութեան մատուցին նմա. և յայնմ հետէ կարգաւորեալին զանուն նորա 'ի Թիկունս 'ի պատերազմի և յորս էրէոց: Յարգ. ես համարին թէ սոկեղէք նորա և հանդերձքն են 'ի բժըշ-

կութեն ամենայն ախտաժետաց հաւա-տով մերձեցելոց 'ի գերեզման նորա :

Ի լուր մահուան Եռմաքայ եթող Կլուշով զՍիպիր և դարձաւ 'ի Մոս-քուա հարիւր և յիսուն արամբքն ա-պրեցելովք, այլ Ռուսք առ սակաւ սակաւ տիրեցին դարձեալ Սիպիրոյ, և շինեցին 'ի նմա քաղաքս բազումս. կա-լան և զորդիս Քուչումայ և տարաքեցին 'ի Մոսկուա. և ինքն Քուչում անկեալ առ Խալմուխս՝ սպանաւ 'ի նոցանէ : Բազմացան ապա 'ի Սիպիր հատուածք Ռուսաց, և տիրեցին բովանդակ աշխար-հին. և այժմ է մի 'ի մեծամեծ նա-հանգաց Ռուսիոյ՝ որ ըստ օրէ բարգա-ւաճեալ յարուեստս և 'ի կենցաղօգուտ գիտութիւնս :

Եւ Ֆէոդոր յետ այնր գեղեցիկ և անաշխատ երկրակալութեան մեռաւ յա-մին 1598, 'ի հասակի քառասուն և մի ամաց. և զի ոչ ունէր որդիս, 'ի նմա սպառեցաւ և ազգն Րիւրիկեայ, յորմէ յիսուն և երկու թագաւորք տուան Ռուսիոյ ընդ ամս եօթն հարիւր երե-սուն և վեց :

ՊՕՐԻՍ ԿՕՏՕՒՆՕՎ

ԽՈՐԱԳԷՏ կամեցեալ տալ 'ի լրումն ըղձից փառասէր ոգւոյն, խորագիտագոյն եւ գտաւ 'ի ծածկել յամենեցուն զփառասիրութիւն իւր. և մինչդեռ յամենայն կողմանց Ռուսիոյ գայցին ժողովելին 'ի Մոսքուա այրք աւագք, իշխանաւորք, զօրավարք և կառավարք յընտրութիւն նորոյ արքայի, կատարեալ մեկնեցաւ 'ի վանս ուրեք առ քեռն իւրում այրւոյն Ֆէոտորայ:

Գիտէր այլն խորամանկն՝ զի աւաք ամենեցուն յինքն էին, և ոչ խաբեցաւ. այլ երբ և առաջի արարին նմա զթագն, 'ի վեր քան զուժն չափաւորութիւն ասէր լինել զբեռն թագաւորութեն. և « Որ ինչ միանգամ մինչև ցարդ գործեալ իցէ իմ գործս ոչ անօգուտս պետութեն, և ոչ անհաճոյս այլ և այլ անձանց երևելեաց որ 'ի նմա, այլ այն զի՞նչ իցէ, ասէր, առ պարտուք թագաւորի »:

Նոյն բան հաստատեցաւ և յերկրորդում ժողովն ընտրականաց, և պատգամաւորք հանդերձ բովանդակ ամբոխիւ քաղաքին գնացեալ 'ի վանսն՝ յայտ առնէին զկամս ժողովոյն, և 'ի ձայն

կութեն ամենայն տխմարմտաց հաւա-տով մերձեցելոց 'ի գերեզմանն նորա ։

Ի լուր մահուն Եռմաքայ եթող Կլուհով զՍիպիր և դարձաւ 'ի Մոս-քուա հարիւր և յիսուն արամբքն ա-պրեցելովք, այլ Ռուսք առ սակաւ սակաւ տիրեցին դարձեալ Սիպիրոյ, և շինեցին 'ի նմա քաղաքս բազումս. կա-լան և զորդիս Քուչումայ և առաքեցին 'ի Մոսքուա. և ինքն Քուչում անկեալ առ Խալմուխս' սպանաւ 'ի նոցանէ ։ Բազմացան այսպէս 'ի Սիպիր համաւանձք Ռուսաց, և տիրեցին բովանդակ աշխար-հին. և այժմ է մի 'ի մեծամեծ նա-հանգաց Ռուսիոյ' որ ըստ օրէ բարգա-ւաճեալ յարուեստս և 'ի կենցաղօգուտ գիտութիւնս ։

Եւ Ֆէոդոր յետ այնր դէպեցիկ և անաշխատ երկրակալութեն մեռաւ յա-մին 1598, 'ի հասակի քառասուն և մի ամաց. և զի ոչ ունէր որդիս, 'ի նմա սպառեցաւ և ազգն Ռիւրիկեայ, յորմէ յիսուն և երկու Թագաւորք տուան Ռուսիոյ ընդ ամս եօթն հարիւր երե-սուն և վեց ։

ԳՈՐԻՍ ԿՈՑՈՒՆՈՎ

ԽՈՐՀԵԴԻՑ գանեալ առաջ 'ի ըրուամն ըղձից փառասէր ոգւոյն, խորագիտա_գոյն եւ գտաւ 'ի ծածկել յամենեցուն զփառասիրութիւն իւր. և մինչդեռ յա_մենայն կողմանց Ռուսիոյ գայցեն ժողո_վեսցին 'ի Մոսկուա ազգք աւագք, եկեղե_ցականք, զօրականք և կառավարողք յըն_տրութիւն նորոյ արքայի, Կոստանդնով մեկ_նեցաւ 'ի վանս ուրեք առ քեռն իւ_րում՝ այրւոյն Փեոդորայ:

Գիտէր այլն խորամանկն՝ զի ազգք ամե_նեցուն յինքն էին, և ոչ խաբեցաւ. այլ եթէ առաջի արարին նմա զթագն, 'ի վեր քան զիւրն չափաւորութիւն ասէր լինել զբեռն թագաւորութեան. և « Որ ինչ միանգամ՝ մինչև ցայրդ գործեալ իցէ իմ՝ գործս ոչ անօգուտս պետու_թեան, և ոչ անհաճոյս այլ և այլ ան_ձանց երևելեաց որ 'ի նմա, այլ այն զինչ իցէ, ասէր, առ պարտուք թա_գաւորի ,,:

Նոյն բան հաստատեցաւ և յերկրոր_դում՝ ժողովն ընտրականաց, և պատ_գամաւորք հանդերձ բազմանդամ ամբո_խիւ քաղաքին դիմեալ 'ի վանսն՝ յայտ առնէին զխնդիր ժողովոյն, և 'ի ձայն

բարձր թախանձ արկանէին առնել նո֊ցա զշնորհն զայն։ Եկին և պատարխարգն համագերձ ամենայն ուխտիւ եկեղեցւոյն, և զնոյն աղերս մատուցանէին. մինչև հուսկ ուրեմն զիջաւ նոցա. և օրն այն կարգեցաւ ՚ի պահս ամ ըստ ամէ։ Այսպէս աղաչեաց զաւագանին՝ զի մի՛ պատահեսցեն զնա ընդ առ մի ողջոյն՝ մինչև հա֊ճեսցին ընդ ընտրութիւն իւր և համօրէն պաշտօնեայք և կարգք պետութեան. և ինքն նուաղեցոյց զհարկս, առատաձեռ֊նեաց զդրամս, առաքեաց դեսպանս ՚ի Լեհաստան, ՚ի Շվէտս, ՚ի Կոստանդ֊նուպօլիս, ՚ի Խրիմ և ՚ի Պարսս, և նո֊րոգեաց ընդ նոսա զդաշինս խաղա֊ղութեան։

Կոչեաց ՚ի Ռուսիա և արս հմտուտ իրաց պատերազմի և անեղեանկս ուսու֊մնական գիտութեց, և յորդորեաց զա֊ւագանին առաքել զորդիս իւրեանց ՚ի վարժս իմաստից և ՚ի կրթութիւն բարուց ՚ի Շվէտս և՝ յայլ սահմանակից քա֊ղաքս, և ոչ ինչ եթող ՚ի հնարից առ յինքն յանկուցանելոյ զսիրտ ժողովր֊դեանն։

Ի սկզբան թագաւորութեան նորա. կրկին աղէտք հասին ՚ի վերայ Ռուսաց։ Առաջին՝ սով սաստիկ անկեալ ՚ի Մոս֊քուա, յորմէ մեռան առաւել քան զոգիս վեցհարիւր հազար։ Եւ երկրորդ՝ խուժան աւազակաց զՄոսքուայիւ, որք աւազակապետաւն իւրեանց եկեալ և.

եկեղեցս զղջեմ կալեալ ամբոխի զօրաց ար-
ձակելոց 'ի վերայ նոցա, մինչեւ առ սա-
կաւ սակաւ յղուեալ՝ կէս մի պատժե-
ցան, եւ կէս մի զերծան արտաքոյ աշ-
խարհին :

Իսկ Գորփոս 'ի գաւառման չարեացն եղե-
լոց ծանուցեալ զվաճառականութիւն Ներ-
քին եւ զարտաքին, թողեալ զմնալս բազ-
մաց 'ի սահմանակից քաղաքաց : Նա 'ի
խնդրել 'ի նմանէ պապին Հռովմայ եւ
թագաւորին Անգղիոյ, զի թոյլ տացէ
[illegible] եւ Անգղիացւոց վաճառա-
կան [illegible] լինել ընդ Ռուսս, ոչ միայն զլե-
զուս նոցա, այլ եւ մեծապարգեւ մեծա-
րեալ գործոյ անդրէն զաւակեալն :
[illegible] առաջ [illegible] եւ ամբոխս [illegible]
[illegible] Նորվեգիոյ եւ Չերքեզաց եւ այ-
լոց [illegible] :

Ընդ սմին հետեւ այնուհետեւ երջանկաբար
թագաւորեալ, յետ այնորիկ առաջնոյ
[illegible] անխռովութեան [illegible] 'ի
ծովս կասկածանաց ամենայն ռա-
միկք. յաճախեաց [illegible] մինչեւ 'ի [illegible]
[illegible]՝ առ 'ի գիտել զինչ բանք [illegible]
զանձինս [illegible] 'ի ժողովրդեանն : Այլ
եւ ոչ այնու շատացեալ՝ [illegible] գլխա-
ւորք [illegible], եւ սկսաւ բանիւք
նոցին [illegible] ասնել [illegible]
քաղաքին :

Յայնժամ լքաւ Մոսկուա [illegible]
[illegible] : այր զընկեր [illegible]-
տէր ; ծառայ զտէր, եղբայր զեղբայր,

ամուսինք զամուսինս, և որդիք անգամ զհարս :

Ածաւ յատեան ծերունի ոմն պատա_կանելի ազգաց կաշկանդեալ 'ի շղթայս : Խնդրեցաւ ամբաստանողն, և ել եկաց 'ի մէջ որդի նորին : Եկաց հայրն առ վայր մի անշնչեր 'ի լռութե . և ապա շարժեալ զշղթայսն՝ ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ ցորդին . «Ցո՛ւր պատա_սխանի որդեակ իմ առ այս բարբառ՝ թէ կարող իցես » : Զարմացան դատաւորքն ընդ առակն . և Պորիս ինքնին զամօթի հարեալ՝ արգել զմեղկայլքն զայն զդատաստան :

Քան զամենայն աւագորեարն ահա_գին էր յաչս Պորիսայ թագաւորազն տոհմ Ռոմանովեանց . վասն որոյ ամբաս_տանեցան՝ թէ կամին նոքա զեղ մահու_արբուցանել թագաւորին : Մի ոմն յազ_գականացն Պորիսայ կաշառեաց զծառայս Աղեքսանդրի Ռոմանովի, և ետ դնել յարկեղս նորա արմատս թունաւորս : Այսու նոքին իսկ ծառայք դատախազք և վկայք՝ ամբաստանեցին զտէրն իւ_րեանց . և առանց իսկ քննութե յաք_սորս առաքեալ սպանաւ Աղեքսանդր, և եղբայր նորա Ֆէոտոր Նիկիթէչ բռնա_նադատեցաւ մտանել 'ի վանս ուրեք յԱրքանկէլ, և կոչեցաւ Փիլարետ . և կին նորա Աքսենիա մուծաւ 'ի վանս կանանց համանգերձ վեցամեայ մանկամբն՝ որ կոչէր Միքայէլ :

Այսպէս է 'ի միտ առնուլ և զանձս այ-լոց մեծամեծաց. և միաբանագամայն զիշ-խանութիւն Թագաւորին՝ որ եղեալ 'ի մեծ անզգոյշ լինել յաթոռ իշխան, ինքնին յաւելոյր զԹշնամիս իւր՝ առնելի լինել ամենեցուն առ հասարակ:

Կրօնաւոր ոմն 'ի Կաղկեդոնէ Օթրիգենէս անուն պատուական առաջնորդիք էր պատա-րիարգին Յովհաննու: Սա զխոստացեալ ձիւթոյս [illegible] զանձս մեծահաւն Դիեմետրի մանկանն որդւոյ Խոսրովայ չարաբարոյի, որում և նո-մին իմն Թուէր կերպարանօքն, զխոստէր եւ եթէ խոստամանն անդէտ էին սա-ցեալ, և առեալն առնէին յոյժ զԳորիս, և պատրաստ էին վառարանեալ 'ի նմանէ՝ Թէ գտանէր ոմն 'ի միջի այր յարդեն Ռիւրիկեայ: Եւ 'ի մեծ կարծեցուցանել զանձն իւր Թէ Դիեմետրին այն իցէ. այլ նախ հօգալցու կեղծել զպատանութիւն ինչ առաւանուն Դիեմետրի ապաւինելոյ յՈւկրէ, և պատմել այսր անդր զբօսա-նաց աղաղակաւ: Բայց քանզի երկէք եր-բէք սարսեցին 'ի բերանոյ նորա և բանք ինչ որովք ցուցանէր Թէ Թագաւորելոց է նա երբեմն, կասկած կալաւ զնմանէ առաջնորդխնկապան Ռոստովեայ, և աղդ ա-րար Գորիսայ. և նա հրամայեաց առա-քել զկրօնաւորն 'ի. վանս ուրեք 'ի հե-ռաստան, պատուիրեալ առաջնորդի անդուոյն՝ զգուշանալ նմա:

Օթրիգենէս փախեաւ անտի 'ի Քիեւ որ էր յայնժամ ընդ իշխանութեամբ Լե-

հայց, և եղև տանն երեց իշխանի ումեմն լեհացւոյ : Անդ ևս ոչ ըստ արժանի իւրոյ կարգին գնացեալ գնացս, և կշտամբեալ յիշխանէն, եթող զմիանձնութիւն, և անցեալ 'ի Լեհաստան՝ եմուտ 'ի ծառայութիւն Վիշնեւեցկի իշխանին. այլ ոչ եթող զխորհուրդ թագաւորելոյն. և 'ի գլուխ ևս գործելոյ զաւազակել իւրոյ ծառայմանն. ասէ. «Որ արքայանեկէն 'ի տան Վիշնեւեցկեաց զերբեակն Կրեչքաս (զի Գրիգոր էր անուն նորա), Դեմետր է նա որդի մեծի թագաւորին Իւանայ : Որդի երկրորդ ամուսնին էր սպանեալն յՈւկլէշ հրամանաւ թագաւորին Կոտունովայ, և ոչ Դեմետրոս ևս, որպէս կարծի : Իշխանն այն խորհրդականն՝ որ խնամածուքն էն ապրեցոյց զկեանս իմ; յերկայր 'ի թագաւորեանն կալաւ զիս. և ապա առ ահի թագաւորին անցոյց զիս այսր 'ի Լեհս. և ես յարհամարհ միանձնակիս խոնուն յուսամ թէ հայեսցի երբեք Ած 'ի տառապանս իմ, և տացէ ինձ ըղձալեաց իրաւանց իմոց : Իսկ եթէ ըստ զապաշխարածածուկ խորհրդոցն Այ միանձնակեացի ինձ այսպէս մեռանել, այն շատ է ինձ՝ զի սովլին զեկուցանելս ծանիցեն թէ ո՛ և որպիսի ոք անցեալ կայ յաթոռն թագաւորաց»: Իւր եղեալ ըղթուղթն ընդ ամարիւք՝ ընկղզմեցաւ 'ի մահիճս. և պատճառաւ զխօթութեն՝ կոչեաց զերէց մի զի խոստովանեսցի նմա զմեղս իւր. որում և պատմեաց

սակաւ ինչ 'ի վիճակաց հաւրց, և որպէս թէ անհնարանայր առ ցասուցն յառաջ եւ փոխել զըստանն՝ անձնաւորիքեր Նմա հեկեւկանօք՝ թէ որ այլ եւ ինչ կայցէ զեւանելն, գոյցես առաս 'ի թղթի անդ որ ընդ անարիւքս խնդրեք ։

Ընթեռնու հեստութիւն երկոցն ըղթուղթն, և ընթացեալ առաջ առնէ իշխանացն անստան նորա. և Նորա եկեալ առ հրամանն, և ոչ կարացեալ քաղել 'ի քաղաքին նորա քանս ինչ անհրիքացելոց՝ խնդրեաց երկու ըղթուղթն և ընթերցաւ. և խնամ մեծ կալեալ առաջնորդացն Կրիշաքայի՝ ած զնա 'ի Քրաքով, ուր էր ժողով առաքելոյն ։ Անդ անհրիքիւք վասահութիւն հաստատեաց խոստովանելոյն՝ թէ ինքն իցէ Դեմետր որդի Իւանայ. և առաքելոյն խոստացաւ ձեռն տալ Նմա և ամբառնալ զնա յաթոռն Ռուսիոյ ։ Յաւել Վիշնեւեցքի խոստանալ Նմա զամենայն ինչս իւր, և թէ ծածկեցուցէ 'ի Ռուսիա զդաւանութիւն հռովմէական հաւատոյ, և Օթրեփեւ անհրիքական ասէր զնա ընդ այն ։

Ի տարածել համբաւոյ եղելոյն՝ առպատամութիւն մեծ եղև Յոհանքի Խաղախաց, և առաջեալքն առ առատանութեան Դեմետր զըստան և զօրս յօժանդակութեան ։ Գտեալ կազմեցին և Լեհք՝ դիմել ընդ Խաղախաց 'ի Ռուսիա ։

Իսկ Բորիս երկուցեալ յԵրկանն՝ առզել Ռուսաց զնալ 'ի Լեհս, կամ

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

'ի պատրաստութեան մնացեալ առաւօտին Դեմետրի , յերկրորդումն խորտակեաց զզօրս նորին : Այլ Դեմետր դարձեալ խրախուսեաց մնացեալսն հինգ հազարօք . և թէպէտ բազում յոյժ էին զօրք Ռուսաց , բայց անդէն 'ի սկզբան մարտին մեծաւ մասամբ անցին 'ի կողմն Դեմետրի , և մնացեալքն վանեցան առաջի յաղթականին :

Զարհուրեալ Բորիսայ յերեսաց Դեմետրի՝ զուն գործէր հնարէր զիւրև ածել զխաղաղութիւն . խոստանայր նմա թողութիւն և վարձս , տայր պատրիարքին բանադրել զապստամբն , այլ 'ի զուր և յանօգուտ : Եւ մինչդեռ առ թագաւորս Դանեաց և Շվէտաց բանագնաց լինէր , խիթք 'ի փոր անկեալ նմա և մեռաւ յամին 1605 , թագաւորեալ ամս եօթն :

Զսկիզբն և զկատարած թագաւորութեան ծայրագոյն անգթութեամբ լցեալ ունէր , թերևս ոչ ինչ տարապարտեալ կարծեցաւ յամանց՝ թէ որ բազմաց 'ի սիռանէ տղայոց դահիճ լեալ էր Բորիս , և անձին զնոյն տալոց հարկեալ լինէր դեղով մահու :

Այլ այն որպէս և իցէ , Բորիս թէ ոչ արդարանայ անագորոյն գնացիւքն , դէթ կարեկիցս պատանի թշուառ մահուամբն՝ սակս փութաջան խնամոցն զոր կալաւ 'ի կեանս իւր 'ի պայծառութիւն Ռուսիոյ : Նախնին իւր և մեծն Պետրոս 'ի նորոգել

իւրում յետ ժամանակաց զաշտարակն Մոսքուայի, իբրեւ եգիտ անդ արձանագիր եղեալ՝ի պատիւ Բորիսայ, և առաւել ծեփեալ բանով, հրամայեաց քանդել զայն և պարզել:

ՓԷՈՏՈՐ Բ. ԲՈՐԻՍՈՎԻՉ

Ի ԼՈՒՐ մահուան Բորիսայ ընթացեալ ամենայն ժողովուրդն յարքունիսն՝ աղաղակեցին, կեցցէ արքայ Փէոտոր որդի Բորիսայ, և մայր նորա խնամակալ: Զի 'ի սոյն կողմն էին պատրիարգն և մեծամեծք Մոսքուայի. այլ աղաւանին արտաքին գաւառաց և զինուորականքն ամենայն կուսակիցք էին Դեմետրի, որ գամ՝ քան զգամ՝ գայր մերձենայր 'ի Մոսքուա. և յանուանէ անձնատուր եղեն նմա Բասմանով քաղաքապետ հիւսիսային Նովկորոդայ, և երկու իշխանքն Կոլիցին:

Իսկ յինքն Դեմետր առաքեաց լրտեսս 'ի Մոսքուա. որք իբրեւ 'ի յայտ եկին անդանօր, ամբոխն յարեցաւ 'ի նոսա, և հնչեաց անուանն Դեմետրի ընդ քաղաքն ամենայն: Ընդվայր ճգնեցան և խնամակալ դշխոյն և պատրիարգն Յովբ 'ի սանձել զամբոխն. նոքա դիմեցին 'ի Կրեմլին, և առ հասարակ սպանին զաւագս և զազգականս զարքականս թա-

գաւառին. ձերբակալ առաքին և զՖէոդոր հանդերձ մարբն և քերբն, և գեսպանս առաքեալ առ Դեմետր շնորհաւորել [illegible]՝ որպէս կարծէին, հրաւիրեցին զնա ունել զաթոռ նախնեացն իւրոց:

Հրամայեաց Դեմետր Կոլիցինեանց և Մասալսքեայ և Գասմանովեայ 'ի մահ առնել նախ զՖէոդոր և զմայր նորին. և զպատրիարգն մերկացուցեալ 'ի շքոյն՝ արգելուլ 'ի վանս ուրեք միաբանից հեռի 'ի Մոսքուայէ. ապա և առհմն Գորեայ ջնջեցաւ: Այլ ամբոխն զաչացու և ոչ զայն շատ գրեալ, պեղեաց և զդիակունս առհմի նորին 'ի գերեզմանաց իւրեանց, և թշնամանեաց զնոսա:

ԴԵՄԵՏՐ Ե. ԻՒԱՆՈՎԻՉ ՍՈՒՏԱՆՈՒՆ

Մինչդեռ Դեմետր գայր հուպ մերձենայր 'ի Մոսքուա՝ եկին ընդ առաջ նորա եկեղեցականք և ժողովրդականք և ընկալան 'ի ներքս 'ի ձայն ցնծութեան՝ կարդալով զնա Արուսեակ առաւօտու ծագեալ 'ի Ռուսիա: Այլ Դեմետր զի հաստատեսցի և եւս յաթոռն՝ կամեցաւ առնուլ զթագ արքայիցն Ռուսիոյ. վասն որոյ եւ զպատրիարգութիւն Ռու-

սոյն արքեպիսկոպոսին Ռեազանայ, և պատուեցաւ 'ի նմանէ ։

Մի միայն խոչ խափանարար երկոցուն Դեմետրի մնայր այրին Իւանայ չորրորդի Մարիամ՝ արգելեալն 'ի վանս ուրեք 'ի Պելօօզերօ ։ Թողուլ զնա անդէն չէր 'ի դէպ, և ածել 'ի Մոսկուա կարի խնթալի. այլ խորհուրդ Դեմետրի համաձայնեցաւ առաքեաց պատգամաւորս առ դշխոյն և կոչէր զնա երբև զիւր մայր 'ի վայելս արքունի շքոյ ։ Եւ 'ի գալ նորին՝ ել նմա ընդ առաջ Դեմետր, էջ յերիվարէն, և անկեալ առ ոտսն՝ ոչ ինչ եթող 'ի գորովական բանից որդւոյ զոր չէարկ առաջի նորա. փարեցաւ ապա 'ի գիրկս սուտ մօրն, և անէծս ցուցանէր կարգայր Կոստանդեայ. երդմնահար լինէր և խոստանայր մօրն, եա ընջեցից, ասէր, 'ի մտաց քոց զվշտակ աղետիցն զորս կրեցեր անդստին 'ի մահուանէ հօրն իմոյ Իւանայ ։ Ծանեաւ և Մարիամ զԴեմետր իւր յորդի, և եցոյց նմա բերկրութիւն յոյժ. և աղաչէր ելանել բազմել ընդ իւր 'ի կառսն՝ որով ինքն եկեալ էր. այլ Դեմետր հետի և բացաւ գլխով զնովաւ 'ի կողմանէ՝ մինչև ած զնա 'ի վանս վերափոխման, ուր 'ի բազում ամաց հետէ սովորութիւն էր բնականալ այրեաց թագաւորացն ։

Այնչափ զժուարահաւատանալ աւտանօր թուեցաւ ոմանց այսպիսի անկեղծեան վստահութիւն 'ի Դեմետր, և այլ

գուշակ անհերքելի հաւանութեան յայլոց Իշխանաց, մինչև տարաբերս 'ի մէջ արկանել՝ թէ գուցէ արդարև վրիպակ ինչ լեալ իցէ 'ի մահուան Դեմետրի: Որք նախանձէս զարմանան և ընդ թողուլն Դեմետրի ողջ զիշխանն Շուիսքի զգլխաւորն 'ի կուսակցաց Բորիսայ: Այլ մեք 'ի դատաստանութեան անդր ուշ կալցուք:

Ծանր էր աւաղանելոյն Ռուսաց տեսանել առ նորոյ արքային Թիկնապահս լեհացիս և օտարազգիս. վասն որոյ ակամն առել ցնա՝ զի արձակեսցէ զնոսա 'ի տեղիս իւրաքանչիւր. զի Թագաւորն արդարոյ ներ ժողովրդեանն պարտաւոր է տալիքն՝ քան զամենայն պահպանս ամբողջոյն: Խաբեցաւ Դեմետր, և արար ըստ նոցա բանիցն. և անդէն 'ի վեր երեւեցաւ խռովք զաւակաց, և իշխանն Շուիսքի հազիւ ձողոպրեցաւ 'ի ներքուստ ձեռին դահճի՝ շնորհելովն Դեմետրի. իսկ այլք 'ի մահ վարեցան:

Այնուհետև յաղթահարեցեալ Դեմետրի՝ աւարելոց խնդրելոց զխօսեցեալն իւր զդուստր կուսակալին Սենդոմիրոյ, և եղեն հարսանիքն մեծաշուք հանդերձանօք 'ի Կրակով և 'ի Մոսկուա:

Այլ Ռուսք 'ի բնէ ատեցողք Լեհաց՝ կարի խիստ գժգմեցան, զի օրինօք Լեհացի ածաւ իւրեանց 'ի գլխոյ: Թող զայն, 'ի մեծ ևս զայրոյթ բորբոքեցան 'ի լսել՝ թէ Յիսուսեանք ունին հաստատել դըպրոցս 'ի Մոսկուա, և ուսուցանել ըզ-

դաւանութեան հռովմէական հաւատոյ, նորոգեցաւ յամենայնին և յիշատակ Գրիշքայի միանձին Օթրեփիէֆայ. և կակած զԴեմետրէ. և մնան այսր աննայինի հաստատեցին բառնալ զկեանս թագաւորին. և այն առաւել 'ի թելադրութէ Վասլի Շույսքեայ առաջնորդի դաւոյն, որ ցայնժամ երկաստանն հաշար ոչխս զիւրև անձեան 'ի մերձակայս Մոսկուայի շուրջ գայր:

Իբրև զգաց Դեմետր զդաւանն՝ առաւելեաց Սթրելցացն 'ի պաշտպանութիւն կալ. և ինքն հրատարակեաց յամենայնին թէ 'ի 15 աւուր մայիսի հանդէս զինուորական հանդերձեալ է առնել 'ի մեծի հրապարակին. և էր հանդէսն փորձ պաշարման և առման փայտաշէն ամրոցի միոյ: Այլ 'ի ծածուկ հրամայեաց կարգել շուրջանակի զամբոցաւն և թնդանօթս, որպէս զի յարձակեալ Սթրելցացն և Լեհաց 'ի կոտորել զզաւագիրսն եկեալս 'ի տեսիլ հանդիսին, ունկնդիրս և զերերսն 'ի տեղի տարածութի: Սակայն 'ի կորուստ նմին դարձաւ խորհուրդ իւր:

Զի Շույսքի 'ի մերձոյ հասանել հնարիցն՝ պատուէր ետ զաղտ իւրոցն զաւակցաց՝ 'ի նախընթաց գիշերի հանդիսին զալ ժողովել 'ի Մոսկուա: Մինչդեռ ամենեքին խոր 'ի քուն ննջէին, հնչեցուցին տաքս զզանգակսն, և ամբոխն յամենայն կողմանց 'ի մի վայր

խուժական արտաքին արգելուկ խռովութեան մեծի։ Կայսրն գաւառապետացն զամենայն երեւելի տեղիս քաղաքացին, և Ռուսաքի տուեալ 'ի ձեռս զխաչն և զսուր՝ ընթանայր ընդ ամենայն հրապարակս, աղաղակէր և ասէր. «Լեհք նշանակեալ են զանձինս 'ի կորուստ Ռուսաց, և ահա վաղ ընդ փոյթ եկեսցեն՝ ընդ սուր անցուցանել զմեզ»։ Ընդ որ 'ի խռով մեծ հարեալ քաղաքացւոցն, առ հասարակ 'ի զէն ընթացան ծերք և մանկունք, արք և կանայք. յարձակեցան 'ի տունս Լեհաց և կոտորեցին զնոսա, և դիմեցին 'ի վերայ պահականորդաց արքունեացն։

Յաղթէ անտի ահագին շփոթից հարթուցեալ արքային 'ի քնոյ՝ արձակեաց զզօրապահութիւն 'ի գիտել թէ զինչ իցէ իցեն։ Սակայն մինչև դարձեալ նորա՝ եհաս անդր 'ի Կրեմլին Ռուսաքի, և մտեալ բռնութեամբ 'ի դաւիթն արքունի հանդերձ իւրովքն խորհրդակցօքն ընկերօք, և գոչէր առ Դեմետր իջանել առ զհամբար կենաց և վաղուց իւրոց առ ժողովուրդն։ Այն ինչ Պասմանովն կամէր զդէմ ունել նոցա, Թաթիշչեւն ընկերակից Ռուսաքեայ եհար կործանեաց զնա, և սպան զպահապանն։

Դեմետր 'ի նեղքս անդ յարքունեաց խուճապեալ շատաց առանձնապաւ խոյնդրէր ելս փախստի, և չգտեալ՝ հանեցաւ ընդ պատուհան անհեկին իւրոյ 'ի

վայր, որով խորտակեցաւ մի 'ի բար-ձիցն, և գլուխն միրաւորեցաւ չարա-չար. և մինչդեռ հոսէր արիւնն գունդա-գունդ ընդ անդամսն և ընդ ականջսն, հասին անդր ամենք յեւրոցն 'ի ձայն աղաղակին, և բարձեալ տարան զնա յօթեւանս Աթենացւոց: Աղէտ դառնագինն երդուան մինչև ցմահ մարտ դնել վասն նորա. այլ 'ի խուժել անդր դասա-գրացն և 'ի սաստանալ հուր հարկանել 'ի տունս անդր, առեալ ետունն նոցա Աթենեցիքն:

Յայնժամ յարձակեցան ժողովուրդքն 'ի վերայ Օթրիմիկեայ անհնարին թըշ-նամանօք: Աղաղակեաց նա ընդ հա-մարձակութեան. «Ո՛րդիք նախահար լի-նիք ինձ, ասէ, գիտելով չափ թէ որքի եմ ես հարազատ Իւանայ, և ձեր թա-գաւոր որդինաւոր պատկեալ առաջի ա-մենայն Իտալաց: Եթէ ինձ ոչ հաւա-տայք, ահա ձեռն թող տապացէ ձեզ միայն իմ զճշմարիտն»: Ի խիզախս բանից ան-տի քաղցրացան Աթենեցիքն, և 'ի բաց վանեցին զխուժանն:

Արձակեցան ապա այլք ամենք, որոց գլուխ էր Ղուլըզէ, առ զշխոյն Իւա-նայ, և աղաչէր զնա Ղուլըզէ յանուն համօրէն ազգին ասել թէ արդարև որ-դի՞ նորա իցէ Թագաւորն, եթէ նենգա-ւոր ոք չարամիտ, որ բանսրեալ և պղը-ծեալ է զաթոռ մեծին Իւանայ: Եւ զայս պատասխանի ետ, ասեն, զշխոյն.

«Զէ իմ որդի Թագաւորդ այդ, և ես առ ահի ևեթ Դեմետր զնա վարկայ. զի դուք այնպէս ընկալարուք. և դու Շուշքի, դու առաջին էիր որ ապաստանալես մահու 'ի վերայ կայսերն որոյ իբրև 'ի դաւաճան ամենարկեցին 'ի դա։ Դուք ձեռն տուեալ 'ի Կրէշքա՝ վրէժխնդիր յառնէիք ընդդէմ Կոստանդեայ. և ես համարեալ զնա իմ որդի, պահէի զկեանս իմ, և զկէտ խնդրէի զճշմարտին Դեմետրի։ Այսպէս ես և նա երկաքանչիւր 'ի նոյն ձգեցաք վախճան»։

Թէ զայս արդարև պատասխանի տուեալ իցէ դշխոյն, կամ թէ այլ ինչ, սակայն Շուշքի իբրև պատմեաց զայս ամբոխին, Սթրելեցքն մատնեցին զարքայն 'ի մոլեգնութի նոցա. և նոքա առեալ պատառեցին զերկոսին, և զդիակն կապեցին ընդ դիոյն Պասմանեայ, ընդ քարշ ածին զնոսա ընդ քաղաքն ամենայն, և առուրս երկուս 'ի բացի թողեալ՝ ապա այրեցին։

Մինչդեռ ամբոխն յայսոսիկ էր, դաւադիրքն յարձակեալ կոտորէին զամենայն զԼեհս, և կողոպտէին զնոսա. այլ առաջանին զդէմ կալաւ նոցա զօրք։ Եւ եղեն սպանեալքն յաւուր յայնմիկ Լեհացիք հազար և երկերիւր, և Ռուսք չորեքհարիւր։

ՎԱՍԻԼ Ե. ԻՒԱՆՈՎԻՉ
ՇՈՒՅՍՔԻ

ՇՈՒՅՍՔԻ տեսեալ զանձն իւր մերձ 'ի կորուստ իւրոյ փառաւորութեն, որում 'ի բազում ժամանակաց զհետ պնդեալ էր, ժողովեաց զաւագանին, եւ ասէ ցնոսա. «Ահա զերծայք մեք 'ի բռնութենէ. զգոյշ լիցուք մի եւս անձամբ զանձինս արկանել ընդ նովաւ։ Ընտրեսցուք արքայ զայր մի հասեալ յարս, յազնուական տոհմէ, հմուտ օգտի պետութեան, ճոխ գործովք արութեան եւ խոհականութեան, աւանդապահ օրինաց եւ սովորութեանց նախնեաց, եւ որ տայցէ Ռուսաց 'ի մոռացօնս արկանել զաղէտս՝ որք հասին 'ի վերայ 'ի վերջնոցս թագաւորաց»։

Խորհուրդ առին, վիճակս արկանէին, եւ միայն ընտրութիւն ընդ նա եւ ընդ Կոլիցին. եւ իբրեւ եկին երկոքեան նոքա առաջքս, իշխանն Վորոթինսքի յետ առաջին առնելոյ զկարեւոր պայմանս ընտրութեան նորոյ թագաւորին՝ դրուատեաց զԿոլիցին, այլ կարի հզօր է ասէ տոհմ նորա, որ խիթալի ինձ թուի. եւ եցոյց զանձն իւր հաւան ընդ Շույսքի։ Յարեաւ այլ ոմն կուսակից Կոլիցինայ, եւ ասէ. «Ժողովս եկեսց զեւր պատրաստ՝ ընտրեալ զերկրաւորն իշխանաց զուգաւորս

արժանաւորս. որք ՚ի դէպ թուին ՚ի ժողովուրդ, անդր աղաղակաւն առնել զըն-տրութիւն միոյ ՚ի նոցանէ »։ Եւ հաճոյ եղև խորհուրդն։

Այլ կուսակիցքն Շույսքեայ վաղ որսացեալ զժողովուրդն, համոզեալ ևս էին՝ թէ Շույսքի ընտրեցաւ ՚ի թա-գաւոր. և ընդ բանալ դրանց ժողովա-րանին, մի ումն ՚ի կուսակցացն Շույս-քեայ խառնեալ ընդ ամբոխին գոչեաց, կեցցէ արքայ Վասիլ Շույսքի. և ամ-բոխն զնոյն բարբառ անդրէն կրկնեաց։ Յայնժամ մեծին առաջնորդեալն և հաստա-տեցին զՇույսքի, և ապա տարեալ զնա ՚ի մայր եկեղեցին՝ երգ մնեցուցին ընդ պաշ-տամանցն առաջնորդելոց ՚ի Վոռոթինս-քեայ, և թագ եդեալ նմա ՚ի ձեռն պատ-րիարգին, ամսեան յունիսի, յամին 1606։

Յառաջ քան զամենայն խնամ կա-լաւ Շույսքի խաղաղութիւն առնել ընդ Լեհս, և առաքեաց առ թագաւոր նո-ցա հրեշտակութեամբ զիշխանն Վոլքոնսքի՝ ազդ առնել զիրացն պատահելոց ՚ի Մոս-քուա. այլ անպատասխանի արձակե-ցաւ յետս պատասխանաւորն։

Մի ՚ի պայմանաց թագաւորելոյն Շույսքեայ էր անյիշաչար լինել առա-ջինն մարդկան ձեռնտուաց եղելոց ՚ի Դմե-տրի. այլ նա ոչ եկաց յերդմանն, և մերկացոյց զպատուաւորսն յիշխանութենէն՝ զոր առեալ էր նոցա առատաձեռնութիւնն Դմե-տրեայ, և կացոյց փոխանակ նոցա զմե-

արտաքսելոյն խաղանայ ։ Աքսորեաց և զկուսակիցս Կոլիցինայ. որք և բորբոքեցին զհուր ատելութեան 'ի զանազան գաւառս, մանաւանդ յՈւքրանիա, ուր համբաւէր՝ իբրու թէ Դմիտրի զերծեալ իցէ, և փոխանակ նորա զայլ ոք զդերբանանցի սպանեալ իցէ Ռուսաց. զնոյն ասացին և 'ի քաղաքսն 'ի Փութիվլուլա, 'ի Ռեազան, 'ի Թուլա, և յԱստրախան ։

Ի գարնանն չարեացն հրամայեաց Շույսքի հանել 'ի գերեզմանէ զմարմին Ճշմարտին Դմիտրիի, և առն կատարել 'ի սրբութ. նորին իբրև սրբոյ մկայի. սակայն ոչ եթէ զԴմիտրի խնդրէին ապստամբքն, այլ զայլ ոք թագաւոր փոխանակ Շույսկեայ ։ Գունդք կազմեաց Պոլոթնիկով ոմն 'ի Սեվերեցւոց, 'ի Խազախաց և 'ի գերեաց փախստականաց, որք յետ անբաւ յափշտակութեանց և սպանութեանց՝ զոր գործեցին, խնդրէին կոտորել և զբուրգանդին ամենայն, մինչև աղաւաղեալն Սմոլենսկոյ զորօք բազմօք յարուցեալ 'ի վերայ յղուեաց զկուռժան ապստամբացն ։

Ի նմին ժամանակի և Տանայի Խազախք համբաւեցին՝ թէ առ նոսա իցէ որդին Ֆէոտորայ Իւանեան զերծեալ 'ի կոտորածէն Կոստանդնոյ. և առեալ յանուն նորա զպատանին մի՝ որում անուն էր Իլիա Վասիլեւիչ՝ ծառայ փախստական 'ի տէրանց իւրմէ, մանին 'ի

Ռուսիոյ, և որ բնաւ ոչէ բաղձանցան։ Իբրև իշխանին Թուլեաթեւագի, որ հանդերձ այլովք միաբանեալ էր ընդ Խաղախան, խորտակեաց զզօրսն Շույսկեայ արձակեալս ի վերայ իւր, և եհար զՔաղու-կաս. այլ ի պաշարել զօրացն Շույսկեայ զԹուլա և ի խցանել զաղբիւր ջրոյ քաղաքին առատաքաւսա, քաղաքացիքն անձնատուր եղեն, և ետուն ի ձեռս արքային զպատասխանն և զգլխաւորս ապստամբութեանն։

Յետ այնորիկ յամին 1608 յարեան ի Սթարոտուպ եկեալք նմանք այլք յանդգնութք, Նաւկի և Ռուսքին. յորոց առաջինն ասէր՝ թէ Դեմետրին իցէ ինքն ազատեալ առանձին խնամակալքն Աստուծոյ. և խաղացին առքա ի քաղաքէն իւրեանց ամբոխիւն, և զամ քան զզամ բաղձանցեալ՝ առին զԲիրեանց քաղաքս, և առաջ զՔաղաքս ի ձեռաց Մոսկովեայ իշխանին։

Իսկ Շույսկի քանզի գիտէր եթէ Լեհք են չարեացպատճառք ազգատեացն, յարեաւ ամենայն զօրութբ իւրով ի վերայ դաւաճանացն, և հալածեաց զնոսա ի Նովկորոտ հիւսիսոյ. անդր եկին յօգնութիւն եւրոպացի առասանուն Դեմետրի ընհացի ամն Ռուսիոյ անուն զօրօք իւրովք, և ոչ սակաւ գունդք ի Լիթուանիոյ, ի Տաճկի Խաղախայ և յայլոց անկարգեանց։ Զօրաժողով եղև Քուռուպքին զօրավար Շույսկեայ և խա-

ղաց 'ի Գրիանց. զառաջինն յաղթեալ խուսափարարացն՝ յերկրորդումն 'ի պարտութեն մատնեցաւ. և ապստամբքն յառաջ խաղացեալ եկին մերձեցան 'ի Մոսքուա. մինչև երկնչել ամանց յաւագ որևորոյն և չերթալ ընդդէմ: Շույսքի 'ի մահ ետ զայնակիխուն, և անձեցոյց զշարն: Ապա կարգեաց սպարապետ զօրաց զՄիքայէլ Շույսքի, և զիւան Րոմանով, որք յաղթեցին և յաղթեցան երկիցս և երիցս:

Խորհուրդ կալան ապա պատրիարքն և աւագանին՝ թողուլ յազատութիւն զԼեհս ամենայն, և զկին առաջնոյն սուտանուն Դեմետրի զՄարինանէ, զի թերևս հաւանեսցի արքայն Լեհաց յետս կոչել զզօրսն իւր: Եւ Շույսքի արար այնպէս:

Այլ մինչդեռ իշխանն Տոլկորուքի ածէր տանէր զամբոխն 'ի սահմանս կոյս Լեհաց, Նակի առաքեաց 'ի վերայ նորա Խազախս երկու հազար, որք և յափշտակեալ 'ի ձեռաց նոցա զկինն Օթրեփիեվայ և զհայր նորին, արձակեցին զպատգամաւորսն:

Ընդ անզգամաղան պատահումն Նակեայ և Մարինանեայ կնոջն Դեմետրի ընդ միմեանս՝ խռովեցան զօրքն, և փոքր մի ևս և կորուսանէին զնա. այլ կուսակիցք Նակեայ յորդորեցին զՄարինանէ և զհայր նորա՝ գէթ առ երես կեղծել՝ որպէս թէ արդարև գիտեն զնա

Դեմետրին լինել: Եւ նոքա կուրացեալք 'ի սէր փառաց և պատուոյ՝ յանձն առին զանօրէն խորհուրդն, և Մարինէ ընթացեալ 'ի խորանն Նովկեայ՝ փարեցաւ խնդալից զպատրանացն առաջին բռնակալին զօրուն: Ցայնժամ հեռանայ առաւել ևս բազմացան զօրք Նովկեայ, և Լեհք առաքեցին առ նա զայլ ևս զօրավար քաջ՝ Սափիեհա անուն, որ կոտորած մեծ հասոյց 'ի զօրս Թագաւորին Ռուսաց, մինչև չմնացին ընդ ձեռամբ նորա. այլ ևս քաղաքաց · բայց Նովկորոտ, Սմոլենսք, Ռեազան, Գոլոմնա և քաղաքքն Սիպիրայ:

Շույսքի 'ի տագնապի ժամանակս առաքեաց խնդրեաց զօրս 'ի Նովկորոտայ, և թիկունս օգնականութեան յարքայէն Շուեդաց: Նա առաքեաց նմա արս հինգ հազար, և այլս ևս խոստացաւ առաքել՝ եթէ Շույսքի զբաժինն նորա լինիցի նմա. և միաբանեցան երկոքին յառնել ընդդէմ արքային Լեհաց: Այն ինչ թշնամիք եկեալ պաշարէին զՄոսքուա, հասին անդր Կասաւի սպարապետ Շուեդաց և Միքայէլ Շույսքի, և հզօրացաւ կողմն Թագաւորին:

Ցայնժամ աթոռականն Խաղաղոսաց Եւքոփեք խորհուրդ ետ զօրավարացն Նովկեայ՝ թողուլ զպաշարումն Մոսքուայի, և քան վտանգաւ անձանց յընդ վայր ձգուելս մեռնել վասն միոյ առն՝ որոյ անտոյգ յայտ է օրինաւոր ժառանգն լի-

նել աթոռոյն Ռուսիոյ, տալ զնա 'ի ձեռս արքային Լեհաց, որ յայնժամ պաշարեր զՍմոլենսք. և մեզ օգուտ առնուլ քան զնոսա ծնցի, ասէր, զի Սիգիսմունդոս զորդի իւր զՎլատիսլաւ կացուսցէ 'ի Թագաւոր Ռուսաց: Հաւանեցան զօրականքն, և 'ի նոյն պատասխան առաքին ունել զՇուսկի և տալ 'ի ձեռս Սիգիսմունդոսի, և խնդրել զորդի նորին զՎլատիսլաւ: Այլ աւուրք յառաջ խմոցաւ Շուսկի զգլուխն, և փախեաւ. և 'ի շփոթել բանակին՝ եղին պաշարեալքն, և ցիր և ցան արարին զնոսա:

Միքայէլ Շուսկի՝ մականուանեալն Սքոփին՝ նա էր որ վայր ևս քաջութեան արար 'ի վերայ այլոց բազմաց. և ժողովուրդն կարգային զնա հայր հայրենեաց, և ազատարար Թագաւորին: Զկծեցաւ նախանձու Թագաւորն, և պաշտօնեայքն նորին եդին 'ի մտի կորուսանել զՍքոփին և շնորհս գտանել առ արքայի: Վասն որոյ յարմարեցին յօդեցին Թուղթ մի յանուն Լեապունովեայ քաղաքապետին Րեազանայ, ուր էր յայնժամ շշունջ ապստամբութեան, իբրու թէ յորդորէր Լեապունով զՍքոփին յափշտակել զաթոռն՝ որպէս մի միայն արժանաւոր, և Թշնամանէր զՇուսկի: Առեալ Շուսկեայ զԹուղթն՝ պաշարեցաւ 'ի տագնապս անհնարին, և փութայր գաւել զՍքոփին: Իբրև զգաց զխորան Կաւոր զօրավար Շվեդաց մտերիմ Սքոփի-

նոյ՝ յորդոր եղև Թադէոսի առաքելոյ զԱբգարին 'ի գերեզմանսն զՍանատրուկ 'ի պաշտպանութենէ միոյ 'ի գաւառականացն Լեհաց. և միաբանութեան այդ. որպէս Աբգարինեայ զվասնտուն յորում կայր նա: Այլ 'ի նմին գիշերի մեռաւ Աբգարին՝ անշուշտ գերեզմանի 'ի Թշնամեաց. և ըստ որում զնա Որոնդէ առ հաստարակ, և ասէին. « Եհաս արքայ ձախու ձեռամբն զոր բաղդաւորն էր »: Եւ Լեառնականոյն զգեստ առ ամենայն կուսակալս և քաղաքապետս աշխարհին, կամիմ՝ ասէր՝ վրէժխնդիր լինել անօրէնութեան զոր անզգամեցաւ արքայ յերկրորդին էր 'ի Աբգարին:

Իսկ Թադէոսի առաքելոյ յօգնութիւն Մանածայրեայ գերդաստանն էր զԴիեմերար, և ընդ նմա զգօրավարն Կատառն. այլ Եւ քաղաքի յարձակեալ կատարեաց զձախ թեւն Որոնտայ, և կէս զօրացն Հմկեալ անցին 'ի կողմն Լեհաց: Յայնժամ և Կատառն Թիկնապահաց լեալ մնացեալքն համագործ մեկնեցաւ 'ի Հմկաս:

Իսկ եկն Դիեմերար 'ի Մարդուստ և պատմեաց զդէպսն, կամէր Թադէոսի առաքել զայլ զօրս, այլ նոքա ոչ անսացին և ոչ լուան. զի Լեռնականոյն որսացեալ էր զնոսա: Ձեան եռալն և Լեհք վերադարձին Նաւկեայ, և ածին զնա մինչև համագէպ Մարդուստի: Յայնժամ առաջանէին ամենայն՝ խորասուզ Լեռնականոյց գերատեան առաքելցին առ զօրավարն

Լեհաց Սափեհա, և հաւանեցուցին զնա լքանել զկողմն Նակեայ, որպէս և ինքեանք մերժեն յաթոռոյ զՇույսքի, և ընտրել միաբան հաւանութեամբ զայլ ոմն նոր թագաւոր։ Հաճեցաւ զօրավարն իւրովքն հանդերձ ընդ առաջարկութիւն։ Եւ աւագանին ընդ Լեափունովայ եկելոյ 'ի Մոսքուա՝ յարձակեցան յապարանս Շույսքեայ, և ձերբակալ արարին զնա հանդերձ կնաւն։ Ազդ արարին այնուհետև 'ի բանակին Լեհաց՝ մերժել զՆակի և գալ 'ի Մոսքուա յընտրութիւն նորոյ թագաւորի։ Ետուն պատասխանի ապստամբքն խորխոանօք և ասեն. « Չեմք մեք երբեք զձեզ ուխտադրուժք առ 'ի մերժել մեզէն զիշխանն մեր »։ Սակայն աւագանին անյեղլի մնացեալ 'ի խորհուրդս իւրեանց՝ ածին զՇույսքին 'ի վանսն Չուտով, և առաքեցին 'ի բաց դնել զծիրանին, և առնուլ զանձամբ զկարգս միանձանց. և 'ի չկամել նորա՝ իշխանն Թուֆեաքին բռնի ագոյց զսքեմն նմա և կնոջ նորին, և երկուց եղբարցն։

Ի նմին պահու զօրավարն Լեհաց Ջօլքեւսքի խորտակեաց զՇուսա, և էառ խաբանօք զՄոսքուա. յափշտակեաց և զՇույսքի իւրովքն հանդերձ, և ած տարաւ կացոյց առաջի Սիգիսմունդայ արքային։

Իբրև ետես թագաւորն զկորուստ և զաներկիւղ կերպարանս Շույսքեայ,

պատմեսցաւ և հրամայեաց նմա երկիր պագանել առաջի իւր։ Եւ պատասխանի ետ Վասիլ. «Թշուառութիւն իմ ոչ մոռացոյց ինձ եթէ թագաւոր եմ ես, և չպարտաւոր պագանել ումեք երկիր։ Եւ ոչ զօրութիւն քո է որ գերեացն զիս, այլ նենգութիւն իմոցն հպատակաց. արդ 'ի տեսանել իմոյ անկածութենս՝ զարհուրեցիր դու որ չամարձակէիր երբեք յառաջ աստիճան բարձրութեանս իմոյ»։ Սիգիզմունդ տարեալ զնա ընտանեօքն 'ի Վարշաւ, և յետ ոչ սակաւուց մեռաւ անդ Շույսքի և եղբարքն իւր։ Իսկ Զոլքեւսքեայ կողոպտեալ զգանձն Մոսքուայի, և մատնեալ զքաղաքն յաւար իւրոցն, եկեր և զկողմն Նալկեայ, որ և փախուցեալ առ խանն թաթարաց՝ սպանաւ 'ի նոցանէ։

Եւ աթամանն խազախաց էառ իւր 'ի կնութիւն զՄարինանէ, որոյ ծնեալ էր մանուկ մի 'ի Նալկեայ, և խազախքն հաստատեցին 'ի միջի իւրեանց թագաւորեցուցանել զմանուկն. այլ ձերբակալ եղեն 'ի Ռուսաց. աթամանն ցցահար սպանաւ, և մանուկն խեղդեցաւ, և Մարինանէ արկաւ 'ի բանտ խաւարին և մեռաւ անդէն։

Բնակիչքն Մոսքուայի յայնչափ անմտութիւն ժամանեցին, մինչև ոչ իմչ ունէին մատուցեալ բանիցն Եղմոգեննեայ պատրիարգի, և Փիլարետեայ մետրապօլտի, դեսպանս առաքեցին առ Սի-

զիմունդ եւ խնդրեցին իւրեանց 'ի թա-
գաւոր զորդի նորա զՎլադիսլաւ. այլ
պայմանաւ, զի մկրտեսցի նա ըստ
ուղղափառութեան իւրեանց եկեղեցւոյն, եւ
երդուեսցէ պահել զօրէնս իւրեանց։
Եւ կացին դեսպանքն առաջի Սիգիզ-
մունդայ առ Սմոլենսկաւ յամին 1610.
եւ էին մետրապօլիտն Փիլարետ, Վասիլ
Կոլիցին, ոմանք 'ի միջնակարգին աստիճանաց,
եւ ոմանք 'ի սոսկականաց։

Չառաջինն պատուաւորեաց զնոսա
թագաւորն. եւ 'ի վաղիւ անդր ասաց
նոցա յանձնել առաջի իւր զքաղաքն Սմո-
լենսկայ՝ զոր իւր պաշարեալ էր։ Պա-
տասխանի ետ արքեպիսկոպոս Փիլարետ, եւ
ասէ. «Մեք չեմք կամք եւ ոչ իշխանու-
թիւն՝ տալ քեզ զՍմոլենսկ։ Որպէս քո
ժառանգեսցէ եւ զայս քաղաք եւ զայլս,
յորժամ բազմեսցի յաթոռն Ռուս-
սիոյ»։ Բարկացաւ Սիգիզմունդ ընդ
պատասխանին, եւ չետ յանձն առ-
նել նոցա զորդին իւր։

Յայնժամ հաւատացեալ զխոստացին
Ռուսաց՝ զի Սիգիզմունդոսայ կամք էին ան-
ձամբ տիրել Ռուսիոյ. այլ ապստամբն վաղ-
վաղակի Լեհաստանեայց, եւ նա խորհեցաւ
տալ յօգնութիւն քաղաքին եօթանա-
սուն հազար արանց։

Երկեաւ Սիգիզմունդ՝ թէ չարիք ինչ
անցցեն ընդ Լեհաց զաւրացն 'ի Մոս-
կուա, եւ կոչեաց զդեսպանսն՝ առա-
քեաց զնոսա գրել առ Լեհաստանեայց,

հակսն՝ ապա հերձիւ երկպառակութե
ներմանեցին 'ի խորհրդականս գերա_
գոյն ատենին. յուզեցին 'ի տրտունջ և
զխաղամթիւ ամբոխ կրսեր ազատանոյն,
անելով թէ յայամ հետէ չէք ձեզ ամ_
բառնալ 'ի բարձ ինչ պատուոյ, ուր
խորհրդականքն մեծապորք զիւրեանց
յաղթակեցս և զբարեկամս կարգեացեն
յամենայն իշխանութիւն. փոխանակ զի
եթէ դշխոյն ազնուորէն իշխեր՝ պատիւք

պաշտամանց ըստ վկայաբանաց արդեօք կչռեցին, որպէս առ մեծաւն Պե-տրոսիւ :

Յետ սակաւ աւուրց վեց հարիւր այր յազատացն Մոսքուայի՝ առաջնորդ ու-նելով զԹրուբեցքօյ, զԲարեաթինսքի և զՉերքասքի եկին կացին առ դուրս ա-պարանից դշխոյին, և աղաչէին զնա, զի հրաման տացէ 'ի խորհուրդ բաղձել զերագոյն ատենին յաղագս կարևոր իւրոց խնամակալութեան : Աննայի գիտակ գոլով խորհրդոցն Թագուհութեն՝ անոց բազմեցաւ 'ի դահոյս 'ի մեծի խոր-հրդարանին, և անդ հիւրընկալաւ զա-մենայն զծերակոյտն և զառաջնականսն : Հրաման էր 'ի ծածուկ և աշահակ զօ-րացն զի զգուշասցին դրանց խորհրդա-րանին, և զգաստ կացցին առ ամենայն դէպս : Յայնժամ յառաջ մատուցեալ կոմսն Մաթֆէյեւ ասէ ցդշխոյն. « Ի դիմաց համօրէն ազատանւոյն Ռուսիոյ հասեալ կամ առ ոտս դշխոյիդ մեծի՝ յայտ առնել զպատարանսն յոր ըմբռ-նեալ էս 'ի նուիրական գերագոյն ա-տենիս. զի որպէս մինչև ցայժմ ազատ ինքնակալօք վարեցաւ Ռուսիա, և ոչ երբէք ատենիւ խորհրդոյ, այն ունէր ամենայն ազգս Ռուսաց՝ զի և առ քեւ ըղ-ձոյն կարգ իւրոց նախնեացն տեսանիցէ, ունել քեզ և որդւոց քոց ինքնիշխան զերազանական կատարելութեն զաշխար-հիս մեծի » :

Զարմանս յոյժ կենդանեաց կայսրու-
հին ընդ բանսն, և հարցանէր ակնարկե-
լով 'ի Պաւղոս Տոլկորուքի. «Մինթէ ոչ
այն իղձ էր ազգին՝ յորում ձեռնադրե-
ցի ես, ասէ, 'ի Միթթաւ»։ Այն ինչ
շարժեցաւ Պաւղոս 'ի կշտամբել զյան-
դըգնութն Մաթֆիէյեւայ՝ զապաղաղակ բար-
ձին ամենեքեան զի լռեսցէ։ Հրամայ-
եաց դշխոյն ածել զառաջնեաւ զմնոր-
հակ պայմանացն և եա ընթեռնուլ 'ի
ձայն բարձր, և ընդ գլխոց գլխոց հար-
ցանէր՝ եթէ 'ի դէպ իցէ ազգին. և կու-
սակիցքն իւր գոչէին, ոչ։ Ապա ուրեմն
յոչ ինչ է պիտանացու մուրհակդ, ա-
սաց, և պատռել պատառեաց զայն։
Յաւելուլ յայս ասնել՝ եթէ քանզի ոչ
օրինաց խորհրդոյ, այլ իրաւանցք յա-
ջորդութեն կալեալ է նորա զաթոռն,
կամի ըստ նախնեացն իւրոց օրինակի՝ ա-
զատօրէն վարել զիշխանութիւն իւր։

Անդ էր ապա տեսանել զզնծութիւն
կրակէր ազատանոյն և զատակակցան ամբո-
խին։ Իսկ խորհրդականքն գերագոյն ա-
տենիցն ըմբռնեալ լքան 'ի միտս իւրեանց,
որով և պատճառաւ եռանն Պիրենայ գալ
բնակել 'ի Ռուսիա 'ի կարուստ անբա-
մարդկան։

Քանզի առ այր փառաւորէր, շողմնոգ,
ախտակալ, անհաստատոյն, արծաթասէր և
անձնասէր, ընթէկ 'ի Քուրլանտեայ՝ որդի
դոլով առն աննշանի, ծառայէր զառա-
ջինն Պեսթուժեւայ հազարապետաց առն

դքսուհւոյն Քուրլանդիոյ. այսպէս 'ի ձեռաց Բեսթուժեւսկեայ ամբաստանեալ 'ի պաշ_տօնէ սենեկապետութեան դքսուհւոյն՝ նախ զնորին լինելն զԲեսթուժեւսկեայ պարտաւորեալ իւր առնելն տարար յանձն դքսուհւոյն. մինչեւ հալածել նմա զայլն 'ի Ռուսիոյ: Այնուհետեւ որոշեալ ընդ միա մեկեալ Բիրոնն դքսուհւոյն մտերմութեամբ ընդ նմա, նորինչ եւ յառաջխօսեաց իւր ձեռամբ զամենայն գործոյն Ռուսաց, որք եւ առին իւր պաշտօնեան երբեմն Աննայի թագաւորել զնա առ դեն 'ի Միթթաւ:

Այդ երբեւ եկն եհաս Բիրոնն 'ի Մոս_կուա, 'ի միջոց քինու զերագոյն ա_տենիցն՝ այնչափ ինչ ամբաստանեալ եղեւ զա_տենակալացն առ Աննայի, մինչեւ եբարձ նա 'ի միջոյ զայն ատեան, եւ կարգեաց փոխանակ նորին զայլ ատեան նեղագին. եւ զԲիրոնն առաւել եւ քննիչ ամենայն գործոց խորհրդականացն, որոց գլխա_ւորք էին կոմսն Օսթերման, իշխանն Չերքասքի, եւ մարաջախտն Մունիխ: Իսկ այլ աւագանին արգելեալ փոխեալ նստէին 'ի տունս իւրեանց պատճառա_նօք խօթութեան. եւ իշխանն Կոլորւկին գրեալ թէ զամենայն ժամանակս թա_գաւորութեան Աննայի եկաց 'ի մահճին: Զոմանս 'ի Տոլկորուքեանց եւս Բիրոնն աքսորեաց 'ի կողմանս Խաղաքայ եւ Սի_բերիոյ, եւ յայլ տեղիս, եւ զոմանս մա_հու չարաչար կորուսանէր անիրաւ դա_տապարտութեամբ: Այսպէս 'ի պատմութեան Ան_

նայի հանդիսիւ 'ի կայսրութեան Ռոմանոսի , ընկալաւ և Վիրքն զաստուածիւ մեծի անհե-կատարելութեն . և զդուստր Իւանայ Ցող-կողուքեայ զԿուրլանտիոյ , զոր խօսե-ցեալն էր Պետրոսի Երկրորդի , 'ի մեծամա-սան ուրեք առաքելեալ , հնարեցաւ որ-դեգրել Աննայի զդուստր քեռ իւրոյ զդքսուհւոյն Մեքլենպուրկեայ . զի մի հարկ լինիցի տալ զինել Աննայի , որպէս յորդորէին զնա մերձաւորք նորին : Իսկ որդեգրեալն այն յառաջ եղև 'ի լու-տերականն աղանդոյն , և մկրտեալ ըստ օրինաց Ռուսաց՝ կոչեցաւ Աննա : Եւ մինչչև եկեալ նորա 'ի Մոսքուա՝ կա-մեցաւ կայսրուհին երդմնեցուցանել զազգն 'ի ճանաչել զորդեգիրն իւր օրի-նաւոր ժառանգ աթոռոյն յետ իւր . այլ զի գիտէր զժողովուրդն՝ զի առա-ւել սիրով եղեալ էին Եղիսաբեթի թա-գաւորելոյ քան այլում ումեք , հոգ յանձին կալաւ անհեղ հանդիսիւ տալ տանել զերդումն , և իբր 'ի պատրաստա-սուէ պատերազմի կարգելոց յօրինեաց 'ի հրապարակի անդ զամենայն զզօրսն :

Կայսրուհին կամէր , ասեն , և 'ի վանս ուրեք առաքելով զԵղիսաբեթ , այլ Բի-րոն չթողացոյց , զի 'ի մտի եդեալ էր տանել զնա 'ի կնութիւն անդրանկին իւ-րոյ , և այսպէս թագաւորել : Այլ առ ժամն ոչ գտանէր առաւելեցուցանել զորս մեծամեծաց գժտեցէք էին նմա . զօ-րավարն Բոմեանցայ աքսորեաց 'ի կող

մանս խաղաղանայ, զխորհրդականն Ջիկք 'ի Սիպիր, և զծովակալն Սեւերս 'ի Ֆին-լանտիա։

Այլ մարդասիրական Մունիխ վասա-կէր 'ի կատարել զքաղաքագործութիւս և զշինութիւս մեծին Պետրոսի։ Բազմա-ցուցց զԹիւ զօրացն Ռուսաց, և յաւել զգունդիկս սպայից, և կարգեաց 'ի պա-լատին Մենշչիկովայ զվարժոց երեքա-րիւր համբակաց զինուորութեան զարմա-նալեաց յարքունի գանձուց։ Նորին խորհրդով հրաժեշտ կալաւ Աննա 'ի գաւառաց անտի՝ զորս կալեալ էր մեծին Պետրոսի 'ի Պարսից աշխարհէն. զի երեսուն հազար պահանորդք հար-կէին կալ հանապազ անդէն, և ամ ըստ ամէ կիսով չափ վաճանէին։ Պատուեաց Մունիխ և զմեծ գործ ջրանցիցն Լադո-կայ՝ որ յանձն էր նմա 'ի մեծէն Պետրո-սէ, և հրաւիրեաց տարրու զնայարութեան 'ի տեսանել զնոյն։

Սակայն այս վաստակք և յաջողուԹիւնք մարդաջախութեն զրգռեցին 'ի նախանձ զՕսԹերման, և զայլս ոմանս յաւագաց-ոյք և չարախօս լեալ զնմանէ առ Վի-րեն, գժտեցուցին զնա ընդ Մունիխայ 'ի կարուստ նմին Վիրենայ։

Ընդ այն ժամանակս յամին 1733, 'ի մեռանել Օգոստեայ արքային Լեհաց՝ ակիզբն եղև վրդովմանցն որովք հուսկ ուրեմն կործանեցաւ այն աշխարհ։ Զի նախապաշտն Լեհաց ժողով ատրակալ

եդ առաջի աւագանւոյն զհարկ ընտրութեան նորոյ Թագաւորի 'ի ցածուցանել զխռովութիւնս աշխարհին : Հաւանեցան և կայսրն Գերմանացւոց և դշխոյն Ռուսաց ընդ առաջարկութիւնն . այլ յայտ արարին՝ թէ չկամիմք զի ընտրեսցի միւս անգամ Ստանիսլաւ : Յետ սակաւուց կայսրընտրականն Սաքսոնիոյ մեծամեծ խոստմամբք որսացաւ զԳերմանացիս եւ զՌուսս յիւր կողմն , մինչեւ առաքել Աննայի զօրս 'ի Քուրլանտիա և 'ի Լիթուանիա, զի ձեռնտու լիցին և Թագաւորեցուցեն Լեհաց զկայսրընտրականն :

Ընդ այս գործ Ռուսաց ծանրացաուածն եղեալ նախագահքն Լեհաց և աւագանւոյն՝ միաբան հաւանութ. կարգեցին Թագաւոր զՍտանիսլաւ : Սակայն Ռուսք բանիւք և խոստմամբք և զօրամամբք տկարացուցեալ նախ զկողմն Ստանիսլաւայ , ապա արձակեցին 'ի վերայ նոցա զկոմսն Լասչի քսան հազար արամբք . որ իբրեւ եմուտ 'ի Լիթուանիա , Ստանիսլաւ եթող զՎարշաւ քաղաք և փախեաւ 'ի Տանցիկ : Յայնժամ կուսակիցք Սաքսոնացւոյն զնա կարգացին Թագաւոր՝ Օգոստոս Գ. անուանեալ : Իսկ Լասչի յետուն հազարաւ խաղաց 'ի Տանցիկ , և մինչեւ ցկէս ամին 1734 հազիւ ուրեմն կարաց պաշարել զքաղաքն :

Ի նմին միջոցի եհաս նմա յօգնութե և Մունիխ կարգեալ սպարապետ ամե-

նոյն զօրացն Ռուսաց. որք յառաջին յարձակմանն՝ սաստկապէս յետս մղեցեալ, ապա և ևս ստուարացեալ զօրքն հետզհետէ եկելովք 'ի թիկունս՝ 'ի գերութիւն նուաճեցին զերիս գունդս Գաղղիացւոց, որք եկեալ էին յօգնութիւն պաշարելոցն, և առաւ Ցանցիկ զկնի հարիւր երեսուն և հինգ աւուրց պաշարմանն: Ձերբակալ արար Մունիխ զհրամանատարն, զկոմսն Փոնեռսթոլզբէ, և այլ ևս արս աւագս 'ի Լեհաց, և առաքեաց զնոսա 'ի Թօրն. և արկ 'ի վերայ քաղաքացւոցն տուգանս երկու միլիոն սկուտ զերծմանացի, փոխանակ զի ապաստանեալ էին Ստանիսլաւայ, և փախուցին ևս զնա, և ընդդէմ կալով Ռուսաց՝ պատճառս եղեն կոտորածի բիւր հազար զօրականաց և երկերիւր սպայից: Այլ կայսրուհին շնորհեաց նոցա զկէս տուժին:

Ստանիսլաւ 'ի կերպս կերպս այլաձևեալ զերծաւ, և ոչ անկաւ 'ի ձեռս խնդրողացն Մունիխեայ. և Լեհք յանկամայս յանձին կալան երդնուլ զերդումն հաւատարմութեան առ Օգոստոս:

Այն ինչ կամէր Մունիխ դարձ առնել 'ի Բեթերբուրգ, հրաման եհաս նմա խաղալ գնալ և պաշարել զԱզով. զի պատերազմ 'ի վերայ կայր ընդ Օսմանեանս, և ընդ Թաթարս Խրիմու: Եւ նորա թողեալ 'ի վերայ զօրացն Լեհաստանի զԼէշխան անն՝ գնաց 'ի Քիեվ և

պատերազմատանէր համբերժմամբ պատուիրանացն : Հրաման էր և առ Լէոնդեսխեմ ըսբավարի՝ քաւոն հաղոր տրամբ մատղեին զինդաւ, և ամեն հաղար խաղաղութեք մատնել 'ի Խրիմ. այլ նա ոչ կարաց կատարել զհրամանսն առ տմվոյն և զրաոյն մեատեղին, և դարձաւ յետս : Մակայն Մինիխ ոչ ինչ լքաւ այնու, և ոչ կասեցաւ 'ի պատերազմատուութենէն :

Անդ թագաւորն Օսմանեանց յաղէր եղեալ՝ փութացաւ խնդրել զխաղաղութիւն՝ խոստանալով կարճել զապստամբս Թաթարացն Խրիմու : Այլ և 'ի Ռուսաց աւատորերոյն ոչ ասկաւք չկամէին ընդ պատերազմ. ասկային կայսրուհին ոչ դարձաւ 'ի խորհրդոյն, և Օսմանեանց յանձն եղև դնել զպատերազմութիւն առ մեծղին : Յայնժամ և Օսմանեանք կազմեցան 'ի պատերազմ, և զայն նուաղ ոչ արգելլին զդեսպանն Ռուսաց յԵդն գուլէն որպէս երբեմն, այլ արձակեցին խաղաղութեամբ յերկիր իւր :

Խաղաց գնաց Մինիխ և առ նախ զներքոնուայն Ազովայ, և զպաշարմունս քաղաքին յանձն արարեալ 'ի Լասի՝ անց զինուց 'ի Խրիմ, և եկից զաշխարհն արկեան ձմարտագետք և քանդամանք քաղաքաց և գիւղից, և չէր ոք որ զդէմ ունէր ընթացից նորա. մինչև կոչել զնա Ռուսաց՝ Մեծն տէրութեն, և Արծուի ամենասաստ : Այլ որ յառաջուշ կրթեալ զամենեսեանս՝ էր հրամայեալ յաղթանակ

Նորին առ Սիմաւուշեան գետով, ուր այնպէս իմն պատեալ պաշարեալ մնա_ ցին զօրքն Հոռոմոց, մինչև գրել Ալի փաշային առաջապատերազմին Տաճկաց առ Թագաւորն՝ եթէ Հոռոմք անզերծանե_ լի պաշարեալ կան. և չիք այլ հնար, բայց զի անձնատուր լինիցին, և կամ ՚ի սուր մաշեսցին ։

Քանզի քաղաքաւորեանն Խօթունեաց պատնեալ էր զձախ թև բանակին Հոռո_ մոց՝ ՚ի Թիկանց ունելով զանտառս և զանմատոյց լերինս. յանձնէ պաշարէր Ալի փաշա հեծելազօրօք իւրովք նոյն_ պէս յեցեալ ՚ի բարձրաբերձ լերինս՝ որ ձգին մինչև ՚ի Փրութ գետ. և յետկու_ սէ արգելեալ փակէր ճամբն Պեչկարո_ տայ՝ զլուխ ամենայն Թաթարաց կող_ մանցն ։ Յանձնեալ արգելանէ անտի անհամե_ նասնելի զերծան Հոռոմք հնարիւք իմն, և եղև ՚ի տեղւոջն կոտորած մեծ երկ_ ուստեք, մինչև Տաճիկք մղեցան ՚ի փա_ խուստ, և Մունիկք առալ լի բռնադատեալ զյաղթութիւն ։ Իսկ անընդդիմանակ զԽօ_ թուն և զՄոլդաւիա, և զՊեչկարա. պաշարեաց և զՕդոռ, և էառ զայն. և Լատչի հալածեաց զնանն խուխնու, և խորտակեաց զՏաճիկս մերձ ՚ի Խաւրա_ սու քաղաք. և Պրետալ՝ երրորդ ծաղա_ կողի վանեաց զօրավիզ նաւացն Տաճ_ կաց մինչև ՚ի Քէֆէ ։ Այսպէս կէս զօրացն Հոռոմոց խաղացին ՚ի Պէնտեր, և կէսն յԻսմայիլ ։ Այլ քանզի Գերմանացիք

հաստատութեանցն ընդ Օսմանեանս զզաւրն ուխտին Պելկրատու , Վէրլընեթոյ զեր–պանն Գանիզիզայեցւոց՝ որ առաջին էր այնմ ուխտին՝ միջնորդ եղև և առ Ռուսս . և հաստատեցան ՚ի միջի պայմանք , որ են , Քանդելոցն յառաջիկայիցն ամենայն բեր–դարայքն Ազովայ . Բ , Տաճիկք մի կա–րասցեն կանգնել նոր բերդս , բայց երե–սուն մերձաւորք յայնկոյս քաղաքին ՚ի ծովակողմն կուսէ . նոյնպէս և Ռուսք յայսմ կողմանէ . Գ , Ընդդարձակեսցին Ռուսք զսահմանս իւրեանց ընդ անդա–պատն կայս փարախս քաղաքն , և կալցին զԱմանմայրս . Դ , Դարձուսցին անդրէն առ Օսմանցիս Օրու և Գըլըպուրան :

Ի ժամանակի պատերազմին Օսմա–նեանց նորոգեցին Ռուսք և զուխտ բա–րեկամութե՛ն ընդ դրանն Պարսից : Յետ աւուրց ինչ յարեաւ խաբեբայ ոմն և ա–սէր զանձնէ թէ Ալեքսին իցէ որդի մե–ծին Պետրոսի : Հաւատացին նմա ամենք ՚ի զօրականէն . և երկեաց զերդն այնորիկ ազդեցութե՛ զանդադրակաց ժողովեալ ըն–թացիկս վայրացն՝ մեռոց զզատատարութ և զաղօթս , որ յանձնեցեալն էր նորոյ թագաւորին իւրեանց : Ի գէտ ժամա–նակի եհաս ՚ի վերայ զօրավարն Բու–մեանցով , զխարտեսչին խաղաղացոյց ՚ի Բե–թերբուրկ . առ զապստամբապետն նորա ՚ի մահ՝ ածաւ ՚ի գաւառ իւր յՈրպըրա–նեիս . և անդ ցցահար եղև : Արդէնաւ և երկեցն , և զենուարքն որ զհետ չոգան

նորա . և զխուզն քանդեցաւ , և բնակիչքն այլուր անկեալ վարատեցան :

Ընդ նոյն ժամանակս և Սսեցին ընտրե-ցաւ զոյգս Քուրլանտեայ , և մխիթարեաց զանձուն իւր 'ի Սիրան , որպէս թէ իշխա-նէր նա 'ի քաղաքն առաջին Աղամանդուակ կանթողթոյ՝ որ յամին 1577 մարաջախտ էր 'ի Գաղղիա :

Փոքր մի վաղ քան զխաղաղութիւնն հաստատեալ ընդ Օսմանցիս կատարե-ցան հարսանիք օրիորդին Աննայի՝ դստե-րն 'ի կնութիւն դքսին Պրունսվիքայ : Եւ կայսրուհին 'ի ցոյց իւրոյ մեծութեանն հրամայեաց յամենայն կողմանց աշխար-հին ածել 'ի Բեթրբուրգ այր և կին ; նոյն յամենայն ազգաց իւրեանց զգես-տուք 'ի հանդէս հարսանեացն :

Մինչդեռ դշխոյն զայսպիսեօք զուար-ճանայր զայլս , անմարդորոյնն Պիրոնն հեշտա-նայր անողորմ արարմանց հեղուածքն : Կասկած-ս անելով զոմանց եթէ չարախօս լեալ ի-ցեն զինքենէ առ դշխոյն , զոմանց զձեռս եւս հատանել , զոմանց զլեզուս , զկէսս զգլխատել , և զայլս աքսորեաց 'ի Սիբերիա :

Զայնու ժամանակաւ դքսուհին Ան-նա ծնաւ ուստր մի , որում կայսրուհին իւրն անուն եդեալ՝ եհաս զնա 'ի ծնո-ղացն իւր յորդեգրեալ , և այդր մտացա-նել յաջորդութիւն իւրում : Այլ ինքն յետ սակաւուց խօթացեալ անկաւ 'ի մա-հիճս . և որ ըստ օրէ զայրացեալ ախտն՝ իբրև եանս թէ մեռանի , յայտ առնէ

Թէ իւր կամքն էր յաջորդել Իվանու նորածնին մանկանն Իւանայ, և յետ նորա՝ եղբարց նորին, թէ ծնանիցին։ Այս ընտրութիւն Իւանայ, և ՚ի բաց լքանելն դքսուհւոյն Աննայի մօր մանկանն՝ գործ էր Վիրոնոյ. որոյ եղելոյ ՚ի մահ ընդդէր կայր Ծաղօսանալ խնամակալութեան ՚ի ժամանակի կրտսերութեան մանկանն, որպացաւ յետ կայսերն զմանեաւոյն զդրկեալ աւարա տաւաղանեալն և զեկեղեցականաց և զգիտնականաց, և եւս նոցա զրկել զեր պաշտպանութեանց առ ինքն, զի յանձինն կալցի խնամակալութեան ընդ Իւանայ. և յաջորդեաց զԹագն՝ ատոր Օսթերմանն առ կայսրութեան զի ձեռնադրեցանէ ՚ի նմա։ Այսպ առ մահուչափն էր և Վիրոնն յարժամ ընթերցաւ Օսթերմանն զԹագն. և խորհեալ առաջարկեաց կայսրութեան, անդէն անկաւ ՚ի տկարութեան մահու, և ոչ եւս կնչ կարացեալ բարբառել մեռաւ ՚ի 28 աւուր հոկտեմբերի յամին 1740, ՚ի հասակի քառասուն և վեց ամաց՝ թագաւորեալ ամս տասն։

Սիրող էր առ կարգի և մեծավայելչութեան, առատաձեռն առ վաստակաւորս, և զօրավարութ առ անհնեանան, այլ յանձնարս եւս կարգի ինքն Թեթևամտին և զխրատհասարան խորոց պաշտօնէից և բարեկամաց։

ԾԵՐԱԿՈՅՏՆ և սինհոդոսն և աւա-գանին ամենայն կոչեցան 'ի վաղիւ անդր յապարանս արքունի, և ընթերցեալ զկտակն ստորագրեալ յԱննայէ՝ թա-գաւորեցուցին զԻւանն, և զԲիրոնն կար-գեցին խնամակալ պետութեան : Առա-ջին գործ իշխանութեան նորա եղև՝ ան-ցուցանել 'ի Քուրլանտիա անբաւ գանձս 'ի ստացուածս կալուածոց և 'ի շինուած հոյակապ ապարանից. Թող զի բռնաւոր զբաղմս զոր ծախէր սակս պճնասէր կնոջ իւրոյ : Գործակիցս ունէր իւր միայն զՕսթերմանն, զՉերքասքի, և զՊեսթուժէվ, և իւրն ատենապար և ար-ձակ արձակ հրաման տայր յամենայնի 'ի վեր քան զամենայն զոր ինքնակալն Ռու-սաց :

Այլ ոչ անդիմանակոյր էր սա հա-սարակ ատելի է յաչս ամենեցուն, և մանաւանդ յաչս Ուլրիկոսի առն Ան-նայի, և զլխաւոր եպիսկոպոսաց և ա-զատորդերոյն. զոր և սաստեալ 'ի ձեռն լրտեսաց իւրոց՝ կալաւ պատուհաս 'ի սպառնալից դքսին, և եա խոշտանգել զնոսա՝. զի յայտնեսցեն զգործակիցս իւրեանց : Այսպէս ստիպեաց զդուքսն հրաժարել 'ի զօրավարութենէն . և եթէ, ասէ, դքսու-

հէն իշխեսցէ ինչ գլուխ ամբառնալ, արձակեալ զնա որդւովն հանդերձ 'ի Գերմանիա, և ածեալ նստուցանել յաթոռն զդուքսն Հոլշթէյնայ : Սմին իրք յայնմհետէ գաղափարով երևէր միշտ Աննա առաջի նորա :

Մունիխ, որ յաւուր ընդհանուր ըսպարապետութե ձեռնատու լեալ էր Բիրենայ՝ զի հասցէ 'ի պատիւ խնամակալութե, իբրև ետես զի գերեացաւ յայս իւր՝ եդ 'ի մեծ բանադրանս 'ի միջոյ զմերացն : Բանս եդ ընդ Աննայի, և ինքն 'ի 28 Նոյեմբերի ճաշ և ընթրիս առեալ առ Բիրենայ, զգանիւք անկաւ ընդ նմա մինչև ցմէջ գիշերոյն, և ապա մեկնեցաւ 'ի նմանէ : Իբրև ժամք երկու անցին 'ի մերայ, գնաց Մունիխ ընդ Մանսթէյնայ զօրագլխի 'ի ձմերոցն արքունի, ուր էր թագաւորն և ծնողք նորա. խօսեցաւ ընդ Աննայի, և պատուիրեաց կոչել զապայս պահակացն և յայտ առնել նոցա զթշուառութի իւր և զորդւոյն և զպետութեն. և նա արար ըստ բանիցն, և երդուան ամենայն պահակքն առք հարիւր և քառասուն՝ ձեռն առնել նմա ընդդէմ բռնաւորին :

Յայնժամ Մունիխ սպառազինեալ զպահակսն՝ քառասուն այր 'ի նոցանէ եթող 'ի պահպանութիւն դրօշուցն, և ինքն մնացելովքն հանդերձ դիմեաց 'ի պալատն Բիրենայ : Մանսթէյն կանխեալ և ազդեալ պահապանացն Բիրե-

նայ զխորհուրդն Մուշեղայ՝ քան զօ_
րականքն և միով աղաղակաւ խաղաց 'ի
ներքս, և 'ի բաց գտանել զզօրս անձնե_
կին Գիրենայ՝ եմուտ անդր, ձայն ետ և
հարու 'ի վերայ Գիրենայ, կալաւ զնա
ընդդատական մինչդեռ խոր 'ի քուն ննջէր,
և այն ինչ 'ի վեր հարթուցեալ նորա՝
կամէր թաքչել ընդ մահճօքն, հասին
'ի վերայ զօրականքն, և ձգեալ թաքչե_
նակ 'ի բերան նորա, և կապեալ ձեռս
յետս՝ արկին 'ի կառս և ածին զնա 'ի
ձմերոցն արքունի։ Եղիշէ կինն Գիրե_
նայ հերարձակ ստացեալ յանկողնոյ
իւրմէ ընթանայր և նա զհետ առնն. և
մի ամն 'ի զինուորացն ած զնա ընդ քարշ_
առ Մանաթէյն. և իբրև հրամայեաց
Մանաթէյն գործուցանել զնա 'ի տուն
իւր, զօրականն խորշեալ յաշխատու_
թէն՝ 'ի բաց ընկեց զնա 'ի ձեռն, և գը-
նաց զճանապարհ իւր։

Գիրեն իբրև եդաւ յանկոյթ վայրի,
ըմբռնեցան և երկոքին եղբարք նորա՝
կամեն Գեթուշեմ, և զօրավարն Գնու_
մայք։ Այնս սպառաղինեցան ամենայն
զօրքն գանեալք 'ի Բեթրայուրկ և 'ի սահ_
մանս նորա, և շուրջ պատեցին զարքու_
նեօքն։ Անդա հաշակեցաւ մեծ դքսու_
հի և խնամակալ, և ամենեքեան եր_
դուան նմա զհպատակութի. և եղև
ուրախութի մեծ 'ի քաղաքի անդ։ Այսպէս
ամբարձան 'ի մեծագոյն պատուի, այլն
դքսուհւոյն կարգեցաւ ընդհանուր բա-

պատրաստական, և Մունիք՝ երկիրորդ ար-
քայի ։

Խանդաղատու Օսթերլիխն ընդ փառս Մունիքայ, և չարախօս եղև բաղում ինչ առ դքսին և դքսուհւոյն, մինչև Աննա երբարձ 'ի Մունիքայ զիշխանութիւն տնտեսութեն քաղաքականն իւրոյ պետ-տութեան, և եթող զզինուորականն եւեթ ։ Չչարեցաւ ընդ այս Մունիք, և խնդ-րեաց՝ կամ լի բաւականութեամբ շնորհել նմա զպաշտօնն, և կամ արձակել զնա յա-ղատութեան ։ Դքսուհին առ ժամանակ մի յապաղեալ նմա զպատասխանին, ապա երբև ետես՝ զի Մունիք ընդդէմ կայ և խորհրդոյն Օսթերլիխեայ՝ մարթ յար-գարելոյ ընդ Թագաւորին Բրուսացւոյ յան-իրաւի, եթող զնա 'ի կամս ազատու-թեն իւրոյ, և նա հնդետասան հազար րուպլի տարեկան թոշակաւ և միով զնդաւ պահեկազան զօրաց մեկնեցաւ 'ի Հոլթինգեա ։

Զայնու ժամանակաւ եւ և մինչ զա-տապարտութեն Պիրէնայ. այլ դքսուհին շնորհեաց նմա զարեն՝ եւ աքսորել 'ի Սիպիր, և ընտրեցաւ դուքս Քուր-լանտիոյ Լուդովիկոս ազգակից դքսին Պրունշվիկեայ ։

Յետ այնորիկ 'ի յանձնախնել Շվետաց 'ի գործս թշնամութեն ընդ Ռուսս, հար-կեցուցին զնոսա 'ի պատերազմ, և Լաս-ջի մարաջախտն յաղթութեամբ բազումս տարեալ 'ի Ֆինլանտիա՝ բարձրացոյց ըզ-

փառս Յուսփոյ ։ Ընդ նոյն աւուրս եկն 'ի Բեթրպուրկ դեսպան 'ի Թագաւորէն Օսմանեանց, որպէս և յԱննայէ առաքեցաւ ռուս դեսպան 'ի Կոստանդնուպօլիս, զոր ըստ պայմանաց վերջնոյ ուխտի խաղաղութեանն՝ նոքին հանդիպա ընդունել ունէին Օսմանեանք, որով ընդունէին զդեսպանն Գերմանացւոց ։ Շքեղ ևս հրաշափառութեան էր՝ զոր արար յայնժամ Թահմազ ղուլի խան Պարսից առ Թագաւորն Ռուսաց ։ Առաքէր նա ընդ դեսպանին իւրում արս վեշտասան հազար և թնդանօթս քսան. ընդ որոց բազմութեան կասկած երկիւղի կալեալ Ռուսաց՝ արձակեցին զունդս զօրաց 'ի կողմանս Աժտէրխանու ։ Իսկ և եհաս դեսպանն Պարսից 'ի դուռն Խզլեար, զօրավարն Ափրաքսին առաքեաց ազդ առնել նմա՝ զի անհուն անապատ ընդ մէջ կայ Աժտէրխանու և Մոսքուայի, և յանհնարից է հոգալ զպէտս այնչափ ամբոխին. նմին իրի աղաչէր մի աւելի քան երիւք հազարօք խաղալ յառաջ ։ Զկայ էառ դեսպանն, մինչև եհաս 'ի Թահմազայ հրաման զիջանելոյ Ռուսաց. յայնժամ խաղաց գնաց դեսպանն 'ի Մոսքուա երեք հազար հեծելովք՝ ածեալ 'ի պարգև Թագաւորին Ռուսաց փիղս չորեքտասան, և բազում ընծայս պատուականս ։ Իսկ բուն հրաշափառութեանն էր խնդրել զԵղիսաբեթ զդուստր մեծին Պետրոսի 'ի կնութիւն

Թահմասպայ: Խնամակալ դքսուհին հա-ճեցաւ իմն ընդ խնդիրն, այլ ոչ Ռուսք, և ոչ Եղիսաբեթ ոչ առին յանձն ազ-գախառնութեան կարգել ընդ խուժին:

Էր յայնժամ Ռուսիա 'ի խաղաղու-թե և 'ի հանգստեան մեծի. այլ որչափ դիւր առնէր դքսուհին ժողովրդեան իւրում, նոյնչափ և անանդորր էր յառանձին կեանս իւր, մինչև բաժանել նմա յառնէ իւրմէ: Սակայն և ոչ արտաքին խաղաղութիւն յերկարեաց յոյժ: Քան-զի կամին Կոլովքին տալ յարուցեալ Օսթերմանայ մտերմին Ուըլֆիկոսի, յոր-դորեաց և հաւանեցոյց զդքսուհին ան-ձամբ թագաւորել, պատճառանօք խա-փանելոյ զխառնակութիւն որ կարէին յու-զել յանկարծ թէ մեռանէր մանուկ արքայն: Որսացաւ Կոլովքին և զոչ սակաւս յաւագանւոյն, և յ18 դեկ-տեմբերի հաստատեցին թագաւորեցու-ցանել զդքսուհին:

Ըստ կարգի յաջորդութեան հաստա-տելոյ 'ի մեծէն Պետրոսէ, յետ մեռա-նելոյ Պետրոսի երկրորդի՝ Եղիսաբեթի անկ էր թագաւորութիւն. այլ նա ընդ-երկար անփոյթ արար զայնմանէ՝ ոչ միայն զի վեհերոտ էր կամ թէ խաղա-ղասէր, այլ զի և զինքնորէն կեանս դիւ-րութե 'ի վեր դասէր քան զամենայն: Այլա Լեսթոք ոմն վիրաբոյժ զաղղիա-ցի յազգէ ընդ միտ մտեալ Եղիսաբեթի՝ սակաւ սակաւ յորդորանօք հաւանեցոյց

զնա վրէժխնդիր յառնել խրատուանց իւրոց։ Շահեցաւ և զոմանս 'ի զօրականաց, և զյոլովս 'ի պահանորդաց։

Յաւուր միում իբրև լուաւ զի դքսուհին 'ի կասկածս մտեալ էր զդաւանակցացն, ստիպեաց զԵղիսաբեթ մի ևս յապաղել զգործն. և գծեալ 'ի թղթի թագ մի և անիւ, եցոյց Եղիսաբեթի, և ասէ. «Կամ քեզ այսօր մին 'ի սոցանէ, կամ ինձ միւսն առ վաղիւ»։ Եւ խոստացաւ նմա Եղիսաբեթ անյապաղ ձեռն 'ի գործ առնել։ Յայնժամ գումարեալ Լեսթոք զդաւանակիցսն, և զԵղիսաբեթ ընդհասարակ գիշերաւ ած 'ի ձմերոցս Փրեօբրաժենսկի գնդին, որք 'ի տեսանել զդստեր մեծին Պետրոսի առ հասարակ երդուան հեղուլ 'ի սէր նորա մինչև ցյետին շիթս արեան իւրեանց. և Լեսթոք զինեալ նոքօք յապարանսն արքունի՝ ձերբակալ առնէ զդքսուհին և զայր նորա, և զԻւան և զքոյր նորին, և խաղացուցեալ սահնակօք 'ի պալատն Եղիսաբեթի՝ 'ի պահ զգուշութեան արկանէ զնոսա յայլ և յայլ սենեակս։ Այսպէս ըմբռնեալ և զՄունիխ և զՕսթերմանն և զԿոլովկին և զայլս ոմանս՝ բանտարգել առնէ զամենեսեան 'ի բերդի անդ։ Եւ ընդ այգն 'ի ժողովել աւագանւոյն և ծերակուտին յայտ արարաւ նոցա անցանել զդստերն Պետրոսի մեծի յաթոռն նորին, և ամենեքեան 'ի մի բերան երդուան նմա զերդումն հաւատարմութեան։

Զհետ երից աւուրց առանձին հրովար-տակ հանեալ՝ եթէ դքսուհին Աննա և այրն իւր ոչ ինչ իրաւունս ունելով 'ի ժառանգութիւն աթոռոյն Ռուսիոյ՝ աքսորին 'ի Գերմանիա. այլ իւրք հասին նոքա 'ի Րիգա, արգելան 'ի միջնաբերդի անդ ամ մի և կէս. անտի փոխադրեալ մին-չև 'ի Քոլմոկորի կղզի 'ի մէջ Տվինա գետոյ՝ անդ մեռաւ դքսուհին յամին 1786:

Իսկ մանկիկն Իւան բաժանեալ 'ի ծնողացն յարգելս կայր 'ի Շլիսսելբուրկ. և Եղիսաբեթ յամին 1756 կամեցեալ տեսանել զնա՝ ետ բերել անտի, և 'ի խօսել ընդ պատանւոյն յարդարասէս համար ատէն: Այսպ Իւան անդրէն դարձուցաւ յարգելան իւր. և իբրև եղև ամաց քսան և վեցից, Միրո-վիչ անուն խաղախ Թօան Մաղեփիկոյ կամեցեալ հաստատել զնա միապետն յաթոռ թագաւորութեան՝ եմուտ բըռ-նութեամբ ընդ զօրականս սակաւս 'ի բերդն, և սկսաւ հարկանել զպահպանսն: Զայն տեսեալ երկուց ոմանց սպայից որ կային առ Իւանայ, և երկուցեալ թէ թէ գուցէ զերծանիցի Իւան, և խռո-վեսցի աշխարհն, հարին 'ի վերայ պա-տանւոյն և սպանին զնա: Այսպէս որ անկանելին 'ի տղայ տիոց 'ի ծիրանիս իշխան-ձայնեալ ինքնակալ կոչեցաւ, յետ մըշ-տալից կենացն պատանեկութեան տեսաւ դիակն նորա առ դուրս եկեղեցւոյն

Շլիսելպուրկայ ծածկեալ զձուն ամղամնաւ նաւասալարի ։

ԵՂԻՍԱԲԵԹ

Ընդ անցանել Եղիսաբեթի յաթոռ թագաւորութեան արդար արդարեւ հաստատ և վճռեալ գլխապարտութեան իշխանացն կապելոց. այլ Եղիսաբեթ շնորհեալ նոցա զկեանսն՝ տարաստահանեաց արտաքս 'ի Սիպիր։ Այսպս վարձահատոյց եղև առատապէս արոց օգնականն եղեն նմա և թագաւորեցուցին։ Դարձոյց յաքսորանացն Սիպիրոյ ոգիս իբր քսան հազար. որպէս սովորութիւն էր նոր թագաւորացն Ռուսաց՝ ազատութիւն շնորհել աքսորելոցն առ նախնի թագաւորօք սակս ոչ յոյժ ծանր յանցանաց ։

Յանկայր Եղիսաբեթ ուխտ խաղաղութեան հաստատել ընդ Շվէտս. այլ իբրև ետես զի նոքա ծանր ծանր պայմանս պահանջէին, ձեռն էարկ անդրէն 'ի պատերազմ ։ Ապա տեսեալ նորա ըզզեղծմունս որք սպրդեալ էին 'ի թագաւորութեան 'ի Պետրոսէ հետէ, եբարձ զպալատանի խորհրդարանն, և լուծոյց զիշխանութեն ծերակուտին՝ որպէս էրն առաջագոյն իւրով ։ Եւ կայսեր խորհուրդ խորհեցեալ՝ կոչեաց 'ի Բեթրպուրկ ըզդեռահասակ որդի քեռն իւրոյ երիցու,

կարգեաց զնա փոխանորդ սպարապետ-ակ, և հաստատեալ իւր յաջորդ 'ի թագաւորութեան՝ հրամայեաց զի ազգն ողջոյն երդուիցէ նմա զերդումն հաւատարմութե. և փոխեալ զանուն նորա՝ կոչեաց Պետրոս Ֆէոտորովիչ:

Դէպք իմն յանակնկալս պատահեցին յայնժամ. զի 'ի վաղիւ անդր որ յետ ընտրութեան Պետրոսի երրորդի, հրեշտակք 'ի Շուեդաց հասին 'ի Պետերբուրգ հրաւիրել զնա յաթոռ թագաւորութեան Շուեդաց. զի թագաւոր նոցա ծեր էր և անզաւակ, և սա գոլով զօրավոր Հոլսթէյնեան՝ համարէր 'ի սերնդոց Կուստաւոսի Վազայ արքային Շուեդաց: Պետրոս եցոյց նոցա փոխանակ իւր զհօրեղբայրն իւր զԱդոլփոս Փրեդերիկոս զեպիսկոպոսն Լուպէքայ: Եւ որ զարմանալին է, մինչ դեռ ևս այս բանագնացութիւնք լինէին 'ի մէջի՝ պատերազմ սաստիկ էր Ռուսաց ընդ Շուեդս:

Մի 'ի պայմանաց թագաւորելոյն Եղիսաբեթի էր՝ զերծուցանել զԻւանն 'ի բռնութեց եկամուտ ազգացն խառնելոց 'ի նմա: Այսու պատճառանօք գունդ մի զօրականին պահանջէր 'ի նմանէ կոտորել զամենայն զօտարականսն, կամ գէթ արտասահման առնել զնոսա: Եւ 'ի չառնուլ յանձն Եղիսաբեթի զխնդրական խորհուրդն, սփռեցաւ ընդ քաղաքն համբաւ ստութե՝ որպէս թէ հրամանն իցէ զօրացն գալոց 'ի Պետերբուրգ

սպառնանել և կողոպտել զամենայն օտարականս քաղաքին. և նոցա յարձակեալ խուզարկանէին զէպ երեսաց խուրեանց` անկարաւ աղէտս գործեցին ՚ի քաղաքի անդ, մինչև հազիւ ուրեմն զօրավարին Քէյթ սանձեաց զնոսա, և խռովարարքն պատուհասեցան։

Յետ այնորիկ սաստկագոյնս մարտեցին Ռուսք զմարտն ընդ Շվէտս, մինչև խոնարհեցուցին զնոսա ՚ի խնդրել զխաղաղութիւն, և յամին 1743 յամսեանն մարտի կնքեցան դաշինք ուխտին յԱպօ. որով եպիսկոպոսն Լուպէքայ ընտրեցաւ յաջորդ Թագաւորին Շվեդաց, որպէս կամէին Ռուսք, և տուաւ Ռուսաց մասն մի ՚ի գաւառացն` զոր կալան ՚ի Ֆինլանդիոյ յայնմ պատերազմի։

Զայնու ժամանակաւ Թահմազ ղուլի խան սրտմտեալ յոյժ ընդ հրաժարելն Եղիսաբեթի յերթալոյ նմա ՚ի կին, սպառնացաւ խաղալ ՚ի վերայ նորա մարտիւ պատերազմի։ Այլ իբրև ետես զի և Ռուսք զօրաժողով լինէին ՚ի կողմանս Աժտերխանայ և Կովկասու, զիջաւ ՚ի հաշտութիւն, և դարձոյց զդէմս իւր ՚ի վերայ Թագաւորին Օսմանեանց։ Եւ Եղիսաբեթ դարձոյց զուշ իւր ՚ի տնտեսութիւն ներքին և արտաքին իրաց Թագաւորութեանն։

Այլ Պէսթուժեւ հազարապետն Թագաւորութեան այր փառասէր և նենգաժէտ` բաղձայր զժառութիւն արկ ընդ Ե-

դիտաւորէթ և ընդ գնացական Գաղղիա-ցւոց, որք ձեռնտուու լեալ էին ՚ի թագա-ւորեցուցանել զդշխոյն: Այսպէս խանդա-ցեալ և ընդ փառս Լեսթոքայ, և թըշ-նամացեալ ընդ նմա սակս բարեկամու-թեան նորին ընդ Գաղղիացիս՝ այնչափ ինչ արար և հնարեցաւ, մինչև յաչաց եհան զնա Եղիսաբեթի, և աստայօք յանցանս արկեալ ՚ի մերայս քաղէն ատեան և խուրոյ բարեկարգի, եւ արգելեալ զնա ՚ի բերդ մի, և յետ չորից ամաց աքսո-րել յՈւսթիուժ վելիկի մերձ յԱրխան-կէլ՝. կարգելով նմա ռոճիկ օր ըստ օրէ ռուբլիս երիս: Յետ ժամանակաց Պե-տրոս Գ. յաջորդն Եղիսաբեթի դար-ձոյց զԼէսթոք յաքսորանացն, և կար-գեաց զնա որպէս յառաջին էր՝ բժշկա-պետ արքունի և խորհրդական. այլ և Կատարինէ Բ. կարգեաց նմա թոշակ եօթն հազար ռուբլիս և կալուածս գե-ղեցիկս ՚ի Լիվոնիա:

Չև էր հասեալ ժամանակ պատուա-հասի ժամանակին Պեսթուժեվայ. որոյ դեռ ես ՚ի շնորհս գոլով Եղիսաբեթի՝ ունէր և զհնարաւոր զատատխորհրդականութեն Պե-տրոսի, և զբօսեցուցանէր զնա ՚ի խաղս և ՚ի մեղկութիւնս: Հեռացոյց ՚ի նմանէ զամենեսեան որ կարէին խորհրդական բարեաց լինել նմա բանիւ և օրինակաւ, և կամակոր երկիւղի արկ ՚ի սիրտ կայս-րուհւոյն՝ որպէս թէ անատանձելի էր մեծի դքսին անշաւշառ զեան մեծ հա-

տուացեն դշխոյին վաղ կամ անագան ։

Սմին իրի կարգեցան առ Պետրոսի դեսպանք զգուշութեամբ, և 'ի բաց արգելան 'ի նմանէ անդամ և ընտանիք նորին. և եղեն նմա արքունիքն բանտ անլքանելի ։ Ոչ կարացեալ Պեսթուժեւայ շիջուցանել զխանդ նորա 'ի զինուորական իրս, եւս ընդրել 'ի Հոլսթեյնայ գունդս զօրաց, որովք զբանակն Պետրոս յապարանս Օրանիէնպաումայ, զոր պարգեւեալ էր նմա Եղիսաբեթի ։

Այլ ընդ զբօսանացն և 'ի դատարկութեան և 'ի թուլութիւն հատանէր նա ընդ անկիրթ պատանիս և համբակս բարեկամացն որ էին անդ ընդ նմա ։ Եւ զի պարզամիտ ևս էր 'ի բանս և 'ի խորհուրդս, քաղեցին ոմանք 'ի բերանոյ նորա բանս նախատանաց ընդդէմ աշխարհին Ռուսաց, և յաւելլին զգրգռել զխական մտացն Եղիսաբեթի ։ Եւ նա թէպէտ և առ երեսս չհաստատէր զիրապաշտացն բանից, այլ 'ի սրտէ ցանգ յանէր և 'ի գաղտնի կայր, և անհանգիստ էր զմեծ մասն աւուրց կենաց իւրոց. զի թէ զօրհանապազ փոփոխէր զճաշատուն իւր, և զերկուս գիշերս մի զմիոյ կէնի ոչ ննջէր 'ի նմին սենեկի ։

Մի միայն մխիթարութիւն նորա այն էր, զի ամուսինն Պետրոսի Կատարինէ անդուլ պարապեալ 'ի հմտութիւն օրինաց և ատենաբանութեանց և բարուց ազգին, և յընթերցանուածս իմաստակաց մատենից,

յորս մեծ ընծայէր 'ի չափու ունելոյ և պայքն իւր ։ Ցուցեալ նա և ևս աշխարհին Եղիսաբեթի՝ ծնանելով զորդին իւր զանդրանիկն, որ կոչեցաւ Պօղոս ։

Իսկ Պեսթուչեւ երթալով երթայր և թունանայր 'ի վերայ ամենայնի. և առ Եղիսաբեթի հաստատեալ նոր ատեան բարձրագոյն քան զծերականութիւն, անուանեալ Ատեան յարքունութեան, որում անդ էր քննութիւն գաղտնեաց, ապաւերաղձի, հաշուց և ծախուց և ամենայն կարեւոր գործոց պետութեան ։ Ուր ուրեմն երեւաց զօրս Եղիսաբեթի սենեկապանն Պրոզէնսորֆ, և եցոյց նմա աչզք թուղթք զդաւադրական յոր ընկանեալ կայր ։ Արկաւ Պեսթուչեւ յիշխանութենէ, և արգելաւ 'ի բանտի ։ Յայնժամ հրապարակեցան բազմապատիկ անիրաւութիւնք Պեսթուչեւեայ, և Եղիսաբեթ առանձին հրովարտակաւ նշաւակեաց ըզչարիս նորին՝ հրամայելով անաչառ զնա դատաստանաւ քննել զնա յատենի աւագի իւր, և ապա աքսորեաց յաւանն Գորեթովօ ոչ ինչ կարի հեռի 'ի Մոսքուայէ ։

Ընդ նոյն ժամանակս յամին 1757 մարաջախտն Ափրաքսին եմուտ պատերազմաւ 'ի Բրուսիա, և էառ զՄեմել. ապա մարտ սաստիկ տուեալ ընդ Բրուսացւոց Եակերսդորֆ քաղաքաւ, 'ի փախուստ դարձոյց զնոսա, և կալաւ 'ի նոցանէ թնդանօթս քսան և ինն. և փա-

խափանել հետամնալ լինելոյ փոխանակելոյն՝ զօրաժողով ձմերել 'ի Լեհաստան։ Դժուա-րեալ ընդ այն Եղիսաբեթի՝ հրամայեաց նմա յանձն առնել զզօրսն առ զօրա-վարն Ֆերմոր, և դառնալ 'ի Ռուսիա-ստան զհամար գործոց իւրոց։ Ի Նարվա արկաւ Ապրաքսին 'ի բանտ, և մինչչև վճարել դատաստանին՝ մեռաւ 'ի կա-թուածէ։

Իսկ Ֆերմոր յարձակեալ էառ և զՔէնիկսպերկ և զՔիւսթրին, և առա-ջաւ յաղթանակ մեծ 'ի վերայ Բրու-սաց. այլ տկարացեալ 'ի բազում վաս-տակոց յամին 1758 հրաժարեաց 'ի զօ-րավարութենէն, և առաքեցաւ փոխանակ նորա Զոլթիկով։

Խաղաց ընդ Զոլթիկով դէպ ու-ղիղ 'ի Քռոսսէն, ուր խառնուրդք ե-ղեն պատերազմին, և Բրուսք մեծա-մեծ նախճիրս գործեալ 'ի Թէյնավիս անդր՝ 'ի վերջէ 'ի պարտութիւն մատնե-ցան, թողին 'ի տեղւոջն թնդանօթս և դրօշս և մեկնեցան, և անկան 'ի նոցա-նէ ոգիք երկու հազար, և վիրաւորք չո-րեքհազար։ Ամառնայնեցին մերին յաղ-թականքն 'ի Քռոսսէն, և անտի ան-ցեալ առին զՖրանկֆորթ առ Օտե-րաւ։ Փեդերիկոս արքայն Բրուսաց ինք-նին անցեալ 'ի գլուխ քսան հազար զօ-րականաց՝ խաղաց գնաց 'ի խափանել զգալուստ Լաուտոն և Հատտիկ զօրա-վարացն Գերմանացւոց յօգնութն Ռուս-

սաց ։ Եւ թէպէտ անտագան ժամանակաց, սակայն խրդախեալ ձախաւանեցաւ ընդ֊դէմ բանակին Ռուսաց ։

Իբրև սկիզբն եղև մարտին, երկուստեք անպարտելի քաջութիւն կռուեցան ժամս ութ կամ ինն, մինչև Զօլթիքով բազմութիւն խորոցն վանեաց զԲրուսս, և թափեաց 'ի նոցանէ զօրս քանի և վեց, թնդանօթս հարիւր և յիսուն և կառս բազում ։ Եւ էին անկեալքն 'ի պատերազմին ութ հազար Բրուսք, թող զվիրաւորսն որ էին եօթն հազար ․ իսկ 'ի Ռուսաց անկան արք հնգետասան հազար ։ Վասն որոյ թէ և ամենայն Ռուսաց ուրախութիւն մեծ եղև ընդ յաղթութիւն, այլ Եղիսաբեթ դոչեաց ցաւագին ․ «Քանի՜ քանի անմեղք անկան յարևէ» ։ Ապա բաշխեաց զօրավարացն և սպայից և զօրականին պարգևս մեծամեծս ։

Զարմանալի քաջութիւն շահատակեալ էր յայնմ պատերազմի և զօրավարն Փանին ․ զի ըմբռնեալ յանընդմիջելի ցաւոց տանջանութեան՝ ոչ համբերժեաց կալ յանկողնի, և 'ի ձեռն ծառայից իւրոց 'ի ձի աշտանակեալ ահագին քաջութիւս գործեաց 'ի բանակի թշնամեաց, և ոչ դարձաւ 'ի խորան իւր մինչև ցվախճան պատերազմին ։

Յետ այնորիկ դիմեցին Ռուսք 'ի պաշարել զՔօլպերկ ․ և այն ինչ յաղթնուլ էր քաղաքն, եհաս 'ի վերայ զօրավարն Վերնէրս չորեք հազարօք, և առհասարակ

տարածանել զՌուսս հոլանձեաց 'ի տե_ղւոջէն : Զայն պատճառաւ աւելով Նա_խանձորդացն Զոլթիքովայ՝ ստիպեցին զԵղիսաբեթ կարգել 'ի տեղի նորա զՊուտթուրլին : Այսպէս պաշարեցին Ռուսք միաբանութեամբ զՔոլպերկ 'ի ծովէ և 'ի ցամաքէ կուսէ, և 'ի հինգերորդում ամսեանն անձնատուր եղեն քաղաքա_ցիքն չափաւոր պայմանաւք :

Աւետիք այսր յաղթանակի եհաս 'ի Բեթրպուրկ յորժամ Եղիսաբեթ ան_կեալ յախտ մահացու մերձ էր 'ի վախ_ճանել : Ի տագնապ ժամուն ևս յայտ արար նա զընդարձակս գորովոյ սրտին, և հրամայեաց ազատս արձակել զամենայն բանտարկեալսն յաղագս արգելեալ վա_ճառուց, և զմաքսն ևս շնորհել նոցա : Եհան 'ի բանտէ և զամենայն պարտա_կանս՝ որոց պարտք նուազ էին քան զհինգ հարիւր ռուբլիս, և յիւրոց գան_ձուց հատոյց զպարտս նոցին : Պատուէր ետ յաջորդին իւրում հաստատուն միալ յաւիտեան բարեկամութեան ընդ այլ պետութիւնս, և մեռաւ 'ի 5 յունուարի ամին 1762 :

Առ հասարակ գովաբանեալ է Եղիսա_բեթ ըստ ամենայն գրոց . այլ որ զար_մանալին էր յանձին նորա՝ գթութիւն էր անչափ, և թուէր թէ ոչ 'ի թագա_ւորել և 'ի տիրապետել բազմաց յա_թոռ արքունի, այլ 'ի մայրօրէն խնա_մոց սնանել և սփոփել զամենայն զնեղ_

տառապեալս որք միանգամ դիմէին առ ատեան նորա ։ Քաջ գիտաց նա միաբանել զքաղցրութիւն ընդ մեծանձնութեան, և զչափաւորութիւն ընդ արքունի պերճութեան, որովք և սիրելի եղև Բրիտանացւոց և ահարկու ։ Եւ թէ ոչ սակաւ ժամանակս խաղաղեցաւ նա ՚ի Պետութեան իւրեայ, և թոյլ ետ նմա զանխռովութիւն, այլ միանգամ զանձամբ եկեալ՝ դարձեալ յայս արարս զխորհրդակիցն դաւաճանութեան մեռաց իւրոց՝ ընտրեալով ՚ի սեղի նորա իւր բարեկամ հաւատարիմ զկոմսն Վորանցով՝ զայլն ընդ պատժի նորա ։

Յառաջադիմեցոյց Եղիսաբեթ յոյժ յոյժ և զգիտութիւնս և զարուեստս . Ճոխացոյց նա քան զնա զՃեմարանն գիտութեանց, և հաստատեաց այլ Ճեմարան գեղարուեստից . և առ նովաւ մանաւանդ սկիզբն առաւելին Բրիտանք խրաւանքը հակառակել ընդ այլ ազինս Եւրոպայ առ ՚ի յաղթահարել զմրցանակս արդեան և ելէ փառաց ։

(1) Հնդեցուցանց հոյակապ յաջորդացն Եղիսաբեթի, և մանաւանդ զմերձինոցն երկուց, զԱղեքսանդրէ ասեմ Ա, և ըզՆԻԿՈՂԱՅՈՍԷ Ա, ոչ ունելով մեր առձեռն Ճշգրիտ և ոճով պատմութիւն արժանի պանծալի արարոց նոցին, կարեւոր համարեցաք գոնեա զերեւելի երեւելի գործոց նոցին զյիշատակս ժամանակագրքն հանդերձ դրոշմել ՚ի կարգիս ։

ԼՐՈՒՄՆ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՌՈՒՍԱՑ
1762 = 1830

ՊԵՏՐՈՍ Գ.

ԹԱԳԱՒՈՐԵԱԼ սորա փոխանակ Եղիսաբեթի՝ յառաջին աւուրս անդ զարմացոյց զՌուսս վայելուչ գնացիւքն, որպիսի ինչ ոչ ակն ունէին նոքա տեսանել 'ի նմա: Ներեաց ամենեցուն որք միանգամ վնասակար լեալ էին պատուոյ իւրում առ. թագաւորութեամբ Եղիսաբեթի. դարձոյց յաքսորանաց զՄունիխ և զՊիրոն. արձակեաց յազատութիւն և զԼեսթոգ, և վարձահատոյց եղև ճոխաբար բարեկամաց իւրոց և հաւատարիմ արբանեկաց:

Եւ քանզի անդստին 'ի սկզբանէ հետէ զարմացեալ էր նա ընդ արիութիւն Ֆրեդերիկոսի արքային Բրուսաց, փութացաւ ոչ միայն խաղաղութիւն առնել ընդ նմա և դարձուցանել 'ի նա անդրէն

զամենայն աշխարհն, այլ և օգնական նիզակակից լինել նմա խոստացաւ, և արձակեաց ձրի զամենայն զգերիսն ։

Որչափ մտերիմ էր Պետրոս արքային Բրուսաց, ըստ նմին չափու ոխացոյր ընդդէմ Թագաւորին Դանեաց Փեդերիկոսի Ե. որ տիրապետեալ էր 'ի վերայ խորոյ հայրենի նահանգին, այսինքն է Հոլսթէյնայ ։ Նմին իրի խաղացուցեալ ընդ այն կողմանս արս յիսուն հազար ։ Զայն զգացեալ արքային Դանեաց, զօրահաւաքս եղև և ինքն, և միաբանեաց ընդ Թագաւորին Գաղղիոյ և ընդ Մարիամու Թերեզեայ դքսուհւոյն Գերմանացւոց ։

Այս նշանք յայտարարք Ճոխաբար իշխանութեան և անուշութեան Պետրոսի հաճոյ եղեն յոյժ Ռուսաց. այլ վաղ խոթեցին զաչս բոլորից անկարգ և ցոփ վարք նորա. մանաւանդ ատելութիւն ընդդէմ Ռուսաց, և կարծեցն զհաւատ եկեղեցականաց ։ Իսկ նա և այնու ոչ շատացեալ՝ արգել առ հասարակ ամենեցուն, զի մի ոք որ չիցէ զերեսնամենիւք՝ մտանիցէ 'ի վանս 'ի կրօնաւորութիւն ։ Աքսորեաց և զարքեպիսկոպոսն Նովկորոդայ՝, և հրաման ետ եհան բառնալ յեկեղեցեաց զամենայն զպատկերս՝ բաց 'ի պատկերացն Քրիստոսի և Տիրամօրն ։ Դաշնակցեցան ժողովուրդքն ընդ այս գործ Թագաւորին, և կասկած կալան Թէ նա անզգոյշ 'ի բնիկ աղանդ իւր կամիցի դառնալ 'ի լուտերականութիւն. և հաս-

տարակուսեցան 'ի կասկածանս՝ յորժամ տեսին զի և եկեղեցի հռովմայեցւոց կանգնել լուտերականաց մերձ 'ի պալատ իւր, և անձամբ առաջիկայ գտաւ նաւակատեաց նորին:

Այսպէս իսկ և տեսին զի գժտութիւն էր նորա և ընդ ամուսնոյն իւրոյ առաքինւոյն Կատարինեայ, խորշեցան ուծացան 'ի նմանէ, և ասկն եդեալ միաբան Թագաւորելոյն Կատարինեայ: Մանաւանդ զի, և մերձաւորք Կատարինեայ ազդ արարեալ նոցա զուխտ արար ժողովրդեանն, և զմտադրութեան վտանգ նորին իսկ կենաց, հաւանեցուցին զնոսա կանխել զառաջն առնուլ Պետրոսի, որ 'ի մտի եդեալ էր յ30 աւուր յունիսի արգելուլ զամուսինն որդւովն հանդերձ 'ի բերդն Շլիւսէլպուրկայ:

Ասորիք յառաջ իշխանն Օրլով և այլք ոմանք յաւագանւոյն առձեռակարցին հանին զԿատարինէ 'ի Փեթերհոֆայ՝ մինչդեռ Պետրոս էր յՕրանիէնպաւմ, և տարան զնա 'ի ձմերոց պալատացն՝ ուր ընդ յառաջագոյն գիտութեան նոցին Թագաւորեցուցին զԿատարինէ: Անտի անյապաղ փութացան 'ի մայր եկեղեցին Բեթրպուրկայ գիրերայն, ուր և առաջի աւագանւոյն և ուխտի եկեղեցւոյն հռչակեցաւ Կատարինէ 'ի կայսրուհի Ռուսաց, և երդուաւ անարատ պահել զկրօն և զօրէնս պետութեան: Իսկ ընդ այդն ամենեքեան որք միաբանեալ

իրազեկ եղեն պատահելոցն՝ խնդալից սրտիւ երգուածս նմա զերգուածս հաւատարմութեան ։

Յայնժամ Կատարինէ ամենայն ամբոխիւն արամբք իւր հնդետասան հազարաւ զինուց յՕրանիենպաւմ ։ Յաղթնապեաւ Պետրոսի Գ. անաւծնկալ գեղջն՝ առաւքեալ զկոմսն Վորոնցով զի խօսեսցի 'ի հաշտութիւն. այլ Վորոնցով ոչ եւ դարձաւ անդրէն առ նա ։ Գրեաց Պետրոս թուղթ առ Կատարինէ, որով յայտ առնէր թէ ինքն պատրաստ է հրաժարել յինքնակալութենէ եւ մեկնել 'ի Հոլսթէյն. եւ մինչ եւ ընկալեալ նորա զպատասխանին՝ տարածեցաւ համբաւ մահու նորին 'ի յանկարծակուն իմն խթից որովայնի, որպէս ասէին ։

Եւ քանզի չեւ էր պսակեալ 'ի թագաւոր, մարմին նորա ոչ 'ի շիրիմս նախնեացն իւրոց թաղեցաւ, այլ 'ի վանս Աղեքսանդրի Նեւսքեայ ։ Սակայն յետ երեսուն եւ չորից ամաց թագաւորեալ որդւոյ նորին Պօղոսի, եհան զոսկերս հօրն 'ի գերեզմանէն, եւ 'ի մերձայ ատպանին կատարեալ զհանդէս պսակման՝ հաշտեաց եւ մեծաւ փառօք զետեղեաց զնա 'ի կարգս այլոց ինքնակալաց ։

ԿԱՏԱՐԻՆԷ Բ.

ՋՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ առ կուսակիցս Պետրոսի նախկին գործ արարեալ Կատարինեայ, առաջ 'ի վերջ կայս 1762 ամին գնաց 'ի Մոսքուա և պսակեցաւ 'ի կայսրուհի. և անդ 'ի հրապարակել դաւանեաց երեք ընդդէմ նորա՝ զխաղաղ արարած ձեռնարկեալ արարեալ եւս արտաքել 'ի Սիբերիա. այլ զՄիրովիչ զօրաբեւացապարան 'ի մահ դատապարտեաց։

Զայնու ժամանակաւ 'ի մեռանել Օգոստեայ արքային Լեհաց՝ երկու ժողովեցան 'ի խորհուրդ ատեանք նոցին, Գերմանացիք, Բրուսք, Օսմանեանք և Ռուսք արձակեցին զօրս 'ի սահմանս գլուխս Լեհաստանի, զի մի՛ ինչ ազդմուկ յարուցեալ Լեհաց ըստ իւրեանց սովորութեան վրդովեսցեն զխաղաղութիւն հասարակաց. և Կատարինէ յայս արար աւագանւոյն Լեհաց՝ թէ խոր ախտ արար է ընտրել յաթոռն թագաւոր զոք ընկեր լեհ յազգէ։ Նմին իրի որոշեցան յընտրութենէ լեհացիք չորք, Գրանիցցի, Յարտովինաքի, Լիւպոմիրսքի, և Սանախալաւ Փոնեաթոսքի. և ընտրեցաւ վերջինն՝ մանաւանդ գոլով Կատարինեայ, և Թագաւորին Բրուսաց։

Յետ սակաւուց բազմաց յաղագսա-

նուոյն Լեհաց միաբանեցին ընդդէմ ամե-նայն ազգաց այլադաւանեաց գաւառաց 'ի Լեհաստան, զի մի տացի նոցա պատիւ և համարձակութիւն ազատութեան հաւա-սար այլոց Լեհաց. և այնչափ անձնաց խռովութիւնն, մինչև Ստանիսլաւոյ և ծերակուտին յօգնութիւն կոչել զԿատա-րինէ. զի միաբանեալ խռովարարացն ընդ խորհուրդս և զթագաւորն՝ նոքօք համա-գերձ խաղաղեսցին 'ի Լեհս: Այսմ ակներաց Կատարինէ 'ի Լեհաստան արս քառա-սուն հազար, որք ահագին կոտորած հասուցին 'ի վերայ նոցա: Ընդ որ և Գաղ-ղիացիք յօգնութեան ուղղափառ հաւատոյ համարելով զազդմունքն՝ բանիւք և զօրա-ւորս խորհրդոցն զօրապետացն: Իսկ նոքա դիմեցին և առ Թագաւորն Օս-մանեանց սուլթան Մուստաֆա. և նա զի պատճառս խնդրէր պատերազմի ընդ-դէմ Ռուսաց, զօրաժողով եղև մեծա-պատրաստութեամբ յԱդրիանուպօ-լիս, և արձակեաց զՎէզիրն դէպ 'ի Լե-հաստան վեցհարիւր հազար զօրօք:

Յամին 1769 զօրավարքն Կոլիցին էառ պատերազմաւ զամուրն Խօթին. այլ ապա դարձ արար յետս 'ի խնդիր համ-բարուց: Զհետ աւուրց քառասնից միւս անգամ յարձակեալ Կոլիցինայ յ8 սեպտեմբերի բազում կոտորածս հա-սոյց 'ի զօրս Տաճկաց. և 'ի փախչել Ենիչերեացն՝ յառաջ եւս խաղացեալ էառ զԵաշ և զՊուքրէշ, և զխուսափեալս

Մոլտաւիոյ և Վալաքիոյ ձեռնարկեալ ա-րարեալ առաջնորդ 'ի Բեթրապուրկ: եկաց անդ և զօրք քաղաքաց մինչև 'ի Պէնտէր. և թէպէտ զօրք Օսմանեանց նուաղեալ և անհնարինք էին, այլ կռուե-ցին. ոչ կարէին յարձակել 'ի վերայ ա-մուր ամրութ քաղաքացոյն մնացելոց: Յայն-ժամ արձակելոց Կատարինէ ընդդէմ Օսմանեանց զզօրս առաջնորդութեամբ Ռու-միանցովի, և զօրավարին Փանինի, զի վախ-ճան առաջին մարտքն՝ անկն եղեալ առնուլ զամենայն երկիրն որ է 'ի մէջ Տնեստեր և Փրութ գետոց:

Ռումեանցով վաթսուն հազար զօրօք ճակատեալ ընդդէմ բանակին Տաճկաց, յարձակեցոյց երիվարակս 'ի պատանեշա-նօքն զզօրավարին Ռեփնինի և զփոթեմ-կինի, և յետ արիաբար պատերազմի ատին նորա մինչև զչորրորդ կէսօր պատե-րազմին: Եւ Ռումեանցով միացեալ ընդ ձիոց զհետ մնացեալ փախստէից Տաճ-կաց, որք աւելի էին քան զերիս հարիւր և երեսուն հազար, զբազմութ 'ի նոցա-նէ զերատամնս առաւ 'ի Դունաւ, և զմնացեալն հալածեաց մինչև 'ի Հե-ռաստան, և անդ զարձա բաշխեաց 'ի զօրս իւր զաւառ և զճոխութիւն զօրացն Տաճկաց՝ որք ափիւռ տարածեալ ան-կեալ կային զամենայն զճանապարհաւն: Այսպէս եհաս զօրավարն Ռեփնինի զԻզ-մայիլ քաղաքն, և Պանին զԱքքերման և զՔիլի:

Մեծազօրին Ճգնանց պետրոս եղեն զօ-
րավարին փառաւորեալ յաղթել զՊետնակեր
Զի պատերազմեալքն Տաճկիւք և Թաթարք
արքք իւր հնդկաստան հաղորդ՝ յաւ աւհատա
մնոք զզեն՝ կալեալ Ռուսաց զաւատու
հնդկաստան, մինչև հարկեցաւ փառքն
նոր զօրս խնդրել ՚ի Բռուսաստանէ:
Այսպ ՚ի 26 [illegible] անհնարին
[illegible] յարձակեալ Ռուսաց՝ ա-
ռին զՏեշերայն զԳետնակեր, և առաւ հարքն
զամենայն զգաւառքն և յանձինն զարձու-
ցին. այլև ենքեանք կարուսին ՚ի յար-
ձակման անդ [illegible] զօրքն հնդկե-
աստանն հաղորդ:

Ցնա այնորիկ էսառ և զօրավարն Կլե-
պով զՆ[illegible], յորմէ փախուցեալ էր
զօրացն Տաճկաց. և այնուհետև անմի-
նոյն մերձակայ վայրքն [illegible] և-
ղեն ՚ի Ռուսս: Անաք և Օրլով ՚ի նա-
ւամարտ յաղթեաց Օսմանեանց մերձ
՚ի Զմիւռնիա:

Ռուսաց ՚ի քաղաքաց հեռաւ [illegible] ընդ երկայն
՚ի ցամաքս կղզին Խրիմեան, զայն ժամա-
նակ [illegible] համարեցաւ յերկրամա
ձգել զանեղին, որով դիւրանայր նոցա
նաւարկել ընդ Պոնտոս: Այսուա-
քեցաւ անդր իշխանն Տոլկորուքի զօրօք
բազմօք, և մարտուցեալ ընդ Թաթարս՝
էառ նախ զՕրն, և ապա զԽապատուն և
զԿէօզլեւ: Անաք գնաց ՚ի Քէֆէ,
ուր ամփոփեալ էր մեծ մասն Թաթա-
րաց, և երկառան հաղորդ զօրօք պաշա-

պատնէին քաղաքին։ Ռուսք 'ի 29 յունիսի ամին 1772 յարձակեալ խմբովք առին զքաղաքն, զզինուորականսն կոտորեցին, զզօրսն գերին վարեցին, և զՀայս բնակիչսն առաւել 1200 վարեցին 'ի Ռուսաստան. որք յետ ամաց ինչ գտեալ արտօրեալ մեծաւ մնացեալքն 'ի Խրիմ ափուեցան յայլ և այլ քաղաքաց կողմունս։

Այսպէս առին պատերազմաւ և զԱքեր-մանն, և կողոպտեցին զայն։ Իսկ Կերչ և Ենի գալէ ինքնին անձնատուր եղեն Ռուսաց։

Յայնժամ Սէլիմ գերէյ խանն Խրիմու առաքեալ առ Ռուսս սպաս առաջս միջնորդս՝ աղաչեաց 'ի հաշտութիւն, խոստանալով յանձնառուեալ հպատակել Ռուսաց, և ըստ կամս նոցա վարել զաշխարհն՝ հատանել 'ի բաց զամենայն հաղորդակցութիւն ընդ Օսմանցիս։ Այլ Սէլիմ խանն վաղ նենգեալ երդմանցն՝ փախեաւ յերկիրն Տաճկաց. և Տոլկորուքի կարգեաց փոխանակ նորա զՇահին գերէյ խանն։

Բովանդակեալ զետ ևս 'ի Մոլտաւիա զօրավ բանակաւ պատերազմունս մղեաց ընդ Օսմանեանս, որոց յերկար լինէր ձմեռել. մինչև հասեալ ութերորդ յամին 1774 հինգերորդ անգամ անցեալ ընդ Դանուբ՝ ըստ բաղձանաց առաջարկէ զխաղաղութեանն՝ առնել և զՉուաշխ. և խոնարհեցան Օսմանեանք 'ի սկզբան Թագաւորութեան սուլթան Համիտի խնդրել

զհաշտութիւն ըստ պայմանացն զոր պահանջէին Ռուսք, և հաստատեցան զաշինքն 'ի Գայնարճէ գիւղ առ Սիլիստրիա: Եւ էին գլխաւոր պայմանքն՝ ազատ մնալ խանին Խրիմու 'ի ներքուստ ձեռին Օսմանեանց, և ունել Ռուսաց զԿերչ, և զԵնի գալէ, և զամենայն զերկիրն մինչև յԱզով:

Մեծաշուք յոյժ եղև հանդէս յաղթանակին Ռումեանցովայ 'ի Բեթերպուրգ, և պատուեցաւ նա Զադունայեցի կոչմամբ՝ սակս անցից նորա անդր քան զԴանուբ: Նոյնպէս և զայլս 'ի զօրավարացն մեծապարգևս մեծարեաց Կայսրուհին, և զօրացն դարձեալ բազմապատիկ պարգևս բաշխեաց:

Ի ժամանակին յորում անդուլ պատերազմ էր Ռուսաց ընդ Օսմանեանս՝ կրկին դէպք նշանաւորք պատահեցին 'ի ծագս սահմանացն Ռուսիոյ: Առաջինն՝ զի չորեքհարիւր հազար խալմուխք անցին գնացին յերկրէն Ռուսաց 'ի Չինս, և չեն յայտ պատճառքն: Երկրորդ, զի խաբեբայք հինգ՝ մի զմիոյ կնի 'ի վեր ելեալ 'ի մէջ Տոնայի Խազախաց և այլոց, տային զանձինս թէ Պետրոս իցեն այրն Կայսրուհւոյն, և աղմկեցին զաշխարհն. չորք 'ի նոցանէ յոչինչ եղեն՝ պատուհասեալք և փախուցեալք. այլ հինգերորդն ոչ սակաւ սասանեցոյց զՌուսիա:

Զօրականն էր սա խազախ՝ Փուհաչեւ

անուն, փախուցեալ 'ի բանակէն Գեն_տերայ 'ի Լեհս. անտի գնացեալ յՈւ_րալեան լերինս հաւանեցոյց զխազախս տեղւոյն թէ ինքն Պետրոս Գ. է Թագա_ւոր Ռուսաց, և զիւրև ածեալ առս շա_րեքատասան հազար՝ խաղաց պաշարեաց նոքօք զՃայիք քաղաք, և որ ըստ օրէ բազմանային զօրք նորա: Կեղծէր զնա_րեպաշտութիւն միոյ առաջին զօրացն, և ասէր թէ ոչ այլ ինչ կամիմ ես, բայց նստուցանել յաթոռ թագաւորութեան զորդին իմ զՊօղոս, և միաբանեցանն:

Կատարինէ առ 'ի զսաստել ամենայն շա_րեացն՝ հրովարտակ տուեալ՝ յայտ առնե_լով զխարդախութիւն նենգաւորին, և միան_գամայն առաքեաց ընդդէմ նորա զզօ_րավարն Բիպիքով: Անտի և Փուհաչեվ հրատարակեաց հրովարտակ մի յանուն Պետրոսի երրորդի, և պատահեալ մար_տիւ Բիպիքովայ և այլոց զօրավարաց՝ էր զի յաղթեցաւ, և էր զի յաղթեաց, մինչև եհաս 'ի վերայ նորա Փանինն, և ընդ նմա Միքէլսոն. և երկոքին սոքա երկուստեք հալածեալ փախուցին զՓու_հաչեվ մինչև յայնկոյս Վոլկայի, և սա_կաւաւոր ընկերքն Փուհաչեվայ յուսա_հատեալ ետուն զնա 'ի ձեռս Ռուսաց: Յամին 1774 'ի նոյեմբերի ածաւ Փու_հաչեվ 'ի Մոսքուա, և գլխատեալ՝ ա_պա անդամ անդամ յօշեցաւ, և հինգե_քին ընկերք նորա գլխաւորք աքսորեցան 'ի Սիպիր:

Յետ այնորիկ քանդեցաւ և հաշակալոր բանակ միաբանութեն Զափորոժացի խազախաց , փոխանակ զի չկամեցան տալ զօրացն Ռուսաց արշաւելոց 'ի Խրիմ հանգիստս և երեկարս , և համարեցան ձեռնտուք 'ի Թշնամիսն Ռուսաց :

Յամին 1775 Կատարինէ կին ած Պօղոսի զդուստր Լանտկրաւայ Հասսիա Տարմշթատ նահանգի . այլ 'ի մեռանել այնր օրիորդի ապաժամ մահուամբ՝ ընտրեցաւ իշխանուհին Վիւրթէմպէրկայ Սոֆիա . և Պօղոս ուղեւորեցաւ ընդ Բռանտենպուրգեայ 'ի Պէռլին , զի խօսեսցի զՍոֆիա իւր 'ի կին : Մեծապէս պատուասիրեաց Ֆրեդերիկոս արքայ զՊօղոս, և տուեալ նմա զօրհորդն՝ դարձոյց շքով մեծաւ 'ի Բեթրպուրգ : Ընդ կատարեցան հարսանիքն փառաւորապէս հանդիսիւ քան զառաջինն , և Սոֆիայն կոչեցաւ Մարիամ Թէոդորովնա :

Սակայն տակաւ յաճախութիւք ուրախութեանց և հանդիսից հաշակելոց 'ի Բեթրպուրգ ոչ ինչ կասեցուցին զԿատարինէ 'ի փութոյ կարեւոր խնամոց պետութեան : Ուշ եդ բարգաւաճելոյ վաճառականութեան Ռուսաց ընդ Չինս . և 'ի գիւրացուցանել և եռ զվաճառաշահութիւն ընդ Պարսս՝ արձակեաց զՎօյնովիչ կոմս զօրօք հանդերձ 'ի Դարպէնդ . և նա գիւրաւ նուաճեալ զամենայն զարեւմտեայս Կասպից ծովուն՝ յամին 1779 էառ և զԴարբանդ և զամենայն

դաւաճանն զորս դարձուցեալ էր Մննոյէ առ Թահմազ:

Տեսեալ Հերակլի արքային Վրաց ըզ-տիրապետել Ռուսաց մինչև մերձ 'ի սահմանս իւրոյ աշխարհին, օտարացաւ 'ի թագաւորէն Օսմանեանց, և զհարկն զոր հարկէր նմա՝ դարձոյց առ Ռուսս, և եմուտ ընդ հովանաւորութեամբ նոցին:

Գիտաց Կատարինէ յօգուտ 'ի ներ-արկանել և զերկրակալութիւն առ Խրի-մու, և կառոյց զքաղաքն Քերսոն, զի լինիցի համբարանոց վաճառականութե(ան) Ռուսաց ընդ արևելեայս: Օսմանեանք այլ 'ի վաղուց տարջացեալ էին ընդ պայ-մանս ուխտին հաստատելոյ 'ի Գայնար-ճըգ՝ առաքեցին 'ի Խրիմ զնոր խան Տէվլէթ քէրէյ անուն. այլ Ռուսք ա-ճապարեցին ձեռն տալ Շահին քէրէյ-ոյ ընկել խանէն Խրիմու, և Տէվլէթ փախստական դարձ արար 'ի Կոստան-դնուպօլիս: Փոքր միւս ևս և մերձաւորն յուզէր պատերազմն Ռուսաց ընդ Օս-մանեանս, այլ միջնորդութ(եամբ) դեսպա-նին Գաղղիոյ դարձեալ հաստատեցաւ և մեկն ևս վճռեցաւ ուխտ բարեկամու-թեան առաջնոյ:

Սակայն Շահին քէրէյ, ցանդ. անձնա-դողդ գոլով յերեսաց Տաճկաց, հուսկ ուրեմն խորհեցաւ տալ զիշխանութիւն իւր բոլորովին 'ի ձեռս Կատարինեայ. և նա որ յայն սակս իսկ աղագաւ կացոյ-ցեալ էր զԽրիմ և զփոքր Թաթարս 'ի

ներքուստ ձեռին Օսմանեանց՝ վաւերա-ցաւ հաստատեալ գրովն առանձին յայտ-արարութեամբ 18 ապրիլի ամին 1783, որով մնաց հանդարտեցաւ և խաղաղ երկիրն Ռուսիոյ. և իշխանն Փոթեմքին էառ յամենայն Թաթարաց կողմանցն զեր-դումն հաւատարմութեան առ կայսրուհին:

Մտաւանեցան Տաճիկք ընդ իրսն, և ձայն եւտուն մարտի անհնարին սրտմտու-թք. Ընդվզայր Տաճիկք և դեսպանն Գաղ-ղիոյ խաղաղել ջանար. որ և միջնորդ կացեալ առ Կայսրուհին զՅովսէփ Բ կայսր Գերմանացւոց. այլ նա կապեալ էր միաբանութք ընդ Կայսրուհւոյ: Ապա 'ի վերջէ առաջնոյն Աստրախանեան լինելոց և եթող Կայսրուհեաց տիրանալ խաղա-ղութք յաշխարհահակաւղութիւն իւր:

Այլ յաղթողեաց բախտն Կայսրու-հեաց և ես, զի ոչ միայն հերքել ար-քայն Վրաց, այլ և այլք յոլովք ինքնա-գլուխ իշխանք ընդարձակ հողմայն կովկասու հարկատու եղեն Ռուսաց, և խնդրեցին զպաշտպանութիւն նոցա:

Մինչդեռ այսպէս և այսպիսի աշ-խարհակալութք գերածայրեալ էր աւե-տութիւնն Ռուսաց առ Կայսրուհին, ոչ այլ ինչ պակասէր փառաց նորա՝ բայց զի և մեծ քահանայապետն Հռով-մայ Պիոս Զ միաբանեալ ընդ այլ պետս աշխարհի խնդրակից լինիցի նմա: Վասն որոյ պատճառս կալեալ յընդունելու-թէ անուն զոր եցոյց Կայսրուհին Ցիսու-

ընտանեացն բարձելոց յԵւրոպա, եւ կարգեաց զնոսա գաւառապետս մանկանց ուղղափառաց, առաքեաց պապն առ նոսա 'ի գիտնոց իւրոց նուիրակ զհուշակաւորն Ասքեթթի: Կատարինէ ըստ խնդրոյ քահանայապետին ձեռնհեաց ուղղափառաց զեկեղեցի մի 'ի Պետերպուրկ, եւ ետ ուղղափառ եպիսկոպոսութեան յաւել յարքեպիսկոպոսն Մոհիլեվայ, եւ կարգեաց մետրապոլիտ զոմն վասն ամենայն նահանգաց պետութեան ընդ Ասիա եւ ընդ Եւրոպա, եւ զայլ ումն եպիսկոպոս ուղղափառ յայն 'ի Փոլոցք:

Այլ յընդարձակածաւալ աշխարհաց ոչ ընդ երկար լուեն պատերազմունք: Վասն որոյ ընդ այն աւուրս եւ Օսմանեանք գժտութեալք ընդ անցանել Վրաց եւ Կովկասայնոց առ Ռուսս՝ ձեռն արկին 'ի մարտ կազմաւել ընդ նոսա 'ի սահմանսն յայնկոյս: Զայն զգացեալ Կատարինեայ՝ առաք զօրս 'ի գաւառն Օսմանեանց՝ բաց յայլոց պայմանաց առանձնել եւ զպաշարուածս Լեզկեաց եւ Աղուանիցն 'ի Վիրս, եւ զիտել ասաւագիս. զի Վիրք բաղդորոշին ընդ տէրութեամբ անկեալ էին Ռուսաց: Օսմանեանք եւսան պատասխանեն թէ Լեզգիք եւ Աղուանք իշխանագլուխք են, եւ ոչ հնազանդեալ Տաճկաց. իսկ աշխարհն Վրաց 'ի սկզբանէ հետէ անկանէր ընդ իշխանութեամբ դրանն մեծի, եւ ոչ երբէք ընդ տէրութեամբ Ռուսաց:

Յայսց պատճառանաց, և 'ի գրգռութեանց Անգղիացւոց Տաճիկք պատրաստէին 'ի պատերազմ՝ յորժամ Կատարինէ չու֊եաց մեծաշուք ուղևորութեամբ 'ի Խրիմ, ուր իշխանն Փոթեմքին բազմապատիկ խնճոյիւք և յաղթական կամարօք մե֊ծարեաց զնա:

Ի գալստենէն Կատարինեայ 'ի Խրիմ առաւել ևս հաստատեցան Տաճիկքն թէ նորա միտք են խաղալ յառաջ մին֊չև 'ի Կոստանդնուպօլիս, և զերկրորդ թոռն իւր զԿոստանդին կարգել յա֊թոռն Բիւզանդիոյ, որպէս համբաւէր: Կայսրուհւոյն ընդ այլ միտս էին յոր֊ժամ դարձ առնոր 'ի Մոսքուա. սա֊կայն Տաճիկք արգելեալ զդեսպանն Ռուսաց յԵտի գուլէ՝ յայտ արարին զպատերազմն:

Յամին 1787 յարձակեցան Օսմա֊նեանք 'ի Գիլպուրուն, այլ Սուվորով վանեաց զնոսա անհատ սաստիկ հարուա֊ծովք: Հասին այլ զօրք եօթանասուն հազար 'ի միւս կողմանէ՝ որոց զօրավա֊րէր Փոթեմքին իշխան, և խորտակեալ նախ զԹաթարս Կուպանայ, մարտ ե֊դին ընդ Տաճիկս, և բազում մարդիկ կորուսեալ՝ հուսկ ուրեմն եկին պաշա֊րեցին զամրոցն Օզու:

Յառաջնում աւուր անդ յուլիսի հասին և 'ի ծովէ նաւք Ռուսաց. և մինչդեռ նոքա մարտնչէին ընդ նաւա֊տորմին Տաճկաց, յարձակեցաւ 'ի վե֊

րայ քաղաքացին և 'ի ցամաք կուսէ Փոթեմքին, և առ զգաստանեցան: Այլ Հասան փաշայ ծովակալն ոչ կամեցեալ երկրորդ անգամ մարտնչել, խոյս ետ նաւուքն 'ի Կոստանդնուպոլիս. և Փոթեմքին պաշարէր պաշարմամբ նեղութեան զբերդաւն Օզուի:

Իբրև հաս 'ի վերայ ձմեռան սաստկասառոյց, թէպէտ Ռուսք ոչ ինչ կարէին նեղել 'ի ցրտոյն, 'ի սառն երկրի բնակեալք, այլ զի հանապազօրն պատկառեալ էին՝ Փոթեմքին եդ 'ի միտ անդադար յարձակմամբ առնուլ զքաղաքն: Սակայն տեսեալ զամրութիւն քաղաքին, և զպաշարելոցն անհեղ պատրաստութիւն և զիւրոյն նուաղութիւն՝ ոչ վստահացաւ. զի Օզուցիք աւելի էին քան զքառասուն հազար, ուր Ռուսք չորեքտասան հազար ևեթ մնացեալ էին:

Ձեռն էարկ յայլ ինչ հնարս, և ազդ արար 'ի քաղաքն՝ թէ չեն իւր կամք պատերազմել 'ի ցրտոյց ժամանակին, վասն որոյ մեկնի յաշխարհ իւր. այլ պատրաստ կացցեն 'ի գալ գարնանայնոյն զոհ լինել պատուհասութեան զօրաց իւրոց, զի անշուշտ առնից ես. ասէ, զքաղաքդ. և հարեալ զթմբուկսն մեկնեցաւ անտի: Զայն տեսեալ պաշարելոցն՝ խնդացին յոյժ, և մինչդեռ անհոգացեալ թմբրեալ առ հասարակ խոր 'ի քուն նինջէին՝ Փոթեմքին ընդ այլ ուղի ած գիշերայն զզօրս իւր դարձեալ ընդ բեր-

դաւ քաղաքին. և յ17 դեկտեմբերի յաւուր տօնի սրբոյն Նիկողայոսի պաշտա- պանի Թագաւորութեան Ռուսաց՝ երեք բանակին քաղաքեր կարգաց առ զօրն՝ թէ որ ոք մեռանիցի յայսմ աւուր 'ի սէր իւրոյ Թագաւորին՝ սուրբն Նիկո- ղայոս ահա տարածեալ պտերկս իւր կոյ յերկինս ընդունել զնա առ իւր։

Խրախուսեցին զօրքն և 'ի բանէն. և 'ի մէջ աւուրս բաժանեալ՝ զզօրավարսն փակեալ զինեաց 'ի պատանէշն որ 'ի մէ- րայ լեռին կողմին, փախմեծութեամբ յարձա- կեցաւ 'ի խորտակել զպլոտնան. ընդդա- պետսն Փիլաթով մարտ եդ ընդ Ալպա- նիացիս որ 'ի վերայ միսին մեծի պահ- ուէին, և զօրավարքն Անհալթ և Ցոլ- կորուքի անցեալ ընդ մին 'ի դրանց քա- ղաքին՝ և ոչ ինչ միտ եդեալ դիմակա- ցութեան պաշտպանելոցն՝ հասին հասին մին- չև յաշտարանին Հասանայ փաշա դուլեսի, և առին զայն, և խուժեցան 'ի քաղաքն ընդ ամենայն զօրունս նորա։

Յայնժամ քաղաքացիքն 'ի տանց իւ- րեանց հրացէնս արձակեալ 'ի վերայ Ռուսաց 'ի հարուածս սաստիկս հար- կանէին զնոսա, մինչև մեռան և խո- քեանք ընդ փլատակօք տանցն, զի 'ի ծա- ղկաղէն կուսէ անզգագոյ ամբարձեալ լի- նէին Ռուսք 'ի քաղաքն։ Ի հինգ ժամս- կենէն առաւ քաղաքն, որպէս հաւաս- տեաց փոթեմբերին. և զի հրաման էր յաւուրն առնուլ զայն, այնչափ Ծոխա-

ցան լցեալ առատութ Բիւզանդ՝ մինչև զմի ամիս Վաղենտեանոսի փոխեցին ընդ երկուց թագաւորաց։ Թագաւոր կատարած եղև և ՚ի Բրուսա. երկու զօրավարք անկան, և չխառն և խնն աղայք, և մեց հազար զօրականք ընդ մեռեալ և ընդ վիրաւոր։

Չև վայելեալ կատարածից յարգարիս մեծի յաղթութեանն՝ հարկեցաւ կոչել առ ՚ի զօրացն զկանչեցելոց ընդ դէմ Տաճկաց, և արձակել զնոսա ՚ի վերայ Կուսպասուսի աշխարհին Հոնաց, որ մեծաւ զօրութ ընդ ծով և ընդ ցամաք խաղացեալ գային ՚ի վերայ Բեթրդացւոց-կոյ՝ առնելով զքաղաքս Փիւնիկեցւոց։ Եւ զի զաշնակից էր նա թագաւորին Օսմանեանց՝ պատահեցէր ՚ի կատարածից խաղաղութեան առնել ընդ գրգոն, և զխորհ Թագուհւոյ խիզճնագլուխ։

Թագաւորն կատարածք եղեն երկուսանեք յայլ և այլ խառնուրդս մարդոց. և զաւաղծին յաղթութեան էին Հայոց. այլ յետոյ ուրերն ՚ի պատերազմի մասնեկաց՝ ՚ի հաշտութիւն խոնարհեցան, և շատուցան պատգամաւորք առաջինոց զաշխարհն։

Անդի և Բուլղար և Գերմանացիք առնոցին ՚ի Տաճկաց զքաղաքս Վալաքիոյ, և որ բնաւ զոր յառաջ խաղային. այլ կարի թագաւորեալ Սուլթան Սէլիմ Գ., և Գերմանացւոց Լէոպոլտ Բ., դուլ եղև զինուց, և ստ զաղձոյց առ Օսմանեանս զԳերմանիան և զայլ քաղաքս զորս կալեալ էր։

Իսկ զօրք Կատարինեայ առաւճնոր-դութեամբ զօրավարացն Ուշագովայ, Հել-մանեայ և փոխթեւակիներեայ առին զամենայն երկիրս առ Դանուբաւ և զնորին Քիլին, և փոխթեւակին պաշարեաց զԻսմայիլ։ Յետ յերկար պատերազմաց Սուվորով յաղ-թահեալ եմուտ 'ի քաղաքն ընդ գէզա-գէզ դիմադրութեան անկելոց 'ի նմա. և սպանեաց մարդոն այլ եւս երկու աւուրս. և ճապաղաղիք արեան վաճառօրէն խաղա-ցեալ ընդ փողոցս քաղաքին՝ հարկա-նէին մինչև 'ի ծունկս յաղթականացն։ Յայնժամ մարտիւ անկան 'ի Ռուսաց այլ երկոտասան հազար, և 'ի Տաճկաց առ-աւել քան զքսան և վեց հազար։ Նոյ-նպէս մեծաշուք վերջնոյն զօրավարն ըմբոլ յաղթանակեցաւ 'ի մերոյ Ռուսաց, այլ 'ի մանաւանդ խոյոցն և իւրքն կառավարեցաւ։

Ի նմին ժամանակի և զօրավարն Կու-դովիչ խորտակեալ զԹաթարս Կուպա-նայ և զԿովկասեանսն՝ խաղաց մինչև յԱ-նափա և էառ զայն։

Այսպէս յամին 1791 փոխթեւակին 'ի գնալն 'ի Բեթրպուրկ մեռաւ զճանապարհայն, և փոխանակ նորա առաքեալ կոմսն Պէզպորոդկոյ՝ զինքն խօսել ընդ Օսման-եանս զհաշտութիւն 'ի 11 յունուարի յամին 1792 'ի քաղաքն Եաշ. և պայ-մանիք ուխտին եղեն, զի մնասցէ Օզու 'ի ձեռս Ռուսաց, և հաստատեսցէ կայ-ցեն պայմանքն հաստատեալք 'ի Կայ-նարճի, և Թագաւորն Օսմանեանց

հաստատեցէ Ռուսաց երկոտասան միլիոն զահճեկանս, և մի ևս խառնեսցի երբէք յերբ աշխարհէին Լեհաց: Եւ յետ ձեռնադրելոյ Թղթի դաշանցն՝ Պետերբուրգեի յայս տարր վերջերին՝ թէ կայսրուհին շնորհէ նմա զպայմանեան արծաթն:

Ընդ այն ժամանակս առաջեան Սէյիմ խոստացեալ էր Լեհաց տալ քաղաքաւն հազար, եթէ և նոքա յանձն առցեն առաքել առ նա զօրս քան հազար ընդդէմ Ռուսաց: Յայս ամս փութացեալ կատարէինեալ 'ի հաշտութիւն՝ միջնորդեա զօրք խաբ ոչինչ ուժգնութեան հազար գանայնին գալոյն փութանակի և միջն էին 'ի սահմանս Լեհաց, պատուէր առաքեաց առ առաջնորդն Լեհաց՝ յետս կալ 'ի խորհրդոյն զոր հաստատեալ եդեալ էին 'ի մտի. այսպիսեաւ էր նոր խին օրէնս՝ կարգել՝ զի և խորհրդեանց թագաւորք որդի 'ի հօրէ առցեն զաթոռն: Եւ յանդգնեմ կալ Լեհաց և 'ի խնդրախնել 'ի պատերազմ, հրաման ետ կատարելոց զօրացն գաղձելոց՝ յարձակել 'ի Լեհս:

Բազում քաղաքութիւնս չուեցին Լեհք յայնժամ պատերազմի՝ որ եղև յՈւքրանիա և 'ի Լիթուանիա զօրավարութեամբ Յովսեփայ Փոնեաթովսքի եղբօրորդւոյ արքային, և հռչակաւորին Թադէոսի Քոշիուշքոյ. այլ Ռուսք յաղթահարեցին քան զԼեհս՝ առն առն յառաջ խաղային, մինչև եկին հասին 'ի Վարշաւ քաղաք,

ուր վարանեալ մնայր Ստանիսլաւ արքայ սակաւ զօրօք: Նա ահա եհաս առնա գիր 'ի Կատարինեայ՝ թէ որ զինչ պահանջեմ ես 'ի քումմէ աւագանւոյդ՝ խորհրդով և միաբանութ.ի Թագաւորացն Գերմանիոյ և Բրուսիոյ է այն ամենայն:

Յայնժամ Ստանիսլաւ անձնատրեաց դուլ առնել զինուց, և ունայնացոյց զօրէնս յաղթողութեան նոցա. հաստատելոյ յաւագանւոյն: Որոյք սիրեցան ընդ ամենայն քաղաքս Լեհաց, և Լեհք նուիրակս առաքեալ առ կայսրուհին՝ աղաչեցին զնա ընդունել զԼեհաստան դարձեալ ընդ իւրով հովանաւորութ.ն որպէս կանխաւ, և անդրդուելի լինել:

Յետ սակաւ ժամանակի մինչ դեռ եւս խռովութիւն թաղուէր 'ի Լեհաց ընդ եղեալսն, Քոշուայքոյ որ մեկնեալ էր 'ի Լիփսիա ընդ ոմանս յիւրոց համախոհից, եւ համբաւել ընդ Լեհաստան՝ թէ դրամս բազումս առեալ իւր 'ի Գաղղիացւոց՝ գայ ազատել զԼեհս 'ի ծառայութէ Թագաւորի, և ազատութի շնորհել ամենայն գիւղականաց և ծառայից: Այնգէն վաղվաղակի 'ի վեր երևեցան հարիւր հազար գիւղականք ապստամբեալք յամենայն կողմանց. և Քոշուայքոյ նոքօք հանդերձ և այլովք բազմօք մտեալ նախ 'ի Քրաքով անց անէր 'ի Վարշաւ. ուր աղմուկ անհնարին յուզեալ՝ ընդ ժամս երեսուն և չորս

եղև մարտ սաստիկ , և կոտորեցան բաց յերկուց հազարս Ռուսաց գրեթէ ամենայն ռաւագորդեարն Լեհաց՝ որք հաւանեալն էին ընդ պահանջմանս Կատարինեայ :

Մինչ այս մինչ այն , և ահա Ռուսք և Բրուսք և Գերմանացիք հեղեղեցին ամենայն ուստեք յաշխարհն Լեհաց , հարին ցրուեցին զժողովեալսն առ Քաշուպքայ , և զնա ձերբակալ արարին :

Դարձեալ զօրաժողով եղեն Լեհք 'ի Բրակա մերձ 'ի Վարշաւ , և մարտընչէին ընդ Ռուսս . այլ առքա առաջնորդութե քաջին Սուվորովայ ժամս վեց անհնարին պնդութե մարտ եղեալ՝ առին զաւանն , և հարին 'ի Լեհաց աւրս քսան և երիս հազարս ընդ մեռեալ և ընդ վիրաւոր :

Ստանիսլաւ որ փախուցեալ մեկնեալ էր յաշխարհէն՝ առաքեաց առ Կատարինէ մուրհակ հանդիսական , որով տայր 'ի ձեռս նորա զթագն իւր մինչև 'ի սպառ . և ինքն եւս գնաց 'ի Բեթըրպուրկ : Յայնժամ և երկքին պետութիւքն բաժանեցան յիւրեանս զԼեհաստան մինչև ցայսօր :

Յետ այնորիկ էառ Կատարինէ և զՔուրլանտիա և զՍեմիկալլիա , և կացոյց զնոսին նահանգս Ռուսիոյ : Ընդ և զօրավար նորա Զուպով էառ զԴարբանդ , և սկսաւ յառաջ խաղալ 'ի վերայ Պարսից՝ որք նեղէին զՀերակլ :

Իսկ Կատարինէ մինչդեռ ակն ունէր այլոց ևս յաղթանակաց՝ յանկարծամահ եղև գիշերայն 'ի կաթուածէ 'ի 15 աւուր նոյեմբերի յամին 1796, ամաց լեալ վաթսուն և եօթանց, և թագաւորեալ ամս երեսուն և չորս իբրև զմիւս ոմն Շամիրամ:

Ցայլ իմն կերպարանս փոխեցաւ Ռուսիա առ նորա թագաւորութեամբ, եթէ 'ի քաղաքապատիկ աշխարհակալութեացն, և եթէ յիմաստուն տնտեսութեան ըստ ամենայն գլխոց, և զարմացաւ ամենայն Եւրոպա ընդ ճոխ պերճութիւն արքունեացն Բեթրպուրկայ և ընդ անբաւութիւն աշխարհացն զորս կալան Ռուսք 'ի տասն վերջին ամս Կատարինեայ:

Մինչև 'ի ժամանակս խռովութեան Գաղղիոյ՝ վայելեցին և ճարտարք եւրոպացիք 'ի բարձս պատուոյ և 'ի շահս օգտի յաշխարհին Ռուսաց. այլ անտի և այսր փոխեցաւ իմն ընդդէմ նոցա Ռուսիա: Սակայն և գիտունք ոչ այնչափ զարգացան առ նովաւ որչափ ակնունելի էր. և վասն պատերազմաց յաճախութեան անկատար մնացին յոլով շինութիւնք՝ զորս սկսեալ էր նորա, ևս և մատեանն օրինաց զոր յօրինէր:

Արժանի յիշատակաց գիւտք եղեն առ նովաւ յաւերակս Ասիայիք քաղաքի 'ի գաւառն Սիպիրիայ առ Իրթիշ գետով, զի գտան մեծամեծ գարանք հազարաւոր ձեռագիր մատենից յանձա-

նօթ բարբառ և .'ի լեզուս Չինաց, խաղմուխից, և Մանչու Թաթարաց, և պահին ցարդ 'ի գրատունս Ճեմարանին։

ՊՕՂՈՍ

ԶԱՄԵՆԱՅՆ ժամանակս Թագաւորութեան Կատարինեայ կեցեալ Պօղոսի 'ի Կաչինա, ուր զբօսնոյր գնդաւ միով զօրականաց՝ զորս զգեցուցեալ էր 'ի ձև Բրուսացի, երբև անց բազմեցաւ յաթոռ մօրն իւրոյ՝ նախկին գործ արար յետս կոչել զզօրսն տարեալս 'ի Կատարինեայ 'ի Պարսս։ Զի նոքա անտափորձք օդոյ և բերոց կողմանցն այնոցիկ՝ յախտս մահու անկեալ կոտորէին օր ըստ օրէ, և 'ի հարիւր հազար զօրաց հազիւ թէ հնգետասան հազարք եկին ապրեցան 'ի Ռուսիա։

Պետութիւնք Եւրոպայ բազում անգամ յորդորեալ զԿատարինէ, և համանեցուցեալ էին զնա առաքել յամին 1795 տորմիղ մի ութուտասան նաւուց յօգնութիւն Անգղիացւոց ընդդէմ Գաղղիոյ։ Եւ Պօղոս որ ատեայր զԳաղղիացիս ժամանակին՝ ոչ միայն որպէս Թագաւոր, այլ և որպէս այր խոհական՝ որ զզուէր 'ի թեթևամիտ նորաձևութեանց, եդ 'ի մտի միաբանել ընդ Թշնամիս Գաղղիոյ երբև պաշտպան ասպետութեան

Մելիտեայ և քահանայապետին Հռոմայ, և Նիզակակից Թագաւորին Օսմանեանց. և պատուէր ետ զօրացն Լեհաստանի չուել 'ի Գաղղիա կայս ընդ զօրավարութեամբ Ռոզէմպերկայ կոմսին: Այլ նա ոչ այնչափ յաջողակ թուէր 'ի գործն որպէս քաջն Սուվորով, որ բազում անգամ աղաչեալ էր զԿատարինէ և զՊօղոս՝ զի թոյլ տացեն լինելոյ երթալ և ընդ Փարէզ անցուցանել զանդեալն Օղոսի և Բրանկայ: Բայց Կատարինէ վաղ մեռաւ, և Պօղոս զառաջինն ընդ ակամբ հայէր ընդ քաջ զօրավարն. սակայն 'ի վերջէ կարգեաց զնա մարաջախտ մեծ, և արձակեաց յԻտալիա փոխանակ Ռոզէմպերկայ:

Մինչդեռ Քռայ զօրավար Գերմանացւոց խորտակեալ էր զԳաղղիացիս 'ի Վերոնա, Սուվորով եմուտ 'ի Միլան իւրովքն, և գերմանացի զօրօք, և անցեալ անց 'ի Պադոս գետ: Անդ յայնկոյս գետոյն հարկեցաւ զօրավարն Գաղղիացւոց Մոռօ ճակատ յարդարել ընդդէմ եօթանասուն հազար զօրաց՝ երկոտասան հազար Գաղղիացւովք. և երկիցս յաղթեալ՝ յերրորդումն 'ի պարտութիւն մատնեցաւ, և խոյս ետ 'ի տեղի մի ամուր, մինչև եհաս և Մաքտոնալ իւրովքն 'ի Նէապօլսոյ. այլ և նա ոչ տեւեալ առաջի ամբոխին Սուվորովայ՝ 'ի փախուստ դարձաւ:

Ապա եկն ընդդէմ Ռուսաց Ժուպէռ

զօրավար, և 'ի խառնուրդս մարտին մինչ դեռ քաջալալէս կռուէր, հարեալ 'ի հրացանաց մեռաւ անդէն, և պատեցան Գաղղիացիք:

Եհաս 'ի Ռուսիայ նոր զօրք ընդ նոյն աւուրս և Քօրզաքօվ մինչև 'ի Զուիցցերի: Ընդ առաջ եղև նմա Մասսէնա զօրավար Գաղղիացւոց, և եղև անդ մարտ սաստիկ յոյժ, յորում անհնարին հարուածս ընկալան Ռուսք՝ այն առաջին անգամ յայնմ դարու 'ի պարտութեն մատնեալք. և 'ի փախչել անդր թերևս 'ի սպառ խորտակէին՝ թէ չէր Մասսէնայ երկուցեալ 'ի գալստենէն Սուվորովայ:

Զի ծերունին այն զօրավար այնպէս իմն երագէր ձեպէր յընթացսն ընդ ձիւնապատ լերինս Զուիցցերաց, զի գունդք գունդք Գաղղիացւոց զիւրեալք զՃանապարհայն՝ և անգամ զդէմ ունել արշաւանին ոչ իշխէին: Եւ իբրև իւրքն պարտասեալք 'ի սովոյ և 'ի ցրտոյ և յաշխատութենէ ճանապարհին՝ ոչ ևս կամէին յառաջ խաղալ, Սուվորով ետ պեղել փոս մի 'ի վերայ ճանապարհին, և ինքն տարածեալ անձամբն 'ի նմա գոչէր. « Ծածկեցէք զիս ընդ հողովս. և թողջիք աստ զզօրավար ձեր. չէք դուք իմ որդիք, և ոչ ես հայր իմ ձեր, թոյլ տուք ինձ աստէն մեռանել»: Խիզախեցին զօրականքն, և յարուցեալ զնա՝ խիզախոյս կարգացին ելանել 'ի կա-

տալ լերինն և հալածել անտի զԳաղ-ղիացիս, որպէս և արարին իսկ։ Այլ Սուվորով առեալ զլուր միանգամ և երկիցս պարտելոյն Քորսաքովայ, և զԳերմանացւոցն նիզակակցաց՝ լքանել զքանակն Ռուսաց, դարձ առնէր և ինքն և մեկնեցաւ յաշխարհ իւր։

Զայս ամենայն իբրև զգաց Պօղոս, ցասուցեալ ընդ վատութիւն նիզակակից զօրավարացն՝ հրամայեաց ամենայն զօ-րաց իւրոց դառնալ գալ 'ի Ռուսիա, և այլ ոչ ևս խառնեցաւ 'ի շփոթս Եւ-րոպայ։

Սուվորով մեծաւ տարաժանօք եկեալ 'ի Գերմանիոյ՝ առ ցրտոյ սաստիկ խո-թացաւ, և կիսամահ հասեալ 'ի Պե-տերբուրգ՝ յետ ոչ բազում աւուրց մե-ռաւ. այրն քաջ՝ մականուանեալն 'ի կառավարութենէ Ռիմնիկցի, զի հասեալ էր մինչև 'ի Ռիմնիկ քաղաքն, և 'ի Պօղոսէ՝ Իտալականն. որ և ուրեք յիւրում հրո-վարտակին կոչէ զնա զօրավար մեծա-գոյն ամենայն զօրավարաց՝ որ երբեք կացեալ իցեն ուրեք մինչև 'ի ծագս աշ-խարհի. և հրամանք նորա և կարգա-դրութիւնք մի մի օրէնք համարեցան զի-նուորական վարժից Ռուսիոյ։

Իսկ զօրք նորա քան հազար նշխա-րեալք յութսուն հազարացն՝ խանձք և վտանգք, անշքացեալք և տառապեալք և քրձազգեստք դարձ առնէին յաշ-խարհն՝ ոչ նուազ փառաւորեալն՝ քան

եթէ զամենայն զեւրոպայ զինու զօրու-թբ նուաճեալ էին. և յաղթականք անգամ նոցին յապուշ հարան ընդ ան-յաղթողդ արիութիւն նոցա և ընդ հաստատու-տա. Սուառուած և առ. զօրավար իւրեանց:

Յայնչափ մեծասացն, և յառաջինն ա-ռատաձեռնութեանց կայսերինւոյ հա-րան ապաւէնցան զանձք աշխարհին, և Պօղոս զեկոյց զարժէս գրամոց յոյժ յոյժ, և հնարեցաւ զթղթադրամն ըստ այլոց ոմանց եւրոպականն պետութեանց: Այլ կարի եւս զի կարի իմն յանձա-խեաց թուղթն, յաւուր միում մեծ մի-լիոն թուղթս հրամայեաց այրել 'ի հրա-պարակի, և բազմապատիկ առ ժամն զաղդե-մի՝ մինչև բանք Անգղիոյ առ. առևտու-տական լքացուցին զթերթն արքունի գանձուցն:

Այսու եղծ Պօղոս 'ի զօրս իւր զհնա-զանդութիւն զինուորացն Ռուսաց, և զան-ցոյց եւս զնոքօք, մինչև առանձնել նո-ցա զինքնակալէն: Ուղղակի չափ զաւն գործեաց անհնար առնել և զամենայն զաղղիական նորաձևութիւնս, և անգամ զպաճոյն զաղղիացի և զչլխարկ բոլոր-չի՝ յանցանս գրէր զգենլեացն: Զպա-րտիս վասն այսպիսի յանցանաց և վասն այլոց կասկածանաց եդ 'ի բանտի, աք-սորեաց, և մերկացոյց. յանձինս: Իսկ 'ի վերջէ ըստ կասկածոտ բարոյիցն ան-հանդիստ եղեալ, մեռաւ 'ի 11 մարտի յամին 1801, թագաւորեալ ամս չորս

և ամիսս ինչ, և էր ինքն քառասուն և եօթն ամաց ։

Փոքր մի յառաջ քան զմահն Պօղոսի ստացան Ռուսք և զաշխարհն Վրաց · զի տեսանել որդւոյն Հերակլի՝ Թէ Ռուսք վաղ կամ անագան ունին յինքեանս գրաւել զաշխարհն Վրաց, լաւ համարեցաւ տալ զայն 'ի ձեռս Ռուսաց, և ինքն եկն 'ի Բեթրբուրկ ։

Որդիք չորք էին Պօղոսի · Աղեքսանդր, Կոստանդին, Նիկողայոս, և Միքայէլ · և զմի մի 'ի նոցանէ կարգեաց գնդապետս գնդից գնդից պահակաց, և զանդրանիկն եդ հրամանատար ընդհանուր զօրացն Բեթրբուրկայ ։

Սիրող գոլով արդարութեան, կարգեաց արկղ մի՝ յորում համարձակ էր ամենեցուն արկանել զգիրս պաղատանաց և հայցուածոց ։ և մի ոմն 'ի խորհրդականաց իւրոց այգուն այգուն մատուցանէր նմա զիմաստս Թղթոցն · այլ զեղծանել նովաւ անիրաւին խափանեաց զայն ։

Եթող 'ի գիւղականաց զբաժ ցորենոյ և այլոց արմտեաց, և ազատեաց ըզբազումս 'ի Լեհաց բանտարկելոց, ընդ որս և զՔոշիուշքօյ ։ Հաստատեաց զկարգ ասպետութեան, կանգնեաց դպրոցս որբոց և օրիորդաց, որոց և զամուսինն իւր կարգեաց 'ի պաշտպան ։ Կառոյց հոյակապ շինուածս հասարակաց 'ի Մոսկուա և 'ի Բեթրբուրկ ։ Կարգեաց ատեան քննութեան և օտարազգի գրոց մտելոց 'ի

Ռուսաց, և տայր ընաւ խել արդել ըզ-մուտս նոցին : Հրատարակեաց զնմանէ ան օրինացն կատարելեաց 'ի պարծանս մեծի կայսրուհւոյն : Շնորհեաց քաղաքս և կարևոր ազատութիւնս առանձնին հրովարտակօք Հայոց ընակելոց յԱժտէրխան, 'ի Գրիգորիպօլիս, 'ի Դուբոսար, 'ի Ղարասու, և յԷսկի Խրիմ :

Ջեռն էարկ Պօղոս և 'ի կայսերս զարդ հաստատութեան կարգել յաջորդութեան, որ անփոփոխ և անշարժ կարգեցէ մնալ մինչև 'ի սպառ . և ձեռնադրեալ 'ի կըտակին ինքն և դշխոյն իւր՝ յաւուր պսակման իւրոյ յինքնակալ եդ զայն 'ի վերայ սեղանոյ եկեղեցւոյն 'ի Մօսքուա : Ապա յամին 1797 հրատարակեաց զանյեղլի օրէնսն՝ որովք սահմանէր արքունականն տոհմին ըստ գլխոց զկալուածս, և զեկամուտս, զիշխանութիւնս և զնշանս անդամոց պատուոյ, և զկարգ պայազատելոյ նոցա զերեւարս ըստ ամենայն զգուշակելի դիպաց և հանգամանաց :

Այսպէս Պօղոս 'ի սուղ ժամանակի թագաւորութեան բազում ինչ յօգտակարաց 'ի գլուխ տարեալ՝ թէ ոչ կոչեցաւ աներձ ինքնակալ և աշխարհակալ, այլ յիրաւի բարի և բարերար և հայր աշխարհին իւրոյ խոստովանեցաւ յամենեցուն :

ԱԼԵՔՍԱՆԴՐ Ա.

ԱԼԵՔՍԱՆԴՐ մեծի թագաւորին յաթոռ ինքնակալութեան Ռուսաց 'ի 24 մարտի, յամին 1801, ըստ 'ի մանկութէ գեղեցիկ դաստիարակութեան 'ի ձեռն հանւոյն իւրոյ Կատարինեայ երկրորդի, և հռչակաւոր բանասիրին Լահարփայ՝ անդէն յայտ առնէր զարդարեալ մարդասէր և խնամատուն բարոյիցն՝ բազմապատիկ շնորհօք և ազատութիւն սրտագնեալ կարօտելոց : Նուաղեաց զհարկս, զարձոյց զաքսորեալս, ներեաց զդատապարտեալս զեղծաւորաց, և եբարձ զխտաժան մտից օտարազգի գրոց 'ի Ռուսաստան. այլ այս ազատութիւն յետ ամաց ինչ 'ի դէպ ամփոփեցաւ : Կարգաւորեաց զդատաստանական կիրս, և ձեռն եառ 'ի բարգաւաճել զվաճառականութիւն : Հրամայեաց եւ եհան 'ի բաց լքանել իշխանութեանց գանձանց անուանակոչութիւն աւելորդս :

Առանձին խնամով ետ կալաւ 'ի զարգացումն գիտութեանց և արուեստից յիւրում պետութեան՝ մեծապատիւ մեծարեալ զընծայս մատենադարանս. և 'ի յոլով քաղաքս, որպէս և 'ի Տփխիս յամին 1804, կանգնեաց մեծամեծ դպրոցս հասարակաց .

Խաղաղասէր ոգին Աղեքսանդրի հնարս

հաշտութեան հոգացեալ ընդ պետութեանս Գաղղիոյ և Անգղիոյ, աղաչէր զնոսա 'ի սէր դաշնաւորութեան յամին 1805: Այլ Նափոլէոն անխրատելեալն յայնժամ 'ի Գաղղիա՝ թշնամանօք հանդերձ արձակեաց զդեսպանն Ռուսաց 'ի Փարիզէ 'ի Ռուսիա: Այսմ իրիք Գերմանացիք 'ի մարտ խաղացին ընդդէմ Նափոլէոնի, աճապարեաց և Աղեքսանդր յօգնութիւն նիզակակցացն իւրոց Գերմանացւոց. այլ չեւ հասեալ նորա՝ առաւ Վիեննա, և Աղեքսանդրի 'ի մուտ ճակատամարտի ձախողեալ՝ եթող զզօրս իւր առ սահմանօքն Աւստրիոյ, և մեկնեցաւ 'ի Բեթըրսպուրգ:

Ի մտանել Նափոլէոնի 'ի Բրուսիա և 'ի յարձակել զօրաց 'ի Ռուսս յամին 1807, Ռուսք ոչ կարացեալ դնել ունել բռնութեան Գաղղիացւոց 'ի սպառ, յետ ընդ կռուին նահանջեցան. և Աղեքսանդր խօսեցաւ ընդ Նափոլէոնի 'ի հաշտութիւն յ8 յուլիսի:

Ցերս կոյս 1808 ամին 'ի բորբոքել վերստին պատերազմին Գաղղիացւոց ընդ Գերմանացիս՝ Աղեքսանդր ոչ միաբանեաց 'ի մի կամ 'ի միւս կողմն: Այլ իբրեւ էառ Նափոլէոն միւս անգամ զՎիեննա և զՊրուսիա, և անհնարին խորհրդովք պատճառս Ռուսաց՝ կանգնել անդրէն զտէրութիւն Լեհաց զկործանեալն, և պահանջէր յԱղեքսանդրէ ծանր ծանր պայմանս անհերքելիս և անիրաւս, Աղեք-

սակայն զամէն գործէր հնարս խաղաղու-
թե՛ գտանելս, այլ 'ի զուր ։ Զի Նափո-
լէոն ատեանց ինչ առաջարարութ մերժեալ
'ի սահմանս Ռուսաց հինգհարիւր վաթսուն
հազարաւոր զօրօք յամին 1812 ։

Մինչդեռ Աղեքսանդր խորհէր հա-
սատած մեծ զաշխարհին իւրոյ թողուլ
'ի Պետրպուրգիս՝ զի զանձս միւսոյ մասին
յառաջահասկի կացցէ մնասցէ իշխան, իւրըն
ահաւորին սատակումն զաւառին ընդ Գաղ-
ղիացիս առ Մոսկուա քաղաքաւ . յա-
րում՝ Ճակատու կատարած անհնարին
լինել երկուանեց՝ մնայր մարտն անպար-
տելի ։ Այլս Ռուսաց առ 'ի ձգել զԹըշ-
նամին 'ի խորս աշխարհին իւրեանց յա-
մեցին և յանձնեցին անապատս՝ յետս
ընկրկեալ մեկնեցան 'ի Մոսկուա ։ Իսկ
և կէս մերձեցան Գաղղիացիք անդր, հուր
հարին Ռուսք ընդ ամենայն կողմանս
քաղաքին, և խոյս ետուն 'ի ներքսա-
գոյն անապատս . և 'ի հասանել Նափո-
լէոնի անդր՝ ածխանացեալ տեսանէր ըզ-
թագաւորեալ քաղաքն ։

Յայնժամ հրամանն ետ Նափոլէոն զօ-
րաց իւրոց չու դարձի առնել. զի ձմեռն
սաստկացեալ էր 'ի վերայ հասեալ կայր. և
մինչ զետ զանձագաղէին նոքա, պաշարեցան
երկնից առ հասարակ, և կոտորեցան
զօրացն ամենայն բանակին . և զմնացեալսն
'ի սուր սուսերի կոտորեալ Ռուսաց՝
առին միւսանգամ զՎերհա, և զՎարշաւ,
ուր յայտ արար Աղեքսանդր և զերա-

ւանս իւր ընդդէմ Նափոլէոնի սաստ_ ձայն հրովարտակաւ:

Իսկ Նափոլէոնի վերադարձին զօրաժողով լեալ 'ի Փարիզ խաղաց երկերիւր և վաթսուն հազար զօրօք և էառ զՍաք_ սոնիա: Անդ գրգռեցաւ մարտ սաստիկ ընդ Գաղղիացիս և ընդ դաշնաւորեալ պետութիւնս Ռուսաց և Բրուսաց և Գերմանացւոց. յորում մարտի, որպէս և յայլ նուագս, Աղեքսանդր ինքնին զկնովին շահատակեալ քաջութեամբ նախ_ ձեռն 'ի թշնամիս անդր գործէր:

Նափոլէոն և յայս նուագ յաղթա_ կան գտեալ վաներ զդաշնաւորսն, որք և 'ի նահանջել իւրեանց յետոյ՝ հրձիգ առնէին զամենայն՝ առ 'ի չթողուլ Գաղ_ ղիացւոց համբարս կերակրոյ: Յայն_ ժամ պատրաստեցաւ երկուստեք աւուրս քառասուն դուլ առնել զինուց. յո_ րում ժամանակի որոշեցաւ նիզակակ_ ցացն և զԱւստրիականն առեալ՝ ստուա_ րացան յոյժ յոյժ քան զԳաղղիացիս, և ճակատեալ առ Լիփսիա քաղաքաւ՝ հարին խորտակեցին 'ի սպառ զզօրս Նա_ փոլէոնի 'ի 16, յ17, և յ18 Հոկտեմբե_ րի յամին 1813. և իբրև ոչ զիջանէր նա 'ի չափաւոր պայմանս առաջարկեալս նմին 'ի նիզակակցաց յաղթականացն, վա_ նեցին զնա մինչև 'ի Գաղղիա, և մտե_ ցան առ հասարակ յաշխարհն:

Անդ էր տեսանել զԱղեքսանդր իբրու նոր զոմն Ագամեմնոն խառնախառնակէ համ_

աշխարհակալական բանակին, և քաղաքներ բնակչաց երկրին. քանզի նա խնդրեալ էր որ խօսէր 'ի գլխոց նիզակակցաց իւրոց յամենայն աղէտս՝ ըստ նոցին իսկ սահմանելոյ: Որոց մտեալ ընդ նոսա 'ի Փարէզ՝ քաղաքակերպաց զինակիցն, և նոցին իսկ Գաղղիացւոց յանձնէր տալով՝ զի զեր ազգ և տարազ ուխտուն կամեցին յայնժամ հետոյ ունել, խնդրեանք ընդարձակ կալցին: Եւ 'ի խնդրել Գաղղիացւոց 'ի միբերան զԼուդովիկոս ԺԸ Բուրբոնեան 'ի Թագաւոր, և յուրախաց կալ 'ի Նափոլէոնէ, հաւանեցաւ նոցա Աղեքսանդր. և անդ գեղեցկեցաւ մինչև 'ի գալ Լուդովիկոսի՝ եւ նմա ընդ առաւել զօրկախատան ոյժումնս, և ած զնա յաղաբանս նորին, ուր չէր խնդէն օծեանեալ 'ի պատուս գահուն Գաղղիոյ:

Այսպէս յ30 մայիսի յամին 1814 հաստատեցաւ 'ի Փարէզ հաշտութիւն խաղաղութեան 'ի մէջ ամենայն պետութեանց Եւրոպայ, և 'ի վերջին անդր Աղեքսանդր ճանչեաց ընդ ազգայի յաղթանակս նորին. յորում պաշտօն խուռն բազմութեան քաղաքին զարդոյթ ասացեալ 'ի հրապարակ անդր՝ 'ի ձայն ցնծութեան աղաղակէին. «Կեցցէ Աղեքսանդր, կեցցէ խաղաղարարն Եւրոպիոյ. Կեցցէ արքայ, կեցցէ Լուդովիկոս ցանկալին»:

Թողեալ Աղեքսանդրի զՓարէզ մի և պատրաստուն հաշտական իւրոց զնելեցիկ գնացիցն բարեկամութիւն՝ խաղաղոյ գնաց

ընդ Փրեդերիկոսի Գ. արքային Բրուսաց ՚ի Լոնդոն և յՕքսֆորտ, և ամենայն ուրեք կայսերական շքով մեծարեալ՝ դարձ արար անդրէն յաշխարհն իւր, և եհաս ՚ի 25 յուլիսի ՚ի Բեթրբուրկ ընդ դաշնակցին իւրում, որ ընդ առաջ ե-կեալ էր նմա մինչև ՚ի Գերմանիա:

Եւ Թէպէտ Աղեքսանդրի վաղագոյն կանխեալ ասաց արարեալ էր անդր՝ չառ-նել ինչ նմա հանդէս յաղթանակի, զի ատեալ է ասէր յաղթութեան մարդոյս, սակայն քաղաքացիքն մեծաշուք հան-դէս ցնծութեան կատարեցին ՚ի մտանել նորա ՚ի Բեթրբուրկ: Յայնժամ տպեաց Աղեքսանդր պատկեր պատուոյ տալ ՚ի բաշխել զօրականին՝ փորագրեալ ՚ի մի կողմն. «Մի՛ մեզ Տէր, մի՛ մեզ, այլ անուան քում տուր զփառս»:

Իբրև անցին ՚ի վերայ ամիսք ինչ, գնաց ընդ արքային Բրուսաց ՚ի Վիեննա, ուր ՚ի ժողովել ամենայն Թագաւորաց Եւրոպայ՝ յառաջնում աւուր ամ. նոյեմբերի յամին 1814 ունէր լինել ընդ-հանուր ժողով Թագաւորաց: Ի հասա-նել անդր կայսերին Գերմանացւոց Ֆրանճիսկոսի Բ., այն ինչ շուրջ ածէր զաչս իւր կայսրն եթէ ուր ձեռն տացէ նմա իջանել յերիվարէն, փութացաւ էջ Աղեքսանդր յերիվարէն, և ըն-թացաւ կարկառ ձեռն իւր առ կայսրն ՚ի հիացումն ատենազանց:

Ի ժողովսն անդ զամենայն ձեռն Թա-

փեաց Աղեքսանդր ընդդէմ տոհմաց իւ-րոց առ. 'ի պինդ ունել և չզատանել 'ի պետութենէն Ռուսաց զԹագաւորութիւն Լեհաց. որում 'ի վերջէ հաւանեցան ամենեքեան 'ի յունուարի յամին 1815, ճանաչելով զԱղեքսանդր 'ի Թագաւոր Լեհաց՝ անուանեալ՝ Թագաւոր կարգեալ 'ի բարեկարգութեն աշխարհին : Զոր և առ գիւնացոյց Աղեքսանդր՝ բազմապատիկ պիտանի կարգաւորութեամբ 'ի Լեհաստան :

'Ի նմին ամի հաշտութիւն արար Աղեք-սանդր և ընդ Ֆէթհ Ալի շահին Պարսից, որ եթող 'ի Ռուսս 'ի պատառ զամենայն զՍիւնիս, և զՏաղստան, այլ և զՎ իրս :

Այն ինչ պայմանս յանդորրու էր Եւ-րոպա, Նափոլէոն զերծեալ յարգելա-նէն իւրմէ յԷլպա կղզւոյ՝ գայր միա-նգամ 'ի Փարէզ : Աճապարեաց Աղեք-սանդր ազդ առնել նիզակակից Թագա-ւորաց, և ինքնին խաղաց 'ի Գաղղիա : Այլ մինչչև հասանել նորա անդր, Վել-լինկդոն զօրավար Անգղիացւոց նկուն արար 'ի պատառ զՆափոլէոն. և Աղեք-սանդրի մտեալ 'ի Փարէզ, և խնդակից լեալ Լուդովիկոսի, դարձ արար 'ի Լեհս. ուր սա առաջին 'ի Ռուսաց ե-դաւ զԹագ աշխարհին, և ապա անց գնաց 'ի Բեթրպուրկ ցնծալից հրճուա-նօք և աղաղակաւ քաղաքացւոցն 'ի ձայն զանգակաց և հրազինուց :

Յամին 1816 'ի յունուարի 1, հրո-վարտակ արար. ապարագրութէ. Յիսու-

սէանց 'ի Ռուսիոյ, ըստ ամբաստանութեան. թէ նոքա դարձուցեալ իցեն զոմանս յաշակերտութենէ 'ի հռոմէական հաւատս՝ ընդդէմ օրինաց նախնի թագաւորացն Ռուսաց :

Գտաւ Աղեքսանդր և 'ի ժողովի թագաւորացն գումարելոց 'ի Վերոնա քաղաք յամին 1821 'ի բարեկարգել զիրս Իտալիոյ և Սպանիոյ. և անտի եւ շրջել ընդ երեւելի քաղաքս աշխարհին : Դարձ պատրաստեալ յԻտալիոյ 'ի Ռուսիա ընդ եռանդեամբ ժամուն առնելոյ և զիւրն ազգ յայն ծառ. քաղաքականութե, իմաստութե և ճարտարութե, զոր եւ բաժին քաջակերթ ախորժակաւ և խոհական ընտրութբ զիտեալին եր յամենայն կողմանս Եւրոպիոյ, այնչափ ինչ բարեկարգութիւ յաւել յաշխարհին, զի յիրաւի անուանեցաւ մեծ թագաւոր ազգի ոչ միայն մեծի և քաջի, այլ և իմաստնոյ և ճարտարի, և անդրա ուսուցանողի :

Ուղեւորեալ առա գնացեալ ընդ ամենայն կողմանս լայնածաւալ աշխարհին իւրոյ, յերկրորդում նուագի ճանապարհորդութեան իւրոյ 'ի Նոյեմ. յամին 1825, իբրև եհաս 'ի Թագանրոկ քաղաք, ըմբռնեցաւ 'ի տենդէ, և 'ի սակաւ աւուրս վախճանեցաւ անդ զկեանս իւր յամսեանն դեկտեմբերի :

Լացին զնա Ռուսք առ. հասարակ, լացին և օտարազգիք համօրէն. նոքա իբրև զեւրեանց բնիկ հայր գորովագութ

և ամէն աշխարհահռչակն. և այսպէս եղև զի 'ի մեծահամբաւ և 'ի ողորմած անձնդիւրութեանց, որոյ գործք և բանք և խորհուրդք անմոռանալիք. յայժմ և զաւակաց ընդհանուր ընդ եղեն աշխարհին.

ՆԻԿՈՂԱՅՈՍ Ա.

ՔԱՆԶԻ Աղեքսանդր ոչ եթող արու զաւակ ժառանգ աթոռոյն, ըստ կարգի անկանէր թագաւորութիւն Կոստանդեանի եղբօր նորին երկրորդի որդւոյն Պօղոսի. այլ զօրութիւն յայտարարութեանն հրատարակելոյ յԱղեքսանդրէ յամին 1823 անկարծելի յաթոռ ինքնակալութեան երրորդ որդին Պօղոսի ՆԻԿՈՂԱՅՈՍ Ա., որ և թագաւորէ այժմ մեծաւ փառօք։

Յամին 1826, 'ի 5 սեպտեմբերի պսակեցաւ նա 'ի Մոսկուա քաղաք ինքնակալ Ռուսաց, և 'ի նմին աւուր աւետմամբ հրատարակեցաւ յայսմ աշխարհ իւր աթոռաժառանգ լինել մեծահռչակն զորդի իւր զմեծ իշխանն Աղեքսանդր Նիկողայեւիչ, ծնեալն 'ի 29 ապրիլի յամին 1818։ Այսպէս յամին 1829, 'ի 24 մայիսի պսակեցաւ 'ի Վարշաւ որպէս թագաւոր Լեհաստանի։

Մինչեւ ընդ ինքնակալել իւրում յաճախ զպատերազմութիւն ծագեալ 'ի Բեթերբուրգի։ Այսպէս առաջ զպատերազմն

ընդդէմ Օսմանեանց, յորում հանդի-սացան յոյժ յոյժ երկոքեան զօրավարք նորա Տիպիչ և Փասքեւիչ. առաջինն ա-նուանեցաւ Զապալքանդի՝ իբր զի ան-ցեալ զզօրս Ռուսաց անդր քան զԲալքան լերինս, և եմուտ յաղթանակաւ յԱ-դրիանուպօլիս. և երկրորդն կոչեցաւ Երեւանեան՝ առեալ երկրակալութեամբ 'ի Հայս.

Տորմիղ նաւուց նորա նիզակակցից եղև Անգղիացւոց և Գաղղիացւոց 'ի հռչա-կաւոր պատերազմին Նաւարինայ յամ-սեանն Հոկտեմբերի յամին 1828, որով ազատութիւն շնորհեցաւ նորոյն Յունաս-տանի.

Յամսեանն Նոյեմբերի յամին 1830 ապստամբեցին Լեհք 'ի նեղութեան ձե-ռին Ռուսաց, մինչև մեկնել Կոստան-դնի 'ի Վարշաւայ. Ինքնակալն արձա-կեաց 'ի վերայ նոցա զՏիպիչ. այլ 'ի յաճախել ազդեցին, և 'ի մեռանել Տի-պիչայ յանկարծական ախտին յամին 1831 'ի յունիսի 10, (որպէս և Կոստանդեայն եղբօրն Ինքնակալին մեռաւ 'ի նմին ամս-ոյ.) առաքեցաւ 'ի վերայ Լեհաց քաջն Փասքեւիչ. որոյ առեալ պաշարմամբ զՎարշաւ՝ նկուն արար 'ի սպառ զԼեհս.

ՆԿԱՐԱԳԻՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ

ՆԿԱՐԱԳԻՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ

ՌՈՒՍԻԱ գրեթէ եօթներորդ մասն է ցամաքի աշխարհաց, և մետասաներորդ մասն ազգի մարդկան բնակեն 'ի նմա : Զի մակերևոյթ նորին ողջոյն ընդ Եւրոպա և ընդ Ասիա և ընդ Ամերիկա հաշուի 5,912,000 մղոն քառակուսի. և բնակիչքն ընդ ամենայն 60,000,000 : Անհուն ընդարձակութիւն աշխարհին Ռուսաց կարէ սանն ածել ոգիս 150,000,000. և բնակիչք նորուն սակն յաւելանան ամ ըստ ամէ 500,000 ոգիք՝ ներընդերամբ ենեթ, և այն առաւել բնիկ Ռուսաց՝ քան թէ եկք և այլազգք :

Առ ճշգրիտ նկարագրութիւն մեծի աշխարհիս՝ կարևոր թուի ըստ արդի աշխարհագրաց բաժանման ճառել զնոմանէ 'ի կարգաւ. այս է առանձինն սահմանել և կարգել զՆուրապարական,

զԱսիականն եւ զԱմերիկեան մասունս Ռուսիոյ։

ԴԻՐՔ

ԵՒՐՈՊԱԿԱՆ մասն հանգչի 'ի 16 աստիճանէ արեւելեան երկայնութեան ց62. եւ 'ի 40 աստիճանաց լայնութեան ց70. առաւել ըստ նմին եւ զԼեհաստան։

Ասիականին երկայնութիւն է ընդ մէջ արեւելեան 34 աստիճանաց, եւ արեւմտեայց 173. իսկ լայնութիւն է ընդ մէջ 38 եւ 78 աստիճանաց։

Ամերիկեան Ռուսիոյ արեւմտեան երկայնութիւն է ընդ մէջ 133 եւ 17 աստիճանաց, եւ հիւսիսային լայնութիւն ընդ մէջ 55 եւ 71 աստիճանաց. ոչ հաշուեալ զկղզիսն։

ՍԱՀՄԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆՆ Ռուսիա 'ի հիւսիսոյ ունի սահման զՈվկիանոս հիւսիսային, յարեւելից զՌուսիա Ասիոյ. եւ զծովն Կասպից. 'ի հարաւոյ զՌուսիա Ասիոյ, զՍեաւ ծով, զՄոլդաւիա, զՏաճկաստան Եւրոպիոյ, զԱւստրիա, եւ զՔրա_

քով. յարեւմտից զՊրուսիա, զԲալթիկ ծով, և զՇվէտա:

Ասիականին սահմանք են 'ի հիւսիսոյ Եւրոպականն Ռուսիա, և Ովկիանոս Հիւսիսային. յարեւելից՝ ծովն և նեղուցն Պերինկեայ, Ովկիանոս մեծ, և ծովն Օխոթսքեայ. 'ի հարաւոյ Քուրիլեան կղզիք, Չինք, ծովն Կասպից, Պարսք, Հայք, և Սեաւ ծով. յարեւմտից Սեաւ ծով, կիրճն Ենիգալէի, ծովն Ազախու, և Ռուսիա Եւրոպայոյ:

Ռուսիա Ամերիկեայ ունի իւր սահման 'ի հիւսիսոյ զՈվկիանոս Հիւսիսային. յարեւելից զԱմերիկա անգղիական. 'ի հարաւոյ զՈվկիանոս մեծ. յարեւմտից զՈվկիանոս մեծ, զծովն Պերինկեայ, և զՈվկիանոս Հիւսիսային:

ԼԵՌԻՆՔ.

ԵՒՐՈՊԱԿԱՆ Ռուսիա ըստ մեծի մասին դաշտ իմն է գոգցես լայնածաւալ 'ի տեղիս տեղիս զարդարեալ ըլրովք և լերամբք ոչ մեծամեծօք: Իսկ հարաւային և արեւելեան սահմանք նորին յաւէտ լեռնայինք են: Արդ գլխաւորք 'ի լերինս Ռուսիոյ այսպէս հաշուին ըստ տեղեաց. Սկանդինաւեան լերինք, 'ի մէջնաշխարհին Ռուսիոյ, յորս բարձրագոյն է Վալտայ լեառն 175 ձողաչափ: — Կով-

դաւթեան կամ Վրացւոց լերինք, 'ի հարաւ_ւանկազգին Ռուսիոյ. յորոց բարձրագոյ_նագոյնք Համամերձին Եղբաթերթեցիներին՝ 333 ձողաչափ, և Կիսա՝ 320 ձողաչափ 'ի բարձրութիւն : — Կովկասու լերինք, ընդ_արձ գետակն ոչ միայն գաւառք լերանցն անջրպետապաշտպանաց զԵւրոպա յԱսիոյ, այլ և ընդդէմ կերպիւ. և 'ի սոսա բարձրա_գոյն գագաթն Զառնայր տապղին 790 ձողաչափ: — Ուրալ լերինք, որք որոշեն զԵւրոպա յԱ_սիոյ, և ձգին ընդ. ամենայն կողմն Ռուս_սիոյ ապաժեալց. և Լերինք Ասիոյ:

ԿՂԶԻՔ

Ի ԲԱԶՄԱԹԻՒ կղզեաց աշխարհին մե_ծագոյնքն են Նոր Զեմլիա և Արխիպելա_գոս Սփիցպերկեան 'ի հիւսիսային Ովկիան, որ են կղզիք անբնակք : Ի Նոր Զեմլիա է հրաբղխային լեռն քան զամենայն հրա_բուղխս մերձաւորագոյն 'ի բեւեռն. և անդ 'ի նմին կղզւոջ յաճախեալ են յոյժ որթք ծովու, և այլ եւս գազանք : — Սոլովեցքոյ անուանեալ կղզիք 'ի Սպի_տակ ծովուն՝ նշանաւորք վասն մենաս_տանին կառուցելոյ 'ի միում 'ի նո_ցանէ : — Օզէլ կամ Էզէլ, Վորմս, Դագօ, և Ալանտ 'ի Պալթիկ ծովուն :

Իսկ Ամերիկեան Ռուսաստան յիշեալ չափ կղզի է, զորմէ գիտեն :

ԷՋԺԳ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՂՄՆ Ռուսաց ամէնի լերինս մեծագոյնս քան զամենայն լերինս Եւրո-պայ. և հարաւակողմն բաղկացեալ ճա-հերձս, [illegible] 'ի խորքս և յՕրալ և 'ի լերինս Պառնասայ: Անուանիք 'ի լերինս Ռուսաց են Լափոնիա և Օնեկա յՕ-[illegible]: — Սպիտակ, Փոսյաբա, և Վեռեֆեա 'ի Ֆինլանդիա: — Զոպոտեայ [illegible] կամ Բեյփուս [illegible] 'ի [illegible]: — Իլմէն 'ի Նովկորոդ: — Էնարա 'ի Լափոնիա: — Պէյփուսեր 'ի Նովկորոդ: — Վոլոդէնոս 'ի Վոլոդկա:

Իսկ յաղթ լճաց մէջի հաշակաւոր և ծովականն Էլթոն 'ի Սարաթով գաւառէ:

ԳՆԵԳ

ՄԵԾԱՄԵՆԵՔ 'ի գետոց Եւրոպայ անցանեն ընդ մէջ Ռուսաց:

Ի Գալիլեիկ ծով [illegible] գետս, Թոռնէա, որ բղխէ 'ի Լափոնիա [illegible]-ասայ, և [illegible] 'ի Գոթնեան ծոց: — Վէդ, Ուլէա, Փինհայոկի, որք բղխեն 'ի հասնեան ծովակաց և [illegible] 'ի Գոթ-նեան ծոց: — Նէվա, [illegible], այլ [illegible]-

Ջուր յորդ, բղխէ 'ի Լատոկա լճէն, և բաժանեալ 'ի բազում առուակս՝ խառնի 'ի Սայիմա ծովակի։ Այս գետ գեղեցիկ պանծացուցիչ Պետերբուրկայ՝ բազում անգամ զարդարեցեալ՝ ոչ սակաւ վտանգս հասուցանէ նմին։ — Նարվա, բղխէ 'ի Պէյպուս, և թափի 'ի Ֆինլանտիա։ — Տվինա հարաւային, բղխէ մերձ յակունս Վոլգայի, և անկանի 'ի ծոցն Լիվոնիոյ։ — Նէման, բղխէ 'ի Մինսկ գաւառի, և մտանէ 'ի Պրուսիա՝ անուանեալ Մեմել։ — Վիս_թուլա, բղխէ յԱւստրիա, և անցեալ ընդ Լեհաստան՝ մտանէ 'ի Պրուսիա։

Ի Սեաւ ծով, Դանուբ. յորմէ փոքուն գետակ եւեթ անկանի 'ի Ռուսիա։ — Տնեստր կամ Տնեստէր (այն է Թուռաս), որ բղխէ յԱւստրիա։ — Տնեպր, բղխէ 'ի Սմոլենսք, և մերձ յՕչաւ թափի 'ի Սեաւ ծով։ — Տոն կամ Տանայիս, ան_ցեալ ընդ գաւառաւն Թուլա, Թամպով, Վորոնեժ, և ընդ աշխարհն Խազախաց՝ թափի յԱզախ։ — Կուպան, բղխէ 'ի լե_ռանցն Կովկասու, և անցեալ ընդ Աբազա_ղս և ընդ Չէրքէզս, թափի՝ ըստ մասին 'ի Պոնտոս, և ըստ մասին յԱզախ։

Ի Հիւսիսային Ովկիանոս, Փաւնէկ, սահման Շվէտաց, բղխէ յԼապոնիա ծովա_կէ։ — Քոլա, անցանէ ընդ Լապոնիա Ռուսաց։ — Փէչօրա, բղխէ յՈւրալ լե_ռանց։

Ի Սպիտակ ծով, Վինէ, Քէմին, և Քոնեգա, բղխեն մերձ յԱրքանկէլ։ —

Օնէկա, բխէ մերձ 'ի լիճն համանուն : — Տվինա հիւսիսային, ձևանայ 'ի խառնուրդս Սուխոնա և Եուգ գետոց : — Մէզէն, ձևանայ 'ի լճակաց գաւառին Վոլոգդայ, և թափի 'ի ծոց Սպիտակ ծովուն :

Ի ծովն Կասպից, Ուրալ, որ և Եայիք, բխէ 'ի համանուն լերանցն : — Վոլկա, կամ Էթիլ, մեծ քան զամենայն գետս Եւրոպայ, բխէ 'ի Վոլքոնսքի անտառաց, և անցեալ ընդ բազում գաւառս Ռուսիոյ՝ ընդ 65 կամ լաւ ևս ընդ 70 բերանս թափի 'ի Կասպից ծով : Չունի ինչ ուրեք ջրվէժս վասն որոյ և անխափան նաւարկեն ընդ նա աւելի քան զ5000 նաւակս ակապղձեալս բազմապատկեալ ապրանօք ծովու և ցամաքի : — Կուման, բխէ 'ի լերանցն Կովկասու, և ընդ բազում բերանս անկանի 'ի Կասպից ծով : — Թէրէք կամ Թէրք, բխէ 'ի Խազբէկ լերանց : — Սուլագ, և Սամուրա բխեն 'ի լերանցն Կովկասու :

Յատկական բաժնին հռչակաւոր են գետքս Օպի կամ Օբ, Իրթիշ, Ենիսէյ՝ մեծ քան զամենայն գետս Ասիոյ, Եւրոպայ և Ափրիկոյ . Թայմուրա, Խաթանգա, Անապարա, Օլէնէք, Լէնա, Եանա, Ինտիկիրքա և Քոլիմա, որք թափին 'ի հիւսիսային Ովկիանոս : — Անատիր և Քամչաթքա, 'ի ծովն Պերինկայ : — Ուրալ, Եմպա, և Կուր, 'ի ծովն Կասպից : — Ռիոն կամ Փասիս, 'ի Սեաւ ծով :

Են և յԱմերիկեանն Ռուսաց գետոց բազմաւորք և մեծամեծք, այլ անուանք նոցին և տեղիք չեն ևս են քաղածանօթք:

ՀՐԱՆՑՕՔ

Ի ԴՒՒՐԱԹԻՒԹԻՒՆ վաճառաշահութեան Ռուսաց՝ խնամ կալեալ ինքնակալք աշխարհին ամենայնի 'ի մեծէն Պետրոսէ՝ փորձել ջրանցս և խորշս, և միաւորել զբազում լիճս և գետս և զծովս Ռուսաց. և յաջողեալ են անդ ունելի քան զբազում ջրանցս մեծամեծս և պիտանիս. յորս գլխաւորք համարին, Վէրին Վոլոչոկ, որ կցէ զՎոլգա ընդ Վոլխով գետոյ, այսպէս և ընդ Նեւայի, ևս և զծովն Կասպից ընդ Բալթիկականին. Ձգի ընդ մղոնս երիս յերկայնութեան, և ունի երկուս ջրանցս: Բացաւ յամին 1711: — Թիխվինեան, որ կցէ զԹիխվինկա գետ ընդ Վոլգայի, և ունի հնգետասան ջրանցս: Զսա եբաց Աղեքսանդր Ա: — Ջրանցք Մարիինեան, զոր սկսաւ բանալ մեծն Պետրոս, և աւարտեաց Աղեքսանդր յամին 1808: Կցէ զգետն Քովժա ընդ գետոյն Վիթեգրա. Ձգի ընդ մղոնս չորս, և ունի երկոտասան ջրանցս: — Լադոգեան, որ առաւել յաճախեալն է 'ի նաւարկութեան, կցէ զերկուսին զմեծամեծ ջրանցացն զառաջինս ընդ

միմեանս. ունի երեսուն և երկու Հրա-մէժս, յորոց կէսք զոյլ գետս անձին Թափեն 'ի Նոյն, և կէսք զաւերն Ջաւրա Նորին արկանեն 'ի ծովակն Լադոկա ։ — Ջրանցք Մեծին Պետրոսի, զոր Նորին իսկ անձամբ էր զննաւ, և այժմ յառաջ վարի 'ի կատարումն, ունի կցել զՊոն-տոս ընդ ծովուն Կասպից՝ կցելով զՏոն գետ ընդ Վոլկայի 'ի ձեռն Իլավլիա և Խամիշենկա անուանեալ քաղաքաց երկո-ցունց գետոցս. որով երկայնութիւն Ջրանց-իցս ձգեսցի ընդ մղոնս քսանուն ։

ԱԶԳՔ

Ի ՌՈՒՍԻՈՆ թագաւորութեան այլալեզու և այլազգան ազգաց Եւրոպականն Ռուսիոյ մարթ է այսպէս իմն զնել խոսք բա-ժանման, և հաշուիւ ընդհանուրս.

Ա. ՍԼԱՒԵԱՆՔ . . .	50,440,000
Մեծ Ռուսք . . .	33,000,000
Փոքր Ռուսք . . .	10,000,000
Լիթուանք. . . .	1,300,000
Լեհք	5,500,000
Լեթթոնք.	600,000
Բուլղարք.	30,000
Բ. ԳԱԼԹԻԱԿԱՆՔ . . .	3,000,000
Ֆինլանտացիք. . . .	1,400,000
Էսթոնք	480,000
Լապոնք և Լիվոնիացիք .	11,000

Սիրիանացիք	30,000
Վոտեակք եւ Փերմիացիք .	50,000
Չուվաշք	400,000
Չերեմիսք	200,000
Մորդուինք	100,000
Օսթեակք, Վոգուլեակք, եւն.	362,000
Գ. ԹԱԹԱՐՔ	2,500,000
Բնիկ Թաթարք . . .	1,200,000
Խազմուխք	200,000
Նողայք	150,000
Թուրքմէնք	200,000
Խըրղըզք	400,000
Պուխարացիք	10,000
Պաշկիրք	150,000
Եաքուտք, եւն.	100,000
Դ. ԿՈՎԿԱՍԵԱՅՔ . . .	1,150,000
Վիրք	560,000
Լազք կամ Լազգիկեցիք .	230,000
Չերքեզք	190,000
Աբխազք	90,000
Օսէթք, Մծղեք, եւն. .	90,000
Ե. ԹԵՒՏՈՆՔ ԵՒ ԳՈԹԱՑԻՔ.	437,200
Գերմանացիք	380,000
Շուեդք	56,000
Դանիք	1,200
Զ. ԱԶԳՔ ՀԻՒՍԻՍՈՅ . .	200,000
Թունգուզք	50,000
Սամոյեդք	20,000
Քամչատկացիք, եւն. . .	500,000
Կուրիլացիք	70,000
Ալեւթեկացիք	20,000
Է. ԱԶԳՔ ԱՍԻԱՑԻՔ. . .	900,000

Հրէայք	500,000
Հայք	300,000
Ցածիկք, Զինկեանք, Հնդիկք.	50,000
Արաբացիք, Գաւրք, եւն.	50,000
Ը. ԱԶԳՔ ԱԶԳԱՑ ԵՒՐՈՊԱՑԻՔ.	165,000
Մոլտովանք եւ Ուլահք .	130,000
Յոյնք	30,000
Անգղիացիք, Գաղղիացիք, եւն.	5,000

Զայս ամենայն հաշուեալ ըստ ամաց 'ի նոր աշխարհագրաց եղաք մեք 'ի մերոյ. այլք յոլովք՝ են որ կարծեն եւ են որ փոքր մի այլազգ հաշուեն. զոր օրինակ ըզՀրէայս ոմանք դնեն 460,000, եւ ոմանք 600,000. զՀայս՝ ոմանք 74,000. կէսք՝ 200,000, այլք 400,000. զնոյն իմա եւ զայլոց:

Իսկ ըստ կրօնից՝ գտանին 'ի Ռուսիա Յոյնք կամ Յունադաւանք. որպիսի են Ռուսք, Խազախք, Ուլահք, Վիրք, եւ ամենայն հիւսիսականք՝ դարձեալ 'ի քրիստոնեական հաւատս 'ի ձեռն Ռուսաց. ընդ ամենայն հաշուեալք 48,000,000: — Հռովմէական Ուղղափառք, այսինքն են Լեհք, Ռուսնիակք, Լիթուանք, Հայք եւ Վիրք ըստ մասին, եւ այլք, իբր 6,600,000: — Հայք. 300,000: — Լուտերականք. զոր օրինակ Ֆինլանտացիք, Շուէդք, եւն, հաշուեալք 2,000,000: — Հրէայք. 500,000: — Մահմետականք. 4,000,000: — Խալմախք, Մողոլք, եւ այլ կռապաշտք՝ իբր 600,000, առա-

ռել յՍամոս . զի որք յՆաւարկութեան բաժանեալն են՝ նաւավարին որ ըստ գնէ՝ զառա- նորդել ՚ի ըլյս առաժառագանելն :

ԲԱՐՔ ՌՈՒՍԱՑ

ԽՏԻՐ մեծ է ընդ. Մեծ և ընդ. Փոքր անուանեալ Ռուսս : Փոքր Ռուսք (Մա- լօ-Ռոսսի) ընկեր Սլաւոնացւոց՝ Թխահերք են և միջահասակ և հաստակազմեալք, և բար- բառն նոցա ներքսաշխարհականաւոր ինն և քաղց- րահնչական, իսկ ըստ բարբառոյ՝ ազատասիրաց, զուարթ և անհոգ : Մեծ Ռուսք (Վէ- լիկօ-Ռոսսի) ազգխառն ընտանեալք միայն յաշ- խարհս Գոթաց և Ֆինլանտացւոց՝ խառ- նաւորք իւրն ունին ՚ի նոցանէ յատկանիշսն . վասն որոյ չիկահերք են, և յաճախ ունենին առակառ մի ՚ի մէջ կոյս ցցուեալս . և ըստ բարբառոյ մաղձայինք, շահախնդ- րերք, և խորամանկք այնչափ՝ մինչև առնել երբեմն մեծին Պետրոսի, « Եթէ դեռ մինչ Հրէայքս յաղթել չկարեն խորհրդել ընդ Ռուսաց, չասացի նոցա Թողլ, զի մի՛ խաբեսցին ՚ի Ռուսաց » :

Սակայն առ. հասարակ Ռուսք առա- ւելին զկանելիս, և միջահասակք են, այլ յաղթանդամք և առոյգք յոյժ յաւե- նայն ներգործութիւն և ՚ի վաստակս . չափա- ւորք են ՚ի կերակուրս, և աղաղակ ՚ի յաճախ հիւանդութեանց . իսկ զեղ առնե-

բակեան առ նոսա ընդդէմ՝ բաղուամ՝ ան-անց օգնն է բարկ՝ խառնեալ երբեմն պղպեղիւ, երբեմն և վառօդով. եւս և յաճախութի բաղանեաց՝ որք անշուք են, և առ գետով ուրեք կառուցեալք սովորաբար, զի բաղումք ընդ ելանելն 'ի բաղանեաց՝ արկանեն զանձինս 'ի ջուր ցուրտ, երբեք՝ և 'ի ձիւն, առողջարար համարելով զայն և ամրիչ մարմնոյ։

Բազում հետաքննին սովորութիւնք կին երբեմն, և ցարդ եւս են 'ի ռամիկս Ռուսաց, որք յաչս եւրոպացի աշխարհա-կաց զարմանալիք թէ իցեն, այլ ոչ նոյնպէս և արեւելեայց։ Գովեալ են առ-հասարակ հայրենասէր բարք ազատա-նոյն Ռուսաց, և ձիգն նոցա 'ի պայծա-ռութիւն աշխարհին իւրեանց։

ԿՐՕՆ

Ի ԺԱՄԱՆԱԿՍ գիցապաշտ մոլորու-թեան Ռուսաց երկրպագայն 'ի գլուխ նոցա համարէր Փերուն ամենապատուելին, որոյ պատկերին գլուխ էր արծաթի, ա-կանջքն և ընչացք ոսկի, բարձքն երկա-թի. և մնացորդն փայտ անփուտ. և 'ի ձեռին ունէր քար շանթաձև։ Քուրմք նորա անշէջ վառէին զհուր առաջի նո-րա. և երբեմն մարդազոհ եւս առնէին նմա։

Հաշտարակաւոր էին և գիւղն Մեթեօթուլիս՝ քառասնադէմ անձնանձն տառակիր փոյ_ ակաց անմփոփու. և քաւրժ նորա պատ_ կաճառեալ էր :

Վոլգա շահագործեալ էր հոսելց. և Քազ_ խուց՝ ըստ որոց եփրատ. և յեշտառակ ածեալ ատրապատութեան եփրատայն Քազախեցիքս ա_ նուանեալք՝ ցարդ են նշանակ 'ի Ռուսիա 'ի 24 յունիսի :

Լոյս Աստղիկին էր Ռուսաց. Քէյէ_ մառն, գիշ ցնորից երբորդ. Ռուսացի՝ յաւերժահարսանք. Տոմոլլին տանէ, այրինքն ողէք անտառականք, համաւրէին պատ_ համայնք առանց. նոյնպէս 'ի պատասուր էին և օձք երկեւոյթք 'ի տանն տուն :

Պաշտօն աստեղին Ռուսաց և մեծամեծ գերանց, որոց գլուխ համաւրէին զՂուս_ նուք :

Ի ծագել լուսոյ աւետարանին 'ի Ռուսիա՝ ընկալան Ռուսք ըստ ամենայ_ նի զաւրարարութիւն Յունաց : Ի մեծէն Վլատիմիրայ մինչև ցՓետրոս խանա_ մէջ ընդ ամս 578 քառասուն և երկու մետրապոլիտք կացին 'ի Ռուսիա ընդ իշխանութեամբ պատրիարքացն Կոստանդնու_ պոլսոյ. ապա միւրոյնն նոցա Յովբ անուն՝ ընկալաւ զիշխանութիւն աւտոկեփալ պատրիարքութեան. այլ Պետրոս մեծն յա_ մին 1719 յետ մահուան Ադրիանոսի պատրիարքին՝ փոխանակ պատրիարքի հաստատեաց զՍինոդոսն, որում զանձն իւր առաջ ընծել գլուխ : Զոր-

դիս ընդ իշխանութեամբ սինոդականին հա-
շուին 480 մենաստանք արանց, եւ 80 կուսանաստանք, առ հասարակ 'ի կարգէ սրբոյն Բարսղի. 28,112 եկեղեցիք, եւ 67,900 եկեղեցականք։ Իսկ գլխաւոր դպրոց կամ մարժարան եւ աթոռ աստուածաբանութեան եկեղեցականացն Ռուսաց է 'ի Կիեւ։

Ի գալ մեծին Պետրոսի 'ի Փարիզ եւ 'ի ցուցանել զինքն խիստ միաբանելոյ զեկեղեցին Ռուսաց ընդ հռոմէականին, Աստուածաբանք Սորպոնեան ժողովոյն՝ որոց գլուխ էր հռչակաւորն Լուդովիկոս Հաբերտ, առաջի արկին նմա զդաւանութիւն հռոմէական սուրբ եկեղեցւոյ՝ մի առ մի բացատրելով զգլխաւոր մասունս հաւատոյ, յորս միաբանէին եւ Ռուսք, եւ զիւրաքանչիւրն նշանակելով զխնդիրսն որ յաղագս բղխման հոգւոյն սրբոյ, եւ յաղագս գլխաւորութեան քահանայապետին Հռոմայ։ Պետրոս հաճեցաւ յոյժ ընդ առաջարկութիւնն. եւ դարձ առա-
քեալ 'ի Պետերբուրգ՝ մատոյց զթուղթն ցեպիսկոպոսունս իւր, եւ պահանջեաց 'ի նոցանէ զպատասխանիսն։ Նոքա այն-
չափ յապաղեցին զպատասխանին՝ զը-
ժուարութիւնս բազում 'ի մէջ բերելով, մինչեւ եկին 'ի մէջ պատերազմունք Շուեդաց եւ Պարսից, որովք զբաղեցաւ Պետրոս. եւ արքեպիսկոպոսն Ռեազանայ եւ Մետրապօլիտն Թէոփանէս ծանուցին Պետրոսի խափանեցին 'ի սպառ զիրն

բանիւք եւ գրովք փրկելովք լուտերա-
կան ոգւով ընդդէմ ուղղափառ հաւա-
տոյ։ Ապա յետ ժամանակաց Բենե-
դիկտոս ԺԴ պապ գրեաց առ Եղիսա-
բեթ, եւ յորդոր լինէր նմա փոյթ տա-
նել միաբանութեան. այլ նա ետ պա-
տասխանի՝ թէ եկեղեցին Ռուսաց չկա-
րէ առնել ինչ առանց հաւանութեան
պատրիարքացն արեւելից. եւ ոչ եւս այլ
բանք եղեն զմիաբանութէ։

ԼԵԶՈՒ

Մի 'ի վաւթառուն եւ աւելի եւս շնա-
ւորագոյն Սլաւեան բարբառոյ՝ եւ գլխաւոր
'ի նոսին է եւ Ռուսացն. այլ սա եւս
կրկին համարի. Մեծին Ռուսիոյ՝ որ է
Նովկորոդական Սլաւեանցն, եւ Փոքուն
Ռուսիոյ, այն է Քիեւացւոցն. այլ խը-
տիր սոցա առաւել 'ի հնչման անդ նըշ-
մարի, քան 'ի կազմութէ բարբառոյն։

Բարբառն Մոսքուայի նովկորոդականն
է. որ եւ ճոխացեալ է յոյժ 'ի պերճա-
խօսութէ, 'ի քերթողականսն եւ 'ի բա-
րոյականսն։ Քաղցրահնչիւն է, որպէս
միջօրեայն Եւրոպացիք եւս, եւ առ յաճա-
խութէ ձայնաւորաց եւ սղղի սղղի բա-
ղաձայնից՝ յարմար յոյժ յերաժշտութէ
եւ 'ի քերթողութի։

ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԱՅՍՊԻՍ ուրեմն սկիզբն եղև բար-գաւաճելոյ բարբառոյն Ռուսաց 'ի մե-տասաներորդ դարու, յորում ծաղկե-ցաւ Նեստորիոս միանձն Քիեվեցի, և գրեաց զժամանակութիւն Ռուսաց յ858 ամէ մինչև ցամն 1113. նա է հայր պատմա-գրացն Ռուսաց։ Մեծն Պետրոս զար-գացոյց զգիտութիւն՝ հաստատելով զճե-մարանն գիտութեանց 'ի Բեթերպուրկ, և-րկու դպրոցս 'ի Մոսկուա, և երկրորդ հա-մալսարանս յերկրոսին 'ի քաղաքին։ Այլ մեծապէս յառաջադիմութիւն դպրութե Ռուսաց եղև առ թագաւորութեամբ յա-ջորդաց նորին, որք և անխնայ վարձա-տրութեամբ քաջ մատենագրաց խրախու-սեցին և խրախուսանն զամենեսեան 'ի ծաղկեցուցանել զգիտութիւնս։ Աղեք-սանդր Ա. երարձ և զարգացեալ ջանա-ներոյ 'ի Ռուսիա զգիտս օտար ազգաց. և զարգզփոխման բարբառոյ հաստատեաց է առ նոսա։

Մատենագիրք նոցա հռչակաւորք են,

Նեստոր միանձն 'ի Քիեվայ, ժամա-նակագիր Ռուսաց նախնին. մեռանի յամին 1100։

Թէոփանէս Փրոկոփովիչ մետրապոլիտ. ունի բազում գրուածս աստուածաբա-

նոտականս, ձայնաւորականս, ներքնադրականս, և քերթուածս ։ Կանոնքն հաստատեալք 'ի նմանէ գտեալ եւ զգուշութե̄ պահպանին 'ի սինհոդոսէն ։ Մեռաւ 'ի 1736 ։

Քանթէմիր կուսակալն Ուլահաց գրեաց գիրս երկուս զՕսմանեանց աճեցութէ 'ի լատին բարբառ, որք ապա յեղան 'ի այլս ։ Այլ որդի նորին Անտիոքոս Քանթէմիր Ռուսացւոց զՌուսաց բարգաւաճութեան թարգմանութիւնք 'ի լատին և գաղղիական լեզուաց, և ստորագրեաց գրուածս և ձայնիւք գոյն և այլ նոյն ։ — 1743 ։

Թրէտեաքովսքի ազերձանիկ և բանաստեղծ, աշակերտեալ 'ի Փարիզ Ռոլէնի՝ թարգմանեաց 'ի ռուս բարբառ զամենայն զգործս նորա ։ Նաև նէ 'ի հայրենիք երգեաց ձեռագրաց նորին՝ մեծագործին գրեաց զամենայնին ։ Ուսումն անկցաւ թարգմանութեան և շարադրութեան այլասա նոյն յայտ ։ — 1779 ։

Վոլքով քաջ երաժիշտ և գուսան, եւ և բանաստեղծ. ունի քերթուածս խնդ., և եղև 'ի մեծն Պետրոս ։ Սա առաջին հիմնեաց զԹատրոն 'ի Ռուսաստան ։ — 1763 ։

Խիլքով դեսպանն մեծին Պետրոսի 'ի Շվէտս՝ գրեաց անգամնոր զնիւթ պատմութե̄ Ռուսաց 'ի սկզբանէ մինչև ցաւուրս իւր ։ — 1718 ։

Թաթիշչէֆ կուսակալն Աստրախանայ, ամս երեսուն աշխատասիրեալ յօրինեաց զՊատմութիւն Ռուսաց. որ բաղ մա-

այն Հրեէից եղեալ՝ ըստ մասին ապաշխարե-ցաւ 'ի Միւլլէրայ: — 1750:

Լոմոնոսով որդի առն ձկնորսի լեալ՝ Հայր եկաց մատենագրաց, և մանաւանդ քերթողացն Ռուսաց, Պինդարոս ձայ-նեալ առ 'ի նոցանէ: Ուսեալ եղեալ 'ի մեծն Գերմանիա, քերթուածս Հռետորականս, ողբերգութիւնս, Թարգմանութիւնս 'ի յոյն և 'ի լատին լեզուաց. կանոնս քերթո-ղականս, քերականականս, ճարտասա-նականս. ներբողականս յԵղիսաբեթ և 'ի մեծն Պետրոս, և վերջինս այս գործ՝ գլուխ համարեալ է առաւել պերճախօ-սութե. արար և Պատմութիւն Ռուսաց ցամս 1054: — 1765:

Սումարոկով քերթող քաջ 'ի յօրի-նուածս Հռետորականս և չափաբանեալ առակաց, ունի և բազում ողբերգութիւնս 'ի պատմութեանց Հայրենեաց աշխարհին: Արար հետեւակ բանիւ և Տարեգիրս Մոսկուայի, և Պատմութիւն Ստրելցաց. և ըստ վսեմ և ներդաշնակաւոր ոճոյ՝ գլուխ է առ մատենագրացն Ռուսաց: — 1777:

Քերասկով հմուտ գրեթէ ամենայն լեզուաց Եւրոպայ, պատկերաց զքաղցրու-թիւն իւր 'ի քերթողականսն՝ Ռուսիակա-նաւն մանկագրելով դիւցազնական բա-նաստեղծութք, որոյ նիւթ է առումն Խազանայ յԻւանայ Վասիլեւիչէ: — 1807:

Պղատոն արքեպիսկոպոս Մոսկուայի

գրուխ. համարեալ քաղաքացւոյն Ռուսաց՝ ունի Ճառս և քարոզս յինն հատորս ։

ՆՈՎԻԿՈՎ քաղ Հնախօսայց՝ բաց յայլոց գրուածոց ունի Վարկեալ մատենագրաց Ռուսաց 'ի տասն հատորս ։

ՄԻՒԼԼԵՐ պատմահմուտն Վեսթփալիացի, առն յիմուն և եօթն գեղեցկագրեալ 'ի Ռուսիա՝ պատմագրապատիկ մատենագիրս այլ-ատենիս եթող 'ի ռուս,'ի լատին և 'ի գերմանացի բարբառս ։

ՌԵՃԷՆՈՎԻ և ՄԱՅԻԿՈՎ քերթողք անուանիք, ունին բազում երգս, ողբերգութիւնս, հովուականս և այլ քերթուածս ։

ՔՈՆԴՐԱՏՈՎԻՉ Թարգմանեաց և յօրինեաց աւելի քան զատամն հազար մերտասութիւն, Թարգմանեաց և շահեկրոս, և յօրինեաց զՔառարան ռուս, և Քառագիրս ինչ յերկրաչափութեան լեզուաւ ։

ՇՉԵՐՊԱՏՈՎ քաղ պատմագիր ։ ունի պատմութիւն Ռուսաց ճշգրտագոյն քան զառաջինսն ։ – 1790 ։

ՓՈՓՈՎՍԿԻ Ճարտար Թարգմանիչ՝ փոխեաց 'ի ռուս լեզու զՓոբայ անգղիացւոյ զՃառն յաղագս Մարդոյ, զԼոքայ զՃառն յաղագս Դաստիարակութեան, զերգս Անակրէոնի, զԹուղթս և զերգս Ովիդեայ, զմեծ մասն Լիւիոսի, եւն – 1760 ։

ՏՕՆ ՎԻԶԻՆ համբաւեալ 'ի յօրինուածս Թատերական խաղուց ։ – 1792 ։

ԼԷՓԷԽԻՆ ատենադպիր Ճեմարանին

բեթղարուբեայ՝ ունի Ճանապարհորդարան յայլ և այլ կողմանս Ռուսիոյ, և բազում Ճառս ախտանիս :

Քրաշէնինիկով, հրամանաւ պետութեան անձամբ ճանապարհորդեալ մինչև յարևելեան ծագս աշխարհին՝ գրեաց ստորագրութիւն վայրացն :

Աւետիք Իշխանունեաց՝ հանդիպասցեալ տունացի քաղցութեան 'ի զօրս Ռուսաց, ապա ատեա Ճարտար քերթուածոցն և բազմապատիկ հմտութեն կարդացաւ 'ի կայսրուհեացն անուաշ Ճեմարանին և դպրութեաց Ռուսիոյ :

Բոգդանով, աշխոյժ 'ի քերթողութեան, գրեաց և դաշնակեաց տաղս այնչափ Ճարտարս, մինչև պատարկել փափկագեղեցկաց անգամ, և կարծել զործ Վոլթէռայ զԹուղթն առ Նինեան՝ զարդգասիս առաւ հանձարոյ :

Կոլիփով, առատ զուարճութեն մեծին Պետրոսի 'ի հատուած 18 : — 1801 :

Տերժաւին, քերթող անուանի, ունի տաղս հռչակաւորս : — 1816 :

Օզերով քերթող Թատերգակ : — 1816 :

Քարամզին քաջ պատմագիր և պատմողիր՝ համայն 'ի Ռուսաց Հերոդոտոս և Թուկիդիդէս միանգամայն : Ի բազմապատիկ գրուածս նորա գրուածական առ հասարակ՝ երևելի է Պատմութիւնն Ռուսաց լիակատար, որ և թարգմանի 'ի գաղղիական և յիտալական բարբառս : — 1825 :

